Էջմիածին



Դ

2008

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Հոկտեմբեր

2008

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԾԵՑ ԲԱՌՆԱՈՒԼԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 18-ին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի և թեմական խորհրդի հրավերով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ՝ Բառնաուլ քաղաք՝ կատարելու նորակառույց Ս. Հռիփսիմե հայկական եկեղեցու օծումը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, Տ. Հովնան աբեղա Հակոբյանը՝ որպես գավազանակիր, Մայր Աթոռի միաբաններ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը:

Բառնաուլի օդանավակայանում Հայոց Հայրապետին և նրա գլխավորած պատվիրակությանն ավանդական աղ ու հացով դիմավորեցին տեղի իշխանության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ Բառնաուլի քաղաքապետ Վլադիմիր Կալգանովի, Ալթայի երկրամասի փոխնահանգապետ Բորիս Լարինի, հայ համայնքի ներկայացուցիչների և հայոց թեմի հոգևորականների:

Հոկտեմբերի 19-ի առավոտյան Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ Ալթայի երկրամասի նահանգապետ Ալեքսանդր Կարլինի և Բառնաուլի քաղաքապետ Վլադիմիր Կալգանովի հետ, որոնց ընթացքում Նորին Սրբությունն ի դեմս նրանց իր շնորհակալությունը և գնահատանքը հայտնեց ՌԴ իշխանություններին՝ Հայ Առաքելական Եկեղեցու և հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հարգանքի և հոգատար վերաբերմունքի համար: Անդրադարձ կատարվեց նաև երկրամասի և քաղաքի խնդիրներին, հասարակական, կրթա-գիտական և մշակութային կյանքին:

Նույն օրը՝ կեսօրին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ տեղի ունեցավ նորակառույց Ս. Հռիփսիմե հայկական եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին կառուցվել է Մխիթար և Յուրա Արոյան եղբայրների հովանավորությամբ: Եկեղեցու ճարտարապետն է Հակոբ Բաբախանյանը: Դեռևս 2001 թ. Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի ձեռամբ կատարվել էր եկեղեցու հիմնարկեքի արարողությունը, իսկ 2006 թ. նոյեմբերին՝ եկեղեցու խաչերի օծումը: Բառնաուլում և մերձակա շրջաններում այսօր բնակվում է շուրջ 30 000 հայ:

Եկեղեցու առջև Նորին Սրբությանը մեծ խանդավառությամբ դիմավորեցին հայ համայնքի բազմահազար հայորդիներ՝ գլխավորությամբ Նոր Նախիջևանի և Ռո-

ւսաստանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ տիար Արթուր Չիլինգարովի, ինչպես նաև Բառնաուլի քաղաքապետը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Բառնաուլի և Ալթայի եպիսկոպոս Մաքսիմը, Ռուսաստանի հայերի միության ներկայացուցիչներ: Եկեղեցու օծման արարողության համար Բառնաուլ էին ժամանել նաև հայորդիներ Մոսկվայի, Տոմսկի, Նովոկուզնեցկի և Կեմերովոյի համայնքներից:

Հընթացս սրբազան արարողության սաղմոսերգության ներքո ջրով և գինով լվացվեցին Սուրբ Սեղանը, օծվելիք սյուները և Մկրտության Ավազանը: Այնուհետև սարկավագների երգեցողության ներքո Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը և չորս ավետարանիչների անունով խորանի սյուները: Ապա Եզրաս եպիսկոպոսի ձեռամբ օծվեց Մկրտության սուրբ Ավազանը, Առաքել, Անուշավան և Մարկոս եպիսկոպոսները կատարեցին օծումը եկեղեցու մնացյալ տասը սյուների:

Օծման արարողության ավարտին Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանն ընթերցեց Ամենայն Հայոց Հայրապետի Սրբատառ Կոնդակները, որոնոցով Ս. Հռիփսիմե եկեղեցու բարերարներին շնորհվեցին Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշաններ (տե՛ս էջ 9, 11):

Շքանշանների հանձնումից հետո Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդն անդրադարձավ եկեղեցու կառուցման աշխատանքներին և հայ համայնքի գործունեությանը՝ ընդգծելով, որ Մայր Հայրենիքից հեռու էլ Բառնաուլում և նրա շրջակայքում բնակվող հայերն ապրում են Հայրենիքի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ անսահման սերն ու նվիրումն իրենց սրտերում և հոգիներում: Եզրաս Սրբազանը շնորհակալություն հայտնեց նաև Նորին Սրբությանը, ով անսալով իր զավակների խնդրանքին՝ այսօր Ս. Էջմիածնից Բառնաուլ է եկել՝ Հայրապետական Ս. Աջով կատարելու օծումը նորակառույց եկեղեցու: Ապա Սրբազան Հայրը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր օրհնությունը բերելու ներկա բարեպաշտ ժողովրդին:

Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունը բերեց Բառնաուլի հայությանը և շնորհավորեց նոր աղոթատան առիթով՝ հույս հայտնելով, որ այն առավել օրհնությամբ պիտի լցնի հայկական ընտանիքները՝ համախմբելով նրանց Հայ Եկեղեցու շուրջ: Հայոց Հայրապետը ևս մեկ անգամ իր գնահատանքը փոխանցեց տեղի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ ցուցաբերած բարյացկամ վերաբերմունքի և նորակառույց եկեղեցու աշխատանքներին աջակցելու համար, եկեղեցու բարերարներին և ճարտարապետին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև թեմական առաջնորդին և թեմի հոգևորականներին՝ նախանձախնդիր և նվիրյալ աշխատանքի համար:

«Այս եկեղեցին և այս օրը Աստուծո շնորհն է մեզ, որովհետև մենք եղանք Աստուծո հավատարիմ ժողովուրդ: Ուր էլ կյանքը և կյանքի պայմանները առաջնորդեցին մեզ, մենք չմոռացանք Աստծուն, հավատարիմ պահեցինք մեր ուխտը Աստուծո հետ և մեր օջախի հետ կառուցեցինք մեր եկեղեցին, որովհետև գիտեինք, որ մեր կյանքի

հարատևությունը պայմանավորված է Տիրոջ հանդեպ հավատարմությամբ, Տիրոջ հանդեպ սիրով: Այսպես 1700-տարիներ շարունակ ապրել է մեր ժողովուրդը, այսպես գոյատևել է մեր ժողովուրդը:

Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ մեր ժողովրդի զավակները ամուր ունեն իրենց հոգում մեր Տիրոջ հավատքը, ամուր ապառաժի պես, որի վրա և հաստատվում է Քրիստոսի Սուրբ Եկեղեցին: Արդարև, սիրելի բարեպաշտ զավակներ մեր, այս եկեղեցին ձեր զորեղ հավատքի մարմնավորումն է: Եթե չլիներ այս հզոր հավատքը ձեր մեջ, այս հզոր հավատքը մեր բարերար զավակների հոգու մեջ, երբեք մենք չպիտի տեսնեինք կառուցված այս սուրբ եկեղեցին՝ հեռավոր Բառնաուլ քաղաքում»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վերջում Վեհափառ Հայրապետը նորակառույց եկեղեցուն նվիրեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերված սուրբ սկիհ, որից պիտի այսուհետ հայ հավատացյալներին բաշխվի Տիրոջ կենդանարար մարմինն ու արյունը:

Այնուհետև Հայոց Հայրապետը եկեղեցու բակում նաև մշտադալար եղևնի տնկեց, հավաքված ժողովրդին բաշխեց իր օրհնությունը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերված խաչեր:

Երեկոյան Բառնաուլի կյանքում տեղի ունեցած կարևոր այս իրադարձության առիթով տեղի ունեցավ համերգ, որին մասնակցում էին տեղի և Հայաստանից ժամանած ստեղծագործական խմբեր:

Հոկտեմբերի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մայր Տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո Մայր Աթոռի միաբանությունը դիմավորեց Նորին Սրբությանը: Մայր Տաճարում՝ Իջման Սուրբ Սեղանի առջև, կատարվեց գոհաբանական աղոթք, որից հետո Նորին Սրբությունը միաբաններին ներկայացրեց Հովվապետական այցի մանրամասները և իր տպավորությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարի տեղակալ տիար Ս. Դիարայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարար տիար Ներսես Երիցյանի:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրի ներկայությունը հայոց նվիրական սրբավայրում, անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրման պատմությանը, նրա առաքելությանը հայ ժողովրդի կյանքում և արդի մարտահրավերներին: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ ՄԱԿ-ն իր առաքելությունն ունի իրականացնելու ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում՝ խաղաղության հաստատման, աղքատության նվազման և մարդկանց սրտերում բարության հաստատման համար: Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը, տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանը և հայ-թուրքական հարաբերություններին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարի տեղակալ Տիար Ս. Դիարան անդրադարձավ ՄԱԿ-ի գործունեությանը, արդի մարտահրավերները հաղթահարելու նրա ծրագրերին՝ շեշտելով հոգևոր արժեքների նշանակությունը մարդու կյանքում: ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարի տեղակալը նշեց, որ ՄԱԿ-ն աշխատում է օգտակար լինել Հայաստանին զանազան ասպարեզներում՝ կարևորելով նրա հարաբերություններն իր հարևանների հետ:

Այնուհետև Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին իր կողմից նույնպես ամեն ջանք գործադրում է տարածաշրջանում խաղաղության հաստատման համար՝ անդրադառնալով Ռուս Ուղղափառ Եկեղեցու նախաձեռնությամբ Կովկասի հոգևոր պետերի քառակողմ հանդիպումներին: Հայոց Հայրապետը նաև իր մտահոգությունն արտահայտեց Ջուղայի խաչքարերի ոչնչացման առնչությամբ՝ ընդգծելով, որ նման վայրագություններին ՄԱԿ-ը և մյուս միջազգային կազմակերպությունները պետք է իրենց հստակ գնահատականը տան՝ կանխելու համար նմանօրինակ երևույթների կրկնությունն ապագայում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԼԵՅԼԱ ՍՈԼ ՀԱՄԱԴԵԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Հայաստան է ժամանել լիբանանցի նշանավոր հասարակական գործիչ Լեյլա Սոլ Համադեն: Տիկին Համադեն դուստրն է Լիբանանի անկախության հիմնադիր նշանավոր այրերից մեկի՝ հանգուցյալ վարչապետ Ռիադ Էլ Սոլի և այրին Լիբանանի Կրթության նախկին նախարար Մաջեդ Սաբրի Համադեի:

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տիկին Համադեին: Նախ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը պատվարժան հյուրին ներկայացրեց Նորին Սրբությանը՝ անդրադառնալով տիկին Համադեի բերած մարդասիրական հսկայական նպաստին Լիբանանի ողջ ժողովրդին և մասնավորապես լիբանանահայությանը:

Նորին Սրբությունը, ողջունելով պատվարժան հյուրին ամենայն հայոց նվիրական սրբավայրում, բարձր գնահատեց նրա բարեսիրական ավանդը Լիբանանի ժողովրդի կյանքում: Ի դեմս Լեյլա Սոլ Համադեի Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց Լիբանանի ժողովրդին՝ Ցեղասպանություն վերապրած հայ ժողովրդի զավակներին ջերմությամբ և եղբայրական անկեղծ սիրով ընդունելու համար: Վեհափառ Հայրապետը նաև մաղթեց, որ բոլոր ժողովուրդներն ապրեն սիրո, բարեկամության, համերաշխության և միասնականության մեջ՝ օրինակ ունենալով հայ և լիբանանցի ժողովուրդների ջերմ հարաբերությունները:

Այնուհետև Լեյլա Սոլ Համադեն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին հրավերի համար և ներկայացրեց Հայաստանից և հայ ժողովրդից ստացած իր տպավորությունները՝ ընդգծելով, որ միշտ էլ ջերմ զգացումներ է տածել հայ ժողովրդի նկատմամբ: Մեծ նմանություններ տեսնելով Հայաստանի և Լիբանանի ժողովուրդների ճակատագրերում՝ տիկին Համադեն գոհունակություն հայտնեց, որ հակառակ բազում դժվարությունների՝ Հայաստանը ևս Լիբանանի պես կարողացավ զարթոնք ապրել և կառուցել իր ապագան: Բարձր գնահատելով հայ ժողովրդի ավանդը Լիբանանի առաջընթացի և բարգավաճման գործում՝ Լեյլա Սոլ Համադեն ուրախությամբ նշեց, որ իր այցը Հայաստան մեծ կարևորություն ունի առավել հարազատորեն ճանաչելու հայ ժողովրդին և հավաստիացրեց, որ մեծ ոգեշնչումով շարունակելու է իր բարեսիրական առաքելությունը՝ խտրականություն չդնելով ազգային և կրոնական տարբերությունների հարցում:

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը և Լեյլա Սոլ Համադեն իրեն ուղեկցող շքախմբի հետ այցելեցին Մայր Տաճար, նորակառույց Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարան, այնուհետև ծաղկեպսակ դրեցին երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի շիրիմին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից պատվարժան հյուրը մեկնեց Ծիծեռնակաբերդ, որտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայոց Մեծ Եղեռնի նահատակների: Տիկին Համադեն ծաղկեպսակ զետեղեց Ցեղասպանության հուշահամալիրում, ծառ տնկեց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի ծառուղում և այցելեց Ցեղասպանության թանգարան:

Ծիծեռնակաբերդից Լեյլա Սոլ Համադեն Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանի ուղեկցությամբ այցելեց նաև Երևանի Կապույտ մզկիթ:

Կեսօրից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը և տիկին Համադեն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Արաբկիրի Հայորդյաց տուն, ուր Հայորդյաց տան պատանի սաները հանդես եկան գեղարվեստական հայտագրով: Նույն օրը նրանք եղան Մայր Աթոռի «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնում և մանկատանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԽԻԹԱՐ ԱՐՈՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԽԻԹԱՐ ԱՐՈՅԵԱՆ ՈՐ Ի ԲԱՌՆԱՌԻԼ, ՌԴ

Մեծարգոյ պրն. Արոյեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսեանից գոհունակութեամբ տեղեկացանք Բառնաուլ քաղաքի հասարակական կեանքում Ձեր բեղուն գործունէութեան եւ տիրախնամ թեմին մատուցած Ձեր բարի ծառայութիւնների մասին:

Այսօր Տիրոջ կամքով ուրախ առիթն ունենք բարձր շնորհի արժանացնելու մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ՝ Բառնաուլ քաղաքի Սուրբ Հռիփսիմէ հայկական եկեղեցու վերականգնման աշխատանքներին բերած կարեւոր աւանդի համար: Ձեր եւ Ձեր եղբօր ազնիւ ջանքերով պատմական եկեղեցին վերստին դառնում է լուսաւոր կենտրոնը Բառնաուլի հայորդեաց ազգային ու հոգեւոր կեանքի՝ բարեզարդ տեսքով իր օրինաբեր դռները բացելով աստուածասէր հաւատացելոց առջեւ: Գոհութիւն Աստուծոյ, որ հաւատաւոր Մեր զաւակները նորոգուած սրբավայրի կամարների ներքոյ վերստին փառաբանական իրենց աղօթքը պիտի բարձրացնեն առ Աստուած եւ շնորհընկալը դառնան երկնային պարգեւների՝ առաւել զօրանալով հաւատի, յոյսի, սիրոյ ու միաբանութեան մէջ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ըն-

դառաջ թեմական առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտից Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ, որպէսզի յետայսու եւս շարունակէք Ձեր նուիրեալ ծառայութիւնները Ռուսաստանի Դաշնութեան օրհնեալ երկրին, մեր Մայր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի-պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր բարի գործերին ու ծրագրերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 494

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՅՈՒՐԱ ԱՐՈՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԻՒՐԱ ԱՐՈՅԵԱՆ ՈՐ Ի ԲԱՌՆԱՌԻԼ, ՌԴ

Մեծարգոյ պրն. Արոյեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից գոհունակութեամբ տեղեկացանք Բառնաուլ քաղաքի հասարակական կեանքում Ձեր բեղուն գործունէութեան եւ տիրախնամ թեմին մատուցած Ձեր բարի ծառայութիւնների մասին:

Այսօր Տիրոջ կամքով ուրախ առիթն ունենք բարձր շնորհի արժանացնելու մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ՝ Բառնաուլ քաղաքի Սուրբ Հռիփսիմէ հայկական եկեղեցու վերականգնման աշխատանքներին բերած կարեւոր աւանդի համար: Ձեր եւ Ձեր եղբօր ազնիւ ջանքերով պատմական եկեղեցին վերստին դառնում է լուսաւոր կենտրոնը Բառնաուլի հայորդեաց ազգային ու հոգեւոր կեանքի՝ բարեզարդ տեսքով իր օրինաբեր դռները բացելով աստուածասէր հաւատացելոց առջեւ: Գոհութիւն Աստուծոյ, որ հաւատաւոր Մեր զաւակները նորոգուած սրբավայրի կամարների ներքոյ վերստին փառաբանական իրենց աղօթքը պիտի բարձրացնեն առ Աստուած եւ շնորհընկալը դառնան երկնային պարգեւների՝ առաւել զօրանալով հաւատի, յոյսի, սիրոյ ու միաբանութեան մէջ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտից Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ, որպէսզի յետայսու եւս շարունակէք Ձեր նուիրեալ ծառայութիւննե-

որը Ռուսաստանի Դաշնութեան օրհնեալ երկրին, մեր Մայր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի-պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր բարի գործերին ու ծրագրերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 495

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԼԻԼԻ ՉՈՒԳԱՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՁՆԻՒ ՏԻԿԻՆ ԼԻԼԻ ՉՈՒԳԱՍԵԱՆ ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան Տիկին Չուգասեան, գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ երաժշտութեան ասպարէզում Ձեր ձեռքբերումներին և եկեղեցաշէն ու ազգօգուտ Ձեր երկարամեայ գործունէութեանը:

Դուք՝ շնորհաշատ և տաղանդաւոր երգչուհի, կատարողական Ձեր բարձր արուեստով արժանացել էք մեծ ճանաչման ու բարձր մրցանակների և որպէս Մեթրոփոլիթըն օպերայի մեներգչուհի՝ կատարել գլխաւոր դերերգեր, երգել նշանաւոր երգիչների հետ՝ հանրայայտ խմբավարների ղեկավարութեամբ: Երաժշտութեան ասպարէզում Ձեր յաջողութիւնները բարի անուն և համբաւ են յաւելել մեր ժողովրդին: Այսօր Դուք նոր սերնդի երգիչներ կրթելու նախանձախնդրութեամբ երաժշտական Ձեր հարուստ փորձն ու գիտելիքներն էք փոխանցում Ձեր սիրելի սաներին:

Մենք ջերմութեամբ ենք յիշում նաև տասնեակ տարիներ առաջ Ձեր ելոյթը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, երբ անուանի երգչուհի Գոհար Գասպարեանի հետ Ձեր երգը հնչեցրիք որպէս աղօթք և փառաբանութիւն Բարձրեալն Աստծուն, որ գթառատութեամբ խնամում և Իր հովանու ներքոյ պահպանում է հաւատաւոր մեր համայն ժողովրդին:

Գոհունակութիւն է այսօր Հայրապետիս համար գնահատանքի արժանացնել նաև հաւատաւոր հայուհուդ վաստակը տիրախնամ ԱՄՆ Արևելեան թեմի Սուրբ Վարդան առաջնորդանիստ եկեղեցու կեանքում: Երկար տարիներ հանդէս գալով եկեղեցու երգչախմբում՝ Դուք ազնիւ հոգով ներդրել էք Ձեր ժամանակը, երաժշտական շնորհն ու կարողութիւնները ի նպաստ Պատարագի սրբազան արարողութեանց պատշաճ ու հանդիսաւոր կատարման: Ձեզ պէս նուիրեալների հաւատոյ գործերով զօրանում ու պայծառանում է Եկեղեցիս Հայաստանեայց:

Ձեր արգասաւոր ծառայութեան ու վաստակի բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արևելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքե-

պիսկոպոս Պարսամեանի խնդրանքին և Հայրապետական այսու Կոնդակով, Սուրբ Վարդան եկեղեցու 40-ամեակի առիթով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ և մաղթում, որ Տէրը պարգևի Ձեզ քաջառողջ արևշատութիւն և նորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2008 և ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 492

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հոկտեմբեր ամսին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.
Կեյլ Փերզիկյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Ջորջ Դավթյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Զավեն Թաշճյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.
Դավիթ Պետրոսյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Խորեն Բուլուդյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Սամվել Գրիգորյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Սամվել Մանասյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Էդուարդ Թումասյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Սերգեյ Բաղդասարյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Վարդան Քոչարյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Հովհաննես Շահինյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Մաքսիմ Մանուկյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Ավետիք Աղեքյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Գագիկ Գևորգյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Դենիս Գանաշիլով (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Պետրոս Բաղնիքյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Էդգար Սարգսյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արայիկ Մաժանգուլյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Ս. Աստվածածին եկեղեցու ծխական համայնքին (Ռումինիայի հայոց թեմ)
Ս. Երրորդություն եկեղեցու ծխական համայնքին (Կանադայի հայոց թեմ)
Տ. Մեսրոպ ավագ քահանա Սարաֆյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել
Տ. Անդրանիկ քահանա Մալճյան (Ֆրանսիայի հայոց թեմ)

ՆՈՐՕՐՀՆՅԱԼ Ս. ՄՅՈՒՌՈՆՈՎ ՋՐՕՐՀՆԵՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Սրբազան արարողության ընթացքում Արշակ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Հայոց Եկեղեցում Ջրօրհնեքի խորհրդին: «Այսօրվա ջրի օրհնությունը վերստին մեզ անդրադառնալ է տալիս հոգևոր մաքրության անհրաժեշտությանը, որ յուրաքանչյուրս պարտավոր ենք վերստին սրբվել, վերստին մաքրվել, այս ջուրը ևս մեկ անգամ առիթ դարձնել անդրադառնալու համար մեր հոգևոր ընթացքին, մեր կյանքի տարատեսակ խոտորումներին՝ սայթաքումներին այլևս չկրկնելու մտադրությամբ և վճռականությամբ»,- նշեց Արշակ Սրբազանը (տե՛ս էջ 24):

Հավարտ Սուրբ Պատարագի նորօրհնյալ Ս. Մյուռոնով, ի խնդիր բարեպաշտ մեր ժողովրդի հավատի նորոգման և հոգևոր կյանքի պայծառության, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Ջրօրհնեքի հատուկ արարողություն: Նորին Սրբությունը Ս. Խաչով օրհնեց ջուրը, ապա «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողության ներքո ջրի մեջ հեղեց Սուրբ Հոգու խորհրդանիշ նորօրհնյալ Ս. Մյուռոնը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը Ս. Խաչը հանձնեց Ջրօրհնեքի արարողության խաչքավոր տիար Հրաչ Բեզլարյանին:

Ջրօրհնեքի ավարտից հետո օրհնված ջուրը բաժանվեց հավատացյալներին, որպեսզի նրանք նույնպես կարողանան անմիջականորեն հաղորդակից դառնալ նորօրհնյալ Մյուռոնի սրբարար շնորհներին:

Ջրօրհնեքի արարողություններ կատարվեցին նաև Հայ Առաքելական Եկեղեցու թեմերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառի ծննդյան 100-ամյակի առիթով, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

«Հայր մերից» առաջ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Հայ Առաքելական Եկեղեցու կյանքում երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի ունեցած բացառիկ դերակատարությանը, ով խորհրդային անաստվածության տարիներին ոչ միայն կարողացավ դիմագրավել բոլոր փորձությունները և դժվարությունները, այլ նաև շենացրեց ու պայծառացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, իր իմաստուն Հայրապետության օրոք կարողացավ ջերմ հարաբերություններ հաստատել քրիստոնեական մյուս Եկեղեցիների հետ և արժևորել Հայ Եկեղեցու դերը Քրիստոսի Եկեղեցու կյանքում, նրա շնչով դաստիարակվեց հոգևորականաց մի ամբողջ սերունդ, ով այսօր շարունակում է իրականացնել Վազգեն Ա Հայրապետի երազներն ու չիրականացած բազում ծրագրերը: Սրբազան Հայրն ընդգծեց, որ Վազգեն Առաջինը ծառայեց Աստծուն իր ազգին և Եկեղեցուն անմնացորդ ծառայելու միջոցով:

«Ես ուրախ եմ, որ զավակն եմ այնպիսի մի Հայրապետի, ինչպիսին Վազգեն Ա Հայրապետն էր: Ես վստահ եմ, որ նա այսօր երկնքի արքայության մեջ նայում է մեզ վերևից և հրճվում, ուրախանում, հոգեկան բավարարություն ստանում ոչ թե նրա համար, որ մենք այսօր հավաքվել ու պատվում ենք իրեն, և այս օրերին ինչպես Հայ Եկեղեցին, այնպես էլ ՀՀ իշխանությունները պատվում են նրան, նրա անունով դպրոցներ հաստատում, հանդիսություններ կատարում, այլ նրա հոգին հրճվում է, որովհետև տեսնում է, որ այսօր Հայ Եկեղեցին ամուր և անսասան կերպով շարունակում է ճիշտ այն ուղղությունը, որ գծեց և ապահովեց երջանկահիշատակ Հայրապետը»,- նշեց Եզնիկ Սրբազանն իր քարոզում: Քարոզի վերջում Սրբազան Հայրը հորդորեց ներկաներին շնորհակալություն հայտնել Աստծուն մեր ժողովրդին Վազգեն Ա Վեհափառի նման Հայրապետներ պարգևելու համար:

Սուրբ Պատարագից հետո հոգելույս Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմի մոտ նախագահությամբ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 23-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 100-ամյակին:

Գիտաժողովին ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և գիտության մշակներ:

Գիտաժողովը սկսվեց «Հայր մեր» աղոթքով, որից հետո բացման խոսքով հանդես եկավ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյանը: Ապա գիտաժողովի առիթով իր Հայրապետական պատգամը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի կարևոր դերակատարությանը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում:

«Հայրապետական սիրով ողջունում ենք Վազգեն Ա Ամենայն Հայոց երանաշնորհ Հայրապետի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպված այս գիտաժողովի գումարումը և Մեր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքները բերում գիտաժողովի կազմակերպիչներիդ և բոլոր մասնակիցներիդ:

Երախտագետ մեր ժողովուրդը հոբելյանական հանդիսություններով և միջոցառումներով առիթն ունի ոգեկոչելու մեր Եկեղեցու լուսամիտ Հայրապետ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պանծալի հիշատակը, ով իր իրագործումներով պիտի ապրի դարերով: Շատերի հոգիներում դեռ վառ են հոգելույս Կաթողիկոսի հետ հանդիպումների նվիրական հուշերը, որոնք գալիս են ազգային-եկեղեցական մեր վերազարթնյալ կյանքում զորացնելու որդիական սերը մեր Եկեղեցու հանդեպ, և հույսը մեր ժողովրդի միասնական, պայծառ գալիքի, որ կրում էր հոգում լուսահոգի Հայրապետը: «Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միշտ դավանած է ու կդավանի մեկ հայ Եկեղեցի, մեկ հայ ազգ, մեկ հայ հայրենիք, մեկ ճակատագիր և մեկ ապագա» (Վազգեն Ա): Ահավասիկ, այս համոզումով և հայ ժողովրդի հոգևոր վերածնության ու ազատ կյանքի տեսլականով Վազգեն Ա Հայրապետը 39 տարի բազմեց և գործեց Լուսավորչահաստատ գահին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Երջանկահիշատակ Հայրապետը կյանքի և առաքելության մի ճանապարհ ուներ՝ Սուրբ Էջմիածինը, որի ոգեղեն ներկայության մարմնավորումը եղավ իր անձը, իր վաստակյալ կյանքը, իր ներշնչող խոսքը: Նա եղավ Բարձրյալից իրեն վստահված բանավոր հոտի հոգևոր անդաստանի առատ հունձքի ժրաջան մշակը, հոգեխնամ քարոզիչը Տիրոջ Ավետարանի և նվիրյալ սպասավորը Առաքելական մեր Սուրբ եկեղեցու:

Ժամանակները դժվարին էին, անհրաժեշտությունները՝ բազմաթիվ: Աստծո օգնությամբ քաջ Հովվապետի եկեղեցաշեն և ազգապահպան ջանքերն ու ձեռնարկները արդյունավորվեցին բարի պտուղներով: Խորագիտությամբ ու հեռատեսությամբ նա

կարողացավ բարեկարգել ու շենացնել Սուրբ Էջմիածինը, վերաբացել եկեղեցիներ, կրթել ու պատրաստել եկեղեցական սերունդ՝ ովքեր այսօր ծառայում են մեր Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում: Նա ամեն ջանք գործադրեց՝ պահպանելու Մփյուռքի և Հայաստանի միասնությունը՝ միշտ հավատալով այն օրվան, երբ կխորտակվի երկաթյա վարագույրը, և մեր ժողովուրդը անարգել կայցելի իր Հայրենիք և Սուրբ Էջմիածին:

Իր գահակալության տարիներին նա եղավ շինարար և ուսուցիչ, գիտնական ու ազգային գործիչ, և այդ ամենից առավել՝ Աստծո նվիրյալ սպասավոր և հարազատ զավակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Այսօր էլ Մայրավանքում Վազգեն Ա Հայրապետի շունչն է տիրում, ոգին է թևածում նրա հոգածու ձեռքերի մեջ կերտված եկեղեցականների ծառայության շնորհիվ, ովքեր իրենց հոգևոր առաքելության մեջ նախանձախնդրորեն պահպանում են լուսահոգի Հայրապետի պատգամներն ու ավանդը:

Գիտությունների ազգային ակադեմիայի պատվարժան անդամներ, գիտաժողովի հարգելի մասնակիցներ, Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ այս գիտաժողովի կազմակերպման համար, որը վկայությունն է, որ հայ մտավորականությունը արժանիորեն գնահատում է վաստակը Վազգեն Ա Հայրապետի: Երջանկահիշատակ Հայոց Կաթողիկոսը 1991 թ. ընտրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս: Եվ այսօր պատահական չէ, որ այս հարկի ներքո հրավիրված գիտաժողովը իր կարևոր դերակատարությունը պիտի ունենա հոգելույս Հայրապետի կյանքի ու գործերի արժևորմանը՝ որպես երախտագիտության ևս մեկ տուրք:

Աղոթում ենք առ Բարձրյալը, որ արդյունավոր ընթացք պարգևի գիտաժողովին, օրհնի Ձեր կյանքը, ստեղծագործ Ձեր ջանքերը, գիտական Ձեր ուղին: Ամեն»:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Մայր Աթոռի միաբաններ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը («Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքը և գործը») և Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը («Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի էկումենիկ գործունեությունը»), ՀՀԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը («Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերանորոգչական և եկեղեցաշինական գործունեությունը») և արվեստագիտության թեկնածու Աննա Ասատրյանը («Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Տ. Չուխաջյանի ժառանգության պահպանման հարցը»):

Ներկաների հետ իրենց մտորումներն ու հուշերը կիսեցին նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը և Էմմա Կոստանդյանը:

Գիտաժողովի ավարտին Վեհափառ Հայրապետը վերստին իր գնահատանքի խոսքն ուղղեց Ակադեմիայի նախագահին, կազմակերպիչներին և զեկուցողներին նման նախաձեռնությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Գիտաժողովը փակվեց Հայոց Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՎԵՐԱՆՎԱՆՎԵՑ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՈՒՆՈՎ

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 100-ամյակի միջոցառումների շրջանակում Վաղարշապատի քաղաքի կենտրոնական Կիրովի փողոցը վերանվանվեց Վազգեն Առաջին Հայրապետի անունով:

Մինչ հուշաքարի բացումը Վաղարշապատի քաղաքապետ Գագիկ Ավագյանը շնորհավորեց քաղաքի բոլոր բնակիչներին հիշարժան օրվա առիթով՝ կարևորելով լուսահոգի Վազգեն Ա Վեհափառի անվամբ փողոցի անվանակոչումը. «Անգնահատելի է Էջմիածնի հոգևոր ժառանգությունը, բայց իմ սերդակիցների համար այն հարստացել է ևս մեկ ուխտատեղիով՝ Վազգեն Առաջինի գերեզմանով: Պատմությունը դեռ երկար կխոսի Վազգեն Վեհափառի մասին, բայց մենք՝ քաղաքային իշխանություններս, պարտավոր ենք միշտ նորոգ ու բարետես պահել մեծ Հայի, մեծ Հոգևորականի, մեծ Հայրենասերի անունը կրող փողոցը»,- նշեց նա իր խոսքում: Այնուհետև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Վաղարշապատի քաղաքապետը բացեցին փողոցի վերակոչման հուշաքարը:

Ապա հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ Վազգեն Ա հոգելույս Հայրապետի անվան փողոցի օրհնության արարողությունը, որից հետո ներկաներին Հայրապետական իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հայրենի և Վաղարշապատի իշխանություններին փողոցի վերանվանման առիթով՝ շեշտելով Վազգեն Ա Վեհափառի բացառիկ դերակատարությունը մեր Եկեղեցու և Հայրենիքի շենացման գործում:

«Իրապես խնդություն է ոչ միայն Էջմիածին քաղաքում, ոչ միայն հայորդյաց հոգիներում, այլև երկնքի բարձունքներում, որտեղից այս պահին իրենց հայացքներն են ուղղել դեպի մեզ Հայոց 131 Հայրապետները և իրենց օրհնությունն են բերում Ձեզ, որ երախտագետ հոգիներով մեծարում եք Վազգեն Ա՝ մեր սիրելի Հայրապետի գործը և վաստակը: Հայոց մեծանուն Հայրապետներից մեկը եղավ Վազգեն Ա Կաթողիկոսը, ով գահակալեց խորհրդային տարիների բարդ ու դժվարին ժամանակներում: Անաստվածության գաղափարաբանության այդ ծանր տարիներին նա իմաստությամբ և խոհեմությամբ կարողացավ պաշտպանել ազգային մեր շահերը, շենացնել ու պայծառացնել մեր Եկեղեցին, առանձնակի պայծառաշուք դարձնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որպեսզի ազգի մեր զավակները հպարտության զգացումով շարունակեն ապրել ու կերտել իրենց Հայրենին: Հայոց Հայրապետն այդ դժվարին տարիներին կարողացավ իր հայրենասեր ու աստվածասեր ոգին փոխանցել մեր զավակներին, որպեսզի ազգս հայոց իր Մայր Հայրենիքում կարողանա ապրել սիրով առ Հայրենին, և հակառակ բոլոր ճնշումների և հետապնդումների, սիրել իր Եկեղեցին, բաց պահել այդ եկեղեցու փակ դռները, իր աղոթքը մշտական դարձնել եկեղեցու կամարների ներքո», - նշեց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը նաև իր օրհնությունը փո-

խանցեց ներկաներին՝ մաղթելով, որ Սուրբ Էջմիածնի օրհնությունը հովանի լինի նրանց վրա, ոգևորի ու ներշնչի Էջմիածնեցիներին, նախանձախնդրությամբ ու պատվով լցնի իրենց հոգիները՝ շեն ու բարեկարգ պահելու մեր հավատքի կենտրոնը՝ Միածնաէջ Մայր Աթոռը: Նորին Սրբությունը պատգամեց ներկաներին մնալ Տիրոջ սիրո մեջ, հայրենյաց սիրո մեջ և Աստուծո մշտական օրհնության ներքո:

Հանդիսությունն ավարտվեց Հայրապետական «Պահպանիչով»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ԱՐՁԱՆԸ

Հոկտեմբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Նորին Սրբության հրավերով Հայաստան ժամանած լիբանանցի հասարակական գործիչ տիկին Լեյլա Սոլ Համադեն այցելեցին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց: «Հրաշափառի» երգեցողությունից հետո ներկաներին ողջույնի խոսքով դիմեց դպրանոցի տեսուչ Տ. Գևորգ աբեղա Սարոյանը՝ անդրադառնալով Վազգեն Ա Շինարար Հայրապետի կյանքին և գործունեությանը: «Վեհափառ Հայրապետը անաստվածության և հալածանքի տարիներին ոչ միայն կարողացավ պահպանել մեր ժողովրդի մեջ քրիստոնեական հավատքի հետ կապը, որն ամեն վայրկյան թվում էր թե կկտրվի, այլև նախապատրաստեց նրան քրիստոնեական հավատքի նոր վկայության: Դա հաջողվեց նրան, որովհետև նա հույսի և տեսիլքի մարդ էր: Վազգեն Ա հակառակ բոլոր դժվարությունների, նեղությունների և հալածանքների այդ տարիներին երբեք չկորցրեց իր հույսը, գործեց հանուն ազգի և եկեղեցու: Գործեց, քանի որ հավատում էր, թե գալու է այն երկար սպասված օրը, երբ հայ ժողովուրդը հռչակելու է իր անկախությունը, գալու է այն երջանիկ պահը, երբ հայոց հողում կրկին անկաշկանդ կերպով քարոզվելու է Քրիստոսի Ավետարանը»,- նշեց Հայր Սուրբն իր խոսքում:

Այնուհետև Նորին Սրբության հանդիսապետությամբ տեղի ունեցավ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի արձանի բացման արարողությունը: Քանդակագործն է Արա Շիրազը: Արձանը զետեղվել է դպրանոցի բակում՝ բարերարությամբ Պերճուհի Ճռնազյանի՝ ի հիշատակ հանգուցյալ ամուսնու՝ Հայկ Էմիրյանի:

Արարողությունից հետո տիկին Համադեն Նորին Սրբության առաջնորդությամբ շրջեց Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ծանոթացավ ճեմարանականների կեցության պայմաններին և ուսումնական գործընթացին: Ամենայն Հայոց Հայրապետը և պատվարժան հյուրն այցելեցին նաև Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի մատուռ և Ս. Առաքելոց վանք:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսը և տիկին Համադեն եղան Կեչառիսի և Գեղարդի վանական համալիրներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԵՑ ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՄԲ

Հոկտեմբերի 5-ին Կոտայքի թեմի Չարենցավան քաղաքում մեծ շուքով նշվեց երջանկահիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 100-ամյակը:

Չարենցավան քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցում Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպիսկոպոս Քարամյանը մատուցեց Սուրբ և Անմահ Պատարագ, ապա կատարվեց հոգեհանգիստ՝ նվիրված Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետին:

Սուրբ Պատարագից հետո Խաչի թափորը հավատացյալների ուղեկցությամբ շարժվեց դեպի Չարենցավանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, որտեղ տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի խաչքարի բացումը և հրապարակվեց Կոտայքի մարզպետարանի՝ դպրոցը Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի անվամբ կոչելու որոշումը: Դպրոցի դահլիճում Կոտայքի թեմի առաջնորդը անմոռանալի հուշեր ներկայացրեց Վեհափառի կյանքից, իսկ Կեչառիս վանքի հոգևոր հովիվ Տ. Հարություն քհն. Ծատուրյանը պատմեց Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության մասին: Քաղաքապետարանի մշակույթի բաժնի կողմից կազմակերպված գեղարվեստական մասին իրենց մասնակցությունը բերեց նաև «Էթնո-Վոկալ» անսամբլը՝ Աննա Մաիլյանի ղեկավարությամբ: Հանդիսությանը ներկա էին հոգևորականներ և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Հանդիսությունը փակվեց Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպիսկոպոս Քարամյանի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 հոկտեմբերի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

«Աղաչեմք զքեզ՝ մա՛րդասէր Տէր, առաքեա զՀոգիդ Սուրբ, ի ջուրս յայս. և օրհնեա՛ և սրբեա՛ զսա, և տո՛ւր սմա զշնորհն Յորդանանու. և արա՛ զսա օրհնութեան աղբիւր, անապականութեան պարգև, մեղաց լուծումն, հիւանդաց բժշկութիւն, դիւաց ահագին խորտակումն, ախտաժետաց առողջութիւն...»

«Աղաչում ենք Քեզ, ով մարդասեր Տեր, առաքիր Քո Սուրբ Հոգին այս ջրերի վրա, օրհնիր և սրբիր այն, տո՛ւր Նրան շնորհներ, ինչպես Հորդանան գետին, և այն դարձրու օրհնությա՛ն աղբյուր, կյանքի՛ աղբյուր, անապականության պարգև, մեղքերի լուծում, հիվանդների համար բժշկություն և դևերի համար խորտակում, ախտերով տառապողներին որպես առողջություն»:

(Ճաշոց)

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Շուրջ տաս օրեր առաջ Վեհափառ Հայրապետի ձեռամբ, մեր բարձրաստիճան եկեղեցականների անմիջական մասնակցությամբ, բազմահազար ուխտավորների աղոթական զորակցությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց վերջին շրջանի կարևորագույն հոգևոր իրադարձություններից մեկը. օրհնվեց Սրբալույս Մյուռոնը: Արարողություն, որը ազգային եկեղեցական մեր կյանքում մեծ խանդավառություն, ոգևորություն և հուզում առաջ բերեց, ինչպես այսօր բազմաթիվ հավատացյալներ, ուխտավորներ ժամանել են Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ իրենց աղոթքներով մասնակից լինելու Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությանը, ստանալու Մյուռոնի օրհնությունը: Եվ ահա տաս օրեր հետո Նորին Սրբության մասնահատուկ տնօրինությամբ այս օրը, այս կիրակի կատարվելու է Ջրօրհնյաց արարողություն, որի ընթացքում Սրբալույս նորաբեփ Մյուռոնը հեղվելու է այս կաթսաների մեջ լցված ջրի մեջ՝ այն սրբելով, մաքրելով չարի բոլոր տեսակի ազդեցություններից և ներգործություններից, այն դարձնելու համար բուժարար, հոգու նորոգության համար անհրա-

ժեշտ հոգևոր մի նյութ։ Եվ քիչ հետո այդ արարողության ընթացքում է, որ պիտի ահա ընթերցվի, վերստին աղոթք վերառաքվի Տիրոջը՝ ասելու. «Ո՛վ Տեր Աստված, առաքի՛ր Քո Սուրբ Հոգին այս ջրերի վրա, դարձրո՛ւ այն այնպիսին, ինչպիսին Հորդանան գետն էր, որը շնորհն ունեցավ իր մեջ կրելու Տիրոջը, այն դարձրո՛ւ մեղքերի լուծում, հիվանդներին բժշկություն, ախտերով տառապողների համար՝ առողջություն»։

Իրապես նախախնամական էր, որ այսօր սուրբգրային ընթերցվածքի մեջ ևս մի ստվար հատված նվիրված էր ջրին։ Ջուրը, ինչպես որ աղոթքն է ասում, կյանքի և օրհնության աղբյուր է։ Եվ ահա Եսայի մարգարեն, որ հայտնի էր իր հուզական բնավորությամբ, իր մտրակող խոսքով, մեղքի նկատմամբ անհանդուրժողությամբ, երբ որ խոսում է եգիպտացիների մասին՝ կանխատեսելով նրանց վրա հասնող պատուհասները, քանի որ եգիպտացիներն իրենք հալածել էին Իսրայելի ժողովրդին՝ Աստծո ժողովրդին, նրանց կանխատեսում է խիստ մռայլ ապագա և հետևյալն է ասում. «Եգիպտացիները ծովափնյա ջրակույտերից են խմելու, որովհետև գետը նվազելու է և ցամաքելու է։ Գետերն ու գետերի ջրադարձները քաշվելու են, հավաքված բոլոր ջրերը ցամաքելու են, և բոլոր մարգագետինները, եղեգի բոլոր խիտ թավուտներն ու լորամարգերը ցամաքելու են, գետի եզերքներին եղած ողջ կանաչը, բոլոր հերկերը, որոնք գետի ջրով են մշակվում, խորշակահար չորանալու են։ Ձկնորսները տրտմելու են, գետի մեջ բոլոր կարթ գցողները հոգոց են հանելու, ցանց և ուռկան գցողները սուգ են անելու, ամաչելու են նաև բարակ կտավ մանող կտավագործները և նրանք, որ բեհեզ են գործում, բոլոր արհեստավորները տրտմությամբ են համակվելու, բոլոր տարազագործները տխրելու են»։

Ջուրը կյանքի աղբյուր է։ Եգիպտացիներին պատժելու համար, այն մարդկանց, այն ազգերին պատժելու համար, ովքեր որ ընդդիմացել են Տիրոջ կամքին, ովքեր որ խոտոր ճանապարհներով են ընթացել, նրանք պարզապես զրկվում են կյանքի այդ աղբյուրից։ Երբ որ երկիրը ցամաքում է, ջրից զրկվում են մարդիկ, իսկապես օրհնությունն է, որ վերցվում է այդ ժողովրդի, այդ երկրի վրայից։ Ջուրը նաև հիվանդության դեմ առողջարար մեծ բուժամիջոց է։ Կարդացել եք ամենքդ Նոր Կտակարանի մեջ՝ Գործք Առաքելոցում, Պրոբատիկեի ավազանի մասին դրվագը, ուր ասվում է, թե այնտեղ ավազանի մեջ հավաքվում էին բազմաթիվ հիվանդներ, բազմաթիվ ախտաժետներ, և նրանք, ովքեր որ կարողանում էին հասնել այդ ավազանին, ջրերի մեջ բուժում էին գտնում իրենց հիվանդությանը։ Ջուրը նաև մաքրության խորհրդանիշն է. հիշում եք նաև, երբ աշխարհը ապականության մեջ այլևս կործանվում էր, Աստված միակ միջոցը, միակ բալասանը, որ առաջադրեց մարդկությանը՝ ջրհեղեղով աշխարհը լվանալն էր, ջրհեղեղով մարդկային մեղքերը քավության առաջնորդելն էր։ Ահա այսպիսի մաքրություն ենք ստանում մենք յուրաքանչյուրս Մկրտության արարողության ժամանակ, երբ խորասուզվելով ավազանի ջրերի մեջ՝ քահանայի օրհնության ներքո աղոթքներն ենք ստանում, թե Տեր Աստված, լվա այս երեխայի, մկրտվողի մեղքերն այս ջրի մեջ և նրան որդեգիրը և ժառանգակիցը դարձրու Սուրբ Հոգու և Քո Որդու։

Ջուրը նաև, ինչպես նշված է մեր աղոթքի մեջ, որ քիչ հետո պիտի ընթերցվի, մեղքերին թողություն է պարգևում, թույլ չտալով, որպեսզի մեղքերը և սատանայի ներ-

գործությունը մեծապես ազդեցություններ գործեն մեզ վրա։ Ահա այս ջուրն է, որ քիչ հետո պիտի օրհնվի՝ նրա մեջ հեղելով Մյուռոնի սրբարար հեղուկը, պիտի դառնա մեր ժողովրդի համար օրհնության նոր աղբյուր, օրհնության և առողջության նոր գրավական։

Սիրելի քույրեր և եղբայրներ, այսօրվա ջրի օրհնությունը, ջրի արժեքը վերստին մեզ անդրադարձնել է տալիս, վերստին մեր մտքերն ուղղել է տալիս մեր միջավայրի, մեր մթնոլորտի, մեր երկրի նկատմամբ հոգացողությանը, բնական միջավայրի անաղարտ պահպանությանը, որպեսզի յուրաքանչյուրս կարողանանք գնահատել բնական, նյութական այն արժեքները, որոնք պայմանավորում են մեր բնական և առողջ կենսակերպը։ Եվ նաև մեզ վերստին անդրադարձնել է տալիս հոգևոր մաքրության անհրաժեշտությունը, որ յուրաքանչյուրս պարտավոր ենք վերստին սրբվել, մաքրվել, վերստին այս ջուրը ևս մեկ առիթ դարձնել անդրադառնալու համար հոգևոր մեր ընթացքին, անդրադառնալու համար մեր կյանքի տարատեսակ խոտորումներին, սայթաքումներին այլևս չկրկնելու մտադրությամբ և վճռականությամբ։

Թող Տիրոջ օրհնությունը ամենքիս հետ լինի, և այս ջուրը, որ քիչ հետո պիտի բաշխվի ձեզ՝ իր մեջ կրելով սրբարար հեղուկը՝ Սրբալույս Մյուռոնը, թող առողջություն բերի ձեր ընտանիքներին, առողջություն, քաջալերանք, առույգություն, ուժ, կորով և նորոգություն մեր ժողովրդի զավակներին, որպեսզի կարողանանք անդադրում կերպով միմյանց սիրել, անսակարկ և անկաշառ միմյանց նվիրվել, միմյանց հանդեպ լցվել ամբողջական բարությամբ, անշահախնդիր բարությամբ և այսպես աստվածաշավիղ ընթացքով շարունակել մեր կյանքը։

Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 հոկտեմբերի 2008 թ.)

«Տիրոջ Հոգին Իմ վրաս է, անոր համար իսկ օծեց Զիս»:

(Երեմիա)

Քրիստոս «օծված» ըսել է: Հին ժամանակներուն թագավորները կօծվեին յուղով, մեր Մյուռոնի նման: Սրբությունները կօծեին այդ Մյուռոնով, և եթե նոր թագավոր պիտի հռչակեին, կօծվեին յուղով, և այդ յուղը խորհրդանիշն էր Ս. Հոգիի, Աստծո անտեսանելի Հոգիին, որ մեր շուրջն է, մեր ներսն է, ամեն ինչ կստեղծե, ոտքի վրա կբռնե և ինչ որ մենք Աստուծո հետ գործ ունինք, այս Ս. Հոգիի միջոցով կկատարվի: Սակայն այս Ս. Հոգին որոշ մարդիք ավելի շատ ունին, այդ հոգիով լեցված են, այդ Հոգիով Աստված զանոնք կուղարկե աշխարհ հատուկ գործ կատարելու, ինչպես մարգարեները, հետևաբար Տեր Հիսուս օծված Փրկիչն է, ոչ թե յուղով օծված, այլ Ս. Հոգիի ամբողջ լիությունը իր մեջն ուներ և Ս. Հոգին իրեն կառաջնորդեր և նաև Ս. Հոգիով լեցված հզոր և զորավոր գործեր կկատարեր:

Մարգարեական շնորհ է այս Ս. Հոգիով օծված լինելը և Ս. Հոգիով օծված անձը պաշտոն մը ունի՝ ժողովրդին երթալու, և շատ դժվար պաշտոն է ասիկա, որովհետև ինքը՝ Ս. Հոգին, ճշմարտության հոգին է, իսկ ժողովուրդը կիսաստվերի մեջ ապրող հավաքականություն է, սուտերուն ծախված է, հազար ու մեկ խավարներուն մատնված, ժողովուրդը ժամանցի մեջ է, ժողովուրդը կույրզկուրան կընթանա, և Աստված երկինքեն կնայի և կըսե՝ ինչ՞պես փրկեմ այս մարդոց, ի՞նչ ես ըսեմ, որ այս մարդիկ իրենց ճամփան շվարած են: Եվ մարգարեները կուղարկե, մարգարեները կուգային և ճշմարտությունը կխոսեին, և ժողովուրդը կհալածեր մարգարեները, որովհետև ժողովուրդներու ուզածը ճշմարտությունը չէ, հաճելի ժամանցն է հաճախ: Իրենք իրենց ուզածին պես կրոնք կուզեն նաև. մի քիչ մոմի լույս, մի քիչ խունկ, մի քիչ խաչ հանել և հետո երթալ՝ կարծելով, որ իրենց պարտականությունը կատարած են: Եվ մարգարեներն ելան բոլոր դարերու ընթացքին և ըսին, որ սխալ կընեք. Աստված լուրջի չառնելով մեծ սխալ կընեք, ձեր կյանքին կենտրոնը՝ Աստված, արդարությունը և ճշմարտությունը չդնելով, մահն անտեսելով՝ մեծ սխալ կգործեք. ե՛տ դարձեք և շիտակ ապրեցեք:

Այսօրվան Ավետարանը մեզի կխոսի, որ Ս. Հոգիով օծված Տեր Հիսուսը կերթա իր քաղաքը՝ Նազարեթ, հոն ինքը երեսուն տարիներ ապրած էր, ատաղձագործ էր, հյուսնի որդի, երբ իր գործերը գիտեին, կճանչնային իրեն, սակայն իր քաղաք՝ Նազարեթ երթալե առաջ, արդեն ուրիշ քաղաքներ հանդիպած էր, հոն համբավ մը ստացած էր, հրաշքներ կգործեր, իրմե առաջ հասած էր իր համբավը Նազարեթ, բայց չէին հավա-

տար Հիսուսի իրենց ըսածներուն։ Երբ Հիսուսին հերթը եկավ շաբաթ օրը, իրենց սուրբ օրը Սինագոգ մտավ, ամենը հավաքվեցին և իրեն տվին այդ օրվան գիրքը կարդալու և մեկնելու առիթը։ Հիսուս բացավ և Եսայի մարգարեի կողմե իրեն համար նախագուշակված այդ հատվածը գտավ և կարդաց. «Տիրոջ Հոգին Իմ վրաս է, անոր համար իսկ օծեց Զիս, Ինձ ուղարկեց աղքատներուն ավետարանելու, սրտով բեկյալներուն բժշկելու, գերիներուն ազատություն քարոզելու, կույրերուն տեսություն, կեղեքվածներուն ազատ արձակելու և Տիրոջ ընդունելու տարին հռչակելու»։ Երբ սկսավ բացատրելու, ըսավ, որ այս խոսքերը իրականացան։ Երբ որ Հիսուս կխոսեր, կզարմանային, կհիանային Իր բերնեն ելած խոսքերուն և կըսեին, որ այս մեզի ծանոթ Հիսուսն է, տարի մի առաջ մեզի հետ էր մինչև, հյուսնի որդին չէ ասիկա, ուրեմն այս խոսքեր ուրկեից է, ինչպես այսպես գեղեցիկ կխոսի, արդյոք հիմա մեզի ալ հրաշքներ ցույց պիտի տա։ Եվ երբ որ Հիսուս տեսավ, որ Իրեն լուրջի չեն առներ, անոնց ըսավ, որ ոչ մեկ մարգարե Իր տունը հարգի չէ, չընդունվիր, որովհետև հեռուին սուրբը զորավոր կըլլա և անոնց սկսավ բաներ մը պատմելու, որ իր դեմ լավ տրամադրված ժողովուրդ մեկեն մեկ խենթացավ, կատաղեցավ։ Ի՞նչ ըսավ Հիսուս, ինչո՞ւ համար այս ժողովուրդը այսպես բարկացուց, որովհետև սկսավ Հիսուս ճշմարտությունը խոսել, Հիսուս ըսավ, որ դուք կհավատաք, որ հրեա եք, դուք կհավատաք, որ ընտրեալ ժողովուրդ եք, դուք կհավատաք, որ Աստված ձեզի հետ է և դուք կհավատաք, որ մյուս ազգերն անպիտանի են Աստուծո, դուք Աբրահամի որդիներ եք, բայց գիտեք այն գիրքը, որ ես ձեզի հիմա կարդացի, անոր մեջ այնպիսի օրինակներ կան, որ Աստված ոչ թե կնայի ազգին, այլ կնայի անհատին և անոր սրտին, և իրենց պատմությունից երկու օրինակ կբերե՝ Եղիա մարգարեի և Եղիսե մարգարեի օրինակը, և կըսե, որ երբ որ Եղիա մարգարեի ժամանակը Աստված մեծ սով պիտի ուղարկեր այդ երկիրը (երեք տարի վեց ամիս) և պետք է այդ մարգարեն պահվտեր թագավորի բարկութենեն, Աստված իրեն ուղարկեց Սիդոնի հեթանոս ազգի մը այրի կնոջ տունը և այդ կինը պահեց։ Հրեաստան շատ այրի կիներ կային, շատ ընտանիքներ կային, բայց Աստված ուղարկեց այդ կնոջ, որովհետև շատ մը հրեաներեն ավելի հավատացյալ էր այդ կինը և ավելի հաճելի Աստուծո։ Եվ Եղիսե մարգարեն, որ բժշկության մեծ շնորհք ուներ և Հրեաստան շատ բորոտներ կային, բայց սիրիացի զորավար մը՝ Նաղամանը, եկավ և բուժվեցավ իրմե, ուր էին այդ շատ բորոտները հրեաներուն, ինչո՞ւ չբուժվեցան. որովհետև հավատք չունեին, երբ որ ասիկա լսեցին, արդեն իրենց գույնը փոխվեցավ, այլևս իրենց առջևը մեկը կգտնվե որ իրենց ամենեն թանկագին բաները կքննադատեր. հրեաներն ազգ մըն էին հռոմեական կայսրության ներքո, ճզմված ազգ մըն էին, փոքր ազգ մըն էին, մեզի պես հսկա սփյուռ մը ունեին և չէին կրնար փրկվել հռոմեացիներու լուծեն, բայց անոր հակառակ ազգամոլություն զարգացուցած էին, ազգամոլություն, և կսկսեին իրենց անցյալով շատ հպարտանալ, բայց իրենց ներկան էլ այնքան հաճելի չէր Աստծուն, հետևաբար, սիրելիներ, մենք Նազարեթի ժողովուրդին պես ենք. կսիրենք կրոնքը, մինչև որ մեզի քննադատելու սկսին, մինչև որ մեր սխալները ցույց տան և հավատացյալ բազմություններու ամենեն մեծ սխալներեն մեկն ալ ընդհանրապես իր անցյալով, իր ազգով, իր եկեղեցիով, իր անցյալի տիտաններով շատ հպարտանալն է, սակայն առանց փորձելու այդ մարդոց օրինակները։ Հրեաները այդպես էին։

Ամերիկացի նախագահներեն Աբրահամ Լինքոլնի կյանքի մեջ պատմություն մը կա. ինքը քարտուղարի պետք ուներ, մրցույթ կիրավիրվի, անոնցմե տասը հոգի կընտրեն և մեկ առ մեկ կտեսնվի անոնց հետ։ Երիտասարդ մը կուգա և երիտասարդին կդառնա, կըսե, որ երիտասարդ պատմե քո մասին և կըսկսի պատմելու՝ կըսե, որ իմ նախահայրերս Ամերիկա ամենեն առաջին եկողներեն են, իմ մեծ-մեծ հայրս կարմրամորթներուն՝ հնդիկներուն դեմ մեծ արշավանք կատարեց, իմ մեծ հայրս ազատության պատերազմին զորավարներեն մեկն էր Վաշինկտոնին կողմ, իմ քեռիս այս էր, իմ հորեղբայրս այս էր։ «-Կեցիր, կեցիր,- կսե Լինքոլնը,- կեցիր։ Երիտասարդ, դուն ինչի կնմանիս, գիտե՞ս, կարտոֆիլի։ Երիտասարդը շոկ կլլա։ -Որովհետև կարտոֆիլը այնպիսի բույս մըն է, որ իր լավագույն կողմը հողին տակն է, դուն ալ այդպես մինչև հիմա պատմեցիր հողին տակը գտնվողներու մասին, հիմա խոսիր քո մասին. դուն ով ե՞ս»։

Մենք ո՞վ ենք, սիրելիներ, մեր հավատքի որակն ի՛նչ է, Հայ Առաքելական Եկեղեցիի զավակներու հավատքի որակը ի՛նչ է, գիտե՞ն, թե ով է Քրիստոս, եթե մեկը փողոց դարձնե և ըսե՝ խնդրեմ ինձի պատմե, հինգ րոպե, Քրիստոսի, քրիստոնեության մասին, կարո՞ղ են խոսելու։ Մեր հպարտությունն ուրեմն ինչի՞ մասին է, որովհետև առաջին քրիստոնյա ազգ ենք անո՞ր մասին, որովհետև ունինք մենք Նարեկները, Տաթևները, որովհետև մենք ունինք Մեսրոպ Մաշտոցը անոնց հետ հպարտանա՞նք միայն։ Տեր Հիսուս կըսե, դուք, կըսե, մարգարեներու համար դամբարաններ կշինեք, կմեծարեք և կըսեք, որ մենք մեր հայրերու ժամանակը ըլլայինք այդ բաները չէինք ըներ, չէինք մեռցներ։ Հիսուս կըսե, որ չէ, դուք ալ նույնը կընեիք, ինչու համար, որովհետև մարգարեն այն անձն է, որ կկենա ժողովրդի և Աստուծո միջև, երբ ստիպված է ճշմարտությունը խոսելու և ճշմարտությունը անհանգիստ կընե, ճշմարտությունը տակն ու վրա կընե մեզի, մենք կուզենք ավելի երազ տեսնել, մեր երազները, հաջողության երազները, հարստանալու երազները և չենք սիրեր մեկ, որ հիշեցնե մեզի մահվան անգութ շուքը։

Սիրելինե՛ր, այսօրվան Ավետարանը կըսե, որ երբ որ ժողովուրդը Հիսուսի այս խոսքերը լսեց, բարկությամբ լեցվեցան, սկսան բռնելու իրեն օձիքեն, հագուստներեն, քշելով, հրմշտկելով տարին դեպի անդունդ, ուր Նազարեթի քաղաքը շինված էր և այդ ժայռերեն նետել կուզեին իրեն, մեռցնել կուզեին և Հիսուս իրենց ձեռքեն խուսափեցավ, սպրտեցավ և գնաց, գնաց ուրիշ տեղեր քարոզելու։ Այս Ավետարանը շատ խորհրդական է. Քրիստոս անպայման կուգա քեզի, Ավետարանի խոսքով կուգա, Քրիստոս կուգա քարոզի խոսքով, կուգա, երբեմն դրացիիդ խոսքով կուգա, երբեմն եկեղեցիի զանգակով կուգա քեզի և դուն անհանգիստ կլլաս, բայց պետք է անհանգիստ ըլլաս, որովհետև անիկա վերջին բուժման անհանգստությունն է։ Անիկա հիվանդության բուժման դառն դեղն է և պետք է առնես անիկա քո մեջդ։ Հարկավ, կրնաս ուզել փրկվիլ Հիսուսին, և անիկա կձգե քեզի և կերթա ուրիշ տեղեր։ Այսօրվան Ավետարանը կըսե մեզի՝ քու անձնական դիրքիդ ինչ է Քրիստոսին։ Մեր ազգերը, մեր պապերը մեծ գործեր ըրին, մեզի մեծ ժառանգ թողուցին, բայց գիտենք, որ հավատքը անձնական է և շնորհն ալ անձնական է։ Այս պատարագին մեջ, որ Աստծո Հոգին կիջնե, հաց և գինին Քրիստոսի մարմնի և արյան կվերածե, բայց ո՛չ թե ամենուն համար, թեև

հարյուր հոգի կառնե այս հաղորդությունը, բայց ամենը նույն շնորհը չստանար, որովհետև շնորհին անձնական է, քեզի համար կուգա, քո հավատքիդ համաձայն կուգա։

Եկե՛ք մեր հավատքը զարգացնենք, սիրելիներ, եկե՛ք Ավետարանը կարդանք, հոն Հիսուս խոսի մեզի, մեր կյանքի մասին հարցնե մեզի, ցավցնե մեզի, տխրեցնե մեզի և մեր մեջը ապաշխարության հոգի արթնցնե և այն ատեն մենք նոր կյանքի կսկսինք և Նազարեթի այս ժողովուրդի ճակատագրին չենք ենթարկվիր, իրենց մեջեն մարգարե, մարգարեեն ավելի Աստծո Որդին եկած էր և իրենք չճանչցան, որովհետև իրենք ուրիշ բաներ կսպասեին։ Եկեք մենք ճանչնանք, առիթը կա։ Ավետարանը բաց կարդա, ծունկնդրե և աղոթե և ուզե, որ Աստված քեզ բանա Իր գաղտնիքները, գա և քեզի օծե Իր Հոգիովը։

Տերն օրհնե մեր բոլորը ճշմարտության հոգիով, քալենք լույսի մեջ և իմանանք, թե դեպի ուր կերթանք։

Տերը օրհնե ձեր բոլորը. Ամեն։

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՄՈՒՏՔ

Քրիստոնեական Եկեղեցիների բույլում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ մեծ հետաքրքրություն է ներկայացրել իր ինքնատիպությամբ, դարավոր պատմությամբ, ուղղափառ վարդապետությամբ, սրբազան ծեսով, շնորհաշատ Հայրերով… Առանձնակի համակրանք է վայելել նաև Հայոց Եկեղեցու «*երջանիկ եւ աշխարհալուր, եռամեծ եւ տիեզերալոյս հռետորն քրիստոսատիպ եւ արթուն անուն Գրիգոր վարդապետն*»[1]:

Ս. Գրիգոր Տաթևացու աստվածաբանության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում նրա քրիստոսաբանությունը: Քրիստոնեական ջինջ հոգի ունեցող հեղինակն անկեղծ սիրով է լցված առ Քրիստոս Փրկիչը: Նրա քրիստոսաբանական հրամանակարգ տեսության մեջ մեծ կարևորություն և տեղ է հատկացված *«Ընդդէմ հերձուածողաց»* հակաճառությանը, որը ներկայացված է դպրական (scholastic) իմաստասիրության ոճով՝ հարց ու պատասխանի տեսքով: Ի դեմս հերետիկոսների՝ առաջադրվում են զանազան հարցեր, որոնց հաջորդաբար տրվում են սպառիչ պատասխաններ: Այսօրինակ բնույթ է կրում *«Գիրք Հարցմանցը»,* ուր կարմիր թելի նման նկատելի են աստվածաբան վարդապետի քրիստոսաբանական շեշտադրումները: Եռամեծ սուրբը նախ և առաջ դատապարտում է Արիոսի ու ծայրահեղ Եվնոմեոսի մոլար աղանդները, որոնք փորձում էին մթին ստվեր գցել ուղղամիտ քրիստոսաբանության վրա: Ապա հզոր դավանաբանն անդրադառնում է երկաբնակ քաղկեդոնականներին, որոնց ուսմունքն անվանում է որպես *պաճուճեալ* նեստորականություն:

Քրիստոսաբանական խոր թափանցումներով հարուստ է նաև «*Ոսկեփորիկ*» կոչվող գիրքը, որը, արդարև, ոսկե փորիկ (սափոր) է Հայ Եկեղեցու աստվածաբանության զուլալ աղբյուրում: Ոչ պակաս քրիստոսաբանական տեսությամբ են ճոխացած *Ճմեռան* և *Ամառան* քարոզագրքերը: Նման հրամանակարգերի հանդիպում ենք նաև նրա մեկնողական ժանրի աշխատություններում: Ի մասնավորի՝ *«Հովհաննու Ավետարանի մեկնության»* մեջ բավական ընդարձակ կերպով խոսվում են քրիստոսաբանական առանձնահատուկ գծերի մասին:

Միով բանիվ, Հայ Եկեղեցու ընկալյալ քրիստոսաբանության՝ Ս. Գրիգոր Տաթևացու

---

[1] **Առաքել վարդապետ**, տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան որ կոչի Ճմեռան հատոր* (այսուհետ՝ *Ճմեռան*), Կ. Պոլիս, 1740, էջ 717:

կատարած վարդապետումները վկայում են նրա մտահոգությունը քրիստոսաբանական մտքի անաղարտ պահպանության վերաբերյալ, որոնք էլ մատենագրական հսկայածավալ ժառանգությամբ կտակել է հետագա սերունդներին:

Հարկավ, երբևէ հնարավոր չէ մի քանի էջերում ամբողջությամբ սպառել քրիստոսաբանական ողջ տեսակարգը, այն էլ՝ տաթևյան հարուստ ոգեկանությամբ շաղախված: Բայց և այնպես, քրիստոսաբանական կարևորագույն կետերից *Փրկչի մարդեղությունը*, *Քրիստոսի միավորությունը* և *Քրիստոսի մարմնի անապականությունը* փորձել ենք ամփոփ կերպով շարադրել: Ջանացել ենք նվազագույնի հասցնել կողմնակի ընդմիջարկությունները, այն էլ բացառապես խիստ անհրաժեշտության դեպքերում:

Խնդրո առարկա հարցերը, որոնք հաճախ շահարկվել են ինչ-ինչ նպատակների համար, մշտապես հուզել են աստվածաբաններին ու քրիստոնյա մտածողներին՝ տեղիք տալով զանազան վեճերի և տարաձայնությունների: 451 թ. գումարված Քաղկեդոնի ժողովում քննարկման նյութ դարձած Քրիստոսի երկու բնությունների հարցը, փաստորեն, պատճառ հանդիսացավ Ընդհանրական Եկեղեցու պառակտման. արդյունքում քրիստոնեական աշխարհում ի հայտ եկան Եկեղեցիների երկու մեծ խմբեր՝ քաղկեդոնական ու հակաքաղկեդոնական…

Եկեղեցու պատմությունից գիտենք նաև, որ տարբեր ժամանակներում ապրած հերետիկոս–աղանդավորները, առաջ քաշելով իրենց սխալ և մոլորեցնող գաղափարները, գայթակղության քար են հանդիսացել հավատացյալ հոտի համար ու միևնույն ժամանակ լուրջ վտանգ ներկայացրել Եկեղեցու միասնականության պահպանմանը: Ուստի նրանց մարտահրավերներից պաշտպանվելու և դրանց դիմակայելու համար անհրաժեշտ է ըստ ամենայնի ուսումնասիրել ու սերտել Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ուղղափառ վարդապետությունը՝ իբրև վահան ունենալով ուղղափառ հավատքը, որով կարողանանք *«զամենայն նետս մուխս չարին շիջուցանել» (Եփես. Զ 16)*: Ցավալի է, սակայն բոլոր դարերում էլ գտնվել են *ոմանք չարափառք*, որոնք, փորձելով խաթարել ուղղափառ միտքը, ջանացել են պղտորել Ս. Եկեղեցու վճիտ աղբյուրը: Սրանց դավադիր ձգտումներն իրենց անփառունակ վախճանին են հասնում տաթևյան հերձվածասպան խոսքով:

Շատերի համար թերևս ժամանակավրեպ համարվի Եկեղեցու վարդապետության իմացությունը այն թյուր պատճառաբանությամբ, թե իբր փոխվել են ժամանակները, և հիմա կարիք կա զբաղվելու ավելի «այժմեական» խնդիրներով: Ինչ խոսք, դրանք այսօր չափազանց կարևոր են, բայց ոչ երբեք ի հաշիվ մյուսի: Աստծո խոսքը եղել է, կա ու միշտ անփոփոխ կմնա, որի կենդանի կրողները պետք է լինենք մենք՝ Տիրոջ բանավոր հոտի անդամներս, զի «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան»(Եբր. Ժգ 8):

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆՆ ՓՐԿՉԻՆ

«Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»
(Հովհ. Ա 14):

Բանն Աստված մարդացավ, *«մարմին եղեւ»* ու բնակվեց մարդկանց մեջ...

Աստվածային էությունն անքննելի, և արարչական խորհուրդներն անհասանելի են ոչ միայն հողանյութ, այլև աննյութ արարածներին: Այսպիսին է նաև Բանի մարմնացումն ու Աստծո մարդեղությունը՝ «*խորհուրդ մեծ եւ սքանչելի*»[2]:

Աստված մարդացավ... Ոչ թե կարոտ էր մարդացման, այլ Իր անբավ մարդասիրությունից մղված, որով ստեղծեց զգալի և իմանալի աշխարհները, մարդ դարձավ, հագավ մարդկային բնություն, ընդունեց ծառայի կերպարանք, որպեսզի արարածներս հաղորդակից լինենք Իր անճառելի աստվածությանը: Նա մեզ խոստացավ փրկություն ու տվեց հույսը հավիտենական կյանքի: Պետք էր՝ Աստված խոնարհվեր, որպեսզի մարդը բարձրանար՝ նման Ս. Աթանասի նշանավոր մտքի. *«Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»*[3]:

Աստված մարդուն թագ և պսակ ստեղծեց ողջ արարչության համար: Նրան պատվեց Իր նմանությամբ՝ շնորհելով անմահ հոգի, բանական միտք ու անձնիշխան կամք, որով ազատորեն ընտրում է բարին կամ չարը: Եվ որովհետև մարդն իր ազատությամբ հետևեց չարի պատրանքներին, դատապարտվեց Աստծո արդարությունից ու պատժվեց մահվամբ: Ադամի որդիների մեջ չկար այնքան արդար մեկը, որ կարողանար ոտքի կանգնեցնել անկյալ մարդկությանը: Չկար նաև այնքան համարձակ մեկը, որ ի վիճակի լիներ վերացնել դատապարտության վճիռը, որով նախաստեղծներն արտաքսվեցին *«փափկութեան»* դրախտից:

Սատանան չարախոսում էր, թե մարդիկ բնությամբ և ոչ թե ազատ կամքով են մեղանչում: Սրանով նախ մեղադրում էր Աստծուն, թե ինչո՞ւ մարդկանց մեղսահակ բնությամբ ստեղծեց, որով հանապազ մեղանչում են: Ու չկար մեկը, որ բռներ չարախոսի սուտը, քանզի մարդկանց մեջ չգտնվեց անմեղը: Ադամից մինչ Քրիստոս բոլոր մարդիկ դժոխքում գերված էին չարի կապանքներով: Մարդն իր անհնազանդությամբ մերկացավ *«եօթնարփեան»* շնորհներից ու *«երկոտասան»* պարգևներից: Զրկվելով ու խավարելով աստվածային գերապայծառ լույսից՝ իր և Արարչի միջև անհաշտ թշնամություն սերմանեց: Մահն օրըստօրե զորացավ ու իսպառ կլանեց մարդկային բնությունը: Ոչ ոք չկար, որ կարողանար մահվան կապանքներից խլել մարդկությանը, քանի որ ամենքն էլ դարձան մահկանացու, զի «*վարձք մեղաց մահ են*» (Հռոմ. Զ 23): Մեռան Ադամից բոլոր ծնվածները, հող ու փոշի դարձան՝ համաձայն տերունական հրամանի, թե *«հող էիր եւ ի հող դարձցիս»* (Ծննդ. Գ 19): Եվ ոչ ոք չուներ հույսը հարության: Մեռան ոչ միայն մարմնով, այլ, որ սոսկալին է, նաև հոգով: Կին թե տղամարդ, ծեր թե մանուկ, հարուստ թե աղքատ, մի խոսքով բոլորը դարձան մեղքի ստրուկը՝ հնազանդորեն ծառայելով դրան, ինչպես ասում է Ս. Գիրքը. «*Ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն աւուրս*» (Ծննդ. Զ 5), նաև՝ «*Ապականեցաւ երկիր առաջի Աստուծոյ, եւ լցաւ երկիր անիրաւութեամբ*» (Ծննդ. Զ 11), և թե՝ «*Միտք մարդոյ հաստատեալ են ի խնամս չարի ի մանկութենէ իւրմէ*» (Ծննդ. Ը 21): Եվ բնավ չգիտեին Աստծո արդար դատաստանի մասին, որը սրի նման կախված ունեին իրենց գլխավերևում:

Առաջին Ադամը մեզ ժառանգություն թողեց մարդկային եղծված ու ապականված բնություն, որը կրեց ամեն մի ադամորդի: Պատվիրանազանցությամբ նախածնողներն

---

[2] *Շարակնոց*, Էջմիածին, 1999, էջ 22:

[3] Հմմտ. **Քյոսեյան Հ.**, *Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.)*, «Մագաղաթ», Երևան, 2007, էջ 50:

իսկույն հոգով մեռան. «*Յորում աւուր ուտիցէք ի նմանէ, մահու մեռանիցիք*» (Ծնն. Բ 17): Ապա շատ տարիներ անց մեռան նաև մարմնով՝ համաձայն արարչական հրամանի, թե «*հող էիր եւ ի հող դարձցիս*»:

Արդ, *«Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ…»* Աստված, որ հույժ արդար է Իր արարածների նկատմամբ, չկամեցավ մեղավորի մահը, այլ՝ մեղքերից նրա դարձն ու ապրելը: Ուստի **ծնվեց մարդուց իբրև Մարդ և արդարացրեց մարդուն իբրև Աստված**†: *«Եւ Բանն մարմին եղեւ»*, որպեսզի մարմնավորներիս ազատի անեծքի դատապարտությունից՝ անեծք դառնալով մեզ համար: Կատարյալ Աստված դարձավ կատարյալ Մարդ՝ «*հոգւով եւ մտօք եւ մարմնով*»[4], կրեց մարդկային բոլոր կրքերը՝ բացի մեղքից: Խցեց բանսարկուի ստախոս բերանը, որն ասում էր, թե մարդիկ բնությամբ են մեղանչում, ուստի ենթակա չեն պատժի, քանզի Աստված նրանց այդպես է ստեղծել: Աստծո միածին Որդին Իր անմեղ մարմնով Խաչի վրա Հորը մատուցած հավիտենական Պատարագով և Իր անապական մահվամբ պատռեց մահացու մեղքերի պարտամուրհակը: Բանի մարդեղությա՛մբ միայն Աստված հաշտվեց մարդու հետ: ***«Բանն Աստուած անմահ, էառ զմահկանացու բնութիւնս մեր, եւ միաւորեաց ընդ Իւրում աստուածութեանն, եւ մեռեալ անմահն մարմնով, զմահ մեր երարձ, եւ զանմահութիւն ի մեզ հաստատեաց»***[5], որպեսզի մեզ՝ մեռածներիս, շնորհի անմահություն. «*ո՞ւր է յաղթութիւն քո, մահ. ո՞ւր է խայթոց քո, դժոխք*» (Ովսէէ ԺԳ 14): Քանզի «*որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին*» (Ա. Կորնթ. ԺԵ 22): Աստծո մարդացումը գծեց մարդու աստվածացման ուղին: Ադամական անկենդան բնությունը նորոգվեց Քրիստոսի մահվամբ:

Մահը լինում է երկու տեսակ, այսինքն՝ հոգու և մարմնի: Կրկնատեսակ է նաև կյանքը: Հոգին բնությամբ անմահ է, քանզի պատկերակից ու նմանակից է անմահ Աստծուն: Այլ հոգու մահ կոչվում է մեղքը, որով այն, տարագրվելով Աստծուց, դառնում է մեռյալ, որովհետև ինչպես հոգին է մարմնի կենդանությունը, այնպես էլ հոգունը՝ Աստծո Հոգին, Որից բաժանվում է մեղքով: «*Ես եմ Ճանապարհն եւ Ճշմարտութիւնն եւ Կեանքն*» (Հմմտ. Հովհ. ԺԴ 6) և «*Հացն Կենաց*» (Հմմտ. Հովհ Զ 35),– ասում է Հիսուս:

Արդ, Քրիստոս Իր առաջին գալստյամբ կենդանացրեց մարդու հոգին, իսկ երկրորդ գալստյամբ հարություն է տալու նաև մարմնին՝ «*յաւուր յայտնութեան եւ միւս անգամ գալստեան*»: Ուստի *«Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»*, որպեսզի մեզ բնակեցնի Հոր մեջ: Սակայն անպատշաճ էր, որ Հայրը մարմնանար, քանզի անսկիզբ է, այլապես *«յաշխարհս ոչ ոք լինէր անսկիզբն»*[6]: Իսկ եթե մարմնանար Սուրբ Հոգին, ապա կստացվեր երկու Որդի: Այլ *«Բա՛նն մարմին եղեւ»*, ու աստվածության երեք անձերը մնացին անշփոթ: Աստծո միակ Որդին *ի լրումն ժամանակաց* իջավ Ս. Կույս Մարիամի ամենամաքուր արգանդը: Այնտեղ ժուժկալելով ինն ամիս և հինգ օր՝ վերցրեց նրա անարատ արյունից ու «*միաւորեաց ընդ Իւրում Աստուածութեանն*»[7]: Եվ *Բանն մարմին եղեւ*՝ հո-

---

[4] *Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ* (այսուհետ՝ *Ժամագիրք*), Նիւ Եորք, 1986, էջ 6:

[5] *Ձմեռան*, էջ 36:

[6] **Գրիգոր Տաթեւացի**, *Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին*, Էջմիածին, 2005, էջ 75:

[7] *Ժամագիրք*, էջ 6:

գով, մտքով և մարմնով՝ «*մի անձն, մի դէմ եւ միաւորեալ մի բնութիւն*»[8]: Աստված մարդացավ անփոփոխ և անայլայլ կերպով՝ «*անսերմն յղութիւն եւ անապական ծնունդ*»[9]: Ու քանի որ մարմնով ծնվածն Աստված է, հետևաբար Մարիամն *աստուածածին* է՝ մնալով *միշտ Սուրբ Կույս*:

ՎԱՄՆ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

«Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»
(Հովհ. Ա 14)

Բանը մարմին եղավ, այսինքն՝ առանց փոփոխման միավորվեց մարմնին: Ոչ թե Բանը վերածվեց մարմնի, այլ մնալով միշտ Բան՝ մարմին եղավ՝ ըստ անճառ միավորության: Բանի մարմնացումով հայտնի դարձավ Քրիստոսի աստվածությունը, քանի որ Բանն առանց մարմնի Քրիստոս չէ, այլ Բանը, որ մարմին եղավ:

Արդ, Քրիստոս մարդկայի՞ն բնությամբ է Աստված, թե՞ աստվածային բնությամբ՝ Մարդ: Որպեսզի խույս տանք երկակի ծայրահեղությունից՝ նեստորական մարդապաշտությունից ու եվտիքյան շփոթությունից, հարկ է ուղղընթաց առաջանալով՝ փախչել երկու մոլորություններից էլ՝ խոստովանելով, թե «*Քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն Մարդ է, եւ մարդկային բնութեամբն Աստուած է*»[10]: Քրիստոս անունն էլ դա է ուսուցանում՝ աստվածությամբ Մարդ լինելը և մարդկությամբ Աստված լինելը: Ոչ թե սոսկ մարդ է Քրիստոս կամ լոկ Աստված, այլ երկուսի կատարյալ միավորությունը: Սակայն երկուսը չեն, այլ մեկը, քանզի **միավորվում են բաժանաբար և բաժանվում են անբաժանաբար**: Բայց նեստորականներն ու քաղկեդոնականները ուրանում են բնությունների միավորումը՝ սուտ պատճառ բերելով միավորությամբ Նրանում շփոթության ներմուծումը: Թեպետ *«Բանն մարմին եղեւ»*՝ միավորվելով մարդկային բնությանը, դրանից, սակայն, շփոթություն կամ խառնակություն չներմուծվեց, ինչպես պարագան է հոգու և մարմնի անշփոթ միավորության: Ուստի *«Բանն մարմին եղեւ»* առանց շփոթման՝ ադամական բնությունը կատարելապես միավորելով Իր աստվածությանը: Եվ որովհետև մի է Քրիստոս, ինչպես ասում է առաքյալը. «*Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն*» (Եփես. Դ 5), մի է և Նրա բնությունը: Բանի մարմնացումը տեղի ունեցավ ծայրագույն միավորությամբ՝ վեր մարդկային բնությունից: Քանզի Անեղը միավորվում է եղականի հետ՝ անփոփոխ ու անբաժան միավորությամբ: Սակայն ինչպե՞ս է, որ Քրիստոս միաժամանակ մարդ է և Աստված. սույնը վեր է բոլոր մտքերից ու խոսքերից՝ հասու լինելով միայն Իրեն՝ Աստծուն: Պարտ է հավատքը գերադասել մտքից, և Քրիստոսին կատարյալ Աստված ու կատարյալ Մարդ խոստովանել. Աստված՝ աստվածությամբ և Մարդ՝ մարդկությամբ: Եվ սա լինում է ոչ թե մասամբ կամ բաժանմամբ, այլ՝ ամբողջությամբ ու միավորությամբ: Աստված կոչվում է Մարդ, և մարդը՝ Աս-

---

[8] Անդ:
[9] Անդ:
[10] **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք Հարցմանց* (այսուհետ՝ *Հարցմանց*), Կ. Պոլիս, 1729, էջ 75:

տված ոչ թե «*փոխարկապէս*»[11], այլ՝ «*փոխատրապէս*» *(metadotikw_v)*[12‡]: Նախքան մարդեղությունն էլ էր Աստված, սակայն այժմ միավորյալ մարմնով է Աստված:

Իսկ ովքեր Բանին ու մարմնին սոսկ մի բնություն են խոստովանում, կատարյալ ամբարիշտներ են, քանի որ Բանի մարմինը Կույսից է, Կույսը՝ Ադամից, Ադամն էլ՝ հողից: Եվ հողից արարվածին ու նրա Արարչին միևնույն բնություն վերագրելը մեծ ամբարշտություն է կարծվում: Իսկ միավորությունից հետո Քրիստոսի մեջ դարձյալ երկու բնություն ասողները բռնաբար բաժանում են Նրա կամքը, գործերը, անմեղ կրքերը: Այսպիսիք թեև մի անձ են խոստովանում, սակայն ուրանում են Աստծո մարդացումը, ինչպես նեստորականները: Իսկ ովքեր երկու բնությունները մեկ դարձած են խոստովանում՝ որպես թե ո՛չ Աստծո և ո՛չ մարդու, այլ՝ կիսով չափ Աստծո ու կիսով չափ մարդու, սրանք էլ փրկական տնօրենությունները ունայն և *առ աչօք* են համարում, ինչպես մանիքեցիներն ու եվտիքյանները[13]:

Արդ, երբ Բանին ու մարմնին ասում ենք մի բնություն, սա լինում է Արիոսինը, որ Բանին ու մարմնին արարած խոստովանեց և հավետ դեպի մեղքը խոտորվեց: Մի բնություն ասաց նաև Ապողինարը՝ ուրանալով Քրիստոսի հոգին ու միտքը. իբրև թե Բանը մարմնում բնակվեց հոգու փոխարեն: Եվտիքեսն էլ մի բնություն ասաց՝ շփոթելով ու խառնակելով բնությունների հատկությունները: Մի բնություն ասաց և մյուս Եվտիքեսը՝ Բանի մարմնացումը Կույսից՝ իբրև խողովակից խոստովանելով: Մի բնություն համբավեցին ճշմարիտ մարդեղությունը նմանություն և *առ աչօք* կարծողները, ինչպես երևութականները[14]: Մի բնություն ասացին և նրանք, ովքեր Բանի մարմինը երկնքից վերցված խոստովանեցին: Դարձյալ մի բնություն հռչակեցին Մարկեղոսն ու Փոտինոսը, որոնք Բանին խոստովանեցին ոչ թե Հորից ծնված՝ *նախքան զյաւիտեանս*, այլ՝ Կույսի՛ց սկիզբ առած[15]: Նրանք մարմնացյալ Բանին անանձ և անգո խոստովանեցին, ինչպիսին մարդկային խոսքն է: Այսպիսի չար հերձվածներին ու այսպես խորհողներին նզովում է Աստծո Եկեղեցին:

Իսկ միավորությունից հետո երկու բնություն խոստովանողները երկու խմբի են բաժանվում: Ոմանք, ինչպես Նեստորը, Պողոս Սամոստացին ու Դիոթորոսը, Քրիստոսին բաժանեցին երկու անձերի, երկու կամքերի և երկու գործերի՝ դավանելով երկու Որդի ու երկու Քրիստոս. մեկը՝ Տեր, իսկ մյուսը՝ ծառա, մեկը՝ բնությա՛մբ Աստծո Որդի, իսկ մյուսը՝ շնորհո՛վ: Իսկ քաղկեդոնականները թեպետ մի անձ ասացին, սակայն Քրիստոսին կրկին բաժանեցին երկու բնությունների, երկու կամքերի և երկու գործերի, ինչպես Լևոնը, Փղաբիանոսն ու նրանց համամիտ հերձվածողները: Սրանք չեն խոստովանում էությամբ և բնությամբ միությունը, այլ միայն անձամբ: Մինչդեռ անձն առանց բնության սոսկ անուն է և ոչ էություն, ինչպես Որդի, Քրիստոս կամ Հիսուս: Եվ անունները թեկուզ մի են ասում, սակայն անվանը միավորում են երկու էություն՝ աստվածային ու մարդկային՝ բաժանելով էությամբ և միավորելով որդիությամբ: Սրանց նույնպես նզովում է

---

[11] *Հարցմանց*, էջ 75:

[12] Անդ:

[13] 2 Ý 1, ¿ç 81:

[14] 2 Ý 1, ¿ç 82:

[15] Անդ:

Քրիստոսի Եկեղեցին:

Երրորդ խումբն էլ երկուսից մի բնություն եղած խոստովանեց՝ ո՛չ Աստծո և ո՛չ մարդու՝ կա՛մ ուրանալով երկուսից մեկը, կա՛մ էլ թվացյալ համարելով այն, որոնց ևս նզովում է Ս. Եկեղեցին:

Իսկ մենք՝ *«դասք ուղղափառաց»*[16], աներկբայորեն այսպե՛ս ենք խոստովանում, թե Բանն Աստված նախքան մարդեղությունը հեռու էր մարդկանցից, որքան հեռավորություն որ կարող է լինել Արարչի ու արարածի, Անեղի և եղականի, Հավիտենականի ու ժամանակավորի միջև: Եվ երբ Ստեղծիչը կամեցավ մարդ լինել, Իր կատարյալ անձով ու էությամբ ամբողջապես և անճառապես միացավ մարմնին: Ոչ թե մասամբ վերցնելով մարդկային բնություն, այլ ամբողջ բնությունը անհատ մարդկությամբ՝ բանական հոգով, իմանալի մտքով ու թանձրացյալ մարմնով, միավորեց Իր աստվածությանը անշփոթ և անբաժան միությամբ՝ երբեք չունենալով բաժանում ո՛չ դեմքում, ո՛չ բնության մեջ, ո՛չ կամքում և ո՛չ էլ գործերում: Քանզի միավորվածը չի բաժանվում, այլ երկվությունը վերացվում է միությամբ: Այս միավորությամբ Քրիստոսի մեջ ամենակատար սրտով խոստովանում ենք ***«մի անձն, եւ մի դէմ, եւ մի կերպ, եւ մի բնութիւն, եւ մի կամք, եւ մի ներգործութիւն»***[17]: Թեպետ միավորվում են բնությամբ, սակայն չեն շփոթվում տարբերությամբ: Ու ինչպես հոգու և մարմնի տարբերությունը չի խափանում միավորությունը, այնպես էլ Բանի՝ բնությամբ միությունը, քանզի «*մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ*»[18]:

ՎԱՍՆ ԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

«Մարմին Նորա ոչ ետես զապականութիւն»
(Գործք Բ 31):

Քրիստոս՝ Աստծո անարատ Գառը, որ «բառնայ զմեղս աշխարհի» (Հմմտ. Հովհ. Ա 29), չարչարվեց, խաչվեց, մեռավ, թաղվեց և երրորդը օրը հրաշափառապես հարություն առավ: Իր մահվամբ «եբարձ զմահ»[19] և Իր հարությամբ մեզ կյանք պարգևեց: Արդ, երկաբնակների դասերից եղան հերձվածողներ, որոնք Կենարարի անապական մարմինն ապականություն բարբաջեցին՝ թյուր պատճառ բերելով մահը, որը, ասացին, ապականություն է մարմնին: Իսկ որ մահն ու ապականությունը տարբեր բաներ են, հայտնի է նախ գործերից, քանզի մահվան գործը ոչ թե մարմինն ապականելն է, այլ հոգին մարմնից անջատելը: Իսկ մարմնի ապականումը մահվան հետևանքն է և ոչ թե արդյունքը: Դարձյալ՝ մարմինն ապականվում է ոչ թե հոգուց հեռացմամբ, այլ իր տարրերից զատմամբ ու քայքայմամբ: Ինչպես, ասենք, մեկը մի ծառ կտրի, իսկ մի ուրիշն էլ հատված ծառը մասնատի և այրի: Այսպես, ծառի համար ապականություն եղավ ոչ թե հատումը, այլ՝ այրումը: Նմանապես, մահը կտրում է կյանքի ծառը, իսկ փտումն ու այլայլումը ա-

[16] Անդ:
[17] ² Ý ¹, էջ 83:
[18] **Ս. Աթանաս** և **Ս. Կիւրեղ**, տե՛ս անդ:
[19] *Հարցմանց*, էջ 498:

պականում են այն: Ուստի անհեթեթ է մահն ապականություն կոչել: Նաև՝ մահը բաժանում է անձը, իսկ ապականությունը փոփոխում է բնությունը: Մահն Արարչից սահմանված պատիժ է, իսկ ապականությունը բանսարկուի արկածով եղավ, որն էլ հետևում է մահվանը:

Եվ եթե Քրիստոսի մարմինը կարելի է մահկանացու և չարչարելի ասել՝ մահն ու չարչարանքը կամավորապես հանձն առնելու պատճառով, ապա այն երբեք չի կարելի ապականացու ասել: Այլ մեր Տերը, **անապական Կույսից վերցնելով անապական մարմին, այն անապականաբար միավորեց Իր աստվածային անապական էությանը**: Մինչդեռ ապականությունը մեղքի ծնունդ է, մեղքը հույժ չար է, իսկ Քրիստոս մեղք չգործեց (Հմմտ. Ա Հովհ. Գ 5) , որի համար էլ «մարմին Նորա ոչ ետես զապականութիւն»:

Մարդկային մարմնի ապականությունը լինում է այր ու կնոջ սերմի խառնումից, մինչ Բանի մարմինը «ոչ է ի սերմանէ հօր եւ մօր»[20], այլ՝ կուսական արգանդից՝ բեղմնավորված անապական արյունից: Քրիստոսի կույս Եկեղեցին Ս. Մարիամ Աստվածամորը անապական է խոստովանում՝ ոչ թե ըստ բնության գոյացության, այլ որովհետև Բանն Աստծուն ծնեց անապական մարմնով. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո, զի որ ծնանելոցն է ի քէն, Սուրբ է» (Ղուկ. Ա 35): Արդ, եթե ծնողն անապական է, ինչպե՞ս կարող է նրանից ծնվածն ապականացու լինել: Անապատում երկնքից իջած մանանան նախօրինակն էր Փրկչի անապական մարմնի: Եվ ինչպես մանանան է առ այսօր անապականաբար պահվում ոսկե սափորում, սույնպես էլ Քրիստոսի մարմինն է հավիտենապես անապական: Նաև բոլոր սուրբ վարդապետներն ու ուղղափառ Հայրերը, ինչպես Ս. Եփրեմ Ասորին, Ս. Հովհան Ոսկեբերանը, Ս. Կյուրեղ Աղեքսանդրացին, Ս. Աթանասը և ուրիշներ, Հիսուսի կենդանարար մարմինն անապական խոստովանեցին՝ նզովքներով խցելով հերետիկոսների բերանները, թե՝ «եթէ ոք յետ անճառ միաւորութեանն ապականացու ասէ զանապական մարմինն սուրբ, նզովեալ լիցի»[21]:

Չար լեզուներն ասացին, եթե Քրիստոս անապական մարմին վերցրեց, ուրեմն մեզ չփրկեց, քանզի մեր մարմինն ապականացու է, այլ փրկեց Ադամի մինչմեղանչական մարմինը, որն անապական էր: Բանն Աստված վերցրեց ոչ թե մեր ապականացու, այլ «ապականակիր»[22] մարմինը՝ մեզ փրկելով մերիններով: Ու երբ միավորեց Իր աստվածային բնությանը, հոգուց զատեց մեղքը և մարմնից հեռացրեց ապականությունը, ինչպես հուրը, միավորվելով ոսկու հետ, նրանից սրբում է ժանգը՝ այն դարձնելով անապական: Այդպես էլ Ս. Կույսից անմեղ հոգով ու անապական մարմնով ծնվեց մարդացյալ Աստված: Ոչ թե վերցրեց Ադամի առաջին բնությունը, որն ուներ մինչ մեղանչելը, այլ՝ Ադամի «ապականազանգուած»[23] մարմինը, որը միավորելով Իր հետ՝ այնտեղից արտաքսեց ապականությունը՝ կրկին երևան հանելով Ադամի առաջին՝ անմեղ ու անապական բնությունը: Աստված հենց այդ բանի համար մարդացավ, որպեսզի մարդը վերագտնի ադամական անապական բնությունը:

---

[20] *Հարցմանց, էջ* 499:

[21] *Հարցմանց, էջ* 499:

[22] ² Ý¹, ¿ç 500:

[23] Հմմտ. անդ:

Իսկ ոմանք էլ պատճառ բերեցին Քրիստոսի՝ մարմնով աճելն ու զարգանալը իբրև նշան ապականության: Սակայն ոչ թե աճումն է ապականություն, այլ դրա հակառակը: Քանզի աճումը զարգացում է, իսկ ապականությունը՝ նվազություն, որ «յոչգոյութիւն փոփոխէ»[24]: Եվ Քրիստոսի՝ մարմնով աճելը ցույց է տալիս Նրա ճշմարիտ մարդեղությունը, այլ ոչ թե երևութական լինելը:

Ուրիշներն էլ հերձախոսեցին, թե Քրիստոսի կաթնասուն լինելն ու կերակուր ուտելն են իբր մաս ապականության: Այն, որ կերակրվելը ապականության մաս չի կազմում, հայտնի է Ադամի օրինակից, որ նախքան հանցանք գործելը կերակրվում էր և ապականացու չէր: Ոչ թե քաղց զգալու, այլ Աստծո թույլտվության պատճառով էր ուտում. «Յամենայն ծառոց որ է ի դրախտիդ՝ ուտելով կերիցես. բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի՝ մի՛ ուտիցէք» (Ծնն. Բ 16): Նույնպես և Քրիստոս էր կերակրվում անապական մարմնով: Իսկ կերակուրն արտաքնոց չէր գնում, ինչպես սովորությունն է մարդկային մեղանչական բնության: Արդ, ոչ թե կերակուրը, այլ մեղքն ապականեց մարդու բնությունը: Իսկ Քրիստոս թեև կերակրվում էր, սակայն բացարձակապես զերծ էր մեղքից՝ անապական լինելով անգամ մարմնավոր ծննդյամբ. «Խօսեալ զմայր Նորա Մարիամ Յովսեփու, մինչեւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. Ա 18):

Դարձյալ ասացին՝ եթե Քրիստոսի մարմինը «կրական»[25] էր, ուրեմն ապականացու էր, իսկ եթե «անկրական»[26] էր, ապա ճշմարտապես մարդ չէր: Երկակի է կիրքը՝ կամավոր և ակամա: Ակամա կրքերը ծառայական են ու հարկավորական: Բանն Աստծո մոտ չեն տեսնվում ակամա կրքեր, քանզի Ինքը, լինելով համայնի Տերը և Արարիչը, բնության հարկադրանքի ու ծառայության ներքո չէ, ինչպես մենք, այլ վեր և ազատ է ամեն մի կրքից: Մարդեղությամբ մեր Տերն Իր մեջ կրեց միայն կամավոր կրքերը. քաղցում էր, երբ ուզում էր, ծարավում էր, երբ կամենում էր՝ ոչ թե մեզ նման՝ ի հարկե՛, այլ՝ Իր կամքի համաձայն: Աստծո անեղ Էությունն անկրական է թե՛ կամավոր և թե՛ ակամա կրքերի հանդեպ: Քանի որ կիրքը բնորոշ է եղականին, ինչպես պարագան է առհասարակ մարդու, որ կրական է թե՛ կամավորի և թե՛ ակամայի նկատմամբ՝ բնությամբ ու կամքով: Եվ որովհետև Քրիստոս Աստված է, չունի ակամա կրքեր, այլ որովհետև նաև ճշմարիտ Մարդ է, մարմնացյալ Բան, կրում է սոսկ կամավոր կրքերը:

Քրիստոս Իր կամավոր կրքերով մեզ ազատեց ակամա կրքերի դատապարտությունից եւ կամավոր կրքերի չափազանցությունից՝ Իր անապականությամբ մեր ապականված բնությունը վերստին կոչելով ապականությունից անապականության:

Իսկ ինչպե՞ս կարող է ապականացուն անապական դարձնել ապականացուն, եթե ինքը չունի անապականություն, ինչպես խավարը, որ չունի լույս, չի կարող լուսավորել խավարը:

Արդ, եթե Քրիստոս չէր կրում ակամա կրքերը, ասացին, ուրեմն թերակատար էր մարդեղությունը: Կարի անմտություն է այսպես խորհելը, քանզի մարդու բնության բնական բանականին ակամա կրքերը մաս չեն կազմում, այլ անասնականին Ադամի բնության մեջ հետամտական լինելու պատճառով: Տեր Հիսուս Իր մարդեղությամբ վերցրեց

---

24 ² Ý¹, ¿Ç 501:

25 *Հարցմանց, էջ* 501:

26 Անդ:

այն, ինչ մարդու բնությանը բնական էր՝ ի բաց թողնելով եկամուտ անասնականը, որ արդյունք էր մեղքի: Դրախտում առաջին մարդը՝ Ադամը, նախքան մեղանչելը չուներ ո՛չ մարմնի արտաթորում և ո՛չ էլ՝ արտածորում, ինչպես Նոյը՝ տապանում, կամ սաղմնավորված մանուկը մոր արգանդում: Այսպես էլ մեր Տերն էր զերծ կերակրի ապականությունից, ինչպես որ մոմը, երբ կատարելապես այրվում է, չի ունենում արտահոսք, կամ էլ կապարով կնքված ապակե անոթի ջուրը, որ արևի ջերմությունից նվազելով՝ դարձյալ չի ունենում արտահոսք[27]: Արդ, Քրիստոս աստվածության հրում անապական մնաց մարմնով և անմեղ՝ կրքերով: Այլև ակամա ու կամավոր կրքերը լինում են երկու տեսակի՝ անգոսնելի և անանգոսնելի((: Արդեն ասացինք, որ Փրկիչն Իր մարդեղությամբ ակամա կրքեր չկրեց: Չկրեց նաև անգոսնելի կրքեր, որոնք վերստին մեղքի պատճառով են: Այսպես, Քրիստոս կատարելապես կրեց մարդկային կամավոր անանգոսնելի կրքերը՝ դրանցով ցույց տալով Իր ճշմարիտ Մարդ լինելը և դրանց անմեղությամբ դատապարտելով մեղքը մարմնի կրքերի: Արդ, մեր Տերը քաղցեց, ծարավեց, քրտնեց, ննջեց, աշխատեց, արտասվեց, թախծեց... Իսկ կերակրի և ցանկության ակամա ծորումը թեպետ անանգոսնելի է, սակայն դա՛ էլ չկրեց, քանի որ կամավոր չէ:

Ոմանք էլ Տիրոջ խոցվածքն ու արյունն են ցուցիչ բերում իբր ապականության: Աշխարհի փրկությունը Քրիստոսի չարչարանքներով ու մահվամբ եղավ: Ուրեմն ի՞նչ՝ ապականությո՞ւնը մեզ փրկեց կամ աշխարհի փրկիչը ապականությո՞ւնը եղավ և ո՞չ Քրիստոս: Ավա՛ղ նրանց անբան մտահաճությանը, որոնք, իրենց Տիրոջն ուրացած, «ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ» (Բ Պետր. Բ 1):

Իսկ մենք՝ Մայր Եկեղեցու հարազատ զավակներս, ամո՛ւր պահենք ուղղափառ վարդապետութիւնը՝ «շինեալ ի վերայ հաւատոյ հիման մարգարէից եւ առաքելոց՝ անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն Քրիստոսի: Եւ Նմա փա՛ռք յաւիտեանս. Ամէն»[28]:

---

[27] Հմմտ. **Գրիգոր Տաթեւացի**, *Ոսկեփորիկ*, Երևան, 1995, էջ 168:

[28] *Հարցմանց, էջ* 503:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՑԱՎԻ ՆԵՐՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ

Բնությունը միշտ էլ աշխարհ է բերում բնատուր շնորհներով օժտված մարդկանց, սակայն այդ շնորհառատ անձը հիրավի մեծ է դառնում, երբ նրա ծնունդն ու կյանքը համընկնում են բախտորոշ ժամանակի հատ։ Բախտ էր և՛ իրեն, և՛ ամենքիս համար, որ Վազգեն Առաջին Կաթողիկոսի գահակալության տարիները համընկան համեմատաբար բարի ժամանակների հետ, երբ Սուրբ Էջմիածնի վրայից ցրվում էին դժնդակ օրերում ծանրացած ամպերը և հնարավորություն էր ստեղծվում ցրվող մշուշի միջից տեսնել հայոց Մայր Տաճարի երկնառաք գմբեթները, տեսնել մեր ժողովրդի անցյալն ու ներկան և իմաստավորել, թե ինչ է եղել մեզ համար Եկեղեցին, հավատը։ Վազգեն Կաթողիկոսը այն երջանիկն էր, որ, լինելով ծնունդը իր ժամանակի, ինքն էլ իրենով, իր իմաստությամբ, աշխարհն ու շրջապատը հասկանալու, անհնարին պահերին հնար գտնելու իր երկնավոր կարողություններով ազդեց ժամանակի վրա, անհավատալիորեն լայնացրեց ու խորացրեց ժամանակի ընձեռած հնարավորությունները։ Եվ այս փոխադարձ տուրևառումը տվեց սքանչելի արդյունքներ, վերածնվեց Էջմիածինը, վերազարթնեց ժողովուրդը, խտացավ, մկանակալվեց Հայրենիք-Սփյուռք հյուսվածքը, հայության տեսիլը թևածեց ողջ հայ աշխարհում։

Հարկավոր էր լինել Վազգեն Կաթողիկոս, որպեսզի կարողանար աստվածամերժ գաղափարաբանության երկրում, պետության հսկող աչի առաջ, կառուցել նոր եկեղեցի՝ Սուրբ Սարգիսը, երևի միակ քրիստոնեական նորակառույցը Խորհրդային Միության տարածքի վրա։ Հարկավոր էր լինել Վազգեն Կաթողիկոս, որպեսզի եկեղեցի կառուցեր նաև մարդկանց հոգիներում, այն հոգիներում, որ դեռ մանկուց լցված էին զանազան իզմերով, ուր առաջնային էր նյութը, իրեղենությունը։

Հարկավոր էր լինել Վազգեն Կաթողիկոս, որպեսզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դեպի իրեն ձգեր բոլորին ոչ միայն իր հնամենի ճարտարապետությամբ, իր բազմակի խորհրդով, այլ նաև իր անզուգական գահակալով, որի վեհաշուք տեսքը, մտքի թռիչքը, սթափ մտածողությունն ու լայնախոհությունը զարմացնում ու հմայում էր ամեն մի այցելուի՝ լիներ դա գերհզոր պետության տիրակալ, թե աշխարհահռչակ գիտնական, գրող, թե արվեստագետ, բանվոր, թե շինական։

Անչափելի է կորուստը՝ այն էլ այս ծանր, տագնապալից օրերում, երբ մեր ժողովուրդը այնքան շատ կարիքը ունի հոգևոր հենարանի, մի մաքուր ու ողջանվեր էության, որին կարողանա սիրել, հավատալ, ապավինել։ Սակայն մեծ մահերը, մեծ ցավը նույնպես ունեն ապրեցնելու զորություն արտադրելու ունակություն։ Թող Հայոց Վեհափառ Հայրեպետի կորստյան ցավը ներուժություն հաղորդի մեզ, շարունակի օգնել ու սատարել մեզ՝ դիմագրավելու ամենայն դժվարություն, շարունակի մաքրել ու ազնվացնել մեր հոգիները, որով ավելի դյուրին կդառնա նվիրումը Աստծուն, ազգին ու մարդկությանը։

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԸ

Վազգեն Առաջինը՝ աշխարհական անվանմամբ Կարապետ Աբրահամի Պալճյանը, ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20-ին Բուխարեստում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Միսաքյան-Քեսիմյան վարժարանում, այնուհետև 1925-26 թթ. սովորել է Բուխարեստի առևտրական բարձրագույն վարժարանում, ապա 1936 թ. ավարտել համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը, իսկ 1937 թվականին էլ՝ գործնական մանկավարժության բաժինը, որից հետո մինչև 1943 թ. դասավանդել է Բուխարեստի հայկական վարժարաններում: Ուսումնառությանը և մանկավարժական գործունեությանը զուգընթաց գործուն մասնակցություն է բերում գաղութահայության կյանքին: 1936 թ. մարտի 10-ին Փարիզում հրատարակվող «Մարտկոց» օրաթերթում Կ. Պալճյան ստորագրությամբ լույս է տեսնում նրա առաջին հոդվածը՝ «Նոր սերունդին համար», իսկ 1937 թ. հունիսից մինչև 1938 թ. մայիսը հրատարակում է «Հերկ» ամսագիրը:

Հայոց ապագա Հայրապետը գիտական, մշակութային, տնտեսական ու հասարակագիտական հարցեր շոշափող այս հանդեսի լույս տեսած 12 համարների իր հեղինակած մոտ 4 տասնյակից անցնող հոդվածներում անդրադարձել է թե՛ գաղթաշխարհին և թե՛ հայրենիքին հուզող խնդիրներին, արծարծել ընդհանուր համամարդկային և իմաստասիրական հարցեր, վերջիններս էլ, սակայն, միշտ կապելով հայության առջև ծառացած օրվա մտահոգությունների հետ: Ամսագրի առաջին համարի սկզբում զետեղված է «Ապագա ունի՞նք» խոսուն վերտառությամբ հոդվածը, որի ողջ շարադրանքը հարաբերվում է Ֆրանց Վերֆելի «Հայ ժողովուրդը ոգիի ժողովուրդ է» խոսքերի հետ, և շարունակ այն միտքն է շեշտվում, թե մենք կարողացանք հարատևել մեր ոգեղենության շնորհիվ և այդ ոգեղենությամբ է, որ պիտի աշխատենք չկորցնել մեր նկարագիրը այսօրվա ալեծուփ աշխարհում:

Սփյուռքահայ ճշմարիտ հայրենասեր մյուս գործիչների նման ապագա հայրապետը ևս շարունակ այն միտքն է ընդգծում, որ թեև հայրենիքը գտնվում է դժնի բռնությունների մամլիչի ներքո, սակայն պահպանված Հայաստանն է հայության ապագա համահավաքման կենտրոնն ու խարիսխը, և «Հերկը» ռումինահայի հոգում հայրենիք տանող ճանապարհի ակոսներ է բացում: Այս առումով հատկանշական է հատկապես 1937 թ. դեկտեմբերյան համարում հրատարակված «Մեր հայրենիքը» հոդվածը, որում նախ ցավով արձանագրում է, թե «մեր ապրած ողբերգության գլխավոր երեսներեն մեկը մեր այսօրվա հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի և մեր միջև փոխհարաբերությանց չգոյությունն է», այնուհետև կարևորում է գոնե հեռվից Մայր երկրի հետ ազգային և մշակութային կապերի ստեղծումը: Հայաստանի ապագայի հանդեպ աներեր հավատով լեցուն այս հոդվածը, որը սփյուռքահայությանը և հատկապես երիտասարդությանը ուղղված մի պատգամ-հորդոր էր հոգեպես կապված մնալ հայրենիքին, ավարտ-

վում է հետևյալ տողերով. «Եթե Հայաստան երթալն անհնար է, պահանջը կը զգանք, գեթ հեռուէն, հայրենիք մը ունենալու, հոգեպէս անոր կեանքին մէջ զգալուն ինքզինքս, անկէ հոգի առնելու, անոր հոգի տալու:

Այսօր ազգ ենք: Հայաստան մը ունինք»:

Հայաստանով և Հայաստանի շնորհիվ ազգ լինելու այս գաղափարով լեցուն էլ նվիրվում է հոգևոր ծառայության: 1943 թ. սեպտեմբերին Աթենքի «Սուրբ Կարապետ» եկեղեցում հունահայ թեմի առաջնորդ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանի ձեռնադրությամբ Կարապետ Պալճյանը օծվում է վարդապետ և հոգևոր մկրտությամբ ստանում Վազգեն անունը: Մինչ այդ արդեն արժանացած լինելով ռումինահայության սիրուն ու հարգանքին, նույն տարվա նոյեմբերի 28-ին Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում ժամանակակիցների վկայությամբ «ծովածավալ բազմության առջև» նորընծա վարդապետը մատուցում է իր անդրանիկ Ս. Պատարագը՝ քարոզի համար բնաբան ընտրելով աստվածաշնչյան «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս» տողը: Նույն օրն էլ ընտրվում է ռումինահայ թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 1948 թ. հուլիսի 25-ին՝ թեմական առաջնորդ: 1954 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գևորգ Զ Չորեքչյանը: Նոր կաթողիկոս ընտրելու համար հաջորդ տարի գումարված ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստում սեպտեմբերի 30-ին կաթողիկոս է ընտրվում Վազգեն Առաջինը:

Ընտրությունից երկու ամիս անց, դեկտեմբերի 1-ի թվակիր իր առաջին կոնդակում նորընտիր կաթողիկոսը հանգամանալից ներկայացնում է Մայր Աթոռի կացությունը: Ներսես Շնորհալու «Ընդհանրական թղթի» և մեր հայրապետների մեծ ներշնչումի ոգով գրված այս կոնդակում հայրենի և աշխարհասփյուռ հայությանն ուղղված խոսքում ասում է. «Մայր տաճարի զանգակները հաղթական պիտի ղողանջեն և հորիզոնէ հորիզոն պիտի ավետեն, թե այստեղ կենդանի է Ս. Մեսրոպի ոգին և կանգուն է Ս. Էջմիածինը՝ հայ ժողովուրդը լուսավորելու իր փառազարդ ճամփուն վրա»:

Հեղափոխությունից հետո ավերվել կամ անխնամ էին մնացել շատ վանքեր, ծավալված բռնությունների պատճառով գրեթե ամայացել և անշքացել էր Մայր Աթոռը: Հոգևոր կյանքի կազմակերպումը թեև սկսվեց երջանկահիշատակ Գևորգ Զ Չորեքչյանի օրոք, սակայն դրան մի նոր շունչ հաղորդեց Վազգեն Առաջինը: Ինչպես ինքն էր շեշտում հիշյալ կոնդակում, «պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերազարդարելու մեր հայրենիքի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսին են Ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»:

Բարեկարգման այս աշխատանքները սկսվում են Մայր Տաճարից: Դեռևս 1945 թ. գումարված ազգային-եկեղեցական ժողովում Գևորգ Զ-ն հայությանը կոչ էր հղել ազգովի մասնակցել Մայր Տաճարի վերաշինությանը՝ ասելով, թե «1642 տարվա պատմական այդ կոթողի հարատևությունը և այն վայելուչ վիճակում պահելը հայ ժողովրդի պատվի գործն է»: Եվ Վազգեն Առաջինին էր վիճակված նախորդ դարերի ու վերջին տասնամյակների ընթացքում բազում հալածանքներից վիրավոր հայոց հոգևոր կենտրոնի վերանորոգումը: Նախ պարսպապատվում է Մայր Աթոռը, կառուցվում արևելյան

մեծ դարպասը» վանքի ներկայիս մուտքը, Նոր Վեհարան տանող ճանապարհին գտնվող և մեր մատենագրությունում «Տրդատայ դուռ» կոչվող շինության հիմքերի վրա վեր բարձրացավ այժմյան վեհաշուք կամարը, կառուցվեցին Հյուրատունը, Վեհարանը, Գանձատունը...

Ծավալված աշխատանքները չսահմանափակվեցին սակայն միայն Սուրբ Էջմիածնով, այլ ընդգրկեցին մի շարք եկեղեցիներ և վանքեր: Վազգեն Առաջինին հաջողվում է եկեղեցիներ վերաբացել կամ կառուցել նաև խորհրդային սփյուռքում, որոնք դեպ հայրենիք ձգվող ոգեղեն մի-մի կամուրջ են դառնում տեղի հայության համար: Միայն զարմանալ կարելի է, թե այդ տարիներին հավատի հանդեպ Խորհրդային Միությունում տիրող համընդհանուր բացասական մթնոլորտում Վեհափառը ինչպես է կարողացել նման հսկայածավալ աշխատանք կատարել: Միաժամանակ մտահոգ հոգևոր-մտավոր կյանքի վերանորոգմամբ՝ ձեռնամուխ է լինում ճեմարանի բարեկարգմանը և տպարանի վերաբացմանը՝ վերջինս օժտելով արդիական տպագրական մեքենաներով:

Էջմիածինը լույսի և հավատի աղբյուր լինելուց բացի, շարունակում է կատարել համահայկական հոգևոր նվիրապետության իր առաքելությունը՝ ազգային-հոգևոր ավանդները զարգացնելով ժամանակի պահանջների հաշվառմամբ: Ոչ միայն ի մի են հավաքվում հնօրյա արժեքները, այլև ստեղծվում նորերը՝ ոսկեձույլ Հայոց Այբուբենն ու Խորհրդային Հայաստանի զինանշանը, Գրիգոր Խանջյանի երեք գործերը՝ Վարդանանքն ու Հայոց Այբուբենը և Մայր տաճարի բեմը զարդարող Հայոց Տիրամայրը:

Փաստորեն այն, ինչ մեր Հանրապետությունում հնարավոր չէր իրագործել պետականորեն Խորհրդային Միությունում տիրող ընդհանուր խստությունների պատճառով, Վեհափառ Հայրապետի խորագետ ջանքերի շնորհիվ կատարում է Էջմիածինը:

Տարբեր առիթներով Սփյուռքի մեր հայրենակիցներին ուղղված իր խոսքում շեշտելով հայոց լեզվի կարևորությունը և պայքարը մայրենիի նահանջի դեմ, Վեհափառը անուղղակիորեն փաստորեն դիմում էր և Հայաստանի բնակչությանը: Քանի որ այդ տարիներին դժվար էր լիաձայն խոսել Եղեռնի, Արևմտյան Հայաստանի, մեր ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի մասին, այդ հարցերի գլխավոր արծարծողը Էջմիածինն էր: 1972 թ. սեպտեմբերի 3-ի թվակիր կոնդակով Վազգեն Առաջինը Մայիսի 22-ը հռչակում է Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակի օր և պատվիրում աշխարհում գործող բոլոր հայկական եկեղեցիներում այդ օրը հոգեհանգստյան արարողություն կատարել նրանց հիշատակին: Երբ Խորհրդային Միությունում անգամ Ռուս Ուղղափառ Եկեղեցին արգելքների էր հանդիպում իր նվիրական սրբերին ներկայացնելիս և նրանց հիշատակը ոգեկոչելիս, իսկ միութենական շքանշաններից բացի այլ շքանշան ունենալը անպատկերացնելի էր, Վեհափառի հրամանով ստեղծվում են «Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանները, որոնք շնորհվում են մեր հոգևոր մշակույթի երախտավորներին ազգային բարերարներին և հասարակական, մտավորական գործիչներին:

Այս ամենը հնարավոր դարձավ Վազգեն Վեհափառի խորագետ քաղաքականության շնորհիվ: Քաջ գիտակցելով, որ ոչ թե պետք է պայքարել Խորհրդային Միությունում գոյություն ունեցող վարչակարգի դեմ՝ վտանգելով պատմությունից մեզ ավանդված այս վերջին Հայաստանի ճակատագիրը, այլ հակառակը, ձգտել այնպես անել, որ

մեր հայրենիքը կարողանա վերելք ապրել կամ նվազագույն կորուստները ունենալ ցանկացած ռեժիմի պայմաններում, Վազգեն Առաջինին հաջողվում է մեր ժողովրդի համար կենսական կարևորության հարցերը ներկայացնել Խորհրդային Միության հետաքրքրությունների շրջանակում:

Առանձնապես ընդգծելի է երջանկահիշատակ հայրապետի պայքարը խաղաղության հաստատման, միջուկային սպառնալիքի և սառը պատերազմի դեմ: Այդ գործունեությունը համընկնելով Խորհրդային Միության շահերի հետ, միաժամանակ կենսականորեն անհրաժեշտ էր հենց մեր ժողովրդին, որովհետև խաղաղության այդ տասնամյակների շնորհիվ էր, որ դարերի ընթացքում փլատակների վերածված և ամայացած երկիրը վերստին ծաղկեց իր գիտությամբ, մշակույթով ու տնտեսությամբ: Միաժամանակ Հայոց Հայրապետը լավ էր գիտակցում, թե թշնամական երկու ճամբարների վերածված երկբևեռ աշխարհում ակամա կիսվում է նաև աշխարհասփյուռ հայությունը, և թե միջազգային լարվածության թուլացումը ինքնաբերաբար կբերի նաև հայության համախմբմանը: Ծառայելով մեր ժողովրդի ազգային շահերին՝ Վազգեն Առաջինի խաղաղարար գործունեությունը միաժամանակ բարձր գնահատվեց ողջ աշխարհում՝ Վեհափառին բերելով համաշխարհային ճանաչում և հարգանք: Հայոց Հայրապետը արժանացավ Խորհրդային Միության, Ռումինիայի և մի շարք այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների բարձր պարգևներին: Ընդունվելով ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի նախագահների և մյուս պետությունների ղեկավարների կողմից՝ նա ասես շարունակում էր հայ ժողովրդի պատմական առաքելությունը՝ կամուրջ լինել Արևելքի և Արևմուտքի միջև: Համաձայն մեր եկեղեցական ավանդույթի՝ հայոց հայրապետներից յուրաքանչյուրին մի անվանում է տրվել ըստ իր կատարած գործերի: Այս նույն ավանդույթով Վեհափառ Հայրապետին կարող ենք կոչել Վազգեն Առաջին Շինարար և Խաղաղարար Կաթողիկոս Ամենայն Հայոց: Հավատարիմ Ամենայն Հայոց կաթողիկոսի իր կոչմանը, տասնամյակների ընթացքում հովվական այցով եղել է Սփյուռքի բոլոր գաղթօջախներում՝ տարագիր մեր հայրենակիցներին տանելով Լուսավորչի կանթեղի լույսը և շունչը մեր հայրենիքի: Երբ սկսվեց արցախյան շարժումը՝ Վազգեն Առաջինը, հավատարիմ իր գործելակերպին, հանդիպեց ԽՄԿԿ ղեկավարներին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, հսկայական աշխատանք ծավալեց հօգուտ արցախյան հարցի արդարացի լուծման, միաժամանակ Հանրապետության ներսում շարունակ հորդորելով ժողովրդին, որ խոհեմ ու խելամիտ լինի ու անզգույշ քայլերով չվտանգի մեր հայրենիքը Խորհրդային Միության քայքայման խառնակ օրերին: Դեպքերի զարգացման հետագա ընթացքը վկայեց, թե որքան ճիշտ և իմաստուն էր Վեհափառը:

Մեր եկեղեցուն սառը պատերազմի պատճառած ծանր մի վերքն էր վերջին երեք տասնամյակների ընթացքում Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միջև գոյություն ունեցող ներհակությունը: Արտաքին հանգամանքներից ծնված այս սառնությունը ցրելու և ի խնդիր մեր ժողովրդի ազգային-եկեղեցական միասնականության, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի ազգային միասնության: Վազգեն Առաջինը և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Երկրորդ կաթողիկոսը 1992 թ. օգոստոսի 30-ին համատեղ մի խոսքով դիմեցին մեր ժո-

ղովրդին՝ թվելով այն բոլոր խնդիրները, որոնք այսօր ծառացած են հայության առջև՝ գլխավոր վտանգը համարելով Հայաստանում իրենց անարգ ու սև գործը կատարող ա-ղանդավորական տարբեր շարժումները, շեշտելով այն իրողությունը, թե «Անտեր չէ այս երկիրը: Քրիստոս գահակալում է այստեղ: Իր իջման Սուրբ Սեղանը որպես սրբության սրբոց ճառագայթում է այստեղից: Լքված հող չէ այս երկիրը, անգլուխ չէ այս ժողովուրդը, անցանկապատ չէ Տիրոջ այս այգին»:

Իր գահակալության մոտ չորս տասնամյակների ընթացքում Տիրոջ հայրենատունկ մեր այգում Հայոց փոքր ածուի պահապանը, բարի և անձնդիր հովիվն ու հայրապետը եղավ Վազգեն Առաջինը, Ով հեռանալով այս աշխարհից՝ մնաց հայ ժողովրդի սրտում՝ Վասպուրականի արծվի՝ Խրիմյան Հայրիկի կողքին:

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր

ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ - ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Առաքելական Եկեղեցու գահակալների՝ Ամենայն Հայոց կաթողիկոսների հոգևոր, ազգային, կրթական բազմակողմանի գործունեությունը դարեր շարունակ պարունակել է նաև մի այնպիսի կարևոր բնագավառ, ինչպիսին շինարարական-վերանորոգչականն է, որն իր մեծ նպաստն է բերել նաև հայկական ճարտարապետության զարգացման գործընթացին:

Հայ ազգային մշակույթի այս կարևոր ճյուղին Ամենայն Հայոց կաթողիկոսները սատարել են հենց 301 թվականից: Հայաստանում քրիստոնեությունը տարածող և առաջին կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցեց վկայարաններ, կանոնակարգեց եկեղեցիների հորինվածքը՝ հիմնադրելով դրանք որպես տիպար հետագա լայնածավալ շինարարական աշխատանքների համար: Սակայն Ս. Գրիգոր Լուսավորչի ամենակարևոր ստեղծագործությունը դարձավ Էջմիածնի Մայր տաճարը, որը փաստորեն կառուցումից առ այսօր հանդիսանում է Հայ Առաքելական Եկեղեցու խորհրդանիշը:

Հայկական ճարտարապետության համար արտակարգ բեղմնավոր եղավ 7-րդ դարը, երբ Վաղարշապատում կաթողիկոսներ Կոմիտաս Ա Աղցեցին կառուցեց Սուրբ Հռիփսիմե, Եզր Ա Փառաժնակերտցին՝ Սուրբ Գայանե, իսկ Ներսես Գ Տայեցին, որն իր եռանդուն կառուցողական աշխատանքների համար ստացավ Շինարար պատվավոր անվանումը, կանգնեցրեց համաքրիստոնեական արվեստի գլուխգործոց Զվարթնոցի տաճարը:

Միջնադարում ևս, Բագրատունյաց անկախ Հայաստանի, ապա Զաքարյանների իշխանապետության օրոք հայ կաթողիկոսները հայոց արքաների և իշխանների օժանդակությամբ հիմնադրեցին և կառուցեցին մեր նշանավոր վանքերից ու տաճարներից շատերը, որոնք այսօր հանդիսանում են հայկական շինարարական արվեստի կարևոր նվաճումներից:

Եկեղեցաշինության համար անբարենպաստ էր ուշ միջնադարը, երբ թշնամական քոչվոր հորդաների ասպատակություններից, թուրք-պարսկական պատերազմներից բզկտված Հայաստանում անհնար էր ոչ միայն կառուցել, այլ նույնիսկ նորոգել ավերված շենքերը:

17-րդ դ., երբ Օսմանյան Թուրքիան և Սեֆյան Պարսկաստանը հաշտություն կնքեցին: Արևելյան Հայաստանում համեմատաբար խաղաղ ու բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսներին ծավալել վերանորոգչական զգալի աշխատանքներ, ինչպես նաև իրագործել նշանակալից կառուցումներ: Առաջին հերթին դա վերաբերեց Մայր Աթոռին, հատկապես Մայր Տաճարին: Այս գոր-

ծում մեծ է Մովսես Գ Տաթևացու ավանդը: 17-րդ դ., ինչպես նկարագրում է ականատես պատմիչ Առաքել Դավրիժեցին, Մայր Տաճարի գմբեթը և ծածկն ավերված էին, պատերը և հիմքերը՝ վնասված: Կաթողիկոս Մովսես Գ-ն հիմնովին նորոգեց Տաճարը, նոր գմբեթ կառուցեց, ամրացրեց պատերը և հիմքերը, վերականգնեց ծածկը: Նա Մայրավանքը շրջապատեց յոթ բուրգերով ուժեղացված պարիսպներով, նրանց կից խցեր և տնտեսական շենքեր կառուցեց:

Առավել նշանակալից է հաջորդ՝ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի շինարարական գործունեությունը: Նա վերականգնեց 1635-1636 թթ. թուրք-պարսկական պատերազմի հետևանքով հրդեհված և ավերված Մայր Աթոռի համալիրի աշխարհիկ շենքերը, Երևանում կառուցեց Ս. Անանիայի անապատի համալիրը և դրա Ս. Աստվածածին (Զորավոր) եկեղեցին, վերանորոգեց Վաղարշապատի Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե տաճարները, նորովի կառուցեց Ատրպատականում Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկա, Երնջակում՝ Ս. Կարապետ, Արտազում՝ Ս. Թադե վանքերի համալիրները, նորոգեց Մուղնու, Օշականի, Բջնիի եկեղեցիները: Հայկական ճարտարապետության համար խիստ արժեքավոր է հատկապես Փիլիպոս Ա-ի մի նախաձեռնությունը՝ Էջմիածնի Մայր Տաճարի արևմտյան մուտքի առջև եռահարկ զանգակատան կառուցումը, որը նրա մահից հետո ավարտեց Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը: Մայր տաճարի՝ սլացիկ համաչափություններով սյունազարդ զանգակատունը հետագայում օրինակ ծառայեց 17-19-րդ դդ. հայկական վանքերի և եկեղեցիների նույնատիպ կառույցների համար:

Հայոց աշխարհը ոչ միայն ենթարկվել է պատերազմական, այլև բնական արհավիրքների: Այդպիսի խոշորագույն աղետ հանդիսացավ 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժը, որն ավերեց գրեթե ողջ պատմական Այրարատի քաղաքներն ու ավանները, վանքերն ու եկեղեցիները: Ավերվեց Երևանը՝ բնակելի շենքերով, բերդով, եկեղեցիներով: Ամենայն Հայոց հայրապետների հոգածությամբ հիմնովին վերականգնվեցին Երևանում Զորավոր Ս. Աստվածածին, Ս. Պողոս-Պետրոս, Քանաքեռի Ս. Հակոբ և Ս. Աստվածածին, Վաղարշապատում՝ Ս. Էջմիածնի Մայրավանքի համալիրը, Շողակաթ եկեղեցին, կառուցվեցին Գողթան գավառում Փառակայի Ս. Հակոբ Հայրապետ և Ագուլիսի Ս. Թովմա վանքի եկեղեցիները և շատ ուրիշները: 18-րդ դ. առանձնանում է Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի շինարարական գործունեությունը, որը նա զուգակցեց հոգևոր, ազգային, գիտա-կրթական, պատմագրական բեղմնավոր աշխատանքների հետ:

19-րդ դ. հայ կաթողիկոսները հիմնականում զբաղվում էին Մայր Աթոռի համալիրի վերանորոգումով, ուսումնական, տնտեսական նոր շենքերի կառուցումով: Նրանց շարքում հատկապես պետք է նշել Ներսես Ե Աշտարակեցուն, ում գահակալության տարիներին և նույնիսկ դրանից առաջ, իր նախաձեռնությամբ և ջանքերով ստեղծվեց Էջմիածնի արհեստական հսկայական լիճը (70x170մ., 6մ խորությամբ), որը զգալիորեն նպաստեց ոչ միայն Մայր Աթոռի, այլև ողջ Վաղարշապատի համար բարենպաստ միկրոկլիմա ստեղծելուն: Սակայն Ներսես Ե Աշտարակեցու աշխատանքների պսակը հանդիսացավ Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի կառուցումը: Այն դարձավ 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դ. առաջին քառորդի հայ մտավորականության, կարելի է ասել, դարբնոցը: Այստեղ դասավանդեցին Գ. Պատկանյանը, Ս. Նազարյանը, կրթվել են Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը և հայ գրակա-

նության ու մշակույթի ուրիշ շատ երևելի այրեր:

20-րդ դարում՝ Խորհրդային իշխանության տարիներին, Ամենայն Հայոց կաթողիկոսները ոչ միայն հնարավորություն չունեին կառուցումներ կատարելու, այլ նույնիսկ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու: Հարցականի տակ էր դրված նույնիսկ Էջմիածնի Մայր Աթոռի գոյությունը:

Էջմիածնի Մայր Աթոռը, կարելի է ասել, վերակենդանացավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյանի օրոք (1945-1954 թթ.): Երջանկահիշատակ Հայրապետը, սակայն, չհասցրեց իրագործել իր ծրագրած նորոգչական աշխատանքները, առաջին հերթին՝ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգումը, որի գմբեթակիր մույթերը գտնվում էին վթարային վիճակում: 1955 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Վազգեն Ա Պալճյանը, որի գահակալության չորս տասնամյակների ընթացքում նրա ազգանվեր բազմաբեղուն գործունեությունը զուգակցվեց նույնչափ արդյունավետ շինարարական-վերանորոգչական ծավալուն աշխատանքների հետ:

Վեհափառ Հայրապետը իր գահակալության հանդիսություններից անմիջապես հետո կազմեց պատմական մի խումբ վանքերի ու եկեղեցիների վերանորոգման ծրագրեր՝ նպատակ ունենալով խորհրդային տարիներին փակված վանական այդ համալիրները վերստին գործող դարձնել ժողովրդի հոգևոր պահանջները բավարարելու համար: Առաջին հերթին նրա հրավերով ստեղծվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողով, որը կոչված էր իրականացնելու և՛ վերանորոգչական, և՛ նոր կառուցումների մասնագիտական հսկողությունը և ղեկավարությունը: 1956 թ. ձևավորված այս հանձնաժողովի հիմնադիր կազմում էին ճարտարապետներ Մ. Մազմանյանը (նախագահ), Ռ. Իսրայելյանը, Բ. Արզումանյանը, Կ. Հովհաննիսյանը, Ա. Գալիկյանը, Վ. Հարությունյանը, հնագետ Կ. Ղաֆադարյանը և մեծն Մարտիրոս Սարյանը:

Վազգեն Վեհափառի շինարարական բեղուն գործունեությունը՝ իրագործված ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, դիտարկվել և ամփոփվել է Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի վերջին նախագահ, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի «Եկայք շինեսցուք» (Էջմիածին, 1990) ընդարձակ և արժեքավոր գրքում:

1955 թ. հոկտեմբերի 2-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս օծվելուց հետո Վազգեն Վեհափառն իր հայրապետական առաջին կոնդակում հայտարարեց, որ «Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, որպիսիք են՝ Ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օշականը, Ս. Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգեւոր կեանքի սիւները կը հանդիսանան եւ հռչակուած տաճարներն աղօթքի եւ ուխտի ու զմայլելի յուշարձանները հայ ճարտարապետութեան փառքի»:

Վազգեն Ա Հայրապետը նախ ավարտեց Գևորգ Զ Չորեքչյան կաթողիկոսի սկսած Էջմիածնի Մայր Տաճարի նորոգման աշխատանքերը: 1955 թ. ամրացվեցին տաճարի գմբեթը կրող մույթերը և կամարները, որոնք վտանգավոր ճաքեր էին ստացել: Այս չորս հզոր մույթերը վերցվեցին մետաղական շապկի մեջ, կապվեցին միմյանց հատակի տակ և վերևում՝ թմբուկի հիմքում, որով ապահովվեց գմբեթի կայունությունը: Վերանորոգվեցին տաճարի կտուրը և տանիքը, ապա մաքրվեցին և ամրացվեցին ներսի որմնանկարները, որոնք Հովնաթանյանների և նրանց աշակերտների գործերն էին:

Մայր Տաճարի գմբեթի ամրացման համար շենքի ներսում 1955 թ. վերջին կատարվեցին պեղման աշխատանքներ, որոնց ընթացքում գմբեթակիր մույթերի տակ հայտնաբերվեցին լուսավորչաշեն կառույցի խաչաձև, արխայիկ տրամատով մույթերի խարիսխները, ինչից կարելի է ենթադրել, որ Էջմիածնի Մայր Տաճարը սկզբից ևեթ ստեղծվել է գմբեթով՝ հանդիսանալով ընդհանրապես առաջին գմբեթավոր եկեղեցին քրիստոնեական ճարտարապետությունում, իսկ Ավագ խորանի տակ բացվեցին հնագույն խորանը, ուրարտական կոթող և թոնիր: Դրանք պահպանվեցին հատուկ շինված երկաթբետոնի ծածկի տակ, ու տաճարի թանգարանից մուտք բացվեց դեպի Ավագ խորանի ընդհատակը այդ գտածոների դիտման համար:

Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության հենց առաջին տարիներին ամրացվեցին Էջմիածնի Մայր Տաճարի պատերը, որոնց միջից դարերի ընթացքում կտուրի անսարքության պատճառով ներթափանցած ջրերը քայքայել էին կրաբետոնի միջուկը: Ապա նորոգվեց տանիքը, Տաճարի աղոթասրահը սալահատակվեց մարմարով:

Վեհափառի պատվերով հայ ականավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը նախագծեց Ավագ խորանի խաչակալը, որի քանդակներն իրականացրեց Արա Հարությունյանը:

Ռ. Իսրայելյանի նախագծով վերակառուցվեց նաև Իջման սեղանը, բարեկարգվեց տաճարի ներսը, պատրաստվեց մկրտության նոր ավազան (ճարտ. Ա. Գալիկյան), հարավային ու հյուսիսային խորաններում նոր սեղաններ դրվեցին, նորոգվեցին 12 առաքյալների նկարները, կախվեցին նոր, բյուրեղապակյա ջահեր և Ավագ խորանում՝ նոր վարագույր:

1959 թ. վերակառուցվեց Մայր Տաճարի հարավային խորանի տանիքի՝ 1921 թ. փլված զանգաշտարակը, որից հետո տաճարը ստացավ ուշ միջնադարից հայտնի իր հնգագմբեթ ուրվագիծը:

Երբ Մայր Աթոռին վերադարձվեց Նոր Վեհարանի շենքը, անհրաժեշտություն առաջացավ ընդարձակված վանքատարածությունը բարեկարգելու, պարսպապատելու և նոր դարպասներ կառուցելու: 1959 թ. շինվեց Մայր Աթոռի հյուսիսային դարպասը՝ ժամացույցով աշտարակով, իսկ գլխավոր՝ արևելյան դարպասը՝ 1961 թ. (երկուսի հեղինակն է ճարտ. Ա. Գալիկյանը): Կանաչապատվեց ընդհանուր բակը՝ մոտ 7 հա մակերեսով, նորակառույց պարիսպների երկարությունը կազմեց 1 կմ: Մայր տաճարի հյուսիսային կողմում կանգնեցվեց Ավագ խորանի պեղումներից գտնված ուրարտական կոթողը, իսկ արևելյան կողմում՝ դեպի տաճար տանող գլխավոր ուղու վրա՝ «Կաթնաղբյուրը» (հեղ. Ռ. Իսրայելյան), որի հորինվածքում ամփոփվեց միջնադարյան խաչքար: Վազգեն Վեհափառի նախաձեռնությամբ Հայաստանի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի տարածքներից անխնամ, տապալված, պատմա-գեղարվեստական բարձր արժեք ունեցող խաչքարեր տեղափոխվեցին Մայր Աթոռ ու կանգնեցվեցին հյուսիսային պարսպի կամարակապ խորշերում և Նոր վեհարանի բակում՝ ստեղծելով բացօթյա քարեդարան-թանգարան: Վերջինիս արժեքը և նշանակությունը առավել մեծացավ այսօր, երբ ադրբեջանական իշխանությունները բարբարոսաբար ոչնչացրեցին Հին Ջուղայի գերեզմանոցը հազարավոր խաչքարերով: Ժամանակին այնտեղից Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ Էջմիածին տեղափոխված և փրկված մոտ տաս խաչքարերը

աշխարհի տարբեր ծայրերից Մայր Աթոռ այցելած հայ ու օտարազգի հյուրերին, ինչպես նաև մասնագետ-արվեստագետներին պատկերացում են տալիս համաքրիստոնեական մեմորիալ արվեստի այդ բացառիկ հուշարձանների մասին:

Վազգեն Վեհափառի հայրենասիրության ու խիզախության դրսևորումներից եղավ 1965 թ.՝ Մեծ եղեռնի 50-ամյակին, Մայր Աթոռի բակում ճարտ Ռ. Իսրայելյանի նախագծով կանգնեցված հուշակոթողը՝ նվիրված մեկուկես միլիոն հայ նահատակների հիշատակին: Այն ունի ինքնատիպ՝ խաչքարերի սիմետրիկ խմբից կազմված հորինվածք, որի հարավային երեսին փորագրված է «Խաչքար աղօթքի և ուխտի, ի յիշատակ 1915 թուի ապրիլեան Եղեռնի հայ նահատակների», իսկ հյուսիսային երեսին թվարկված են հերոսամարտերի վայրերը՝ «Վան, Մուսա լեռ, Զեյթուն, Եդեսիա, Հաճըն, Մարաշ, Շապին-Գարահիսար, Սարդարապատ, Սասուն»: Մեծ Եղեռնին նվիրված կոթողը ստեղծվեց այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանում ոչ միայն նման հուշարձան չկար, այլև արգելված էր դրա մասին գրելը: Եվ Վազգեն Վեհափառի այս արարքը, հիրավի, կարելի է մեծագործություն անվանել:

1961 թ. հիմնովին վերակառուցվեց Մայր Աթոռի տպարանի շենքը, որտեղ սկսվեցին տպագրվել «Էջմիածին» ամսագիրը, տարեկան օրացույցները, Վեհափառի կոնդակները, ինչպես նաև կրոնական ու հայագիտական գրքեր:

1962 թ. վերականգնվեց «Տրդատա դուռը»: Այս պատմական կառույցը ստեղծվել էր արքայական պալատից դեպի Մայր Տաճար տանող ճանապարհին: Դրա պատերի՝ պահպանված ստորին մասերի վրա կանգնեցվեց տուֆակերտ մի հաղթակամար, որի արևելյան ճակատին վերևում փորագրվեց «Դուռն Տրդատա» մակագրությունը և որի տակով է անցնում հանդիսությունների ժամանակ Վեհարանից Մայր Տաճար գնացող Ամենայն Հայոց Կաթողիկոսի թափորը:

Վազգեն Ա-ի շինարարական աշխատանքների կարևոր գործերից է 1910 թ. կառուցված Նոր Վեհարանի վերանորոգումը: Խորհրդային իշխանության տարիներին զորանոցի վերածված և մեծապես տուժած այս շենքը 1957 թ. Վեհափառի ջանքերով վերադարձվեց Էջմիածնի Մայր Աթոռին: Վերանորոգման աշխատանքները տևեցին հինգ տարի և ավարտվեցին 1962 թ.: Վերակառուցումն արմատական էր, և շենքը վերստին ստացավ իր նախնական գործառնությունը: Բազմաթիվ բարեփոխումներից արժե առանձնացնել գահասրահի վերանորոգումը, որը դարձավ Վեհարանի ամենագեղեցիկ ու հանդիսավոր մասը: Ընդհանրապես տպավորիչ է Վեհարանի ներքին ձևավորումը, որն իրականացվեց ճարտարապետներ Ռ. Իսրայելյանի, Ա. Գալիկյանի ու Բ. Արզումանյանի մշակած նախագծերով, տաղանդավոր հայ քարգործ վարպետների ու նկարիչների ջանքերով:

Երբ Վազգեն Վեհափառը տեղափոխվեց Նոր Վեհարան, օրվա խնդիր դարձավ 1738-1741 թթ. կառուցված Հին Վեհարանի վերաշինությունը: Այն որոշվեց վերածել հայ կաթողիկոսների թանգարանի: Հիմնովին վերափոխվեց ինտերյերը, դեպի Մայր տաճար նայող անշուք ճակատը երեսապատվեց սրբատաշ տուֆով, նորոգվեցին հատակները, փոխվեցին դռները և լուսամուտները, վայելուչ տեսք ստացավ «Ծաղկեայ գահասրահը»:

1970-ական թթ. սկզբում արմատական վերաշինության ենթարկվեցին 18-րդ դ. կա-

ռուցված Ղազարապատ հյուրատունը (որը վթարային վիճակում էր) և դրա առաջին հարկում տեղադրված երկու սեղանատները:

Վազգեն Վեհափառը Մայրավանքի շինությունների վերակառուցումներին և նորոգումներին զուգահեռ իրականացրեց նաև Հայաստանի բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի հիմնովին վերանորոգումները:

Նորոգվեց հայ ճարտարապետության գլուխգործոց Սուրբ Հռիփսիմե տաճարը, որի ներսը մաքրվեց 19-րդ դ. իրականացված անճաշակ և տեսքը խաթարող սվաղից: Այս աշխատանքների ընթացքում պարզ դարձավ, որ տաճարի գմբեթը միջնադարում կատարված վերակառուցման արդյունք է, իսկ թմբուկի քարերին բացված քարգործ վարպետների նշաններն ապացուցեցին, որ այժմյան գմբեթը նախնականն է՝ կառուցված 618 թ.: Հիմնովին նորոգվեց նաև տաճարի զանգակատունը: 1976 թ. վերանորոգվեց Էջմիածնի Սուրբ Գայանե եկեղեցին, բարեկարգվեց դրա շրջապատը: 1961 թ. նորոգվեց Սիսավանի Սուրբ Հովհաննես «հռիփսիմեատիպ» եկեղեցին (7-րդ դ.), որի չորս ճակտոններն ավերված էին: 1961 թ. նորոգվեցին Էջմիածնի Սուրբ Շողակաթ, 1974-78 թթ.՝ Երևանի Զորավոր Սուրբ Աստվածածին (17-րդ դ.) եկեղեցիները և ուրիշները:

Վազգեն Վեհափառի վերանորոգչական-շինարարական աշխատանքների շարքում իրենց ծավալով, բնույթով և հնչեղությամբ առանձնանում են մի քանիսը:

Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցին, կառուցված 19-րդ դ., իր չափազանց համեստ կերպարով և չափերով չէր համապատասխանում Արարատյան թեմի առաջնորդանիստ եկեղեցուն ներկայացվող պահանջներին: Մյուս կողմից էլ խորհրդային տարիներին միտումնավոր այն շրջապատվեց բնակելի բարձր շենքերով, որոնք տեսողականորեն ճնշում էին Երևանի գլխավոր գործող եկեղեցուն: Պահանջվում էր արդեն ոչ թե վերանորոգում, ինչպես նախորդ օրինակներում, այլ վերակառուցում:

Ճարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով Սուրբ Սարգիս եկեղեցու արտաքուստ սվաղված ճակատները շրջապատվեցին սրբատաշ տուֆից շարված նոր պատերով, իսկ հատակագիծը նույնությամբ պահպանելով՝ զգալի ավելացվեց եկեղեցու ծավալը ըստ բարձրության, կառուցվեց նոր, խոշոր գմբեթ, և եկեղեցին ունեցավ իր նշանակությանը համապատասխան ու արժանի տեսք և ուրվագիծ: Սուրբ Սարգիս եկեղեցին ստացավ նաև բարձրաճաշակ արտաքին ու ներքին հարդարանք: Ճակատները և գլխավոր՝ արևմտյան շքամուտքը զարդարվեցին Արտաշես Հովսեփյանի կերտած զարդաքանդակներով ու պատկերաքանդակներով, ներսը երեսպատվեց մարմարով և այլն:

Վերակառուցված Սուրբ Սարգիս եկեղեցին վերաօծվեց 1976 թ., որի ժամանակ իր քարոզում Վազգեն Վեհափառը նշեց՝ «Քաղաքամայր Երևանն օժտվեց մի նոր զարդով, հայկական ճարտարապետության մի նոր կոթողով, աղոթքի սքանչելի նոր սրբավայրով»: Ս. Սարգիս եկեղեցին, փաստորեն, հանդիսացավ մի նորակառույց, և դա այն դեպքում, երբ խորհրդային իշխանության տարիներին իսպառ բացառվում էր նոր եկեղեցի կառուցելը:

Հիմնովին վերակառուցվեց և նույնիսկ իր հորինվածքը փոխեց Երևանի Կոնդ թաղամասի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (1710 թ.), որը պարզունակ եռանավ բազիլիկ էր: Եկեղեցին վերափոխվեց գմբեթավոր բազիլիկի՝ դառնալով Կոնդի համայնապատկերում գերիշխող շեշտը:

Էջմիածնի Ս. Աստվածածին գործող եկեղեցին (19-րդ դ.) նույնպես եռանավ բազիլիկ է և իր կերպարով չէր համապատասխանում ճարտարապետական գլուխ-գործոցներով հարուստ իր շրջապատին՝ հարելով, մանավանդ, քաղաքի գլխավոր հրապարակին: 1987 թ. ճարտարապետ Թ. Գևորգյանի նախագծով եկեղեցուն կցվեց եռաստիճան՝ երկհարկ, սյունազարդ գմբեթով զանգակատուն 22.5 մ բարձրությամբ, որի շնորհիվ Ս. Աստվածածին եկեղեցու ընդհանուր ուրվագիծը համապատասխանեց իր տեղադրությանը:

Համազգային սրբավայր՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց գործող եկեղեցին նույնպես դարձավ Վազգեն Վեհափառի հոգածության առարկան: 1966 թ. եկեղեցին բարեզարդվեց, նորոգվեց Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը, շրջապատը բարեկարգվեց: Դամբարան տանող մուտքի կողքին կոթող է կանգնեցվել՝ մեսրոպյան այբուբենի երկաթագիր տառերով, Մեսրոպ Մաշտոցի բազալտե գերեզմանաքարը փոխարինվեց օնիքսից պատրաստված տապանաքարով: Նշանակալից աշխատանքը, սակայն, եկեղեցու ներսը «Փառք հայ գրի և դպրության» որմնանկարով զարդարելն էր (նկարիչ Հ. Մինասյան, Հ. Մամյանի մասնակցությամբ): Որմնանկարը զուգակցում է հայկական մանրանկարչության, միջնադարյան քանդակագործության և որմնանկարչության ավանդներն ու 20-րդ դ. հայկական մոնումենտալ արվեստի արժեքավոր ստեղծագործություններից է: Իսկ Օշականի եկեղեցին եղավ միակը, որը խորհրդային տարիներին զարդարվեց կրոնա-հայրենասիրական թեմայով որմնանկարով:

Վազգեն Վեհափառն իր հոգածությունը տարածեց Հայաստանի հնագույն և հռչակավոր սրբավայրերից առաջին հերթին Խոր Վիրապի ու Գեղարդավանքի վրա:

Խորհրդային իշխանության տարիներին Խոր Վիրապը գտնվում էր սահմանապահ ուղեկալի տարածքում անմատչելի ուխտագնացության և ընդհանրապես այցելությունների համար: Երբ այս արգելքը վերացվեց, անհրաժեշտ եղավ անհապաղ սկսել նորոգման աշխատանքները, որովհետև տասնամյակներ վանքը լքված ու անխնամ մնալուց հետո կարոտ էր շտապ վերանորոգման: 1980-ական թթ. առաջին կեսին նորոգվեցին պարիսպները, իսկ նրանց ներսից կից համալիրի երկհարկ շինությունների վերին՝ ավերված հարկերը վերացվեցին, ստորինները նորոգվեցին և վերածվեցին վանատան: Բարեկարգվեց բակը, կառուցվեց դեպի վանքը տանող ճանապարհ, մասնակի նորոգվեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Աստվածածին եկեղեցիները:

Ժայռափոր և վերգետնյա բացառիկ ճարտարապետական կառույցներով Գեղարդավանքը նույնպես գտնվել է Վազգեն Վեհափառի ուշադրության կենտրոնում: 1958 թ. սկսած այստեղ մշտապես իրականացվել են վերանորոգչական, վերակառուցման աշխատանքներ: Նորոգվել են Կաթողիկե եկեղեցու և գավթի տանիքները, բակը սալահատակվել է, միաբանության շենքերը՝ վերանորոգվել, վանքի տարածքը և շրջակայքը՝ բարեկարգվել: 1978 թ. վերականգնվեց սեղանատունը, համալիրի հարավ-արևմտյան անկյունում կառուցվեց վանատան երկհարկ շենքը համալիրին ներդաշնակ ճարտարապետությամբ:

Վազգեն Վեհափառը վերանորոգման աշխատանքներ իրականացրեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու Հայաստանից դուրս գտնվող թեմերում: Վերանորոգվեցին վիրահայոց թեմի Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ախալքալաքի Ս. Խաչ, Թբիլիսիի

Ս. Էջմիածին և Ս. Գևորգ, Ադրբեջանում՝ Բաքվի և Գանձակի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, Ռուսաստանում՝ Արմավիրի Ս. Վերափոխման, Վլադիկավկազի Ս. Գրիգոր եկեղեցիները և ուրիշները:

Վազգեն Առաջինի գահակալության տարիներին բազմաթիվ եկեղեցիներ կառուցվեցին Սփյուռքում, որոնց մի մասի նախագծերը կազմվեցին Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովում: Դրանք են Միլանի (Իտալիա) Ս. Քառասուն Մանկանց, Մոնտեվիդեոյի (Ուրուգվայ), Նյու-Յորքի (ԱՄՆ) Ս. Վարդան, Վիեննայի (Ավստրիա) Ս. Հռիփսիմե եկեղեցիները:

Վազգեն Ա կաթողիկոսի շինարարական գործունեության մեջ զգալի տեղ է գրավում նաև նոր շենքերի կառուցումը: Դրանց շարքում կարևոր է Մայր Աթոռի միաբանների ու Հոգևոր Ճեմարանի սաների հանգստի համար նախատեսված՝ Բյուրականի «Հայկաշեն» անվանված ամառանոցը, որի կառուցումն ավարտվեց 1972 թ. (ճարտ. Ռ. Իսրայելյան): Հայառաջ, հայաշունչ այս համալիրը իր արտահայտիչ ծավալատարածական հորինվածքով հարստացրեց շրջակա գեղատեսիլ բնությունը:

Վազգեն Վեհափառի նորակառուցումների շարքում առանձնանում է Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան կառուցումը Մայրավանքում: Մայր Աթոռը վաղուց թանգարանի կարիք ուներ՝ Հին և Նոր Վեհարանների սրահները չէին բավարարում և չէին համապատասխանում թանգարանային նյութերի ողջ աշխարհից որպես նվեր ստացվող արվեստի բազմաթիվ գործերի ցուցադրության համար: Եվ Մայրավանքի արևմտյան կողմում՝ Նոր վեհարանի կողքին, ճարտարապետ Բ. Արզումանյանի նախագծով կառուցվեց թանգարանի երկհարկ շենքը, իր արտաքին և ներքին ճարտարապետությամբ միանգամայն համապատասխան իր նշանակությանն ու համահունչ Մայր Աթոռի համալիրին:

Գանձատունը բացվեց 1982 թ., որի հանդիսության ժամանակ Վեհափառ Հայրապետը նշեց. «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան կառուցմամբ Մայր Հայրենիքի հողի վրա բարձրացավ մի նոր հայկական հուշարձան և որպես ընծա Սուրբ Էջմիածնին՝ ընծա հայ ժողովրդին, ընծա գալիք սերունդներին»: Գանձատան կառուցումը հանդիսացավ Վազգեն Վեհափառի վերանորոգչական-շինարարական բեղմնավոր գործունեության հիրավի նվաճումը:

Ահա այսպիսին է Վազգեն Ա Ամենայն Հայոց Շինարար Կաթողիկոսի՝ հայ ճարտարապետությանը բերած նպաստի համառոտ պատկերը:

ԷՄՄԱ ԱՇՈՏԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԿԱՐԱՊԵՏ ԼԵՎՈՆ ՊԱԼՃՅԱՆԻ (ՎԱԶԳԵՆ Ա) «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

(Վազգեն Ա-ի ծննդյան հարյուրամյակի առթիվ)

Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը 1936 թ. ավարտած Կարապետ-Լևոն Պալճյանն աշխատանքային գործունեության առաջին իսկ օրերից իր վրա է հրավիրում ռումինահայ համայնքի ուշադրությունը: 1937 թ. կեսերից Կ. Պալճյանի խմբագրությամբ Բուխարեստում սկսում է հրատարակվել «Հերկ» գիտական, մշակութային և հասարակական ամսագիրը, որի համարյա բոլոր թվերում լույս են տեսնում Կարապետ Լևոն Պալճյանի հոդվածները «Լևոն», «Կ. Պալճյան», «Պ.» և «Կ.» ստորագրություններով: 12 համար հրատարակվելուց հետո 1938 թ. մայիսին դադարում է ամսագրի տպագրությունը, որի պատճառը, ըստ երևույթին, «նյութական պայմանների պակասն էր»: Սակայն չեն դադարում երիտասարդ բանասեր փիլիսոփայի հետազոտություններն ու ուսումնասիրությունները: Նույն 1938 թ. Հ. Մկրտիչ Պոտուրյանի խմբագրությամբ լույս տեսնող «Գաղութահայ տարեգրքում» տեղ է գտնում «Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ)» խորագիրը կրող պատմա-փիլիսոփայական հետազոտությունը:

Ապագա Հայրապետի ուսումնասիրություններում կարևոր տեղ է գրավում «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» աշխատությունը: Տասներկու փոքր բաժիններից բաղկացած այս հետազոտությունն անգնահատելի դեր կատարեց 1933 թ. լույս տեսած ավստրիացի գրողի՝ մեծ հումանիստի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը հայկական միջավայրում ներկայացնելու գործում: Այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանում ընդհանրապես արգելվում էր խոսել Հայոց ցեղասպանության մասին, ավստրիացի հեղինակը գրում է իր գեղարվեստական կոթողային գործը և նրա արժևորումով հանդես է գալիս գաղութահայ մտավորականը՝ պատշաճը մատուցելով մեծ հումանիստի և գեղագետի կատարած աշխատանքին:

Լևոն Կարապետ Պալճյանի ուսումնասիրությունների շարքում կարևոր տեղ է գրավում «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» աշխատությունը, որը գրվել է 1942 թ. և առաջին անգամ լույս է տեսել 1943 թ. Պուքրեշում Կ. Պալճյան ստորագրությամբ: Հետաքրքիր է մի համգամանք. հեղինակն այս աշխատությունը գրել է այն ժամանակ, երբ դեռ չէր ընդունել հոգևոր կոչում, դեռ աշխարհական էր՝ Կարապետ Պալճյան, և գրում է ուսումնասիրություն իր խոսքերով «19-րդ դարի հայոց մեծ պատրիարքի և կաթողիկոսի ընկերային, մանկավարժական հայացքների մասին»: 1942 թ. սեպտեմբերին ավարտած աշխատությունը Բուխարեստի Մամուլի և գրքերի հրատարակությունների կոմիտեն հրատարակության է թույլատրել 1943 թ. ապրիլին: Առաջաբանից և տաս

գլուխներից բաղկացած աշխատությունը հեղինակը նվիրել է իր ծնողներին՝ այդ քայլով անգամ հավաստելով, որ Մկրտիչ Խրիմյանը Ամենայն Հայոց Հայրիկն է, նույնիսկ բոլոր ծնողների հայրիկը: Աշխատության առաջաբանում նա անդրադառնում է այդ ուսումնասիրությունը գրելու դրդապատճառներին:

«1941-42 թվերն են, երբ մարդկությունը խելահեղորեն նետված է զարհուրելի պատերազմի մեջ, երբ մահն ու ավերը հորիզոնե հորիզոն կարշավեն»[1], երբ հարցականի տակ էին դրված մարդկության ստեղծած քաղաքակրթական արժեքների գոյությունն անգամ, երբ Հենրիխ և ԹոմասՄան եղբայրները, Կարել Շուլցը, Ֆեյխտվանգերը ֆաշիզմի դեմ իրենց ստեղծած գաղափարական գեղարվեստական արժեքների պատճառով վտարվում էին Գերմանիայից (նաև՝ Եվրոպայից), ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Ռումինիայում գտնվող հայ մտավորականը ուսումնասիրության և քննարկման առարկա է դարձնում իր կարծիքով ազգի գոյության հենարաններից մեկի՝ դաստիարակության, ուսման, լուսավորության, կրթության, դպրոցի, հայ ընտանիքի հետ անբաժանելի կապված խնդիրները՝ գտնելով, որ դրանք են ազգի պահպանության ամենակարևոր հենասյուները, և ազգերը հարատևում են իրենց շարքերում գտնվող մեծ անհատների, հայրենանվեր առաքյալների գործունեության շնորհիվ:

Դաստիարակությունը համարելով որպես իմաստասիրական-փիլիսոփայական լայն ընդգրկում ունեցող հասկացություն՝ հեղինակն անվերապահորեն հայտարարում է. «Սխալած պիտի չըլլանք, եթե ըսենք, թե մեծագույն հեղափոխականը մեր մեջ Խրիմյան Հայրիկը կը հանդիսանա թե՛ իր գրականությամբ, թե՛ իր կենդանի խոսքով, թե՛ իր գործով»[2]: Նշելով, որ մանկավարժությունը սոսկ «դպրոցական գիտելիք չէ», այլ ունի հասարակական լայն ընդգրկում, կոչված է բարենորոգելու և կատարելագործելու ողջ աշխարհը, Կարապետ Պալճյանը գտնում է, որ իսկական մանկավարժը, այդ բառի ամենալայն ընդգրկումով, Մկրտիչ Խրիմյանն է, իր գաղափարներով առավել բարձր ու հսկա, քան «մեծն Բեստալոցցին, Ժ. Ժ. Ռուսսոն, Սբենսերը և բոլոր ԺԹ դարու և մեր ժամանակներու մեծ մանկավարժները»[3]:

Նշելով, որ Մ. Խրիմյանի մասին գրվել են բազմաթիվ հետազոտություններ, Պալճյանը նկատում է, որ դրանցում գնահատվել է նրա լրագրողական, գրական, հասարակական-քաղաքական, հոգևորական գործունեությունը: Սակայն Խրիմյանն իր կյանքի բոլոր շրջաններում թե՛ առօրյա գործունեությամբ ու քարոզներով, թե՛ գրական ստեղծագործություններով նպատակամղված գործունեություն է ծավալել՝ վերականգնելու և վերանորոգելու հայ ժողովրդի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը «գիտության ու սիրո ուժով, իսկական մեծ դաստիարակի մը ոգիով»[4]: Այդ պատճառով էլ հեղինակը Խրիմյանին համարում է իր ժամանակի, նաև բոլոր ժամանակների «ընկերային մանկավարժը»: Սակայն դրանք սոսկ մերկապարանոց հայտարարություններ չեն: Ապացուցելու համար, որ Խրիմյանը «հայ ժողովրդի մեծ դաստիարակն է», «հայրը

---

[1] **Վազգեն Ա Կաթողիկոս**, Գալիքի տեսքով. Ուսումնասիրություններ, հոդվածներ, ուղեգրություններ (1933-1954), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1988, էջ 77:

[2] Նույն տեղում, էջ 80:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 82:

հայ մանկավարժության», հեղինակն անցնում է Խրիմյանի պրակտիկ գործունեության և իմաստասիրական երկերի համադրությանը՝ ցանկանալով այդ մեթոդով ապացուցել իր տեսակետի ճշմարտությունը, համակարգել «անոր մտքերը», և դրանք դարձնել ընթերցող հասարակության սեփականությունը: Աշխատության առաջին գլխում հեղինակը Խրիմյանին ներկայացնում է որպես մտածող, ցույց տալիս նրա ըմբռնումները մարդու մասին. այստեղ ևս Պալճյանը, Խրիմյանին համեմատելով Պեստալոցիի և Ռուսոյի հետ, ավելի արդիական և գիտական է համարում Խրիմյանի տեսակետները մարդկային էության մասին, որ մարդը «Կը ճանաչէ զբարին, բայց ինքն դեպի չարն կը հակամիտի»: Հեղինակը գտնում է, որ նման իրատես գնահատական հազվադեպ կարելի է գտնել «միջազգային գրականության մեջ»[5] և համաձայնվում է Խրիմյանի այն կարծիքին, որ մարդն իր էությամբ դժվար կերպարանափոխվող է և «երկա՛ր մշակումի» կարիք ունի: Նույն գլխի մի այլ ենթավերնագիրը վերաբերում է «Ընկերային» (կամ հասարակական) կյանքի խրիմյանական տեսակետների քննությանը: Հանգամանորեն վերլուծելով Խրիմյանի «Ժամանակ և խորհուրդ յուր», «Սիրաք և Սամուել», «Պապիկ և թոռնիկ» աշխատությունների համապատասխան հատվածները՝ Պալճյան հետազոտողը ցույց է տալիս հասարակական կյանքում ժողովրդի, իշխանության, պետության փոխհարաբերության, պարտականության և իրավունքի խնդիրների մասին ունեցած Խրիմյանի իրատեսական եզրահանգումները, որոնք այսօր էլ ունեն քաղաքական հնչեղություն, կարծես թե գրված են մեր օրերի հայ իրականության համար և բոլոր ժամանակների Ամենայն Հայոց Հայրիկը՝ մեծ դաստիարակը, ուսուցանում է հայ ժողովրդին և պետական այրերին իրենց իրավունքներն ու պարտականությունները, մատնանշում իշխանության զեղծումներն ու ժողովրդի անգիտությունը, ցույց տալիս դրանք վերացնելու ուղիները: Երկրորդ գլխում քննարկվում են դաստիարակի գործունեության կարևոր և հրատապ խնդիրները. հետադիմության մեջ հեծող գավառացի մշակ ժողովրդին ամենից առաջ անհրաժեշտ են ուսումն ու գիտությունը, օգտակար գիտելիքները, որոնց օգնությամբ գյուղացին կարող է հեղաշրջել իր աշխատանքի ձևը, արտադրության միջոցները, բարելավել իր տնտեսությունը: Պալճյանն արդարացի է համարում Խրիմյանի պայքարը պանդխտության, առավել ևս արտագաղթի դեմ, որովհետև ժողովրդի անմահության գաղտնիքը իր հարազատ հողին փարված մնալն է: Շինական գյուղացին (Խրիմյանի հասկացությամբ իսկական հայը) պետք է մշակի և արգասավորի հողը, իմանա նրա նյութական և բարոյական (հոգևոր) արժեքը, գիտակցի, որ «պապերու արցունքով, արյունով, քրտինքով ու ծիծաղով, կյանքով ու մահով շաղախված այդ դարավոր հողը հայ ժողովրդի տևականության ու հավիտենականության երաշխիքն է, գերագույն երաշխիքը»[6]:

Այդ դասը Ամենայն Հայոց Հայրիկի, ապա նրա արժանավոր հետնորդի՝ Վազգեն Ա կաթողիկոսի ամենակարևոր դասերից մեկն է, որը հրատապ և այժմեական է նաև հիմա, 21-րդ դարի սկզբներում, երբ հայը դարձյալ հեռանում է մայր հարենիքից, այս անգամ արդեն անկախ պետականություն հաստատած Հայրենիքից: Վերլուծելով և քննելով Խրիմյանի իմաստասիրական երկերը՝ Պալճյանը Խրիմյանի գաղափարներն է հիմ-

[5] Նույն տեղում, էջ 90:

[6] Նույն տեղում, էջ 109:

նավորում և քարոզում ինչպես իր գաղթօջախի, այնպես էլ այլ վայրերի հայ զանգվածներին:

Առանձնակի սիրով են վերհանված Խրիմյանի «կրթության ըմբռնումի» չափանիշները: Կրթությունը միայն դպրոցը չէ տալիս մանուկ սերնդին: Ըստ Խրիմյանի և Հայոց ապագա Հայրապետի՝ «Կրթությունը …մարդկային անհատական ու հասարակական կյանքի մեկ տևական երևույթն է, մեկ անհրաժեշտ պայմանը»[7]: Կրթությունը և դպրոցը մարդու կյանքի անբաժան մասն են, որ ուղեկցում են նրան ողջ կյանքի ընթացքում: Այդ պատճառով էլ Պալճյանը ճիշտ է գնահատում Խրիմյանի մոտեցումները մարդու, առավելապես հայ մարդու, կրթության չափանիշները, նրա բաղադրատարրերը:

Մարդու կրթության առաջին օղակը նրա ընտանիքն է, որը ոչ միայն համայնքի, մարդկային հասարակության կենսունակության առաջին նախապայմանն է և առհավատչյան, այլև կրթության առաջին աստիճանը, որի կատարած և կատարելիք գործն ավելի կարևոր է, քան դպրոցի ու վարժարանի: Երեխան դաստիարակվում է ծնողի օրինակով, ոչ թե նրա քարոզով: Ծնողի օրինակով երեխայի մեջ պետք է ընձյուղվեն բարոյական բարձր չափանիշները: Պալճյանը ծնողական դաստիարակություն-կրթությունը բաժանում է երեք շրջանների. առաջինը մինչև երեխայի 7 տարեկանն է, երբ ծնողի օրինակը մեծ ուժ ունի, երբ երեխան դաստիարակվում է արտաքին շարժուձևերով: Երկրորդ շրջանը համարելով 7-11 տարեկան ժամանակահատվածը՝ Պալճյանը գտնում է, որ այդ տարիքում երեխան սկսում է իրեն գտնել և ճանաչել: Ամենակարևոր տարիքը Պալճյան դաստիարակը համարում է երրորդ շրջանը՝ 17-18 տարեկանը՝ «ամենեն քրիթիք շրջանը», երբ երեխան խորանում է իր մեջ, երբ դրսևորվում են նրա հակումներն ու ընդունակությունները, երբ ծնողի օրինակը վճռորոշ դեր է կատարում մարդու դաստիարակության համար:

Ծնող-դաստիարակի դերի վերհանումից հետո Պալճյանը բարձրացնում է դպրոցի կատարած և կատարելիք դերը մարդկային հասարակության մեջ: Կրթության երկրորդ աստիճանը, ըստ Մ. Խրիմյանի և Կ. Պալճյանի, դպրոցն է, բայց ոչ այն դպրոցը, որ տալիս է վերացական գիտելիքներ, այլ այն, որ ամենից առաջ երեխային օժտում է մայրենի լեզվի իմացությամբ, ճանաչել է տալիս հայրենիքը (հայրենագիտությունը-հստակ ընդգծվում է ճանաչել տալ հայրենի աշխարհը) աշխարհագրական, պատմական, տնտեսական և մշակութային առումներով: Սակայն մեր ազգի մեծերի համար ամենամեծ դպրոցը աշխատանքն է, հատկապես՝ գյուղացու աշխատանքը. լավ ուսուցիչները մաճկալներն են, սերմնացանները, իսկ օրինակելի դասարանը՝ կալատեղը:

Փաստորեն, Խրիմյան դաստիարակը և նրա հետևորդ Պալճյանը հայ երեխային դաստիարակում են գործնական մանկավարժական մեթոդով՝ ցանկանալով նրան պատրաստել լավ տնտեսություն վարելու և կյանքին դիմակայելու ուժով: Պալճյանը համամիտ է Խրիմյանի այն մոտեցմանը, որով Հայոց Հայրիկը հայ երեխայի դաստիարկության մեջ կարևոր տեղ է վերապահում նախնյաց շիրիմներին՝ դրանք համարելով «խոսուն դասարաններ»: Այդ հանգամանքը չպետք է հասկանալ բառացի կամ տառացի. մարդն անմահանում է իր կատարած գործով, թողած հիշատակներով, գրքե-

[7] Նույն տեղում, էջ 115:

րով, խաչքարերով, գերեզմանաքարերի վրա արված գրառումներով: Ժողովրդի համար կատարված գործերը հիշվում են դարեդար, և ամեն անհատ, նաև հայ գյուղացին պետք է աշխատի իր կյանքի ընթացքում մի փոքրիկ հետք թողնել հարազատ ժողովրդի կյանքում. այդ հետքերը փոքրիկ արահետները դարձնում են լայն ճանապարհ:

Այս աշխատության մեջ կարծես իրար են ձուլվում կյանքի մեծ ուղի անցած Հայոց Հայրիկը և դեռևս երիտասարդ, աշխարհական Կարապետ Լևոն Պալճյանը: Ապագայի կաթողիկոսն այնպիսի մանրակրկիտ ուսումնասիրություն է կատարում XIX դարավերջի և XX դարասկզբի Հայոց Հայրիկի դաստիարակչական գործունեության վերաբերյալ, համակարգում նրա գրական-իմաստասիրական աշխատությունները, հարուստ կենսափորձը, որ ընթերցողի համար պարզ են դառնում նրա կյանքի հետագա ընթացքի պատճառներն ու հետևանքները: Դաստիարակության կարևոր օղակներ են համարվում նաև անհատի կատարելագործումը՝ բարոյական, մտավոր և տնտեսական առումներով:

Խրիմյանի և Կ. Պալճյանի աշխատություններում կարևոր տեղ է հատկացվում կնոջ կրթության խնդրին: Պալճյանն ընդգծում է կնոջ նկատմամբ ունեցած, Խրիմյանի համար անընդունելի երկու տարբեր տեսակետները. մեկը՝ գավառում կնոջ ստրկական վիճակն է, «բոլորովին զուրկ տարրական իրավունքներե», մյուսը՝ «մեծ կեդրոններու մեջ, ինչպես օրինակ Պոլսո մեջ հարուստ դասակարգի կիները հասած ըլլալով «խիստ քաղաքակրթյալ» վիճակի մը կանտեսեին իրենց ընտանեկան պարտականությունները հանդեպ իրենց ամուսնույն և մանավանդ, հանդեպ իրենց զավակներուն»[8]: Այդ երկու մոտեցումներն էլ համարելով ծայրահեղություն՝ Խրիմյանը մերժում է դրանք. Պալճյանը, համաձայնվելով Խրիմյանի հետ, ժխտում է այդ միտումները և ընդգծում կնոջ անփոխարինելի դերն ընտանիքում, նրան համարում «ընտանեկան կյանքի պահապան», երեխաների առաջին դաստիարակ:

Հետաքրքիր է քննարկված Խրիմյանի ըմբռնումը ***համայնքի*** *մասին*: Պալճյանն այն գնահատում է իբրև ճշմարիտ մոտեցում՝ խրիմյանական ըմբռնումը բնորոշելով իբրև համայնքի «հայկական ըմբռնում»: Քանի որ տվյալ ժամանակաշրջանում արևմտահայության մեծամասնությունն ապրում էր գավառում, Պալճյանը ճիշտ է համարում, որ Խրիմյանը հայ համայնքը տեսնում է գյուղական համայնքի մեջ, իսկ գյուղական համայնքների ամբողջությունը՝ հայ ժողովրդի մեջ: Պալճյանը Խրիմյանի համայնքի ըմբռնումը համարում է «աշխատանքի համայնք», որովհետև «այդ համայնքի կյանքին հիմնը աշխատանքն է»: Ապագա կաթողիկոսը հետաքրքիր համեմատություններ է կատարում Խրիմյանի՝ համայնքի ըմբռնումը պարզելու համար: Համեմատելով տարբեր ժողովուրդների, տարբեր պետությունների մոտ ընդունված համայնքի ըմբռնումները՝ Կ. Պալճյանն անդրադառնում է գերմանական, ֆրանսիական, ռուսական, Ամերիկայի Միացյալ Նահանգների, նույնիսկ խորհրդային ըմբռնումներին և գտնում, որ Խրիմյանի համայնքի ըմբռնումը մեր ազգին հատուկ ըմբռնում է, որի մեջ կարևոր տեղ է գրավում աշխատանքը իբրև համայնքի ներքին ուժ, «մարդկանց հավաքական կյանքը հնարավոր դարձնող և այդ կյանքին իմաստ տվող տվյալը»[9]:

---

[8] Նույն տեղում, էջ 141:

[9] Նույն տեղում, էջ 155:

Կարապետ Պալճյանը համայնքի խրիմյանական ըմբռնումը սերտորեն կապում է ընտանիքի ըմբռնման հետ, որովհետև առանց ընտանիքի համայնք չկա, իսկ առանց համայնքի ժողովուրդ չկա ու «առանց ժողովուրդներու մարդկություն չկա»[10]: Ընտանիքի այդ խորը ըմբռնումը, որ կարմիր թելի նման անցնում է Խրիմյանի իմաստասիրական բոլոր երկերում, հատուկ ընդգծվում է Կարապետ Պալճյանի աշխատությունում, նրա խիստ ուշագրավ քննարկումներում: Բոլոր հարցերում մատնանշելով Խրիմյանի գործունեության հեղափոխական բնույթը՝ ընտանիքի պահպանության հարցում Պալճյանն ընդգծում է նրա պահպանողականությունը:

Ամեն մի ժողովուրդ յուրահատուկ է իր ընտանիքով: Ժողովուրդների ինքնատիպությունը, բարոյական և մշակութային ինքնությունը կվերանա, եթե վերանա տվյալ ժողովրդին բնորոշ ընտանեկան կյանքը: Հետազոտող Պալճյանը բարձր է գնահատում Խրիմյանի այն միտքը, թե «մարդկությունը պեսպիսուն ծաղիկներու ճոխ փունջ մըն է, ուր ամեն մեկ ծաղիկ իր գույնը և իր բույրը կը պահե»[11]: Այս հարցում ունեցած իր մոտեցումներով Կ. Պալճյանը Մ. Խրիմյանին՝ Ամենայն Հայոց Հայրիկին դուրս է բերում հայ ժողովրդի կյանքի սահմաններից, համարում է ողջ մարդկության առաքյալներից մեկը, դասում Գյոթեի, Թագորի և Տոլստոյի նման համաշխարհային մեծությունների շարքում:

Ըստ Կ. Պալճյանի՝ Խրիմյան դաստիարակի գնահատելի արժանիքներից է նաև հողի նկատմամբ տածած անսահման սերը: Վերլուծելով Մ. Խրիմյանի երկերը՝ Կ. Պալճյանը բացահայտում է, որ հողը Ամենայն Հայոց Հայրիկի համար վերացական հասկացողություն չէ, այլ կենդանի իրականություն, շարժվող ու խոսող մարմին, որ ապրում է և ապրեցնում, բայց կարող է և մեռնել: Հողը, ըստ Խրիմյանի և նրա հետևորդ Կ. Պալճյանի, իր աշխարհագրական դիրքով, բուսական և կենդանական աշխարհով, սովորություններով, ուրախություններով ու ցավերով մեզ կապված ամենահարազատ կենդանի մարմինն է, մեր Հայրենիքը, որը կանգուն է այնքան ժամանակ, քանի նրա վրա ապրում է հայ գյուղացին, հայ աշխատավորը, հայ ժողովուրդը: Նկարագրելով պանդուխտի ցուպը բռնած հայ գյուղացուն՝ սրտամորմոք Խրիմյանը և հայ գաղթօջախում այդ ցավը սեփական մաշկի վրա զգացած Կարապետ Պալճյանը հորդորում են հայ խլյակներին չհեռանալ մայր հողից, ապրել Հայրենիքում, արգասավորել մեր պապերից ժառանգություն ստացած երկիրը՝ Մայր Հայրենիքը: Նոր հայրենիք երբեք չի ծնվում. դա միայն գաղթօջախ է: Գաղութահայ կյանքը շատ տխուր երևույթներ է ծնում, որոնք այլասերման և կորստի ազդանշաններ են: Դրա ապացույցը գաղութահայության թվի նվազումն է: Այդ փաստը հավաստումն է այն գաղափարի, որ «մարդը իր բնավայրին մեջ է, որ կաճի ու կը տնե»[12]:

Երբ նկատի ենք առնում Պալճյանի՝ աշխատությունը գրելու ժամանակաշրջանը, Երկրորդ աշխարհամարտի տարիները, խորհում ենք՝ հոգեկան ինչ ուժ ու կարողություն պիտի ունենար հեղինակը այդպիսի ուժգին հայրենասիրությամբ տոգորված լինելու և շրջապատին տոգորելու համար: Երիտասարդ հայորդու կյանքի հետագա ընթաց-

[10] Նույն տեղում, էջ 158:

[11] Նույն տեղում, էջ 162:

[12] Նույն տեղում, էջ 178:

քը ապացուցեց նրա մեծ հավատամքը, անմնացորդ և անվկանդ հայրենասիրությունը: Երկու Մեծ Հայերի այդ գաղափարները առավել հրատապ են այսօր, երբ երջանիկ կյանքի և բարեկեցության հույսով մայր երկրից, անկախ Հայաստանից հեռանում են նրա որդիները՝ մոռանալով, որ Հայրենիքը մեկն է և անփոխարինելի: Խրիմյանը և նրա արժանավոր հետևորդը՝ Կարապետ Պալճյանը, ապագայի Վազգեն Առաջինը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, երևի կանխազգալով նաև ապագայի աղետները, ցույց են տալիս, որ ապրելու ոչ մի նոր վայր հայրենիք չի դառնում, և գաղութահայը պետք է պատրաստվի վերստին Հայրենիք վերադառնալ:

Մ. Խրիմյանի հայացքների քննարկումն ավարտելուց հետո Կ. Պալճյանը կատարում է մի քանի դիտողություններ, որոնք, իր կարծիքով, Խրիմյանի իմաստասիրական երկերի թերի կողմերն են և բացթողումները: Առաջին ընդգծված բացթողումը նա համարում է այն հանգամանքը, որ ամբողջացված չեն Մ. Խրիմյանի հոգեբանական վերլուծումները: Հոգեբանությունը համարելով մանկավարժության ամենակարևոր տարրերից մեկը՝ Կ. Պալճյանը գտնում է, որ Հայրիկի աշխատություններում թերի են կամ բացակայում են հոգեբանության անհրաժեշտ չափանիշները՝ «անքեթները, թեսթերը, մոնոկրաֆիները, սթաթիսթիքները»[13] և այլ մեթոդներ, սակայն նույն պահին հավելում է, որ դրա համար անհրաժեշտ էին իր ժամանակի չափանիշներ, իսկ Խրիմյանի ժամանակի և տեղի պայմաններում դա անհնարին էր: Փաստորեն, Կ. Պալճյանը գտնում էր, որ նշված թերությունը ոչ թե Խրիմյանի մեղքն էր, այլ՝ ժամանակի: Երկրորդ բացթողումը Պալճյանը համարում է այն հանգամանքը, որ դաստիարակ Խրիմյանը իր գործունեության և գրական-իմաստասիրական աշխատությունների մեջ «նվազ կարևորություն կու տա ֆոլքլորին», իսկ քանի որ ըստ հեղինակի այն (իմա՝ ժողովրդական բանահյուսությունը) ժողովրդի ապրումների և ձգտումների արտահայտությունն է, «երբեմն նույնիսկ պատմութենեն ալ ավելի ճշմարիտ»[14], ուրեմն այն ունի դաստիարակչական մեծ նշանակություն: (Կողմնակի նշենք, որ Խրիմյանի աշակերտ Գարեգին Սրվանձտյանցը լիովին ապահովում է նման պահանջների կատարումը):

Նշվում են նաև փոքրիկ այլ բացթողումներ, որ Կ. Պալճյանը կատարում է խիստ հպանցիկ, մնայունը և գնահատելին համարելով Խրիմյան մեծ դաստիարակի թողած անանց արժեքները, և նրան դասելով հայոց մեծերի շարքում՝ ընդգծում մեր ժողովրդի անցյալում, առավելապես ապագայում նրա թողած պատգամների հավերժությունը և անժամանցելիությունը:

Հարգանքի տուրք մատուցելով Ամենայն Հայոց Հայրիկի պայծառ հիշատակին, խնկարկում ենք նաև նրա արժանավոր հետնորդի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի անմար հիշատակը, արժևորում նրա՝ իբրև հայ քաղաքացու, հոգևորականի, Ամենայն Հայոց Հայրապետի հայրենանվեր առաքելությունը մեր ժողովրդի հարատևության և առաջադիմության ասպարեզում:

---

[13] Նույն տեղում, էջ 185:

[14] Նույն տեղում:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԵՎ ՌՈՒՄԻՆԱՀԱՅԵՐԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Բագրատունյաց հարստության վերացումը, Անիի կործանումը և Կիլիկյան թագավորության անկումը անմխիթար հետևանքներ են ունենում հայության համար։ Պետականությունից զրկված ժողովուրդը անղեկ ու անառաջնորդ տարտղնվում է աշխարհով մեկ։ Գաղթականության մի մեծ ալիք Անի-Ղրիմ-Աքքերման ճանապարհով հասնում է մինչև Ռումինիա։ Այդ ճանապարհը հետագա դարերում ևս բանուկ է դառնում հայ գաղթականության համար։ Դեռևս 5-7-րդ դարերում Բյուզանդական կայսրության կազմակերպած բռնագաղթերը պատճառ են դառնում հայերի հոծ զանգվածների՝ Ռումինիայում վերաբնակվելու։ Այդ է վկայում նաև Աքքերմանում գտնված արձանագրության 967 թվագրված բեկորը։ Ռումինիայի հայկական տեղանունները, ինչպես նաև հայկական թաղամասերի ու փողոցների անունները վկայում են, որ նախքան Բագրատունյաց թագավորության անկումն էլ այստեղ հայեր են ապրել։

Թուրք զավթիչների կողմից Պոլսի (1453 թ.) և Ղրիմի (1475 թ.) գրավումից հետո մեծաթիվ հայեր ներգաղթում են Ռումինիա։ 1894-96 համիդյան, 1909 թ. Ադանայի ջարդերը և 1915 թ. Մեծ եղեռնը ևս պատճառ են դառնում բազմաթիվ հայերի՝ Արևմտահայաստանից արտագաղթելու և Ռումինիայում ապաստանելու համար։ Այստեղ են գալիս նաև կաթոլիկացումից խույս տված լեհահայեր։ Այսպես ձևավորվում է ռումինահայ գաղութը, որի մի մասնիկն էր կազմում Վազգեն Ա-ի հայրական ընտանիքը։

Ռումանահայ կյանքի մասին («Նոթեր ռումանահայ կյանքի մասին», էջ 345) իր նոթագրության մեջ Վազգեն Ա-ն գրում է. «Լեհաստանեն և Ղրիմեն իջնելով՝ հայերը հաստատվեցան Բուկովինայի, Մոլդավիո և Տրանսիլվանիո (Առտիալ) ռումանական երկրամասերուն վրա»։ Նա նաև նշում է, որ հայերն իրենց աշխատասիրությամբ նպաստել են ռումինների երկրի տնտեսական, մշակութային և քաղաքական առաջադիմությանը, որի համար հարգվել են նոր հայրենիքում։ Դեռևս 14-րդ դարից հաստատված առաջնորդանիստ վանքերը, եկեղեցիները, հուշարձանները, գերեզմանաքարերը, պատմական վավերագրերը, ժամանակի օտար պատմագիրները և ճամփորդների ուղեգրությունները լավագույն վկայություններն են ռումինահայ հզոր գաղութի։ Ալեքսանդր Բարեպաշտը 1401 թ. Սուչավայի հայերի համար հիմնում է եպիսկոպոսական աթոռ։ Հայ գրչության կենտրոններ են ստեղծվում Սուչավայում, Քիլիայում, Կրայովայում, Բրըիլայում, Տուլչայում, Բուխարեստում և այլուր։

1948 թ. Վազգեն Ա-ն «Էջմիածին» ամսագրում «Ռումանահայ թեմը երեկ և այսօր» ակնարկում գրում է. «ԺԵ դարուն հայ համայնքներ եղած են Մոլդավիո հետևյալ քաղաքներուն մեջ՝ Սուչավա, Հոտին, Բոտոշան, Դորոհոյ, Վասլուի, Յաշ, Ռոման, Բակըու, Ֆոկշան և Չետատյա-Ալբը»։

Հոդվածի վերջում կարդում ենք. «Ըստ իրենց թվի մեծության՝ Ռումանիո հայերը կա-

րելի է դասավորել հետևյալ կերպով. ռոդոստոցիներ, կեմախցիներ, պոլսեցիներ, երզնկացիներ, Բրուսայի շրջանեն, կեսարացիներ, բուլղարահայեր, վանեցիներ, մշեցիներ և այլն» (Վազգեն Ա, Հայրապետ Հայոց, էջ 344)։ Վազգեն Ա-ի հայրը՝ Աբրահամը, Ռոդոսթոյից էր, մայրը՝ Սիրանուշը՝ Ադրիանապոլսից (Էդիրնե)։

Մարմարայի մարգարիտը՝ առաջնորդանիստ Ռոդոսթոն, Ադրիանապոլսի կուսակալության Ռոմելիի գավառում էր։ Ըստ «Բնաշխարհիկ բառարանի» (Վենետիկ, 1903-1905)՝ դարասկզբին քաղաքի 25000 բնակչությունից 3030 տունը հայեր էին։ 1915 թ. Ռոդոսթոյի հայերը ևս ենթարկվում են բռնագաղթի։ 1544 ընտանիք, մոտավորապես 9700 հայ քրիստոնյա անցնում է ջարդի ու աքսորի միջով, քշվում դեպի Տեր Զոր։ Ողջ մնացած ռոդոսթոցիները ցրվում են աշխարհով մեկ։

Ակնհայտ է, որ Լևոն-Կարապետ Պալճյանի՝ որպես ռումինահայ «կտրիճի» (իմա՝ *տղա, մանչ*) հայերեն խոսքի ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Ռոդոսթոյի բարբառը և Պոլսի բարբառի Ադրիանապոլսի խոսվածքը, որոնք գործառվել են Ռումինահայ գաղութում՝ Սուչավայի բարբառակիրների միջավայրում։

Ռումինահայերի առաջնորդանիստ կենտրոնը Բուխարեստն է։ Հայաբնակ են Սուչավան, Բոտոշանը, Ռոմանը, Յաշը, Սիրետը, Չեռնովցին, Աքքերմանը, Ֆոկշանը, Բակըույը, Սիլիստրան, Պիտեշտը, Կոնստանցան, Կալացը, Բրայիլան, Տուլչան, Պապադաղը, Տրկու-Օքնան և այլ բնակավայրեր։

Համաձայն Վազգեն Ա-ի տվյալների՝ այդ քաղաքներում գործում են հայերեն դասավանդությամբ պետական վարժարաններ, հրատարակվում են «Նոր կյանք» շաբաթաթերթը, «Սևան» պատկերազարդ ամսաթերթը։ Գործում է Հայ մշակույթի տունը, որն ունի գրադարան, «Կոմիտաս» քառաձայն երգչախումբ, կազմակերպվում են դասախոսություններ, հայկական երգի ու պարի խմբակների հանդիսություններ։

Ինչպես ամեն մի գաղութում, այնպես էլ ռումինահայերի շրջանում մշակութային կարևորագույն արժեքը լեզուն է։ Լեզվաբանական գրականության մեջ ռումինահայերի լեզվական հաղորդակցության միջոցը՝ «հայնակը» (իմա՝ *հայերեն*), հայտնի է Սուչավայի բարբառ անունով՝ որպես Առտիալի բարբառի ճյուղ։ Առտիալի բարբառն ունի իրար նման երկու զույգ ճյուղեր՝ Լեհաստանի և Հունգարիայի, Սուչավայի և Ռումինիայի։ Բարբառը լեզվական ընդհանուր հատկանիշներով բավականին մոտ է Նոր Նախիջևանի բարբառին։ Հր. Աճառյանը Սուչավայի բարբառը դասում է Ավստրո-Հունգարիայի բարբառախմբում։ Նա այդ մասին «Էմինեան ազգագրական ժողովածուի» Թ հատորի առաջաբանում գրում է. «Սուչավայի բարբառն ունի քանի մը ճիւղեր, որոնք են Լեհահայք, Հունգարահայք և Ռումանահայք, որոնք այս անուան տակ միացուցի՝ իրենց ունեցած շատ մը ընդհանուր գիծերուն համար» (տե՛ս էջ 37)։ Ապա ավելացնում է, որ այս շարքում իրեն առավելապես ծանոթ է Սուչավայի բարբառը։

Սուչավայի բարբառը ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման՝ պատկանում է *կը* ճյուղին, ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Առդեալի[1] (Տրանսիլվանիայի) կամ ծայր հյուսիսարևմտյան միջբարբառախմբի բարբառ է (տե՛ս ***Գ. Ջահուկյան,*** Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 134)։ Գ. Ջահուկյանը ծայր հյուսիսարևմտյան այս միջբարբառի մեջ է

[1] Ըստ Հ. Աճառյանի՝ *Առտեալ*, ըստ Գ. Ջահուկյանի՝ Առդեալ։

դասում միայն Կուտիի խոսվածքը։ Ա. Այտընյանը այս բարբառը կոչում է «երրորդ գավառական», որի մասին «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» գրքում գրում է. «Գաւառականներու մէջ երրորդ տեղը կը դասենք արդի արեւմտեան գաղթականութեան հայերէնը՝ *Երրորդ գաւառական* անուամբ, սկզբնաբար Անեցի գաղթականութեան մը լեզուն, որ դարերէ ի վեր Լեհաստան հաստատուած է, կէս՝ ուղղակի Հայաստանէն փոխադրուելով եւ կէս անուղղակի՝ ուրիշ արեւմտեան երկիրներ թափառելէն ետքը. ժամանակաւ մեծ ճիւղ մ՚ալ արձակելով Առտեալի երկիրը» (տե՛ս էջ 180)։

Վազգեն Ա-ի հայրական Ռոդոսթոյի բարբառը, որ Աճառյանը համարում է Պոլսի միջբարբառ, լեզվական հատկանիշներով բավականին տարբեր է Սուչավայի բարբառից։ Ռոդոսթոյի բարբառային առանձնահատկությունները առավել մոտ են Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Պարտիզակի, Օրդուի, Տրապիզոնի և Ադաբազարի բարբառներին։ Հր. Աճառյանը Ռոդոսթոյի բարբառի մասին գրում է. «Շատ նման է Պոլսոյ բարբառին, բայց ձայնական դրութիւնը նոյն է Մալաթիոյ հետ» (***Հր. Աճառյան,*** Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 36)։

Ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման՝ Ռոդոսթոյի բարբառը ևս *կը* ճյուղի բարբառ է, ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառի խոսվածք է (տե՛ս ***Գ. Ջահուկյան,*** Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ133)։

Բարբառագիտական գրականության մեջ նշվում է, որ բարբառը ձայնավորների կազմով հարում է գրական արևմտահայերենին, և դրանք գրաբարի համեմատությամբ փոփոխության չեն ենթարկվել (կաթ>*գաթ*, ծով>*ձով*, դուռ>*թուռ*)։

Գրաբարի ձայնեղ բաղաձայնները, այսինքն՝ *բ, գ, դ, ձ, ջ*-ն վերածվել են շնչեղ խուլերի՝ այսինքն՝ *փ, ք, թ, ց, չ*-ի, իսկ խուլերի խումբը, այսինքն՝ *պ, կ, տ, ծ, ճ*-ն՝ ձայնեղների (օրինակ՝ բերան>*փէրան*, բարեկամ>փարէգամ, գիր>քիր, ձուկ>*ցուգ,* պատ>*բադ,* պակաս>*բագաս*, կանուխ>*գանուխ,* ճրաք>*ջըրաք* և այլն)։ Ինչպես տեսնում ենք, հին հայերենի պայթական և կիսաշփական բաղաձայնների եռաստիճան համակարգին, այսինքն՝ *բ, պ, փ*-ին համապատասխանում է երկաստիճան խլազուրկ տեղաշարժով համակարգը, այսինքն՝ *փ, բ* (բ>փ, պ>բ, փ-փ)։

Սուչավայի բարբառի ձայնավորները, ինչպես Ռոդոսթոյում, պարզ են։ Ինչպես Արարատյան, Արդվինի, Աստրախանի, Ջուղայի, Թիֆլիսի, Մուշի, Կարնո, Պոլսի, Եվդոկիայի, Ակնի, Քեսաբի, Տրապիզոնի, Նոր Նախիջևանի բարբառներում, այստեղ ևս *ա* ձայնավորի քմայնացման չենք հանդիպում։ *Էо, իւ* քմայիններ հանդիպում են օտար բառերում, օրինակ՝ *գոնէոյդոր* «դերձակ», փոխառյալ ռումիներեն croitoriu։ Քմային ձայնավորով է արտասանվում միայն հայերեն *շէօն* բառը, որ գործածական է *Ասված շէօն բահէ* բարեմաղթության մեջ։ Տվյալ դեպքում ունենք «շէն»՝ ուրախ հայերեն բառը, որը գերմաներեն *schon* բառի ազդեցությամբ քմայնացել է, և այլ կիրառություն չունի (***տե՛ս Հ. Աճառյան,*** Քննություն Առտիալի բարբառի, էջ 30)։ Բառասկզբում հաճախ *ա* ձայնավորը ընկնում է. ալիւր>*լուր։* Առկա են նաև *ա* ձայնավորի հետևյալ փոփոխությունները. ածան>*աձուն,* ամաչել>*ամընչնալ*>*ամունչնալ,* յաղթել>*էխդէլ,* ջրաղացք>*ջէղացք,* մանուշակ>*մանուշիգ,* կոճիկ>*գըռջուգ* և այլն։ *Այ* երկհնչյունը պարզվում է. այս>*աս*, այդ>*աղ* և այլն։

Սուչավայի բարբառը հարուստ է *աւ, իւ, օւ, է, եւ, իը* երկբարբառներով, որոնցից *աւ, իւ* և *եւ* գալիս են գրաբարից, օրինակ՝ պատիւ>*բաղի՛ու,* սեաւ>սեւ>*սիյէ՛ու,* սիրտ>*սիբրդ։* Այս *է* երկբարբառը արտաբերությամբ նման է Վանի և Մուշի բարբառների նույն *է* ձայնին։ Երկբարբառներից չորսը (աւ, էւ, իւ, օւ) ունեն բացառիկ արտասանություն, որը չի հանդիպում հայերենի ոչ մի բարբառում։ Այդպիսի արտասանությունը բնորոշ է եղել հնագույն հայերենին. օրինակ՝ պառաւ> *բառաու*, հաւ>*հա՛ու*, եւ>*յէու*, պատիւ>*բաղիու, բաղիյու,* կռիւ>*գրոիու*, ազնիւ>*ազնիու,* հով>*հօու*, նաւով>*նավօ՛ու*։ Նման արտասանությունը հնդեվրոպական լեզուներից պահպանվել է գերմաներենում։ Երկբարբառ *է*-ն հնչվում է այնպես, ինչպես մշեցիների և վանեցիների մոտ, պատուել>*բաղվիյէլ,* սերտ>*սիյէրդ։* Կա նաև *իը* երկբարբառ, սիրտ>սիբրդ, հագիր>հաքիբր։

Հետաքրքիր հնչում ունի *եւ* երկբարբառը, օրինակ՝ տերեւ>*դերիյէ՛ու,* սեւ>*սիյէ՛ու* և այլն։ Նման բառերում շեշտը վերջընթեր է, ինչը բնորոշ էր գրաբարին։ Սուչավայի բարբառում e ձայնը շեշտի տակ հնչում է *է*, իսկ անշեշտ՝ *է*։

Բաղաձայնական համակարգը շնչեղ ձայնեղով խլազուրկ եռաշարք է. *բ՝, բ, փ*, օրինակ՝ *բամբակ-բ՛ամբագ, բոդկ-բ՛ըխգ, բու-բ՛ուհու, ծագել-ձաքել, ճրագալոյց-ջրաքալուից, կանգուն-գանգուն* և այլն։ Բաղաձայն նման հնչյուններ բնորոշ են նաև Համշենի, Հաճընի, Քեսաբի, Զեյթունի, Արաբկիրի, Ակնի, Շապին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի և Սեբաստիայի բարբառներին։

Բաղաձայնների արտասանությամբ առանձնանում է *խ*-ն՝ պայմանավորված բառի մեջ ունեցած դիրքով։ Երբեմն բառավերջի *խ*-ն հնչվում է ավելի թույլ, քան բառամիջի *խ*-ն։ Բառամիջում արտասանությամբ այն հայերեն սովորական *խ* է, իսկ բառավերջում՝ սլավոնական x (տե՛ս ***Հ. Ամառյան,*** Քննություն Առտիալի բարբառի, էջ 16)։

Անվանական հարացույցում գոյականի հոգնակին կազմվում է *եր, ներ*, նաև *դաք, դան, ըդան* հոգնակերտներով։ Վերջինը բնորոշ է նաև Կարնո բարբառին. օրինակ՝ *տղա-դրդաներ, ճանաչվոր-ջանջ՛ֆօրներ, խոտ-խօդան, հեծյալ-հէծէլվօրդաք, գիւղ-գ՛էդան տեղ-դեհրանք* և այլն։ Հայցական և բացառական հոլովներն ունեն *զ* նախդիր (*զիս, զմեզ, զիմմէ*)։ *Զ* նախդիրը բնորոշ է նաև *էս* դերանվան սեռական հոլովին, ինչպես՝ *զիմ։ Զիմ* ձևին զուգահեռ գործածական է նաև *ինձի* դերանունը։ Գործիականը կազմվում է *օւ* վերջավորությամբ, ինչպես նաև *հետ* կապով (*ինձի հետ, ձ՛եզի հետ*)։

Բարբառում պահպանվել են անորոշ դերբայի հին լծորդական չորս շարքերից երեքը՝ *ել, ալ, ուլ*, ինչպես՝ *սիրել, խաղալ, թողուլ։* Հին հայերենի *իլ* լծորդության բայերին համապատասխանում են *էլ*-ով ձևերը, ինչպես՝ *ազանիլ-հաքնէլ։*

Սահմանականի ներկա ժամանակը կազմվում է *զի*, ապառնին՝ *բիդօր* մասնիկներով, *զի սիրէի, զի թօղնույի, զի նայեին* և այլն։ *Բիդօր*-ը հունգարահայերի մեջ դառնում է *բի՝ բի սիրիմ, բի թօղնում,* այսինքն՝ պիտի սիրեմ, պիտի թողնեմ։ Անցյալ կատարյալը համարյա թե գործածական չէ, այն փոխարինված է հարակատարով։ Անկատարի երկրորդ դեմքի վերջավորությունը *ա*-ով է, որ առաջացել է ներկայի նմանողությամբ. *զը սիրէյիս, գուդէյիս։* Անցյալ դերբայի վերջավորությունն է *իլ,* ինչպես և Ղրիմի բարբառում է։ Բարբառի մասին որոշակի գաղափար կազմելու համար ներկայացնում ենք Կարապետ Կայնա Սուչավացու պատմածը՝ գրի առնված հայագետ Բիտների կողմից և տպագրված «Հուշարձան» պարբերականում։ «*Մէկ շուն մը կանցնի կտոր մը միս բերա-*

նը մէկ բոտի մը վրայով մը, ու նաելով ջրի մէջ, կի տեսնու օգկայ շուն մը մրսով բերանը, անժումը կի թապլէ բոտի (ռում. կամուրջ) վրայէ շունը գիրեն կտոր միսը ու կը վազէ մէկալ շընին ետեվանց ջրի մէջ ու կի մնայ արանց մրսի» (տե՛ս էջ 368)։

«*Խալպ աղուէս մը կի տեսնու մէկ ագրաւ մը մէկ կրտոր մը բերանը թրռչելէնը, աղուէսը անժումը կասէ ագրաւին, ինչ րինտ գիտիս փրչելու, թող որ լսիմ զքրաղցրտ ցանը. ագրաւը, լրսելով զատ գովասանքը, կի բանա զբերանը, օր փրչէ, ու կապլէ միսը վար, աղվէսը կի խրլէ զմիսը ու կուտէ զինքը*» (տե՛ս էջ 368)։

Սուչավայի բարբառի բառապաշարի քննությունը մեր ուսումնասիրության ոլորտից դուրս է։ Այդ մասին որոշակի գաղափար կազմելու համար դիտարկել ենք մի շարք կրոնաեկեղեցական բառեր։ Գրական և կրոնական փոխառությունները բարբառում կրել են որոշակի հնչյունական և իմաստային փոփոխություններ։ Որոշ բառեր պահպանել են իրենց իմաստը և հանդես են գալիս Սուչավայի բարբառին բնորոշ հնչյունափոխական տարբերակներով, ինչպես՝ անէծք > *անէցգ,* անիծել > *անիձել*, Աստուած > *ասվաձ*, անաստուած > *անասվաց*, եպիսկոպոս > *յէբիսգօբօս*, երդվել > *էրֆընալ,* խաչակնքել > *խաչագընքել,* ծաղկազարդ > *ձաղգազարդ՛,* կանթեղ > *գանթեղ*, կերոն > *գերօն*, կնունք > *գընունք*, կնքել > *գընքել*, հաղորդութիւն > *հաղորթություն*, հաւատ > *հավադգ՛,* հաւատալ > *հավադալ*, նաւակատիկ > *նավագադիգ,* կաղանդ > *գաղանդ՛,* սկիհ >*սիգի,* վարդավառ > *վարդ՝ավառ,* տիրացու > *դիրացու,* ուխտաւոր > *ուխդ՝ավօր,* օծել > *օձել*, օրհնել > *օրհնել*, ողորմել > *վողորմել* պատարագ > *բադարաք,* պատրիարք > *բադրիարք*, պսակ >*փրսագ,* սաղաւարտ > *սաղավարդ,՝ սանրհար*[2], *սանրմար*, *սադանա* և այլն։

Մի քանի բառեր, հնչյունական տարբերակից բացի, ունեն նաև հոմանիշներ. եկեղեցի >*յէգէղէցի* և *ժամ*, կնքահայր > *գընգրհար*, *խաշլու* և *քավոր,* կնքամայր > *գընքրմար* և *խաշլումար։*

Վարդապետ բառը Սուչավայի բարբառում գործածվում է ոչ միայն *վարդ՝աբեդ* հնչյունական տարբերակով, այլև արտակարգ հնչյունափոխության ենթարկված *վարեդ* ձևով։

Կարգաւոր բառը «հոգևոր կարգ ունեցող» իմաստով պահպանել է *կարգավոր* գրական արտասանությունը, չնայած զուգահեռաբար գործածական է նաև բարբառին բնորոշ *գարքավօր* հնչյունական տարբերակը։

Ամենօրյա շփումների հետևանքով տեղի են ունեցել ոչ միայն հայ և ռումին ժողովուրդների մշակույթների փոխազդեցություններ, այլև լեզվական փոխառություններ, բառիմաստային անցումներ։ Օրինակ, ռումինացիները սովորույթ են ունեցել Զատկի օրը «եղիճ» կոչվող փշով ձեռքերը ծակոտելով արյունոտելու։ Այդ սովորույթը անցել է ռումինահայերին, որի հետևանքով Սուչավայի բարբառում կերտվել է *լեղիճել* // *յէղիջել* (=եղիճել) բայը՝ կրոնածիսական իմաստով։

Որոշ կրոնաեկեղեցական բառեր ձեռք են բերել իմաստային որոշ նրբերանգներ։ Այսպես, օրինակ՝ *աղօթել* բայը բառիմաստի նեղացման հետևանքով ստացել է հատկապես բժշկական նպատակով աղոթելու իմաստ։

---

[2] Բարբառում *սանիկ* բառը չկա։

Ժամկոչ բառը բարբառում ունի *ժանգոչ* հնչյունական ձևը և ենթարկվում է ժողովրդական ստուգաբանության՝ ժամակոչ>ժամգոց. այսինքն՝ «ժամի դուռը գոցող»:

Կտակ բառը Սուչավայի բարբառում ստացել է կրոնաեկեղեցական իմաստ և *գրդագ հնչյունական* տարբերակով նշանակում է «եկեղեցում կարդալու թուղթ»:

Ձայնաւոր > *ցայնավոր* բառը՝ որպես բազմիմաստ բառ առաջին և հիմնական իմաստով նշանակում է «եկեղեցում երգող տիրացու»:

Մաս բառը ևս բազմիմաստ է, որի առաջին իմաստը «սուրբ հաղորդությունն» է: *Մասը* «սուրբ հաղորդություն» իմաստով հանդիպում ենք նաև Կոզենի, Ղարաբաղի, Ղարադաղի և Վանի բարբառներում:

Սուչավայում *սղան* բառը չունի հայերենում համընդհանուր ճանաչում ստացած իմաստը և բառիմաստի նեղացման հետևանքով նշանակում է միայն «եկեղեցու սուրբ սեղան»:

Վիջագ նշանակում է «հմայակ, կախարդական պահպանակ»:

Ճրագ բառը, պարսկերեն *չէրաղ* հոմանիշի հետ խաչաձևվելով, Սուչավայում և Լեհահայքում դարձել է *ջիրախ*, որից կազմվում են *ճրագալոյց* և *ճրագակալ* բառերը: Առաջինը, իբրև կրոնական բառ, պահել է իր ինքնությունը և դարձել է *ջրաքալույից* կամ ժողովրդական ստուգաբանությամբ *ջաքալուիս* (իբր թե *լոյս* բառից): Երկրորդը իբրև ժողովրդական բառ՝ վերակազմվելով դարձել է *ջիրախգալ* (տե՛ս ***Հ. Ամառյան,*** Քննություն Առտիալի բարբառի, էջ 62):

Վերը նշեցինք, որ Վազգեն Առաջինի հայերեն խոսքը ձևավորվել է բաղաձայնական տարբեր համակարգեր ունեցող բարբառների միջավայրում՝ Ռոդոսթոյի (երկաստիճան խլազուրկ տեղաշարժով), Պոլսի (երկշարք խլազուրկ) և Սուչավայի (շնչեղ ձայնեղով, խլազուրկ եռաշարք): Այս առումով Վեհափառ Հայրապետի լեզուն ուսումնասիրության բավականին հետաքրքիր նյութ է, քանի որ նա իր մանկավարժական, գիտական գործունեության և քարոզխոսության ընթացքում գործառել է գրական արևմտահայերենը, իսկ Արևելահայաստան գալով՝ գտնվել է արևելահայ գրական լեզվի ազդեցության միջավայրում՝ համադրելով հայոց լեզվի արևելյան և արևմտյան գրական երկու ճյուղերը: Լեզվական զարգացման այս շղթայի մի օղակն է «Կարօտ հայրենի» հուշագրությունը՝ տպագրված Բուխարեստի «Պահակ» պարբերականում 1946 թ. հունիսի 16-ին: Հատվածը գրական արևմտահայերենի գեղեցիկ նմուշ է. «Կը քալեմ կարծես երազիս մէջ, դիւթական աշխարհի մը դռները բանալով: Կը կոխեմ փողոցի քարերուն վրայ. որքան ջերմ են այդ քարերը: Ամէն մէկ քար սրտիս կը հպի: Ամէն մէկ քարէն սիրտս յուզում մը կը քաղէ.... Սիրտս ուժգին կը տրոփէ, եւ կուրծքս նեղ կու գայ» (տե՛ս էջ 47): Նշված հատվածը միայն մասնակիորեն կարող է ներկայացնել Վեհափառի լեզուն, իսկ հնչյունաբանական իրողությունների, բարբառային փոխազդեցությունների մասին կարելի է գաղափար կազմել ձայնագրված նյութերի միջոցով:

Ռումինահայերի ներկայիս լեզվական պատկերը, համաձայն մեր հարցումների, ունի որոշակի շերտավորում: Ավագ սերունդը բարբառախոս է, լավ է տիրապետում Սուչավայի բարբառին, և նրանց խոսքը հստակորեն տարբերվում է արևմտահայ գրական լեզվից: Միջին սերնդի խոսքում բարբառը նկատելիորեն տեղի է տվել՝ ներառելով արևմտահայ գրական լեզվի տարրեր: Հայկական կիրակնօրյա դպրոցներում գործառ-

վում է գրական արևմտահայերենը։ Այս լեզվով է իրականանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ռումինահայ թեմի քրիստոնեական քարոզչությունը և ոչ ծավալուն հայերեն գրահրատարակչությունը։ Որոշակի քանակ են կազմում նաև վերջին ժամանակներս Հայաստանի Հանրապետությունից Ռումինիա արտագաղթածները, որոնք հիմնականում բնակվում են Բուխարեստում և հաղորդակցվում են գրական արևելահայերենի խոսակցական տարբերակով։ Երիտասարդ սերունդը առավելապես օտարախոս է և համարյա թե չի տիրապետում ոչ՛ Սուչավայի բարբառին, ո՛չ գրական արևմտահայերենին, ո՛չ էլ արևելահայերենին։ Նկատվում է նոր սերնդի ընդգծված հեռացումը մայրենի լեզվից ու հայկական կրթությունից։ Շատերի համար որպես հաղորդակցության միջոց նախընտրելի են դարձել ռումիներենը և անգլերենը։

ԱՐՈՒՍՅԱԿ ՍԱՄՍՈՆԻ ՏԵՐՉԱՆՅԱՆ
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Պատմության ինստիտուտ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1941 թվականի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև (1939 թվականի օգոստոսի 23) կնքված չհարձակման պայմանագիրը, հարձակվեց Խորհրդային Միության վրա: Դրանով իսկ էլ ավելի ընդլայնվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի սահմանները, որոնց մեջ ընդգրկվեց Խորհրդային Միությունը:

Հայ ժողովուրդը անմիջապես արձագանքեց պատերազմին՝ տալով ավելի քան 600 000 մասնակից, որից 200 000–ը զոհվեցին, 106–ը դարձան Խորհրդային Միության հերոսներ, 26–ը՝ Փառքի շքանշանի ասպետներ, 4–ը՝ մարշալներ, 10–ը ծովակալներ և ավելի քան 160–ը գեներալներ, որոնցից 68-ը այդ կոչմանն արժանացան 1940-45 թթ, 92-ը՝ 1946-1997 թթ.[1]:

Հայ Եկեղեցին ևս անմասն չմնաց հայրենիքի պաշտպանության սրբազան գործից: Հայ ժողովրդի ազգապահպանության խնդիրը դարեր շարունակ իր վրա վերցրած, իր նվիրապետական աթոռներով՝ գլխավորությամբ Սուրբ Էջմիածնի, իր նպաստը բերեց պատերազմի հաղթական ավարտին:

Մայր Աթոռից հնչեցրած կոչերը լայն արձագանք են գտնում ողջ հայության շրջանում: Եկեղեցու համար կարևորագույն քայլ էր դժվար պահերին իր աջակցությամբ ու զորակցությամբ կրկին սատար կանգնել իր հոտին:

Ի թիվս այլ թեմերի, իր նշանակալից աջակցությունը Կարմիր բանակին և հայ ռազմագերիներին բերեց ռումինահայ թեմական խորհուրդը, որը 1943 թվականից գլխավորեց թեմի առաջնորդ Վազգեն վարդապետ Պալճյանը: Անդրադառնալով ռումինահայ թեմի գործունեությանը՝ կցանկանայինք հիշատակել Վազգեն Ա կաթողիկոսի կենսագրական որոշ տվյալներ, որոնք ուղղակիորեն կապված են տվյալ ժամանակաշրջանի հետ:

1937-1942 թթ. Լևոն Պալճյանը ակտիվ մասնակցություն է ունենում Բուխարեստի հայ ուսուսանողական միության աշխատանքներին, միաժամանակ մտերմանում ռումինահայ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հուսիկ արքեպս. Զոհրապյանի հետ՝ ավելի կապվելով եկեղեցական կյանքին:

1942 թ. երկարատև հիվանդությունից հետո վախճանվում է Ռումինիայի թեմի ա-

---

[1] **К. А. Арутюнян**,Участие армянского народа в Великой Отечественной вайне Советского Союза (1941-1945). НАН РА. 2004, с. 47, 742, 854.

ռաջնորդ Տեր Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյանը: 1943 թ. Բուխարեստում Արտաշես Գասարճյանի նախագահությամբ տեղի է ունենում ռումինահայ թեմի թեմական խորհրդի հերթական նիստը: Նիստում առաջ է քաշվում թեմակալ առաջնորդ ունենալու խնդիրը և առաջադրվում է Լևոն-Կարապետ Պալճյանի թեկնածությունը, որը մեծ հարգանք և հեղինակություն էր վայելում համայնքում: Նա Բուխարեստի ազգային վարժարանի ուսուցիչ էր, որտեղ դեռևս 1936 թ. ստանալով ուսուցչ-մանակավարժի բարձր որակավորում՝ ստանձնել էր այդ պարտականությունը:

Ռումինահայ թեմի թեմական խորհուրդը որոշում է կայացնում և խնդրում Լևոն-Կարապետ Պալճյանին տալու իր համաձայնությունը՝ հովվելու ռումինահայ թեմը[2]:

Զարմանալի զուգադիպությամբ 1943 թ. սեպտեմբերի 20-ին՝ իր ծննդյան տարեդարձի օրը, ապագա Վեհափառ Հայրապետը ճամփա ելավ դեպի Աթենք՝ թևակոխելով իր հոգևոր կյանքի նորամուտը:

Պատերազմական այդ օրերին նա մի քահանայի ընկերակցությամբ մի կերպ խույս տալով անգլոամերիկյան զորքերի ռմբակոծություններից, ուղևորվում է դեպի Աթենք:

Եվ ահա 1943 թ. սեպտեմբերի 30-ին Աթենքի Տուրդուդի Ֆիքսի թաղի հայոց Ս. Կարապետ եկեղեցում, հունահայ թեմի առաջնորդ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազլմյանի ձեռամբ Լևոն-Կարապետ Պալճյանը ձեռնադրվում է կուսակրոն աբեղա՝ ստանալով ձեռնադրության Վազգեն անունը[3]:

Աթենքն այդ ընթացքում գտնվում էր շատ ծանր վիճակում, մշտապես ռմբակոծվում էր անգլոամերիկյան ուժերի կողմից: Տեղացիները, այդ թվում և տեղի հայերը, դժվար կացության մեջ էին, սակայն կարողանում են օգնել նորընծա Վազգեն վարդապետին վերադառնալ Բուխարեստ:

Ինչպես ընդունված է եկեղեցական կյանքում, Վազգեն Պալճյան հոգևորականը ևս անցավ իր հոգևոր ինքնամփոփման և պատրաստման շրջանը՝ այն անցկացնելով հյուսիսային Ռումինիայի Սուչավա քաղաքի Ս. Հաճկատար հայոց հին վանքում, որը կառուցվել էր դեռևս 1512 թվականին:

Ինչպես հետագայում հիշում է Ամենայն Հայոց Հայրապետը. «Քառասուն օրից հետո վերադարձա Բուխարեստ: 1943 թ. նոյեմբերի 28-ին Բուխարեստի հայոց Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում, խուռն բազմության ներկայությամբ, ես իմ անդրանիկ պատարագը մատուցեցի: Բուխարեստի ողջ հայությունը ներկա էր, ոչ միայն եկեղեցին էր լիքը, այլև ամբողջ շրջապատը: Բուխարեստի հայոց եկեղեցին փառավոր մի եկեղեցի էր քաղաքի կենտրոնում՝ մեծ շրջապարիսպով, դպրոցի շենքով, մշակութային այլ կառույցներով, որոնք բոլորն էլ կառուցված են հայկական ճարտարապետության ոճով: Այս եկեղեցին մի քիչ նմանվում է Էջմիածնի Մայր Տաճարին: 17, թե 18-րդ դարում մի եկեղեցի է եղել Բուխարեստում, հայկական փոքրիկ, համեստ մի եկեղեցի: Այն քանդվել է, և նրա տեղում կառուցվել է այս փառավոր եկեղեցին, որ մինչև օրս կա: Կարող եմ ասել, որ Բուխարեստի ամենահետաքրքրական հուշարձաններից մեկն է՝ հայկական ճարտարապետական ոճով: Այս եկեղեցում են անցնում Ռումինիայում

---

[2] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, (1938–1955թ.), Գիրք Զ, էջ 248:

[3] Ոգեղեն Կյանք, (Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետի Ծննդյան 90-ամյակին), Ս. Էջմիածին, 1998, էջ 12-13:

ապրած իմ հետագա բոլոր տարիները»[4]:

Իր անդրանիկ պատարագի հիշողության մասին հետագայում Վեհափառ Հայրապետը գրում է. «Պատարագից հետո ազգային իշխանությունները մի բավական ընդարձակ ճաշկերույթ կազմակերպեցին՝ շնորհավորելու համար ինձ: Իմիջիայլոց, այս ճաշկերույթին ներկա էր նաև Դրաստամատ Կանայանը՝ հայտնի զորավար Դրոն, և նա՛ էլ խոսք առավ ինձ շնորհավորելու: Ես առաջուց էլ նրա հետ բավականին մոտիկից ծանոթ էի: Այդ արարողությունից հետո թեմական պատգամավորական ժողով գումարվեց, և ինձ ընտրեցին առաջնորդ թեմին հայոց Ռումինոյի: Ռումինական կառավարությունը առանց որևէ դժվարությունների հաստատեց իմ ընտրությունը. երևի դեր խաղաց նաև իմ տեղացի լինելը, ռումին լեզվին լավ տիրապետելը և այլն: Այս ձևով ես անցա իմ պարտականությունների կատարմանը իբրև ռումինահայ թեմի առաջնորդ»[5]:

Վազգեն վարդապետ Պալճյանը, անցնելով թեմական իր հովվության պարտականություններին, անմիջապես ձեռնամուխ եղավ թեմական կյանքին վերաբերող հարցերի կարգավորմանը: Սակայն ինչպես ամբողջ աշխարհում, Ռումինիայում ևս պատերազմական դժվարին վիճակ էր: Եվ ահա այս պարագայում Վազգեն վարդապետը իր անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ իրականացնում է ռումինահայ թեմի կողմից պատերազմի աղետյալներին ցուցաբերվող աջակցության ու Կարմիր բանակին ուղղված օգնության կազմակերպման աշխատանքները:

Պատկերացում կազմելու համար Վազգեն վարդապետի կատարած աշխատանքների մասին, բավական է մի մեջբերում պատերազմի ժամանակ Գևորգ Չորեքչյանին ուղղված նրա զեկուցագրերից, որտեղ Վազգեն վարդապետը նշում է.

«Պատերազմի սկզբէն ի վեր 2-րդ նորաշէն ազգային նախակրթարանը վերածված է հիւանդանոցի (60 անկողինով, ուր կը խնամուին վիրաւոր զինուորներ): Սոյն հիւանդանոցի մէջ խնամուեցան նաև բազմաթիւ խորհրդային ռազմագերիներ (մեր ճիգերով և միջնորդութիւններով կարելի եղաւ այդ արտօնութիւնը բացառապէս ձեռք բերել), իսկ զինադադարէն վերջ նոյն հիւանդանոցը խնամուեցան խորհրդային վիրաւոր բանակայիններ: Հիւանդանոցը այժմ ևս կը գործէ, որուն ծախքերը կը հոգացուին մեր հայ գաղութի նուիրատուութիւններով:

Կարժէ այստեղ յիշել նաև պարագան, որ 1942-էն մինչև 1944 թ. օգոստոսի 23-ը թեմական իշխանութեան կողքին գերիների օգնութեան մարմին մը կազմուեցաւ, որ մեր երկրի մէջ գտնուող խորհրդային ռազմագերիներուն եղբայրական օգնութեան գործը կազմակերպեց և ավելի քան 15000 հայ և այլ ազգութեանց պատկանող խորհրդային ռազմագերիներ իր հոգածութեան ներքև առաւ, անոնց ուղարկելով հագուստեղէն, կօշիկ, սնունդ և փող: Ասիկա մեր գաղութի հայրենասիրութեան ապացոյցներէն մին եղաւ և հակառակ բազում դժուարութեանց և մեծ արգելքներու, ի վերջոյ յաջողուեցաւ այս օգնութեան գործի արտօնութիւնը ձեռք բերել և կազմակերպել[6]:

1944 թվականի ամռանը Կարմիր բանակը մոտեցավ Ռումինիայի սահմաններին,

---

[4] Նույն տեղում, էջ 14:

[5] Նույն տեղում, էջ 15:

[6] ՀՀ ԱԱ, ֆ.409. ց, 1, գ. 5301, թ. 1-2:

և օգոստոսի սկզբներին մտավ Ռումինիա:

Օգոստոսի 22-ին Բուխարեստի ռադիոն հաղորդեց, որ երկրի թագավորը պիտի խոսի և ուղերձով դիմի ժողովրդին: Շատերը կարծում էին, որ թագավորը ժողովրդին պետք է կոչեր ոտքի կանգնելու և կռվի դուրս գալու խորհրդային բանակի դեմ: Սակայն թագավորը հայտարարում է. «Հրամայում եմ ռումինական բանակին, որ իր զենքը դարձնի գերմանական բանակի դեմ»[7]:

Որպեսզի իրենց հայրենիքը վտանգի տակ չդնեն, ռումինացիները ցուցաբերեցին քաղաքական ճկունություն և 24 ժամվա ընթացքում շրջադարձ կատարելով բաժանվեցին գերմանացիներից և ընդունեցին խորհրդային զորքերին:

Սակայն գերմանական ուժերը, որոնք մեծ թիվ էին կազմում Ռումինիայում, այդ քայլը բնորոշելով դավաճանություն, ռմբակոծեցին Բուխարեստը և նրա որոշ շրջաններ: Բարեբախտաբար շատ մեծ չէր ավերածությունների թիվը, սակայն նշենք, որ մասնավորապես վնասվել էին Բուխարեստի օպերայի շենքը, ազգային թատրոնի շենքը, թագավորական պալատը և այլն:

Կարմիր բանակը արագ մոտեցավ և մի շաբաթ անց արդեն Ռումինիան փրկվեց պատերազմական դաշտ լինելուց: Նշենք, որ Ռումինիայի այս հեղաշրջումն ուներ նաև իր քաղաքական հաշվարկները. նրանք համաձայնության եկան խորհրդային իշխանությունների հետ, պայմանով, որ Տրանսիլվանիա նահանգը ամբողջությամբ տրվի Ռումինիային և ոչ թե Հունգարիային[8]:

Ահավասիկ, ռումինացիները իրենց քաղաքականությամբ ոչ միայն մարդկային մեծ զոհերից խուսափեցին, այլև տեր դարձան այդ մեծ տարածքին: Ֆաշիզմի ջախջախմամբ նոր կյանք սկսվեց նաև հայ գաղութի համար՝ նոր պայմաններում, քաղաքական նոր իրավիճակում: Բուխարեստում հաստատվեց խորհրդային դեսպանատուն, որը հետաքրքրվեց նաև հայկական գաղութով: Այդ ժամանակ հայկական գաղթօջախում գործում էին մի քանի կուսակցություններ՝ դաշնակցական, հնչակյան և առաջադիմական: Լույս էին տեսնում թերթեր, կային նաև այլ կազմակերպություններ ևս՝ բարեսիրական, դաստիարակչական, սկաուտական և այլն: Սակայն սովետական դեսպանատան կարգադրությամբ բոլոր հայկական միություններն ու կազմակերպությունները միաձուլվեցին և ստեղծվեց մեկ հայկական կազմակերպություն՝ «Հայաստանյայց ճակատ» անվանումով, իսկ ղեկավարներ դարձան այն մարդիկ, ովքեր համակիր էին կոմունիստական կուսակցությանը:

Թեմակալ առաջնորդ Վազգեն վարդապետ Պալճյանը սկզբնական շրջանում իբրև հոգևորական շատ մտահոգված էր՝ աչքի առաջ ունենալով եկեղեցու ճակատագրին սպառնացող վտանգը, իմանալով, թե ինչպիսի իրավիճակում է գտնվում եկեղեցին և եկեղեցական կյանքը Խորհրդային Միությունում: Սակայն Բուխարեստում այդպես չեղավ և որոշ հնարավորություններ ստեղծվեցին, որպեսզի եկեղեցին իր գործունեությունը շարունակի[9]:

Այսպիսով, մի տեսակ նոր կյանք է սկսվում նաև հայ գաղութում, և Վազգեն վարդա-

---

[7] ՀՀայ Զինվոր, թիվ15, 19-26 ապրիլ, 2008, էջ 7:

[8] Ոգեղեն Կյանք, էջ 16:

[9] ԴՀայ Զինվոր, թիվ15, 19-26 ապրիլ, 2008, էջ 8:

պետը քայլեր է կատարում հարաբերություններ ստեղծելու նաև Խորհրդային Հայաստանի հետ:

Սակայն 1944 թ. դեկտեմբերի 30-ին, երբ արդեն խաղաղությունը գրեթե հաստատված էր, և խորհրդային ուժերը ամեն ինչ պահում էին իրենց վերահսկողության տակ, իսկ հայ գաղութն էլ բնականոն կյանքի մեջ էր գտնվում, անսպասելիորեն մեկ գիշերում Ռումինիայի հայ գաղութի 34 հայեր ձերբակալվում են իբրև քաղաքական հանցավորներ: Դա սարսափ է պատճառում ողջ համայնքին և նրա կյանքով ապրող թեմակալ առաջնորդ Վազգեն Պալճյանին, որովհետև հայ գաղութում ոչ մի հակախորհրդային գործունեություն չէր ծավալվել:

Միայն Դրոն էր, որը դեմ էր կոմունիստական գործելակերպին, սակայն դաշնակցությունն իր ամբողջ կազմով հակառակ էր Դրոյի գործելակերպին և ամբողջովին հավատարիմ էր մնացել ռումինական քաղաքականությանը: Այնուամենայնիվ, ձերբակալությունները տեղի էին ունեցել: Ձերբակալվածների մի մասը դաշնակցականներ էին, ոմանք այլ կուսակցություններից և առանձին անհատներ, և բոլորն էլ անմեղ մարդիկ: Նրանց մեջ էին նաև Վազգեն վարդապետի մտերիմ երկու ընկերները, որոնք, ինչպես նա էր նշում. «Ճիշտ է, գաղափարներով կոմունիստական չէին, բայց և հակակոմունիստական հայացքներ էլ չունեին»:

Այդ իրադարձությունների մասին թեմակալ առաջնորդը հետագայում նշում է. «Մեծ դժբախտություն եղավ մեզանում, և ես էլ այդ օրերին, իմ ներքին ուժերը հավաքած, գնացի սովետական դեսպանատուն՝ խնդրելու, որ օգնեն ազատելու անմեղ մարդկանց, որովհետև այդ ակտը կատարված էր սովետական ուժերի կողմից: Անուշադրության մատնեցին թե՛ բանավոր, թե՛ գրավոր խնդրագրերը: Ես ուզեցի մի խաղաղ ցույց կազմակերպել եկեղեցու բակում, բողոքի ցույց այդ ձերբակալությունների դեմ՝ պահանջելու հայերի ազատումը: Դաշնակցականները խորհուրդ տվեցին ձեռնպահ մնալ. դա կարող է հայ գաղութի համար ավելի վատ հետևանքներ ունենալ: Դրա փոխարեն ձերբակալվածների կանանց ու հարազատներին հավաքեցի, դիմում գրել տվեցի և տարա դեսպանատուն: Դժբախտաբար ոչ մի պատասխան չստացվեց, և բոլոր ձերբակալվածները աքսորվեցին Սիբիր»[10]:

Հետագայում ևս տեղի ունեցան մի շարք ձերբակալություններ, որոնց զոհ գնացին տասնյակ հազարավոր անմեղ մարդիկ: Ստալինի մահից հետո նրանք թեև արդարացվեցին, բայց շատերը՝ արդեն հետմահու:

Վազգեն վարդապետն ապրում էր թեմի և իր ժողովրդի հոգսերով, ուներ իր գործունեության հստակ ուղենիշը, որի մասին գրում է այսպես. «Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ հայ հայրենիք, կա մեկ ճակատագիր, հետևաբար՝ կա մեկ կամեցողություն և գործելու մեկ ուղղություն»[11]:

Ինչպես արդեն վերը նշեցինք, Ռումինիայի թեմակալ առաջնորդը քայլեր էր ձեռնարկում կապեր հաստատելու Խորհրդային Հայաստանի հետ: Պատերազմից հետո Ռումինիայում ևս ստեղծվեց նոր իրադրություն, և Վազգեն վարդապետի առաջնա-

---

[10] Հայ Ձինվոր, թիվ16, 26 ապրիլ- 3 մայիս, 2008, էջ 7:

[11] ì ³½·»Ý ² Ð ³ÛñÃ³ å» ï Ð ³Ûáó, ¶Çñù ºñÏñáñ¹, Î áÝ¹ ³ ÏÝ»ñ, ø ³ñá½Ý»ñ, Ö ³ é»ñ, ºÉáõÛÃ»Ý»ñ, Ø ³ÛñÃ ² Ãáé ê. ¾çÙÇ ³ ÍÇÝ, 1968 Ã.:

հերթ խնդիրը դարձավ համայնքի հոգևոր կյանքի կազմակերպումը նոր պայմաններում և ամենակարևորը՝ սերտ կապերի հաստատումը մայր հայրենիքի հետ:

Եվ ահա 1945 թ. հայրենիքի հետ հանդիպման առիթն ինքնին եկավ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություններին հրավիրվեց պատվիրակություն նաև Ռումինիայից: Ռումինիայի պատվիրակությունը Վազգեն վարդապետ Պալճյանի և դոկտոր Արտաշես Տիրացյանի ներկայացուցչությամբ, որպես պատգամավորներ Ազգային Եկեղեցական Ժողովի, 1945 թ. եկան Խորհրդային Հայաստան[12]: 1945 թ. հունիսին տեղի ունեցան Ազգային եկեղեցական ժողով և կաթողիկոսական ընտրություններ, որի ժամանակ, ինչպես գիտենք, երկար ընդմիջումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը:

Վազգեն վարդապետի վրա մեծ տպավորություն էր թողել իր Հայաստան կատարած առաջին այցը, նա ականատեսն էր եղել հետպատերազմյան շրջանի ծանր տնտեսական դժվարությունների և մարդկային տառապանքների: Հետագայում իր հուշերում և առանձին գրախոսականներում նա ևս մեկ անգամ անդրադարձել է այդ ամենին: Անցան տարիներ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Վազգեն վարդապետը Հայաստան այցելեց մի քանի անգամ՝ 1948-ին, 1951-ին, 1953-ին: Ամենանշանակալիցը 1951-ի այցելությունն էր. այդ տարի Վազգեն վարդապետը Գևորգ Զ կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվեց եպիսկոպոս:

Իր այցելությունների և ապրումների մասին երջանկահիշատակ հայրապետը հետագայում գրում է. «Ես հոգեպես կապվեցի Հայաստանի հետ, ես զգացի, որ մենք բոլորս ինչ-որ պարտականություն ունենք՝ ինչ-որ մի ձևով, մի բանով օժանդակելու մեր հայրենիքի առաջընթացին և ավելի լավ ապագային»:

---

[12] ì ³ í»ñ ³ ·ñ»ñ Ð ³ Û º Ï»Õ»óáõ å ³ ï ÙáõÃÛ ³ Ý, (1938–1955Ã.), ¶Çñù ¼, ¿ç 267:

ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՆԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Բժշկական գիտությունների դոկտոր
Վաստակավոր բժիշկ

ՀՈՒՇԵՐ ԵՎ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի ծննդյան 100-ամյա հոբելյանի առիթով ցանկանում ենք ներկայացնել մեր հուշերը Վազգեն Վեհափառի մասին: Տողերիս հեղինակն այն երջանիկներից է, ովքեր բախտ են ունեցել հանդիպելու Վազգեն Առաջին Հայրապետին: Այս հոդվածում ես կպատմեմ 1984 թ. դեկտեմբերի 24-ին տեղի ունեցած մեր հանդիպման մասին:

Ստավրոպոլ քաղաքում 1952 թվականից գործում էր բժիշկների գիտահետազոտական մի նշանավոր ինստիտուտ, որի հիմնադիրը և տնօրենն էր ճանաչված գիտնական և շատ գործունյա մասնագետ Վարդան Տեր-Վարդանյանը: Ծնողները Կաղզվանից էին և 1915-ին գաղթել էին Ռուսաստան: Նրա հայրը մահից առաջ իր բժիշկ որդուն է հանձնում լավ պահպանված մի հին գորգ և արծաթից ձուլված մի մասնատուփ: Նա տղայից պահանջում է երդվել, որ այդ իրերը որպես նվիրատվություն կհանձնի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Տղան խոստանում է կատարել հոր պահանջը:

Վարդան Տեր-Վարդանյանը այդ առիթով ինձ խնդրեց, որ ինքս այդ գորգը և մասնատուփը փոխադրեմ Երևան և ապա դրանք հանձնեմ Վեհափառին: Ես նրան խոստացա դա կատարել ամենայն ճշտությամբ և այդ մասին հայտնել իրեն:

Երևանում գորգի ներքևում գունավոր թելերով մի արձանագրություն հյուսվեց, որում ասվում էր, թե գորգը (230 սմ երկ. և 130 սմ. լայն.) նվիրվում է Ս. Էջմիածնին՝ հայրենասեր բժիշկ Վ. Տեր-Վարդանյանի ընտանիքի կողմից:

1984 թ. դեկտեմբերի 24-ին գորգը և արծաթյա մասնատուփը բացատրագրի հետ միասին ներկայացվեց Վազգեն Ա Կաթողիկոսին: Մտա Վեհափառի աշխատասենյակ և խոնարհաբար բարևեցի նրան՝ կանգնած մնալով դռան մոտ: Բերված գորգը փռված էր հատակը ծածկող մի այլ գորգի վրա: Լավ նկատելի էր նրա հին լինելը, զարդանախշերի ու գույների տարբերությունը:

Վեհափառ Հայրապետը ժպտալով պատասխանեց իմ բարևին և ելնելով տեղից՝ մոտեցավ փռված գորգին ու սկսեց զննել այն: Մի փոքր լռությունից հետո դառնալով ինձ՝ ասաց.

-Ի՞նչ տամ Ձեզ այս գորգի դիմաց, որ բավարարված լինեք...

-Ոչ մի բան, Վեհափա՛ռ, դրա ազգապաշտ տերը դրանք ուղարկել է որպես նվիրատվություն եկեղեցուն:

-Այդ դեպքում իմ անկեղծ շնորհակալությունը կհայտնեք այդ ազգապաշտ Վարդան Տեր-Վարդանյանին՝ այս նվիրատվության համար: Իսկ ձեզ կտանք համապատասխան ընկալագիր (ստացական), որ եկեղեցին իրոք ձեզանից ստացել է գորգը և արծաթյա

մասնատուփը,- ասաց Վեհափառը։

Ասենք, որ մասնատուփի վրա դրոշմված էին մի քանի հայերեն տառեր։ Վեհափառը հանձնարարեց մի երիտասարդ աշխատողի տառերը վերծանել և այդ մասին հայտնել իրեն, ապա ինձ առաջարկեց նստել իր դիմացի աթոռին և հարցրեց.

-Ձեր գրած բացատրագրից իմացա, որ դուք բժիշկ եք և գիտությունների դոկտոր, դա այդպե՞ս է։

-Ճիշտ այդպես,- ասացի ես։

-Դա շատ լավ է,- ասաց Վեհափառը և շարունակեց,- իսկ ինչ թեմայի վրա եք աշխատել դուք գիտական այդ բարձր աստիճանը ստանալու համար։

Դա ինձ համար անսպասելի հարց էր։ Ես մի պահ շփոթվեցի հանկարծակիի եկած մարդու պես և մտածում էի, թե ինչպես ասեմ, որ հարմար լինի։ Վեհափառը նկատեց իմ շփոթությունը և հանգիստ տոնով ասաց, որ առանց անհարմար զգալու ասեմ։

-Ինստիտուտը ավարտելուց հետո ես 16 տարի (1948-1964 թթ.) աշխատել եմ Լենինականում և այդ ընթացքում ոչ ոք որևէ գիտական թեմա ինձ չի հանձնարարել։ Սակայն այդ տարիներին ինձ հաջողվեց հայտնաբերել մի նոր հիվանդություն, որի մասին մեր Հանրապետությունում ոչ մի բան չգիտեին։

- Դա հետաքրքիր է,- ասաց Վեհափառը և ապա հարցրեց,- իսկ ինչպե՞ս է կոչվում այդ նոր հիվանդությունը։

- Այն կոչվում է էրիզիպելոիդ,- ասացի դանդաղ և պարզ ձևով։

-Իրոք նոր է, ես ինքս էլ չեմ լսել հիվանդության նման անվանում,- ասաց նա, և տիրեց լռություն։

Այդ ոչ հարմար թեման փոխելու համար որոշակի զգուշությամբ ասացի.

-Ես տեսնում եմ, որ Մայր Աթոռում և նրա շրջակայքում դրական առումով մեծ փոփոխություններ են տեղի ունենում։

-Եվ դեռ էլի շատ բաներ կան անելու, եթե կարողանամ հասցնել,- ասաց Վեհափառը,- իսկ դուք անցյալում երբևէ տեսած կա՞ք, թե ինչպիսի անբարեկարգ դրություն է եղել եկեղեցում և նրա շուրջը։

-Այո, ես դա տեսել եմ վաղուց ու մոտիկից և շատ եմ ափսոսացել, որ փառք ու պատիվ ունեցող այս Սուրբ Տաճարը անուշադրության էր մատնված։ Պատերազմի տարիներին Վեհարանի այս շենքը զորանոցի էր վերածվել։ 1942 թ. մեր զորամասը տեղակայված էր հենց այստեղ՝ Վեհարանում, որը նույնպես անբարեկարգ վիճակում էր...

-Այդ դեպքում ասացեք, թե ինչպե՞ս տեսաք և ի՞նչ դրություն էր տիրում Մայր Աթոռում և նրա շրջապատում այդ խառը ժամանակներում,- հարցրեց Վեհափառը։

-Ոչ մի լավ բան չի կարելի ասել այդ մասին։ Ամեն տեղ և բոլոր հանգամանքներում հոգևորականները հալածվում էին։ Շատ տեղերում, մանավանդ գյուղական վայրերում, գյուղական եկեղեցիները դարձրել էին բրդի, ցորենի և այլ պահեստներ։ Զորամասի տղաների հետ հաճախ դիտում էինք նաև Մայր Տաճարը, նրա բակն ու կից կառույցները։ Եվ միշտ այնտեղից հեռանում էինք ափսոսանքով։ Եկեղեցու դուռը չկար, այն բաց էր և ցանկացած պահի հնարավոր էր ներս մտնել։

Այդ օրերին խոսակցություն էր գնում, որ գողություն էր կատարվել. տարել էին եկեղեցու և նրա թանգարանում եղած բոլոր արժեքավոր իրերն ու պարագաները։ Դեպի

հարավ՝ մոտ 50 մետր հեռավորության վրա, գտնվում էր եկեղեցու անշուք ու փոքր լիճը: Նրա մեջ ոչ մի կաթիլ ջուր չկար և զինվորականները այն դարձրել էին աղբավայր: Համոզված էինք, որ եկեղեցին, նրա բակն ու հարակից տարածքները կարիք ունեն հիմնավոր վերանորոգման, վերակառուցման ու վերափոխումների:

Օրվա ընթացքում ավելը ձեռքին մի տարեց կին էր գալիս եկեղեցի: Նա նախ համբուրում էր այդ սրբավայրի պատերը՝ միաժամանակ սրբելով թափվող արցունքները: Երբեմն այդ կինը ընդունում էր ողբարկու կնոջ մի յուրահատուկ կեցվածք ու ձեռքերը տարածելով՝ ինքն իրեն խոսում էր լսելի ձայնով. «...Էսպես խո չի մնա, Աստծո լույսն ու բարությունը մին էլ կհասնի հայ տներին...»:

Մի անգամ տղաներից մեկը կնոջն ասաց. «Մայրի՛կ ջան, դուք շատ եք համբուրում պատերի կեղտոտ քարերը, կվարակվեք ու կհիվանդանաք»: Նա զարմացած հայացքով նայեց և ասաց. «Մինչև հիմա դեռ չգիտեք, որ եկեղեցում մարդ չի հիվանդանում, և հակառակը, այստեղ եկած հիվանդները լավանում ու բուժվում են»: Այդ զինվորն այլևս չշարունակեց խոսակցությունը՝ հասկանալով, որ չէր կարող նրան համոզել:

Այն, ինչ տեսնում եմ ներկայումս Մայր Աթոռում, ոչ մի բանով չի կարելի համեմատել նախկինում եղածի հետ: Այստեղ մեծ առաջընթաց կա, ամեն բան վերանորոգված է կամ նորն է կառուցված: Բակը և շրջապատը կանաչապատված ու բարեկարգված են:

-Պարզ երևում է, այո, այստեղ որոշակի աշխատանքներ կատարված են,- ասաց Վեհափառն ու շարունակեց,- այնտեղ, ուր կա աշխատանք, միշտ էլ մի օգտակար կամ լավ բան ստացվում է: Իմաստուն մարդկանցից մեկը շատ դիպուկ է ասել. «Բոլոր տեսակի հարստությունների աղբյուրը աշխատանքն է»:

Ես հիշեցի, որ այդ իմաստալից մտքերը Էնգելսի փիլիսոփայությունից են, բայց այդ մասին լռեցի և ոչ մի բան չասացի: Վեհափառը շարունակեց.

-Ես ընդունում եմ, որ փոքր ծավալի որոշ աշխատանքներ այստեղ իմ կողմից են արված: Այդ գործերը հիմա դուր են գալիս շատերին ու պարզերես դարձնում ինձ այն հազարավոր մարդկանց առաջ, ովքեր գալիս են այս սրբավայրը, բայց երբ դրանք համեմատում ես անցյալի մեր նշանավոր կաթողիկոսների կողմից արված գործերի հետ, երևում է, որ այստեղ արվածները չնչին բաներ են դրանց դիմաց,- ասաց Վեհափառը հուզմունքով:

-Մասնավորապես անցյալի ո՞ր կաթողիկոսներին նկատի ունեք Դուք,- հարցրի ես:

-Լավագույն օրինակ կարող է լինել Ներսես Գ Տայեցի Կաթողիկոսը (641-661 թթ.), որին անվանում էին նաև Կառուցող կաթողիկոս: Նա այդ հեռավոր ժամանակներում (641-653 թթ.), 10-12 տարվա ընթացքում կառուցեց վաղ միջնադարյան Զվարթնոց տաճարը և դրանով էլ անմահացավ պատմության մեջ:

Անհրաժեշտ է նշել, որ մեր ժողովրդի մինչև հիմա կառուցած եկեղեցիների մեջ Զվարթնոցի տաճարը իր ծավալով եղել է ամենախոշորը և ամենաբարձրը (45 մետր): Եվ այդ բարդ կառույցը շինարար վարպետները կարողացան վեր բարձրացնել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ չկար մեխանիզացիա, և մարդիկ գաղափար չունեին անգամ երկաթբետոնյա ամուր կոնստրուկցիաների մասին:

Զվարթնոց տաճարը եղել է բացառիկ ճարտարապետական կառույց և գեղեցիկ տեսարժան վայր, որը դեպի իրեն էր ձգում մարդկանց:

Ավելի քան 300 տարի գոյատևեց այդ տաճարը և մնաց կանգուն՝ զարմանք ու հիացմունք պատճառելով դիտողներին: Ասենք, որ այդ տաճարը կառուցող Հայրապետը, վարպետները, արհեստավորները, այդ թվում և բանվորները եղել են բարձր ճաշակ ունեցող ու շատ ազգասեր անհատներ: Նրանք ունեցել են հայրենասիրություն, աշխատասիրություն և մեծ կամք՝ այդ նպատակին հասնելու համար: Նրանք այդ բացառիկ տաճարը կառուցել են ճիշտ վայրում (Արարատյան դաշտավայր) և ամենահարմար տեղում, որտեղից այն իր անթարթ հայացքով նայում էր Արարատ լեռան բարձունքներին...

Երբեմն էլ ինձ թվում է, որ իրար դիմաց կանգնած Արարատ լեռը և Զվարթնոց տաճարը ոչ միայն նայում են իրար, այլև փոխադարձաբար զգում են մեկը մյուսի հմայքը, գեղեցկությունն ու մեծությունը,- ասաց Վազգեն Կաթողիկոսը մի վառ արտահայտչականությամբ:

Մի փոքր լռությունից հետո հայրապետը շարունակեց.

-Զվարթնոցի տաճարը քանդվել է 10-րդ դարում, և դրանից հետո ավերված հուշարձանի որմնաքարերը, արծվաքանդակ խոյակները, այուները և այլ պարագաներ դարեր շարունակ մնացել են քարի տակ և այդ վիճակում պահպանվելով՝ հասել են մինչև մեր օրերը: Ես հիմա էլ եմ պատկերացնում այդ գործի ողջ ծանրությունը և միաժամանակ հպարտանում եմ Ներսես շինարար կաթողիկոսի աշխատասիրությամբ, տաղանդով, համարձակությամբ և լավատեսությամբ ... Նա անտեսեց այնտեղ եղած բոլոր դժվարությունները և դիմեց բացառիկ մի համարձակության՝ կատարելով նման մի ձեռնարկում, որը լի էր հակասություններով ու բարդություններով...

Երևի Աստված ինքն էր այդպես կամեցել և ինքն էլ օգնեց Ներսես Տայեցի կաթողիկոսին Զվարթնոցի պես այդ բարդ կառույցը գլուխ բերելու համար...,-ասաց Վազգեն Վեհափառը՝ խաչակնքելով...

-Ոմանք ցանկանում են այդ ավերված տաճարը ամբողջապես նորից վերականգնել, սակայն չի ստացվի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ տաճարի նախկին հիմքերը դարերի ընթացքում քայքայվել ու թուլացել են, դրանք այլևս չեն կարող դիմանալ այդ մեծածավալ բարձր շենքի ծանրությանը: Զվարթնոցի տաճարը կարելի է վերականգնել միայն մասնակի ձևով և ոչ ամբողջական չափերով: Ովքեր ցանկանում են այդ հուշարձանը տեսնել ամբողջական կանգուն վիճակում, թող վերցնեն նրա նախագիծը և մի առանձին տեղում նորից կառուցեն այն...

Սակայն ես կարծում եմ, որ անգամ քանդված վիճակում էլ նրա ավերակները գեղեցիկ են ու հետաքրքիր... Միայն թե այդ ավերակները պետք է լավ պահպանվեն, որ դրանցից էլ չզրկվենք,- ասաց Հայրապետը հուզմունքով:

-Ներկայումս ես ձգտում եմ հասնել այն բանին, որ Էջմիածին եկողները այդ Սուրբ Տաճարը տեսնելուց հետո, միաժամանակ կարողանան դիտել նաև նոր կառուցված հուշարձանները, կոթողները, թանգարանի նոր շենքը, այնտեղ ցուցադրվող թանկարժեք նմուշներ ու այլ պարագաներ: Եկեղեցու համար մեծ հարստություն են համարվում նաև բազմաթիվ հին խաչքարերը, որոնք ներկայումս շրջապատում են այս սրբավայրերը, դրանք նույնպես դիտվում են մեծ հետաքրքրությամբ:

Հանկարծ կաթողիկոսի դեմքը մռայլվեց և դառնալով ինձ՝ ասաց.

-Զարմանքով կարելի է հիշել, որ մինչև հիմա աշխարհի մասշտաբով դեռևս չկան վճռական խիստ օրենքներ, որոնցով հնարավոր կլինի պատժել այն անհատներին, ովքեր բարբարոսաբար ոչնչացնում են, այրում, ավերում ու ոտնատակ տալիս հուշարձանները, սրբավայրերը, արվեստի նմուշները և խաչքարերը... Կան հուշարձաններ կեղծողներ, իրենցով անողներ ու դրանք յուրացնողներ ... Ցավով պետք է ասեմ, որ այդ վանդալները դեռևս այսօր էլ կան և գործում են, բայց մնում են անպատիժ,- ասաց Վեհափառը հուզված ձայնով:

Խոսակցության պահին ես նկատում էի, թե ինչպես էր փոխվում Վեհափառի դեմքի արտահայտությունը և ինչպիսի հոգեկան ապրումներ էր ունենում այդ մտքերն արտահայտելիս: Ես անցյալում տեսել և զգացել էի Վեհափառի նպատակադրված գործունեությունը: Փաստորեն, նրա ջանքերի շնորհիվ էր, որ նորից հնչեցին այդ հոգևոր տաճարի լռած զանգերի ղողանջները: Դրանք կարծես թե նորից կենդանացան և ազդարարեցին այս նոր դարաշրջանի հոգևոր կյանքի սկիզբը: Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Առաջինը Սուրբ Էջմիածինը իր մյուս կառույցներով վերածեց մի յուրատեսակ թանգարանի, մշակույթի մեծ կենտրոնի բաց երկնքի տակ: Եվ դա էր պատճառը, որ դեռևս 4-րդ դարից եկող այդ սրբավայրն այսօր էլ դեպի իրեն է ձգում ոչ միայն հայությանը, այլև շատ շատերին:

Ես մտքիս մեջ հազար երանի էի տալիս հայ ժողովրդին, որ ուներ Վազգեն Ա-ի նման հայրենասեր ու հոգատար Կաթողիկոս...

Մեր զրույցի վերջում Հայոց Վեհափառ Հայրապետն ինձ նվիրեց «Արարատ» պատկերազարդ ալբոմը, որի վրա իր սուրբ ձեռքով գրել էր. «Հարգարժան տիար Հովսեփ Հովասափյանին օրհնությամբ»: Ճիշտ նման մի գիրք էլ պատրաստեց Ստավրոպոլում բնակվող Վարդան Տեր-Վարդանյանին հանձնելու համար:

Վերադառնալով տուն՝ ես մի շնորհակալական նամակ ուղարկեցի Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա-ին իր բարեսիրտ վերաբերմունքի և ինձ տրված ընծայի համար:

Տարեվերջին նա պատկերազարդ մի շքեղ բացիկով շնորհավորեց մեր ընտանիքին 1985 թվականի Նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ...

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԵՐԻՑ

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
(17 ապրիլի 1960 թ.)

Եվ մարդը ինչ է, եթե ոչ ճամփորդ մը արի, երբեք հոգնաբեկ, որ հավետ կընթանա միշտ դեպի հառաջ, միշտ դեպի երկինք, ու կբախե համառ դռները հույսին։ Ու այդ ճամբուն վրա միայն սփռված է առատ «լույս փառաց» մարդկային կյանքին։ Եվ այդ ճամբուն վրա միայն մարդիկ կքալեն ազատ, Արարչին հետ անտես, ու իրենց մարմինը հոգիի վերածած՝ կստեղծեն ինչ որ բարի է, ինչ որ ճշմարիտ, ինչ որ գեղեցիկ ու ինչ որ արդար։

Հավիտենական մարդն է՝ Դամասկոսի ճամբուն հարություն առած, Միածնի հարության անմահ շնորհներով։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվարի 1966 թ.)

Խաղաղ ու պայծառ գիշեր էր։ Հոգնած ու տառապած մարդիկ կնիրհեին՝ հույսի տեսիլքներ պինդ ծրարած իրենց սրտերուն մեջ։ Աշխարհ լեցուն էր արցունքով ու վշտով։ Ծանր էր և տխուր՝ ապրիլ գոռոզ ու դաժան կեսարներու լուծին տակ։ Ո՞ւր էր արդարությունը։ Ե՞րբ պիտի հնչեր փրկության ժամը։ Մարդիկ ու ժողովուրդներ ե՞րբ պիտի շնչեն ազատ։ Ե՞րբ պիտի իջներ խաղաղությունը հոգիներուն և աշխարհին վրա։ Այս սուրբ սպասումները կաճեին ամեն օր, ամեն ժամ, և մարմին ու հոգի կստանային հրեղեն տեսիլքներու ջերմությամբ։ Ինչքան ծանր էր լուծը կյանքին և դաժան՝ կարգն ու օրենքները բռնակալներուն, այնքան ջերմ ու կախարդիչ կդառնային երազները Իսրայելի խոնարհ ու տկար զավակներուն։ Եվ երազը ավելի էր իրական ու տիրական։ Ամբոխները կհուսային, կհավատային։ Եվ Աստված էր անոնց գերագույն ապավենը, գերագույն հզորիչը, գերագույն ստուգությունը։

ՔԱՐՈԶ
ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(26 մարտի 1967 թ.)

Տեսիլքը Սուրբ Լուսավորչի, գյուտը Սուրբ Մեսրոպի և հրամանը Կարմիր Վարդանի կմնան հետզհետե առավել փայլատակումով, ոգեշնչողը բոլոր հայ սրտերուն՝ վերած-

նած մեր հայրենի երկրին մեջ, ինչպես և հայ սփյուռքի տարածքին վրա, ուր մեր պանդուխտ զավակները իրենց հոգիի բոլոր թելերով անքակտելի կերպով կապված կմնան իրենց քրիստոնեական հավատքի գերագույն կեդրոն, աստվածակառույց Սուրբ Էջմիածնի և սուրբ-գրական երկրին՝ Հայաստան։

Զատիկ է այսօր, սիրելի՛ հավատացյալներ։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվարի 1973 թ.)

Հոգու իր աշխարհով մարդը նման է հավետ ալեկոծ, անծայրածիր մի օվկիանի, տենչերով անհուն, երազանքներով անթիվ-անհամար, որոնումներով անդադրում, անվերջ գործելու մշտապես եռանդով, իր եսը հռչակելու անհագ ծարավով, մարդը, որ բնության ծոցում կանգնած միայնակ ճակատ առ ճակատ նյութեղեն աշխարհի առաջ, ասում է վճռապես, ասում է տիրապես՝ ես կամ ու գործում եմ իբրև մի այլ իրականություն։ Դա մարդկային աշխարհի իրականությունն է։ Դա նոր որակ է, նոր ճշմարտություն, որ մի բառով արտահայտելու համար անվանում ենք ոգե-բարոյական իրականություն։ Ամեն մարդ-էակ իր հոգեկանով ինչ-որ չափով, ինչ-որ կերպով մասնակից է մարդկային այդ ոգե-բարոյական իրականության և կրում է իր մեջ ինչ-որ չափով, ինչ-որ կերպով մի մասնիկ այդ իրականության ուժից։ Այս իրողության բացատրության կերպերը կարող են տարբերվել, սակայն իրողությունն ինքը մնում է ճշմարիտ։

Մենք՝ քրիստոնյաներս, հավատում ենք անհատ մարդու՝ հոգու ինքնուրույն և ինքնավար իրականության, որ հիմքն է կազմում մարդկային հավաքական կյանքի ոգե-բարոյական իրականության։ Եվ հավատում ենք նաև, որ այդ բոլորի գերագույն երաշխիքը հանդիսանում է Աստված, որ հավատացյալի իդեալական մտապատկերն է բացարձակ ճշմարտի, բացարձակ բարու և բացարձակ գեղեցիկի։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(10 ապրիլի 1977 թ.)

Հոգու աշխարհի բարձունքներում Հիսուսի հարությունը դարձավ ավելի իրական, քան ինքը՝ նյութական իրականությունը։ Անիմանալին դարձավ ստուգություն, դարձավ հավատք, դարձավ ստեղծարար ուժականություն, դարձավ մարդու կյանքը իմաստավորող փարոս, դարձավ առաջնորդող լույս։ Դարձավ անկարելիի ու կարելիի սահմանների վրա բարձրացած նյութեղեն պարիսպը տապալող փոթորիկ։ Դարձավ կերտիչ մարդկային պատմության։

Եվ չմոռանանք, որ մարդը իր մարդկային էությամբ ամեն բանից վեր ոգեկան մի ի-

բականություն է բնության նյութականության ծոցում: Իր բոլոր նյութական պայմանավորություններով հանդերձ մարդը բարձրանում է իր հոգեկանով նոր մակարդակի վրա, ստեղծում է նոր որակ նյութի տիեզերքում: Այդ նոր որակով է, որ բնորոշվում է մարդու մարդկայնությունը:

Հիսուս իր գերբնական հարությամբ մանավանդ, հավիտենական երաշխիքն է հանդիսանում ոգեկանի, այսինքն՝ մարդկային իրականության:

Մարդիկ և սերունդներ բազում հավատացին և պիտի հավատան միշտ, որ Հիսուսի գերեզմանի քարը տապալող անտեսանելի ու անիմանալի ուժը կտապալի և միշտ պիտի տապալի բոլոր արդար հույսերի և երազանքների վրա ծանրացած գերեզմանաքարերը, ինչքան էլ անհնար թվա այդ գերեզմանող անիրավ ձեռքերին:

ՔԱՐՈԶ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
(30 սեպտեմբերի 1979 թ.)

Աստվածային ստեղծագործության գագաթնակետը, այո՛, մարդն է իր ճանաչության կարողությամբ, մարդը իր ողջ ոգեկանությամբ, իր մտքի թռիչքներով, իր հոգու հույզերով ու տեսիլքներով, մարդը իր կամքի հզոր դրսևորումներով, իր շինարար, ստեղծարար իրագործումներով:

Ոմանք կարծում են, թե հակասություն կամ հակամարտություն կա գիտության և հավատքի միջև: Մենք չե՛նք հավատում դրան, որովհետև գիտությունն ինքը ուրիշ բան չէ, եթե ոչ մարդկային մտքի թռիչքը, կարողությունը՝ հայտնաբերելու բնության օրենքները, և կիրառելու դրանք մարդկային կյանքի բարօրության համար: Իսկ նյութական բնությունը իր բոլոր օրինաչափություններով անբաժան մասն է կազմում աստվածային արարչագործության և հետևաբար մեր օրերի գիտության հայտնաբերումներով առավել պայծառանում է փառքը Աստուծո:

ԽՈՍՔ
ՈՒՂՂՎԱԾ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
(մայիս, 1980 թ.)

Հոգի: Ո՞ր մարդը արդյոք իր կյանքի ընթացքին, բախտորոշ պահերուն մանավանդ, ներքին սարսուռով հարց չէ տված ինքն իրեն, թե ի՞նչ է հոգին, զոր կզգա իր մարմնին, իր էության մեջ: Ուրկե՞ կուգա ան և ո՞ւր կերթա:

Մեր օրերու գիտությունը, որ զմայլանքի արժանի նվաճումներ կատարած է նյութական աշխարհը և տիեզերքը ճանաչելու ճանապարհին, կբավարարվի հոգեկան երևույթները, այսինքն հոգիի դրսևորումները ուսումնասիրելով միայն:

Նյութական աշխարհի և հոգեկան աշխարհի միջև սահմանները այնուամենայնիվ գիտության համար ալ կմնան անհայտ, թեև հոգեկանը կդրսևորվի մարմնական միջոցով։

Հոգին, հոգեկանը կմնա ուրույն աշխարհի մը, իր ուրույն օրենքներով, իր ուրույն օրինաչափություններով, նույնիսկ երբեմն հակադիր նյութական բնության օրինաչափությանց։ Այսպես, օրինակ, նյութական բնության բնորոշ է նյութի պահպանման տիեզերական օրենքը, ըստ որու բնության մեջ ոչինչ չի պակսիր և ոչինչ չավելնար։ Մինչդեռ հոգեկան աշխարհի համար բնորոշ է հարատև աճը ուժականության։

ԽՈՍՔ
ԲՈԼՈՐ ՄԱՅՐԵՐԸ ԿՈՒՅՍ ԵՆ
(1982 թ.)

Որ հայրը, ի տես նորածին իր երեխային չի բացականչեր՝ հրաշք, և պահ մը իր կնոջ մեջ չի տեսներ պատկերը սուրբ կույս Մարիամին։

Այո, բոլոր ծնունդները հրաշքներ են, բոլոր մայրերը կույսեր են։

Կինը մայրությամբ վեր կբարձրանա մարմնականի պայմանեն ու կպսակվի ծննդյան հրաշքի լույսով։ Կզգա իր էության մեջ սարսուռը արարչագործության ու ծունկի եկած իր ծնած երեխայի առջև կտեսնե անոր մեջ պտուղը Աստուծո շնորհաբաշխ ուժին և տեսիլքը կունենա նմանվելու զՀիսուս ծնող սուրբ կույսին։

Ահա հոգեկան հիմնական ճշմարտություն մը մայրության մասին, որ իբրև հիմք պետք է ծառայե, կխորհինք, մեր բոլոր դատումներուն ընտանիքի և ընտանեկան կյանքի վերաբերյալ։

Գիտությունը իր բոլոր հայտնաբերումներով կմնա իր դերին մեջ՝ ծննդյան հրաշքին մարմնական մեքենականությունը և զոյառման պայմանները հետազոտողի և բացատրողի։ Սակայն հրաշքը կմնա հրաշք, անհմանալի խորհուրդ։ Ավելին, գիտության լույսի ներքև հրաշքը կդառնա առավել հրաշալի։

ՔԱՐՈԶ
ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(3 ապրիլի 1983 թ.)

Հիսուս իր մարմնով գնաց դեպի մահ, բայց հարությամբ մահին հաղթեց, նոր կյանք ունեցավ և մահկանացու մարդկանց մեծ հույսը թողեց, թե նրանք ևս կենդանի պիտի լինեն՝ ժառանգելու հավիտենական կյանքը։ Այսպես է, որ ամեն գերեզմանից այն կողմ, հեռու հորիզոնի վրա հուսացյալ մարդիկ տեսնում են դատարկ մի գերեզման։ Մեր մեռելների գերեզմանները փակում ենք և կնքում քրիստոնեական այս մեծ հույսով։ Մենք կամենում ենք հավատալ, թե պատահական չէ, որ ծնվել ենք ու աշխարհ եկել, և ոչ էլ ի զուր ենք ապրում այս կյանքը մի օր անէանալու համար անսահման ոչնչի մեջ։

Այո, մարդը մի հյուլե է այս անծայրածիր, անիմանալի տիեզերքի անհունում, բայց այդ ամարդ-հյուլեն է, որ իմաստ, նպատակ ու շունչ է տալիս ողջ տիեզերքին։

Անմահության հույսը, մարդկայինը բնորոշող ամենախոր զգացումն է։ Ամենավավերական մարդն այն էակն է, որ իր սրտում ծրարել է անմահության հույսը։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվարի 1957 թ.)

Հիսուս ծնավ խաղաղության աստվածային պատգամով, Հիսուս ապրեցավ՝ խաղաղություն և սեր քարոզելով, Հիսուս երկինք համբարձավ՝ մարդոց ու աշխարհին թողնելով մեծ կտակը Իր խաղաղության։

Աստվածորդվույն ծնունդը նոր կենդանի շունչ փչեց մարդու հողեղեն շինվածքին, լուսավորեց զայն ճշմարտության լույսով, զորացուց արդարության զրահով, գեղեցկացուց բարության հոգիով, ջերմացուց սիրո կրակով, ազնվացուց խաղաղության տենչով։

Հիսուսի ծնունդը վերածնունդն է մարդուն։

Հիսուսի ծնունդով կնքվեցավ կենաց և խաղաղության ուխտը Աստուծո և մարդու միջև։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
(6 ապրիլ 1958 թ.)

Անհունին մեջ տիեզերքին, երբ մեգը ճեղքելով, լույսի առաջին ճառագայթները շողացին ազատ, այդ պահուն ահա ուրիշ աշխարհի մը մեջ,- մարդոց աշխարհին մեջ,- մահվան և կյանքի սահմաններուն վրա, նոր լույս մը ծագեցավ։ Քակվեցավ կնիքը նյութին, հյուլեին, նյութը դարձավ լույս, մեռյալը՝ կենդանի, մարմինը՝ հոգի, մեռելներեն հարյավ Քրիստոս։

Զատիկ է այսօր, սիրելի՛ զավակներ մեր։ Հույսի տոն է այսօր, լույսի տոն է այսօր, կյանքի տոն է այսօր։ Եվ գարուն է այսօր։

ՔԱՐՈԶ
ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
(14 ապրիլ 1963 թ.)

Այսօր մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի հարության սուրբ կիրակին է։ Սուրբ կիրակին մեծ հաղթության։

Այսօր մահը իր վախճանին կհասնի հարության հաղթանակով, և կյանքի լույսը, գե-

րեզմանի քարերը ճեղքելով, թռիչք կառնե դեպի երկինք ու կճառագայթե հորիզոնե հորիզոն՝ լուսավորելով աշխարհն ամբողջ և հոգիները մարդոց։

Կյանքի մշտանորոգ ուժերը, տիեզերքի անհուն ակունքներեն և մարդու ոգեկան աշխարհներեն ազատ ու առատ կհոսին այսօր, կաճին, կուռճանան, ծաղիկ կկապեն, երգեր կիյուսեն հազար ձևերով, հազար գույներով։

Այսօր արդարության արեգակը կբարձրանա մարդկային խղճի հորիզոնին առջև, ազատության դրոշը կծածանի մեր սրտերեն ներս, և խաղաղության ձայնը կհնչե աշխարհի բոլոր ճամբաներուն վրա։

ԿՈՆԴԱԿ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(1965 թ.)

Պատմականորեն զարգացած ամեն քրիստոնեական Եղեղեցի իր սուրբերով, իր դավանությամբ, իր ավանդություններով, իր գրականությամբ և իր արվեստով ուրույն և անկրկնելի ապրող հուշարձան մըն է, կենդանի խոսք մըն է, վավերական վկայություն մըն է՝ «Վասն մեծի փառացն Աստուծոյ»։

Պետք է սրբությամբ պահել, պահպանել զանոնք ամբողջ, անխառն ու անայլայլ, առանց հովտ մը իսկ ավելցնելու կամ պակասեցնելու։ Պետք չէ աղքատացնել, պետք չէ տկարացնել, պետք չէ գունազերծել Քրիստոսի Եկեղեցին։

Ինչքան իրավ ավետարանական հոգի կա, ինչքան մարդկային ճշմարտություն և ինչքան ողջամտություն մեր երանաշնորհ Խրիմյան Հայրիկի՝ բոլորիս ծանոթ այն պարզ ու վճիտ պատկերին մեջ, որով քրիստոնեական Եկեղեցիները կնմանցներ մեծ ծաղկեփունջի մը, ուր ամեն մեկ ծաղիկ իր ուրույն գույնը ունի, իր ուրույն երանգը և իր ուրույն բույլը՝ բոլորը մեկտեղված Քրիստոսի սիրո կապով։

Այսօր, եթե կա բան մը, որ մենք՝ քրիստոնյաներս և աշխարհի Եկեղեցիները պետք է իրոք փնտրենք, այդ Քրիստոսի սերն է։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվարի 1970 թ.)

Մենք հակված ենք հավատալու, թե այդ հեղաշրջումը կատարվեցավ և կշարունակվի կատարվել, վասն զի Հիսուս եկավ մարդուն ըսելու՝ դու ես տիեզերքին ու կյանքին կենտրոնը, դու ես տիեզերքին ու կյանքին իմաստը, դու ես տիեզերքին ու կյանքին նպատակը։

Հիսուսի շունչով փլան հին աստվածները և կուռքերը բոլոր, որոնք անհիշատակ ժամանակներե ի վեր մարդը կպահեին բնապաշտական հավատալիքներու սարսափին

ներքև՝ դիվային երևակայությամբ հնարված մոլորությանց խավարին մեջ, ստրկատիրական դաժան օրենքներով շղթայված։

Հիսուս եկավ ազատ արձակելու մարդը՝ բոլոր նախապաշարումներեն, բոլոր մոլորություններեն, բոլոր կապանքներեն, բոլոր շահագործումներեն։

Հիսուսով ազատ մարդը դարձավ Աստուծո որդի և ժառանգորդ երկնից արքայության, դարձավ Արարչին գործակից, աստվածային ստեղծագործությունը շարունակող ուժ երկրի վրա, իր նմաններու աշխարհին մեջ։

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(11 ապրիլ 1971 թ.)

Եվ Հիսուս մեղքի այս աշխարհին մեջ, ցմրուր ըմպելե հետո բաժակը բոլոր դառնություններու, խաչը հանվեցավ անիրավներու ձեռքով և մեռավ։

Երկինքը խավարեցավ։ Հույսի աստղերը մարեցան։ Արդարները լացին։

Ուշ ատեն աշակերտները առին մարմինը Հիսուսի և թաղեցին փորված ժայռի մը մեջ՝ ծածկելով այն ծանր քարով։

Հիսուսի գերեզմանը դատարկ էր։

Ոչ մեկ մահկանացու տեսավ անոր հարությունը։ Միակ նյութական վկան դատարկ գերեզմանը եղավ։ Բայց վկայեցին հոգիները, հոգիները Վարդապետի աշակերտներուն, հոգիները խոնարհ բազմություններուն։ Վկայեցին դարերը և սերունդները բոլոր։ Եվ այսօր ալ կվկային հավատավոր ազգեր, ժողովուրդներ, հորիզոնե հորիզոն։

ՔԱՐՈԶ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
5-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1960 թ.)

Վասնզի, առանց հայրենի կենդանի իրականության սփյուռքը ունայնություն է, առանց Ս. Էջմիածնի Անթիլիաս հուսահատություն է։

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ դավանած է և պիտի դավանի մեկ Հայ Եկեղեցի, մեկ Հայ Ազգ, մեկ Հայ Հայրենիք, մեկ ճակատագիր և մեկ ապագա։

ԿՈՆԴԱԿ
ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՄԱՀՎԱՆ
ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
(21 հունվարի 1970 թ.)

Հայաստանը ամբողջ աշխարհ մըն էր ավերակներու և փլած հոգիներու՝ հուսահատության ծանր կապարի տակ կքած: Հայը կորսնցուցած էր զգացումը իր ազգության, իր քաղաքակրթության: Մոռցված էին գիր ու գրականություն: Հանգած էր ոգին հայոց պատմության: Իսկ վերջին հարվածը եկեր էր իջեցնելու մեր անտեր ու թշվառ ժողովուրդի գլխուն Շահաբասյան բռնագաղթը, երբ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ քշվեցան դեպի հեռավոր ափերը Պարսից երկրին: Կթվեր, թե տասնյոթերորդ դարը տապանաքարը պիտի դնե հայոց պատմության:

Ահա այդպիսի դաժան դարու մը սեմին, այդպիսի ողբերգական մեկ պահուն, մեր պատմությունը կարձանագրե ոգեկան ուժերու անհավատալի ու զարմանալի զարթոնքի մը փայլատակումը: Հայոց աշխարհի քառսին մեջ շարժիլ կսկսի լույսի մը ճառագայթը:

Վանքերու խուլ անկյուններեն, դարերու մոխիրը թոթափած, տեսիլք ունեցող հայ վանականներ կբարձրացնեն իրենց ճակատները դեպի երկինք, կսթափեն ցեղին քունեն, կզգան հոգեվարքը Եկեղեցիին ու ազգին, ու կտեսնեն ճանապարհը փրկության: Այդ օրերուն տակավին կարելի չէր մտածել իսկ ազգային ազատագրական շարժումի մը մասին, բայց փրկարար լույսը կսկսի ճամբա բանալ՝ կրոնական զարթոնքի և ազգային դպրության ուղիով:

Այդ հոգևոր ու ազգային զարթոնքի առաջին դրոշակակիրները կհանդիսանան հույլ մը ուխտյալ վանականներ, որոնք հիմը դրին Սյունյաց մեծ Անապատին Տաթևի վանքին մոտ ԺԷ դարու սկիզբներուն:

ԽՈՍՔ
ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ, ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ
(4 մայիսի 1973 թ., Ուստր)

Անցյալ դարուն Հայաստանի արևելյան և արևմտյան շրջաններուն մեջ զարգացող հայ ազատագրական, հեղափոխական շարժումը բնական, արդար և անհրաժեշտ երևույթ էր: Թե այդ տարիներուն կատարվեցան ճակատագրական սխալներ, իբրև հետևանք քաղաքական միամիտ դատումներու և շատ զգացական գործելակերպերու, չեն կրնար փոխել այսօր մեր ընդհանուր գնահատականը հայ ազատագրական շարժման նկատմամբ, և չեն կրնար ստվեր նետել ազատության արյունոտ ճանապարհին զոհված մեր ժողովուրդի հերոս զավակներու հիշատակին վրա, հիշատակ, որ միշտ սուրբ պետք է պահվի, հիշատակ, որուն համար բոլոր ժամանակներու հայերը կրնան հպարտ ըլլալ:

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(14 ապրիլի 1974 թ.)

Ամեն անգամ, երբ հայ քրիստոնյան Ավագ շաբաթվա օրերին Հիսուսի խաչի ճանապարհի ողբերգությունն է ապրում և հոգեպես ուղեկցում Աստվածորդուն մինչև Գողգոթա և մինչև գերեզման, նա չի կարող մոռանալ, չի կարող չվերապրել մեր մարտիրոս ժողովրդի խաչի ճանապարհը, նա չի կարող մոռանալ անհայտ գերեզմանները երկու միլիոն իր նահատակների:

Սակայն, ո՜վ աստվածային արդարություն, հայ ժողովրդի լույս հավատքը մի անգամ ևս ճշմարտվեց, թե քրիստոնեական մահը ճանապարհ է դեպի փրկություն, դեպի հավերժություն: Հիսուսի սուրբ հարության տեսիլքը իր սրտում՝ հայ հավատավոր ժողովուրդը մի անգամ ևս ճեղքեց մահվան խավարը և հասավ վերջապես մի լույս աշխարհի ափին և տեսավ արևածագը իր նոր կյանքի, վերականգնումովը կործանված իր պետականության, վերածաղկումովը իր ազգային մշակույթի, ամբողջական վերակառուցումովը իր մայր հայրենիքի, եղբայրական ազգությունների այն մեծ ընտանիքում, որ ավելի քան կես դար է, ահա, եղավ ու մնում է միակ գրավականը մեր ժողովրդի անվտանգության, խաղաղության և ապագա զարգացման:

Եթե քրիստոնեական հավատքը խարսխված է հարության գաղափարի վրա, արդար է, որ Սուրբ Զատկի այս առավոտյան, երբ փառաբանում ենք հրաշափառ Հարությունը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, չմոռանանք հիշել նաև մեր Եկեղեցու ու ժողովրդի խաչի ճամփան և մանավանդ գրեթե հրաշքի համազոր մեր օրերի նրանց վերածնունդը: Մարմին ու հոգի առած, ապրող ու շնչող, աճող ու ծաղկող պայծառ իրականությունն է այդ մեր արդի ամենայն հայոց Մայր Հայաստանի:

ԽՈՍՔ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ
ԿՈՄԻՏԵԻ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
(Երևան, 27 դեկտեմբերի 1974 թ.)

Այսօր կանգնած Սփյուռքահայության կոմիտեի գործունեության երկրորդ տասնամյակի սեմին՝ անհրաժեշտ ենք գտնում ընդգծել այն գաղափարը, թե հայ սփյուռքը այլևս մնայուն երևույթ պետք է նկատել, ինչքան էլ մեր զգացմունքները այլ բաղձանք ունենան: Նույնիսկ եթե նախատեսենք ապագա զանգվածային ներգաղթեր, այնուամենայնիվ, մեր սփյուռքը չի վերանալու: Ահա թե ինչու, Մեր կարծիքով, ըստ այնմ պետք է կազմակերպել և ղեկավարել կոմիտեի ապագա գործունեությունը:

Այս առնչությամբ հենց քիչ առաջ, երբ լսում էինք նախագահի զեկուցումը, Մեր

մտքում առաջ եկավ մի գաղափար, որ կամենում ենք Ձեզ հայտնել, իբրև առաջադրանք: Մեր մտածումն է, որ մոտ ապագային Սփյուռքահայության կոմիտեի կամ ավելի ճիշտ Երևանում բարձրագույն մի հաստատության կողքին հիմնվի մի բաժին՝ նվիրված սփյուռքահայության, որի նպատակը լինի պատրաստել հայ սփյուռքագետներ: Այո, Մենք հետզհետե համոզվում ենք, որ սփյուռքահայության հետ աշխատող մարդիկ պետք է բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերեն ու դառնան սփյուռքագետներ, այսինքն՝ հայրենիք-սփյուռքի անդաստանի մեջ աշխատող մշակներ՝ պատրաստված գիտական հիմունքներով:

ՆԱՄԱԿ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
(1976 թ.)

Հայ մնալ, հայ ապրիլ կնշանակե մարդկային ոգեկանության վավերական ձևերեն մեկը իրականացնել աշխարհի քաղաքակրթության հորիզոնին վրա, զի հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային ժառանգությունը համամարդկային ինքնատիպ արժեքներեն մին կհանդիսանա:

Հավատարիմ մնալ այդ ժառանգության, կնշանակե հայկական ազգային ձևերու մեջ համամարդկայինը ապրիլ ու զարգացնել ոգեկանության բարձր մակարդակի մը վրա:

ԽՈՍՔ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
(հունիս 1979 թ.)

Մեր կարծիքով հայ հոգևորականը պետք չէ կուսակցական-կողմնակցական որևէ դիրք որդեգրե: Մեր առաքելությունը կուսակցական չի կրնար ըլլալ: Հոգևորականը որևէ կողմի պետք չէ պատկանի: Հոգևորականի առաքելության բուն էութենեն կբխի այդ անհրաժեշտությունը: Եթե հոգևորականը կողմ ըլլա, այդ կնշանակե մյուս կողմին հակառակ ըլլալ, և ատիկա իր առաքելությունը կվտանգե: Որով հոգևորականությունը իր մասնակցությամբ, իր գործակցությունը, իր խոսքը պետք է բերե բոլոր այն ձեռնարկներուն, որոնց շուրջ վեճ չկա, որոնց շուրջ կողմեր չկան: Օրինակով խոսելու համար ըսենք՝ մենք ազգային տոնակատարություններ ունինք տարվա ընթացքին, որոնք կբնորոշեն հայ հանրային կյանքի դիմագծությունը: Օրինակ՝ Վարդանանց պատերազմի տոնակատարությունը: Մեր ժողովրդին ծոցին մեջ ոչ մեկ վեճ կամ տարակարծություն կա այդ մասին: Հետևաբար հայ հոգևորականը առաջին գծի վրա պիտի ըլլա, անշուշտ, Վարդանանց պատերազմի տոնակատարությանց առիթով: Նույնը կարելի է ըսել Ապրիլ 24-ի նահատակաց սգատոնի կամ Սարդարապատի ճակատամարտի ոգեկոչումի մասին: Ահավասիկ այսպիսի և այլ նման ձեռնարկներու առթիվ է, որ հայ հոգևորականը իր գործուն ու եռանդուն մասնակցությունը պետք է բերե:

ԽՈՍՔ
ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ
(24 ապրիլի 1981 թ., Վիեննա)

Ծիծեռնակաբերդը այն Թաբոր լեռն է մեր ազգին, մանավանդ հայաստանցիներուն, ուր բոլոր հայերը առանց խտրության, հոգևին կմիաձուլվին, կպայծառակերպվին, կթոթափեն իրենց վրայեն ամեն տեսակի տարբերություններ, հեռավորություններ: Այստեղ բոլորի սրտերը կտրոփեն նույն զարկով, բոլորը կդառնան մեկ մարմին, մեկ կամք, մեկ ճակատագիր:

Կբարձրանան հայերը Ծիծեռնակաբերդն ի վեր, խիտ շարքերով՝ լուռ, ինքնամփոփ, ինքնամոռաց, առանց շատախոսության, առանց ցուցադրական դրսևորումներու, առանց անհավասարակշիռ արարքներու: Հայ հոգին է, որ հեղեղի պես կհոսի անվերջ, համաչափ, կարգապահ: Ամեն ինչ բնական է ու հարազատ, ամեն ինչ անկեղծ է ու անարատ: Բոլորը կքալեն կողք-կողքի, եղբայրացած, իբրև հին-հին ծանոթներ, մտերիմներ Հայկ նահապետի օրեն ի վեր, մեկը մյուսին հավատարիմ ուղեկիցներ, մեկը մյուսին հնազանդ զինվորյալներ:

Եվ կքալեն հայերը ինքնավստահ ու լավատես՝ վերանորոգելով նաև իրենց ուխտը հայրենաշեն ստեղծարար աշխատանքի, ամեն օր, ամեն ժամ ա՛լ ավելի ծաղկյալ դարձնելու համար արյան, հեղեղներու գնով ձեռք բերված այսօրվան մայր երկիրը Հայոց, որ իրականացած երազն է մեր անթիվ անհամար զոհված սերունդներուն, և ամենափառավոր հուշարձանը՝ նվիրված անոնց սուրբ հիշատակին:

ԽՈՍՔ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
75-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ
(9 մայիսի 1981 թ., Փարիզ)

Բարեգործական այս մեծ Միությունը հատկանշող լուսավոր նկարագիրն է նաև անոր ոգեկան միասնությունը, գաղափարակցությունը և սերտ գործակցությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո հետ: Բարեգործականի մարդիկ ի սկզբանե և մինչև այսօր եղած են հայ քրիստոնյա հոգիներ և հավատարիմ զավակները հայոց Մայր Եկեղեցվո: Այս կնշանակե, թե Հ. Բ. Ը. Միության երջանկահիշատակ հիմնադիրները և անոր հետագա ղեկավարները գիտցած են իրենց կյանքի ու գործունեության լաստը ամրացնել մեր ազգի հոգեկան ամենախոր, ամենաամուր ու ամենաանսասանելի վեմին վրա, որ Հայ Առաքելական Եկեղեցին է ահա մոտ երկու հազար տարիներեն ի վեր: Եվ պատահական չէ, որ Բարեգործականը իր գոյատևման առաջին օրերեն մինչև մեր օրերը տևապես վայելած է գնահատանքը, խրախուսանքը և օրհնությունը Հայոց Հայրապետներուն:

ԿՈՆԴԱԿ
ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ
ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(24 ապրիլի 1985 թ.)

Հիրավի, հայոց պատմությունը մի դյուցազներգություն է վասն Հիսուսի և վասն արդարության: Այդ հավատքը լուսավորեց մեր ազգի հոգին ու մեր պատմությունը Սուրբ Գրիգոր Լուսավորչից սկսյալ, բայց մանավանդ հինգերորդ դարի Ավարայրի ճակատամարտից: Անցնող տասնհինգ դարերը վկայում են, թե սրբազան մարտը վասն հավատո և վասն հայրենյաց ազատության արիաբար շարունակվեց տարբեր պայմաններում, տարբեր գաղափարական տարազներով, տարբեր դրոշներով, բայց միշտ ի խնդիր քրիստոսավանդ նույն արդարության հաղթանակի, միշտ ի խնդիր նույն հավերժական Հայաստանի:

Մեր ազգի պատմությունը մի կենդանի հուշարձան է աշխարհի հորիզոնի վրա բարձրացող, մարմին ու կյանք առած նահատակների արյունով, բարուն և գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով, սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կրքով: Եվ այսպես ահա նա բացել է դռները իր հոգու ուժերի, դռները հավիտենական կյանքի:

Այսօր Մայր Հայրենիքում թե՛ սփյուռքում բնակվող բոլոր հայերը, առավել համերաշխած ու եղբայրացած, Աստծու և պատմության առջև բերելու են իրենց նվիրական վկայությունը, թե՛ նաև մեր օրերին և գալիք ժամանակներում շարունակելու են այդ սրբազան մարտը անմար հավատքով ու աներեր վճռականությամբ, առանց կորցնելու իրատեսության զգացումը, առանց անհավասարակշիռ արարքների և մանավանդ առանց մոլորվելու ու հեռանալու մեր ոտքի տակ գտնվող հայրենի հողի հրամայականից, որ միակ գրավականն է մեր ազգային գոյատևման և մեր ազգային իղձերի ապագա կեսագործման: Մեր օրերի վերաշինված ու ծաղկող մայր երկիրը սուրբգրական Արարատի փեշերին 1915-ին նահատակված մեր ժողովրդի հիշատակը հավերժացնող վեհագույն հուշարձանն է և անվերջ հույսի փարոսը արդարության լրումի: Մեր նահատակները մեռան ապրելու հույսով և հայոց հայրենիքի վերածննդյան տեսիլքով:

Այսօր այդ սև օրերից յոթանասուն տարիներ հետո մեր Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և հայրենաբնակ մոտ երեք ու կես միլիոն ժողովրդով, իրենց մայր հողի վրա կանգնած ապահով ու ինքնավստահ կերտում են Ամենայն Հայոց առավել լուսավոր ապագան՝ իրենց հայացքը հառած դրախտի դուռ Արարատին, և սպասում են ժամանակների ճամփին արթուն աչքով ու լավատես: Եվ պիտի սպասեն նրանք ու նրանց զավակները, եթե հարկ լինի ևս յոթանասուն տարի՝ նույն ուխտով, նույն երազանքով:

... Ազգ իմ սգավոր, ոչ հուրը, ոչ ջուրը և ոչ էլ ժամանակը Օսմանյան կայսրության ճակատից ու աշխարհի հիշողությունից չեն ջնջելու սև խարանը մեծ ոճիրի, մինչև դու, արևի ու արդարության ծարավի ժողովուրդ, քո հայրենի բարձունքներից պիտի շարունակես տիեզերքին տենչալ ու ազատ սլանալ դեպի աղբյուրները լույսի...

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ
(1943 թ.)

Մարդը դարձնել ավելի ազատ, ավելի արդար ու ավելի բարի, ահա մեծագույն հեղափոխությունը զոր կարելի է երևակայել:

Ահա մեծագույն հեղափոխությունը, որուն համար դարեր բազմաթիվ, ուս-ուսի տված կմաքառին, միշտ դեպի հառաջ կքալեն, նոր ու նոր ճամփաներ կորոնեն:

Ահա վերջապես մեծագույն հեղափոխությունը, որուն համար մարդկային հսկա ուժեր ու արժեքներ, մտածման ու տքնության տիտաններ, սերունդեսերունդ կտառապին, կպայքարին, կզոհվին՝ միշտ հավատալով մարդկության գալիք երջանկության:

Այդ մեծագույն հեղափոխության ձգտող պայքարը հարատև է և ամեն բանե առաջ աշխատանքի ուժը, մտածումի գյուտը և զգացումին ազնվությունն են, որ դրական նպաստներ կբերեն ու տակավ կհասունցնեն մարդկային կյանքի հեղաշրջումը:

Այս հսկա աշխատանքին մեջ, առաջին գծին վրա կանգնած է դաստիարակության գործը:

ԽՈՍՔ
ՈՒՂՂՎԱԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(1955 թ.)

Հուզեցիր, ոգևորեցիր ու ներշնչեցիր բոլոր հայերը: Եվ մեր օրերուն ամեն լարերեն աղոթք բարձրացավ հայոց Աստծուն Քու կյանքիդ համար, Քու փառքիդ համար:

Քու մեծ սրտիդ մեջ, Քու լույս խոսքիդ մեջ ժողովուրդը մեր իր հոգին գտավ՝ բյուրեղացումը իր վառ հույզերուն, իրավ խոհերուն, արդար տենչերուն:

Պատմությունն ամբողջ Քու կյանքիդ՝ պատմությունն եղավ Քու ազիզ ազգիդ՝ այրող վիշտերով, որոնումներով, հաղթանակներով:

Արշալույսին վառ Քու կյանքիդ սեմին գիշեր էր իջեր հայոց երկնքին, բայց մայրամուտին Քու ընծա կյանքիդ արշալույս ծագեց Հայոց աշխարհին:

Այդ լուսաբացին Դուն արև եկար և Քու լույս հոգով հայոց արևին լույսն աճեցուցիր Քու կյանքի երգով, Քու հույսի երգով, Քու սիրո երգով:

ԿՈՆԴԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ
ՀԱԶԱՐՎԵՑՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
(1661 թ.)

Սուրբ Մեսրոպի գործով հայ ժողովուրդը իր ինքնությունը գտավ, իր մտքի ու զգացումի կաղապարները ձուլեց և հորինեց իր ապրելու և ստեղծագործելու ոճը:

Մեր ազգային ամբողջ մշակույթը իր բոլոր վավերական արժեքներով, գրականության, ճարտարապետության, գիտության և արվեստներու մեջ սկիզբ կառնեն Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի տեսիլքներեն: Այդ ոգեկան աղբյուրներեն է, որ բուն հայ ժողովուրդը ծնավ իր հոգիով, իր իմացականությամբ, իր զգայնությամբ, իր պատմությամբ, իր մշակույթով:

Այդ ինքնաճանաչման և ինքնակերտման ճանապարհին վրա կազմվեցավ և դարբնեցավ նաև հայուն ազատ ապրելուն կամքը: Սուրբ Մեսրոպն է, որ միշտ զորացուց բազուկը Հայրենյաց պաշտպան հայ հերոսներուն՝ Ավարայրեն մինչև Սարդարապատ:

Մեռած չէ սակայն Օշականի Սուրբը, «Քանզի անմահ է յիշատակ նորա» (Իմաստութ. Դ 1):

Սուրբ Մեսրոպն այսօր ամենակենդանի հայն է: Ան կապրի մեր վերապրող ու վերածնած ժողովուրդի սրտին մեջ և շրթներուն վրա, Հայրենի աշխարհի ափերեն մինչև հեռուները հայ Սփյուռքին:

Սուրբ Մեսրոպը կապրի մանավանդ ու կգործե մեր արդի վերաշինված հայրենի կտուրին տակ, քաղաքամայր Երևանի Մատենադարանի կամարներուն ներքև, Հայաստանի համալսարանի և դպրության բազում հաստատություններուն մեջ:

ԿՈՆԴԱԿ
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
(24 հունվարի 1969 թ.)

Արդարև, ինչպես Սուրբ Մեսրոպ քառսեն դուրս բերավ և բյուրեղեց ձայները հայ բարբառին և իր ազգին ու աշխարհին պարգևեց կոթողը հայերեն լեզվին, այնպես ալ Կոմիտաս վարդապետ պեղեց, մաքրեց և լույս աշխարհ բերավ կույս աղբյուրը հայ երգին: Եվ բազում տարիներ, անդուլ, հոգնաբեկ, միշտ նոր ավյունով ու ստեղծարար տենդով, այդ աղբյուրեն հայ երգին լույսը բաշխեց իր ժողովրդին:

Լսե, Կոմիտա՛ս, վարդապետ արդար, երգը նոր Հայաստանին: Այդ քու երգդ է, որ քեզի կուգա: Այդ երգի թևերով ամբողջ ազգը հայոց, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, երախտապարտ սիրով կխոնարհի քու հիշատակիդ և մեծ գործիդ առջև՝ քու տեսիլքներուդ հավետ հավատարիմ մնալու սրբազան ուխտով:

ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻՆ
(2 հոկտեմբերի 1978 թ., Ս. Էջմիածին)

Քսան և չորս տարիներ առաջ՝ 1954-ին, մայիսյան մի առավոտյան, իր աչքերը հավետ փակելուց առաջ լուսաբնակ Մեր նախորդ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսն Իր մոտ էր հրավիրել Մայր Աթոռի փոքրաթիվ երիտասարդ միաբաններին՝ Իր վերջին օրհնությունը տալու: Նրա վերջին խոսքն էր եղել՝ «Հավատարիմ մնացեք ձեր ուխտին, մեղք է Սուրբ Էջմիածինը»: Տարիներ անց լսելով այդ մասին՝ Մեզ այնպես թվաց, թե ծե-

բունազարդ Հայրապետի այդ կոչը Մեզ էր ուղղված։ «Մեղք է Սուրբ Էջմիածինը»։ Այդ զգացումով է, որ Մենք խոնարհվեցինք Աստուծո և մեր ժողովուրդի կամքի առաջ և Մեր տկար ուսերի վրա վերցրինք ծանր լուծը Հայոց Եկեղեցու սպասավորության Սուրբ Լուսավորչի գահի վրա։

ԽՈՍՔ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻՆ
(3 դեկտեմբերի 1978 թ.)

...Դու՛ք, սիրելի վարդապետներ, բախտավոր սերունդ եք, եկաք ճիշտ ատենին՝ ձեր ձեռքերի մեջ առնելով եկեղեցական իշխանության գավազանը շատ երիտասարդ հասակի մեջ։

...Այս իրողության մեջ դուք պիտի կարենաք գտնել ձեր փառքը կամ ձեր դժբախտությունը՝ ձեր դժբախտությունը, եթե ձեզ վստահված գործին մեջ ձախողիք և հուսախաբ անեք Եկեղեցին և Մեզ, ձեր փառքը, եթե ձեր գործը կատարեք պատվով և շինարար արդյունքներով։ Աշխատանքը ձեզ պիտի ազնվացնի, ձեզ պիտի բարձրացնի, փառավորի։

Մենք հավատքի վերածնունդի այս օրերին, «բարվոք պատերազմ»-ը սկսած ենք մղել մեր հուսացյալ ժողովրդի ծոցին մեջ։ Այս օրերին և այս տեղեն կսկսի մի նոր շրջան մեր եկեղեցական պատմության մեջ։ Դուք, որպես Մեր գործակիցները, Մեզ հետ միասին վկաները պիտի լինեք Մեր հաղթանակին, և մի օր հպարտությամբ պիտի հիշեք, թե դուք ևս ներկա էիք այստեղ, այս ճակատամարտին, և մարտակից էիք Մեզ։

Ձեր կյանքի գործերով դուք պիտի կարողանաք ձեր անունները կապել շինարար ու ստեղծարար, աստվածասեր ու ազգօգուտ գործերի որպես մշակներ առանց ամոթ։ Ճանապարհը բաց է ձեր առաջ, վերցրեք ձեր խաչը և հետևեցեք Մեզ։

Բայց գիտեք, որ Մենք չենք խոստանում ձեզ ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ հանգստավետ կյանք, ոչ իշխանություն, ոչ մեծարանք և ոչ ալ փառք։ Մենք ոչինչ չենք խոստանում ձեզ, բայց ոչինչ չխոստանալով՝ ամեն բան խոստանում ենք, այնպես, ինչպես մեծ առաքյալը՝ Պողոսը՝ «ոչինչ չուներ, բայց ամեն բան ուներ»։

ՊԱՏԳԱՄ
ՓԱՐԻԶՈՒՄ ՈՂՋԵՐԹԻ ՄԵԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ
(7 հունիսի 1979 թ.)

Ցավոք պետք է հաստատենք, թե հայ սփյուռքը մնայուն երևույթ է այլևս։ Կարող են հետագային հնարավորություններ ստեղծվել նոր ներգաղթներու։ Մենք առաջին աղոթողը և ուրախացողը կըլլանք իբրև Հայոց Հայրապետ։ Եվ հավանական է, որ նման ներգաղթներ կազմակերպվին հետագային, բայց զանգվածային իմաստով մեր ամբողջ արտասահմանի երկու միլիոն ժողովուրդը՝ Արևելքեն, Եվրոպայեն, Ամերիկաներեն կիսորհինք, թե հնարավոր չըլլար տեղափոխել Մայր Հայրենիք։ Հետևաբար միշտ պիտի ունե-

նանք սփյուռք և այդ գաղափարեն պետք չէ վախնանք, պետք չէ հուսահատինք։ Ընդհակառակը, ճակատագրի առջև դրած այս հարցը, այս նետված ձեռնոցը պետք է քաջությամբ ու պատվով վերցնենք և մեր կյանքը կազմակերպենք ամուր, տևական հիմքերու վրա, այսօր, վաղը և հետագա տասնամյակներուն։ Նույնիսկ եթե կուզեք, այս աննպաստ պայմաններեն մենք կրնանք օգուտ քաղել այսօրվա մեր վերածնած Հայաստանի համար, որով լավատեսությամբ և ինքնավստահությամբ պետք է աշխատինք սփյուռքի հայության կյանքը ավելի ամուր հիմերու վրա խարսխելու։ Եվ թույլ տվեք անգամ մը ևս ընդգծել, թե ամենաամուր, ամենաապահով, ամենափորձված այդ խարիսխը, որուն վրա կրնա հենվել կառույցը արտասահմանի համայն հայության, այսօր կա ու կմնա Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին։ Եվ այս կըսենք ոչ միայն իբրև կաթողիկոս, ոչ իբրև հոգևորականի նախասիրություն, այլ որովհետև առարկայական իրականությունը այդ է։ Հայ Առաքելական Եկեղեցին ինքնագլուխ, ինքնավար և անկախ այն միակ հաստատությունն է, որով արտասահմանի մեջ մենք հայ ենք հաչս պետական իշխանությանց։ Հայաստանյայց Եկեղեցին, որ մեր հայկականությունը կապահովի իրավական տեսակետով, հյուրընկալ պետությանց օրենսդրության ոգիով։

ԽՈՍՔ
ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
(25 սեպտեմբերի 1983 թ.)

Թող այս Սրբալույս Մյուռոնով ավելի և ավելի լուսավորվի հոգին ու կյանքի ճանապարհը հայ հավատացյալների, և առավել պայծառանա մեր ժողովրդի քրիստոնեական ոգին։

Այս լուսափայլ Մյուռոնով թող է՛լ ավելի ամրապնդվեն սերն ու միությունը մեր Մայր Եկեղեցու և ժողովրդի։

Այս զմրուխտ Մյուռոնով մեր ժողովրդի կյանքը թող դառնա է՛լ ավելի օծուն Սուրբ Հոգու շնորհներով, Սուրբ Հոգու լուսավորող, մխիթարող ու խաղաղասեր շնորհներով։

Ավելի լույս, ավելի խաղաղություն մեր Եկեղեցու զավակներին և նրանց համայնական ազգային կյանքին։

Ավելի լույս, ավելի խաղաղություն համայն աշխարհին, որ մեր օրերին այնքան մթագնած է ու խռովահույզ։

Թող խորտակվեն մանավանդ պատերազմի բոլոր զենքերը, և թող խափանվեն մահ ու ավեր սերմանող ուժերը չարի։

Թող այս Մյուռոնի շնորհներով լսելի դառնա աշխարհին Աստուծո սաստը՝ «Ո՞ւր է, Աբե՛լ, եղբայրը քո»։

Խաղաղության աղավնին արդար թող ազատ սավառնի աշխարհից աշխարհ՝ ավետելով բոլոր մարդկանց, բոլոր ազգություններին սեր, եղբայրություն և կյանք ներդաշնակ։

ՔԱՐՈԶ
ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվարի 1956 թ.)

Աստծո խոսքը մարդոց ուղղյալ թե Հին և թե Նոր Ուխտով տևական ու վսեմ կոչ է սիրո և խաղաղության: Պետք է ըլլանք «որդիք խաղաղության» (Ղուկ. Ժ 6), որպեսզի արժանի դառնանք «որդիք Աստծոյ» կոչվելու:

Արդյոք պիտի բացվի՞ վերջապես տևական խաղաղության արշալույսը: Արդյոք թևերը ազատորեն տարածած պիտի կարենա՞ աներկյուղ սավառնել խաղաղության սպիտակ աղավնին: Արդյոք ժողովուրդները և անոնց առաջնորդները պիտի փութա՞ն «պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօղիւ խաղաղութեան» (Եփես. Դ 3):

ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(6 հունվարի 1982 թ.)

Ցեղասպանություն տեսած հայ ժողովուրդը առավել վճռականությամբ իր ձայնը, իր աղերսը միացնում է խաղաղության ուժերին, որովհետև պայծառ գիտակցությունը ունի, թե միայն աշխարհի խաղաղության պահպանման պայմաններում նա պիտի կարողանա գոյատևել իբրև Եկեղեցի: Հայոց վերածնված մայր երկրի ժողովուրդի բախտն ու ճակատագիրը պայմանավորված են խաղաղության պահպանմամբ, խաղաղության ուժերի հաղթանակով: Որևէ հայ մարդու համար այլ կերպ մտածում կամ գործունեություն կարելի չէ ըմբռնել:

ԽՈՍՔ
ՈՒՂՂՎԱԾ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈԿՏ. ՌՈԲԵՐԹ ՌԱՆՍԻԻՆ
(Լոնդոն, 6 մայիսի 1983 թ.)

Ես մտածում եմ, որ միջեկեղեցական փոխադարձ սիրո, միատեղ աղոթելու և միատեղ գործելու այս ոգին, ճշմարիտ էկումենիկ ոգին, հրամայական պահանջ է մանավանդ մեր օրերին, երբ աշխարհը ալեկոծ է բազում անարդարություններով, բազում նախապաշարումներով, բազում վատառողջ կրքերով ու անսանձ թշնամություններով, երբ մարդիկ ու ազգությունները լույսի և խաղաղության մի ճանապարհ են որոնում գրեթե հուսահատ: Թվում է, թե մարդկությունը հասել է մի հանգրվանի, երբ իր բանականության ուժերը այլևս անզոր են դարձնում ինքն իրեն ղեկավարելու: Այսպիսի իրադրութ-

յան մեջ մեր օրերին կարծում եմ առավել հրամայական է դառնում, որ Եկեղեցիների պատասխանատու սպասավորները միատեղ աղոթեն ու գործեն Քրիստոսի Ավետարանը իրենց ձեռքում՝ որոնելու համար փրկության մի ճանապարհ։

Ես չգիտեմ՝ կհաջողվի՞ այդ մեզ՝ եկեղեցականներիս, մեզ՝ քրիստոնյաներիս։ Պիտի կարողանա՞նք քանդել միջնորմը թշնամությունների, պիտի կարողանա՞նք համոզել ժողովուրդներին և պետական ղեկավարներին, որ բոլոր մարդիկ միևնույն Աստծո որդիներն են, որ եղբայրներ են միևնույն տան մեջ բնակվող, միևնույն առօրյա դժբախտություններով, միևնույն երազանքներով, միևնույն ճակատագրով։

Արդյոք մեր օրերի մարդկանց պիտի կարողանա՞նք լսելի դարձնել Աստծո սաստը, թե՝ «Ո՞ւր է, Աբե՛լ, եղբայրը քո»։

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(23 սեպտեմբերի 1991 թ.)

Նախաստեղծման հեռու ժամանակներում մեր քաջ Նահապետը Հայկ արդարության երեքթևյան իր նետով ճեղքեց խավարը բռնակալության և դրեց սահմանաքարը հայոց ազգի ազատ Տան։ Այդ օրից ծնունդ առավ ինքնիշխան արմենական երկիրը՝ Հայաստան։

Անցան դարեր, և հրաշք տեսիլքովը Սուրբ Լուսավորչի, Աստուծո Որդին իջավ Արարատյան աշխարհ ու իր հետ բերեց «լույսը փառաց», որով բացվեց ճանապարհը մեր ազգի ոգեկան ազատության։

Այսօր, երբ մեր պատմության նոր առավոտն ենք դիմավորում, հոչակումովը մեր նորածին Հանրապետության անկախության, հիշենք հայրենաստեղծ մեր Հայկ Նահապետին և Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որ Քրիստոսի արարչագործ լույսով ոգեղենացրեց կյանքը հայոց, որով աշխարհի հորիզոնի վրա բարձրացավ ծիածանը «փառաց լույս» մեր աննման ոսկեդարի։ Նաև հետ այսու մեր ազգի տենչանքը պետք է լինի անկախության ճանապարհով հասնել ազատագրված հայ ոգեկանության նոր բարձունքների։

Հայե՛ր, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, արթնացեք և ուխտեցեք մնալ հավատարիմ ազատն Հայկ Նահապետին և մեր հոգիների Լուսավորչին ամենասուրբ։

Ողջույն և օրհնություն Հայաստանի ինքնիշխան անկախ մեր Հանրապետության։

Օրհնություն և փառք մեր ազատատենչ ու հավատավոր անմահ ազգին։

«Ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց։ Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղերուք ի սմա» (Սաղմոս ՃԺԷ 23-24). Ամէն։

ՔԱՐՈԶ
ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(29 սեպտեմբերի 1991 թ.)

Մեր նոր, ինքնիշխան պետության անկախության հիմքերից մեկն է նաև հայ ազգի

Եկեղեցու անկախությունը և ինքնիշխանությունը:

Մենք դավանում ենք Հավատամքը՝ մեկ ազատ ազգություն,

մեկ անկախ պետություն,

մեկ անկախ ազգային Եկեղեցի:

Այս հավատամքով, այս գիտակցությամբ, Սուրբ Հոգու զորությամբ այս Սրբալույս Մյուռոնը Մենք հռչակում ենք Անկախության Մյուռոն:

Հայե՛ր, հոգևոր զավակնե՛ր Մեր, այս սրբազան Մյուռոնով միացե՛ք, եղբայրացե՛ք, եղե՛ք մեկ կամք, եղե՛ք մեկ ուրախություն, եղե՛ք մեկ ցավ: Եղեք մե՛կ ազգ, մե՛կ ընտանիք, մե՛կ ժայռացած երդում և հավատացե՛ք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին՝ սուրբգրական Արարատի հայացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո:

Կազմեց Ազնիվ Հակոբյանը

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

(Ծննդեան 100-ամեակին)

Գիտութեան ամեն բնագաւառի մէջ կան բազմաթիւ մեծանուն գիտնականներ, որոնց անունները յայտնի են ամբողջ աշխարհում, որոնք մեծ աւանդ ունեն մարդկութեան ընդհանուր առաջընթացի մէջ։ Միեւնոյն ժամանակ, գիտութեան ամեն մի բնագաւառի մէջ կան ընդամենը մի՛ քանի մեծերի անուններ, որոնք յատուկ առանձնանում են իբրեւ տուեալ բնագաւառի սիւներ, իբրեւ այն հսկաները, որոնց ուսերին է կանգնած գիտութեան տուեալ բնագաւառը։ Սրանք ա՛յն մեծերն են, որոնք ստեղծել են տուեալ բնագաւառի **գիտական աշխարհայեացքը**։ Հէնց ա՛յս մեծերն են, որ շտկել, որոշել են մարդկային մտքի զարգացման ուղղութիւնը իրենց բնագաւառների մէջ։ Աստղագիտութեան պատմութեան մէջ այս կարգի մեծերից յայտնի են միայն մի քանի անուններ. Կղաւդիոս Պտղոմէոս՝ հելլենիստական Աղեքսանդրիայից, Նիկոլայ Կոպեռնիկոս՝ միջնադարեան Լեհաստանից, Իսահակ Նիւտոն՝ միջնադարեան Բրիտանիայից եւ Վիկտոր Համբարձումեան՝ Խորհրդային Հայաստանից։

Համբարձումեանը աստղագիտութեան եզակի մեծերից է։ Նա կարողացել է մէկ մարդկային կեանքի ընթացքում մէկ մարդու ջանքով կտրուկ փոխել մի ամբողջ գիտութեան զարգացման ուղղութիւնը, դրա բովանդակութիւնը։ Նրա շնորհիւ քսաներորդ դարի ընթացքում արմատապէս փոխուեց աստղաֆիզիկայի էութիւնը։ Տիեզերքը ֆիզիկայի միջոցներով ուսումնասիրող գիտութիւնից այն դարձաւ Տիեզերքի **զարգացումը, բարեշրջութիւնը** (evolution) հետազօտող գիտութիւն։ Համբարձումեանը մարդկանց համար բացայայտեց, որ մենք ապրում ենք շատ երիտասարդ (հազար անգամ աւելի երիտասարդ, քան մինչ այդ համարւում էր) Տիեզերքում, որտեղ տարբեր տիեզերական մարմիններ ունեն տարբեր տարիքներ, եւ որտեղ տակաւին չի աւարտուած նոր մար-

մինների առաջացումը, որտեղ մեր աչքի առաջ ծնւում են աստղեր, աստղային համակարգեր եւ մինչեւ անգամ՝ հսկայական գալակտիկաներ ու գալակտիկաներից կազմուած համակարգեր։

Վիկտոր Համբարձումեանի նախնիները Արեւմտեան Հայաստանից են՝ պատմական Ծաղկոտն գաւառի Դիադին փոքրիկ քաղաքից։ Ընտանիքն իր անունը ստացել է 1600-ականների վերջերին Դիադինում բնակուող շատ յայտնի մի մարդուց, որ կոչուել է Մահտեսի Համբարձում։ 1828-ին ռուս-թուրքական պատերազմի հարկադրանքով Դիադինի ողջ հայութեան հետ միասին Համբարձումեանները գաղթել, հաստատուել են Սեւանայ լճի ափին՝ Բասարգեչարում (այժմ՝ Վարդենիս)։ Վիկտոր Համբարձումեանի հայրը՝ Համազասպ Համբարձումեանը, ծնուել է հէնց Բասարգեչարում 1880-ին։ Տակաւին երիտասարդ՝ գիւղից դուրս է եկել ուսումը շարունակելու համար։ Սովորել է տարբեր տեղերում՝ Երեւանի թեմական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, Մոսկուայի Լազարեան ճեմարանում եւ աւարտել է Պետերբուրգի Կայսերական համալսարանը։ Եղել է իր ժամանակի հայ մտաւորականութեան փայլուն ներկայացուցիչներից մէկը։ Թէպէտ կրթութեամբ եղել է իրաւաբան, սակայն շատ աւելի յայտնի է դարձել իբրեւ բանաստեղծ, գրականագէտ, բանասէր եւ անզուգական թարգմանիչ։ Հայ մշակոյթի մէջ անգնահատելի աւանդ են նրա կատարած թարգմանութիւնները։ Բացառիկ կարեւորութիւն ունեն յատկապէս հին յունարէն բնագրերից արեւելահայ աշխարհաբարի նրա թարգմանած Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը». թարգմանել է նաեւ Էսքիլոս, Եւրիպիդէս, Սոֆոկլէս, Վիրգիլիոս, Հայնէ, Լերմոնտով, Նադսոն եւ այլն։ Եղել է շատ գործուն հասարակական դէմք. յայտնի է, որ 1912 թուականին Թիֆլիսում երկու հոգու ջանքերով ստեղծուում է Հայ գրողների կովկասեան ընկերութիւնը։ Այդ մարդկանցից մէկը Յովհաննէս Թումանեանն էր, ով այդ ընկերութեան նախագահն էր, իսկ միւսը՝ Համազասպ Համբարձումեանը, որ եւ այդ ընկերութեան քարտուղարն էր։ Երկար տարիներ անտիկ գրականութիւն է դասաւանդել Հայաստանի բուհերում, եղել է անզուգական դասախօս։ Նրա դասախօսութիւնների մասին մինչեւ այժմ զարմանալի պատմութիւններ են պատմւում։

1904 թուականին Թիֆլիսում Համազասպ Համբարձումեանը ամուսնացել է Ցխինվալի քաղաքի ծխատէր քահանայ Տէր Սահակ Խախանեանցի դստեր՝ Հռիփսիմէի հետ։ Ունեցել է երեք զաւակ՝ մի դուստր, ապա երկու որդի։ Այս զաւակներից միջնեկը հէնց Վիկտոր Համբարձումեանն է։

Ապագայ գիտնականը ծնուել է 1908 թուականի Սեպտեմբերի 18-ին Թիֆլիսում։ Արդէն երեք տարեկանում հայրը նկատել է երեխայի արտակարգ ընդունակութիւնները եւ սկսել է յատուկ զբաղուել նրա դաստիարակութեամբ։ Գիտութեան նկատմամբ սէրը պատանու մէջ ներարկել է հէնց հայրը, որ թէպէտ եղել է հումանիտար բնագաւառի մասնագէտ, սակայն բացառիկ սէր է ունեցել բնական ու ճշգրիտ գիտութիւնների, մասնաւորապէս՝ մաթեմատիկայի նկատմամբ։

Ինը տարեկանում փոքրիկ Վիկտորը սկսում է իր գիտական պարապմունքները, իսկ աստղագիտութեամբ սկսում է զբաղուել տասնմէկ տարեկանից։ Սերտում-իւրացնում է աստղագիտութեանը եւ յարակից բնագաւառներին վերաբերող մեծ ծաւալի գիտական գրականութիւն։ Ձեռք է բերում մի փոքրիկ աստղադիտակ յիսուն անգամ խո-

շորացումով եւ սկսում է կատարել կանոնաւոր աստղագիտական դիտումներ։ Բանը հասնում է այնտեղ, որ նա հէնց այդ տարիքում սկսում է գիտական յօդուածներ գրել իր իսկ կատարած դիտումների հիման վրայ։ Պատանու հայրը իր յուշերում պատմում է, որ երիտասարդ Վիկտորը տասնմէկից տասնհինգ տարեկանում գրել է հինգ լուրջ գիտական աշխատութիւններ։ Այսօր այդ յօդուածներից մէկը մեզ յաջողուել է գտնել Հայաստանի ազգային արխիւում։ Դա արեւաբծերի դիտումների միջոցով Արեգակի սկաւառակի պտտման նոր պարբերութիւն գտնելուն նուիրուած մի աշխատութիւն է՝ գրուած տասներեքամեայ Վիկտոր Համբարձումեանի ձեռքով՝ աշակերտական ձեռագրով, սակայն ոչաշակերտական, բացառիկ բարձր գիտական լրջութեամբ։ Պատանի Վիկտորը նաեւ տարբեր տեղեր հանդէս է գալիս զեկուցումներով գիտութեան զանազան խնդիրների մասին։ Յայտնի է, որ տասնհինգ տարեկանում (1924 թ.) Երեւանի պետական համալսարանում նա դասախօսութիւն է կարդացել (համալսարանի դասախօսական կազմի եւ բարձր կուրսերի ուսանողների համար) յարաբերականութեան տեսութեան մասին։ Այդ դասախօսութեանը ներկայ է եղել նաեւ Հայաստանի այդ ժամանակուայ կառավարութիւնը։ Դասախօսութիւնից մէկ օր անց պատանի գիտնականին ընդունում է Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Աշոտ Յովհաննիսեանը, իսկ ապա՝ նաեւ Ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մեասնիկեանը։ Մի խօսքով, արդէն դպրոցական հասակից նա հռչակուած է եղել իբրեւ պատանի գիտնական։

Դպրոցական տարիներին պատանի Վիկտորը յայտնի է եղել ոչ միայն որպէս երիտասարդ գիտնական։ Նա հրաշալի իմացել է գրականութիւն, եղել է փայլուն ասմունքող։ Հէնց իր բարձրակարգ ասմունքի շնորհիւ էլ պատանի Վիկտորը արժանացել է Յովհաննէս Թումանեանի ուշադրութեանը, ծանօթացել ամենայն Հայոց բանաստեղծի հետ։ Յայտնի է նաեւ, որ մեծն Թումանեանն իր վերջին բանաստեղծութիւնը՝ «**Միրիուսի հրաժեշտ**»ը գրել է պատանի գիտնականի հետ ունեցած զրոյցից յետոյ...

1924-ին, Թիֆլիսի թիւ 4 արական գիմնազիան աւարտելուց յետոյ պատանի Վիկտոր Համբարձումեանը մեկնում է Լենինգրադ՝ ուսումը շարունակելու։ Առաջին տարին ինչ-ինչ պատճառներով չի կարողանում համալսարան ընդունուել, սակայն ժամանակն ի զուր չի կորցնում. ընդունւում է Գերցենի անուան մանկավարժական ինստիտուտը, իսկ մէկ տարի անց տեղափոխւում է համալսարան։ Հէնց ուսանողական տարիներից էլ սկսում է իր գիտական հետազօտութիւնների արդիւնքները տպագրել միջազգային գիտական մամուլում։ Նրա առաջին հրապարակումը լոյս է տեսել գերմանական Astronomische Nachrichten (Աստրոնո՛միշէ Նա՛խրիխտեն) շատ հեղինակաւոր գիտական հանդէսում, երբ նա եղել է ընդամենը առաջին կուրսի ուսանող։ Լենինգրադի համալսարանն աւարտելիս Համբարձումեանն արդէն աշխարհահռչակ գիտնական էր։

Համալսարանն աւարտելուց յետոյ երեք տարի նրա ասպիրանտական ուսումնառութիւնը անցնում է Պուլկովոյի աստղադիտարանում մեծանուն ռուս աստղագէտ Արիստարք Բելոպոլսկու ղեկավարութեամբ։ Լենինգրադում էլ սկսւում է նրա աշխատանքային գործունէութիւնը։ Դասաւանդել է տարբեր բուհերում, աշխատել տարբեր գիտական հիմնարկներում, ղեկավարել գիտական կազմակերպութիւններ։ 1934 թուականին ստեղծում է Խորհրդային Միութեան մէջ առաջին աստղաֆիզիկայի ամբիոնը։ Հիմնադրում է **Տեսական աստղաֆիզիկա** առարկան Խորհրդային Միութիւնում (եւ

ընդհանրապէս, նա համարւում է այդ առարկայի հիմնադիրներից մէկը ամբողջ աշխարհում)։ Իսկ ընդամենը 32 տարեկանում դառնում է Լենինգրադի համալսարանի գիտական ղեկավարը (պրոռեկտորը)։ Պատերազմի հէնց սկզբից կառավարութեան յանձնարարութեամբ Վիկտոր Համբարձումեանը ստեղծում է համալսարանի գիտական մասնաճիւղը եւ այդ մասնաճիւղի հետ միասին տարհանւում է թիկունք՝ Ելաբուգայ քաղաքը (Կազանի մօտ), ուր մի քանի տարի յոյժ արդիւնաւետ աշխատում է ի նպաստ երկրի պաշտպանութեան։ Հէնց այս տարիներին էլ, ի թիւս այլ կարեւոր գիտական ձեռքբերումների, նա լուծում է պղտոր միջավայրում լոյսի ցրման խնդիրը, որ հակառակ զուտ հիմնարար՝ աստղաֆիզիկական տեսական խնդիր լինելուն, անմիջապէս կիրառւում է ռազմական բնագաւառում եւ տալիս փայլուն արդիւնք։ Միայն ա՛յդ խնդրի լուծման շնորհիւ հնարաւոր է դառնում յաղթահարել հակառակորդի սուզանաւերի անյայտնաբերելիութիւնը եւ բեկում մտցնել ստորջրեայ մարտերում հակառակորդի յաջողութիւնների ընթացքի մէջ։ Մի քանի տարի անց (1946 թ.) հէնց ա՛յս խնդրի լուծման համար Վ. Համբարձումեանն ստանում է իր առաջին Ստալինեան մրցանակը։

1943 թ. աշնանը, դեռ պատերազմը չաւարտուած, Համբարձումեանը թողնում է իր բոլոր գործերը, պաշտօնները եւ ապահով, հեռանկարային տեղը Ռուսաստանում ու տեղափոխւում է Հայաստան։ Իր յուշերում իր այդ քայլը նա անուանել է «հայրենադարձութիւն»։ Եւ այդ ժամանակից մինչեւ իր կեանքի վերջը նա ապրել է Հայաստանում։ Սկզբի մի քանի տարիներն ապրում է Երեւանում, իսկ 1946-ին իր ընտրութեամբ, իր ջանքով ու աշխարհայեացքով Բիւրականում հիմնադրւում է աստղադիտարանը եւ Համբարձումեանը ընտանիքի հետ միասին տեղափոխւում է Բիւրական։ Առաջին մի քանի տարիներն ապրել է գիւղում, ապա՝ աստղադիտարանում կառուցուած ժամանակաւոր կացարաններում։ 1950-ին ստանում է իր երկրորդ Ստալինեան մրցանակը. այդ գումարի մի մասով կառուցում է աստղադիտարանի քարէ պարիսպը, մնացեալ մասով էլ՝ իր առանձնատունը (որ յետոյ մտցնում է աստղադիտարանի հաշուեկշռի մէջ առանց նոյնիսկ նուիրատուութիւն ձեւակերպելու)։ Եւ այդ ժամանակից էլ ապրել է իր կառուցած տանը։ Այդ տանն էլ վախճանուել է 1996 թ. Օգոստոսի 12-ի երեկոյեան։

Վիկտոր Համբարձումեանը եղել է Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի հիմնադիր անդամների թւում։ Եւ 1943 թուականից սկսեալ յիսուն տարի ղեկավարել է Հայաստանի ամբողջ գիտութիւնը։ Առաջին չորս տարիները՝ 1943-1947 թթ. նա եղել է Ակադեմիայի փոխնախագահը (նախագահն է եղել Յովսէփ Օրբէլին)։ Իսկ 1947-ից մինչ 1993 թուականը 46 տարի անընդմէջ եղել է Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի նախագահը։ Եւ մեծ չափով Վ. Համբարձումեանին ենք պարտական գիտութեան այն աննախադէպ թռիչքային զարգացումը, որ եղաւ Հայաստանում յետպատերազմեան տասնամեակների ընթացքում։ Հիմնականում Համբարձումեանի ընտրութեամբ, նրա նախաձեռնութեամբ են Հայաստանում սկզբնաւորւում ու բուռն զարգացում ապրում գիտութեան ժամանակակից հեռանկարային ճիւղերը, դրանց հիման վրայ՝ արդիւնաբերութեան գիտատար արդիական ճիւղերը եւ սրանց զուգահեռ՝ Հայաստանի բուհերում էլ արմատաւորւում է այդ բնագաւառների մասնագէտների ուսուցումը։ Հետագայում սա հանգեցրեց Հայաստանի հասարակութեան մէջ գիտատեխնիկական մտաւորականութեան ձեւաւորմանը։ Հարկ է յիշել, որ մինչ այդ Հայ հասարակութեան մէջ

մտաւորականները գերազանցապէս հումանիտար կրթութեամբ անձինք էին։ Եւ սա էլ, բնականաբար, միակողմանիութիւն պիտի մտցնէր ամբողջ Հայ հասարակական մտքի մէջ։ Գիտատեխնիկական մտաւորականութեան առկայութիւնը, բնականաբար, հարստացրեց, առաւել ամբողջական դարձրեց Հայ հասարակութիւնը, որն անկասկած, դրականօրէն ազդեց Հայաստանի հոգեւոր-մշակութային ամբողջ վիճակի վրայ։

Վիկտոր Համբարձումեանն ամուսնացել է 23 տարեկանում։ Կինը՝ Վերա Համբարձումեանը (օրիորդական ազգանունը՝ Կլոչիխինա,) ազգութեամբ ռուս, ծնուել է Սոլիկամսկում (հիւսիսային Ուրալ)։ Վ. Համբարձումեանի կեանքում բացառիկ է եղել կնոջ՝ Վերա Ֆեոդորովնայի դերը, որն ամբողջովին իր վրայ է վերցրել ընտանիքի եւ կենցաղի բոլոր հոգսերը՝ ամուսնուն լրիւ ազատելով դրանցից, առաւելագոյնս հնարաւորութիւն ստեղծելով նրա համար՝ զբաղուելու ի՛ր հիմնական գործով։ Կնոջ հետ միասին ապրել են 64 տարի, աշխարհ են բերել չորս զաւակ՝ երկու դուստր եւ երկու որդի։ Այր ու կին մահացել են մէկ տարի տարբերութեամբ. նախ կինը, ապա մէկ տարի անց՝ ինքը։

Համբարձումեանի գիտական վաստակը շատ բարձր է գնահատուել ամբողջ աշխարհում տակաւին իր կենդանութեան օրօք։ Դրա խօսուն վկայութիւններն են նրա ստացած բազմաթիւ միջազգային պարգեւներն ու մրցանակները, պատուաւոր կոչումները։ Նա երբեւէ գիտական թեզ չի գրել եւ, բնականաբար, չի էլ պաշտպանել, սակայն 27 տարեկանում արժանացել է գիտութիւնների դոկտորի գիտական աստիճանի։ Իսկ դրանից մէկ տարի առաջ էլ՝ 26 տարեկանում նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում։ Եղել է իր ժամանակ աշխարհում եղած համարեա բոլոր ակադեմիաների անդամ (30-ից աւելի), բազում համալսարանների պատուաւոր դոկտոր, բազմաթիւ քաղաքների պատուաւոր քաղաքացի եւ այլն։ Նա ստացել է գիտնականի համար հնարաւոր համարեա բոլոր պարգեւներն ու մրցանակները (այդ թւում՝ ԽՍՀՄ ԳԱ բարձրագոյն պարգեւը՝ Լոմոնոսովի անւ. ոսկէ մէդալ, Ռուսաստանի Դաշնութեան Պետական մրցանակ, բազում երկրների ակադեմիաների բարձրագոյն պարգեւները)։ Նրա ստացած կարեւորագոյն պարգեւների ու մրցանակների ցուցակում բացակայում է միայն Նոբելեան մրցանակը։ Համբարձումեանն իրօք չի ստացել Նոբելեան մրցանակ, սակայն դրա պատճառները բնաւ կապ չունեն գիտութեան հետ։ Վ. Համբարձումեանի կատարած որոշ աշխատանքների համար Նոբելեան մրցանակ տրուել է, սակայն... ոչ իրեն։ Միեւնոյն ժամանակ, դա չի խանգարել, որ նա լինի իր ժամանակի ամենահեղինակաւոր գիտնականն աշխարհում։ Վիկտոր Համբարձումեանը միակ խորհրդային գիտնականն է, որ ընտրուած է եղել Միջազգային Աստղագիտական Միութեան նախագահ (ընդ որում՝ 1961 թուականին՝ սառը պատերազմի լարուած տարիներին), եւս միակ խորհրդային գիտնականն է, որ եղել է Գիտական Միութիւնների Միջազգային Խորհրդի նախագահ եւ առաջին մարդն է, որ այդ պաշտօնում ընտրուել է երկու անգամ (հակառակ կանոնադրութեամբ սահմանուած արգելքին)՝ որպէս եզակի բացառութիւն։ Միեւնոյն ժամանակ, ինքը՝ մեծանուն գիտնականը, զարմանալի անտարբեր է եղել իր ձեռքբերումներին եւ արժանիքներին տրուած գնահատականների նկատմամբ։ Դրա վկայութիւնն են նրա դոկտորական եւ պրոֆեսորական վկայականները, որ նա ստացել է այդ գիտական աստիճանն ու կոչումը իրեն շնորհուելուց 16 տարի անց... Իսկ իր համալսարանական դիպլոմը Համբարձումեանն ստացել է համալսարանն աւարտելուց... 50 տա-

րի անց։ Սա իրաք որ արտառոց է. ուրիշ նման դէպք պատմութեանը յայտնի չէ։ Ընդ որում, այդ յիսուն տարիների ընթացքում նա չորս տարի եղել է այդ միեւնոյն համալսարանի ղեկավարը։

Վիկտոր Համբարձումեանը գիտական հետազօտութիւններ է արել երեք տարբեր բնագաւառների մէջ. տեսական ֆիզիկայ, մաթեմատիկական ֆիզիկայ եւ, անշուշտ, աստղաֆիզիկայ։ Այս երեք բնագաւառների մէջ էլ Համբարձումեանը նշանակալի հետք է թողել։ Ժամանակակից մաթեմատիկական ֆիզիկայում կայ մի մեծ բնագաւառ «հակադարձ խնդիրներ» անունով, եւ յայտնի է, որ այդ բնագաւառի սկզբնաւորողը, հիմք դնողը եղել է քսանամեայ Վիկտոր Համբարձումեանը։ Պակաս կարեւոր չեն նրա ներդրումները ֆիզիկայի մէջ։ Նա յայտնի է որպէս քուանտային ֆիզիկայի առաջին հետազօտողներից մէկը, որպէս ատոմի միջուկում նեյտրոնների գոյութեան տեսական յայտնաբերողը (1930 թ. Դ. Իվանենկոյի հետ միասին)։ Իսկ աստղագիտութեան ասպարէզում նրա ներդրումը դժուար է նոյնիսկ գնահատել։ Եթէ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի պատմութեան մէջ Համբարձումեանը մտել է որպէս քսաներորդ դարի խոշորագոյն գիտնականներից մէկը, ապա աստղագիտութեան պատմութեան մէջ նա իր բացառիկ տեղն ունի որպէս բոլոր ժամանակների մեծագոյն աստղագէտներից մէկը։ Նա քսաներորդ դարի այն եզակի գիտնականն է, որի աշխատանքները տակաւին իր կենդանութեան օրօք այլոց կողմից կոչուել են «**կոպեռնիկոսեան**», իրենց յեղափոխականութեամբ եւ կարեւորութեամբ զուգակշիռ դրուելով Կոպեռնիկոսի գործերին։

Հարկ է յատուկ շեշտել, որ Համբարձումեանի տեղը համաշխարհային գիտութեան պատմութեան մէջ բնաւ կախուած չէ նոյնիսկ նրա գաղափարների ճիշտ կամ սխալ լինելուց։ Կարեւորն այստեղ այն է, որ Համբարձումեանի յեղափոխական գաղափարները մարդկութեանը եւս մէկ քայլ մօտեցրին Տիեզերքի մասին ճշմարտութիւնը հասկանալուն։ Համբարձումեանի աշխատանքներով սկիզբ է առել Տիեզերքի գիտական ճանաչման արդի փուլը։

«Որքան մեծ էր գիտութեան մէջ, նոյնքան էլ համեստ ու հասարակ էր կենցաղում»։ Այս շատ յայտնի բնութագրումը լիովին ճիշտ է Վիկտոր Համբարձումեանի պարագայում։ Այսօր նրա տունը մտնողը, տեսնելով նրա համեստ ու ծայրաստիճան հասարակ կենցաղի իրեղեն վկայութիւնները, չի կարողանայ պատկերացնել, որ հէնց ա՛յդ միջավայրում է ապրել բոլոր ժամանակների մեծագոյն աստղագէտներից մէկը։ Նա այն եզակի մեծերից է, որ ապրել է այնպէս, ինչպէս մտածել է, ինչպէս համարել է ճիշտ։ Կենցաղում եղել է նուազագոյն անհրաժեշտով բաւարարուելու կողմնակից եւ հէնց այդպէս էլ ապրել է։ Դրա պերճախօս վկայութիւնն են գիւղական հիւսնի ձեռքով սարքուած գրքի դարակները, որոնց վրայ նրա գիտական գրադարանն է դասաւորուած եւ հասարակ ցածրիկ փայտեայ թախտը, որի վրայ քնել է մեծանուն գիտնականը։

Իր քաղաքական հայեացքներով Վ. Համբարձումեանը միշտ եղել է հզօր պետականութեան կողմնակից, ու նաեւ դա է պատճառներից մէկը, որ արեւմուտքում նրան անուանում էին «**կարմիր գերհսկայ**»՝ ակնարկելով խորհրդային պետութեանը նրա նուիրուածութիւնը եւ գիտութեան մէջ էլ գերհսկայ լինելը (գերհսկաները մեզ յայտնի ամենամեծ աստղերն են)։ Միեւնոյն ժամանակ, Համբարձումեանի համար միշտ առաջնային են եղել ազգային շահերը։ Եւ իր ողջ կեանքի ընթացքում նա բոլոր առիթներն օգտագործել է ի նպաստ Հայաստանի եւ Հայութեան գործելու համար։ Սրա լաւագոյն վկայու-

թիւններից է Համբարձումեանի դիրքորոշումը Արցախի խնդրում: Երբ սկսուեց Արցախեան շարժումը, եւ դրուեց Արցախի հայութեան արդար իրաւունքների պաշտպանութեան հարցը, Համբարձումեանը անվարան կանգնեց Հայոց ազգային շահերի պաշտպանութեան կողմը: Արցախի հայութեան իրաւունքներին ի պաշտպանութիւն ամենաբարձր ատեաններում նրա ունեցած ելոյթները մինչեւ այժմ չեն կորցրել իրենց կարեւորութիւնը խնդրի դրուածքի յստակութեամբ եւ առաջ քաշուած հարցերի սկզբունքայնութեամբ: Աւելին, ի պաշտպանութիւն իր ժողովրդի արդար իրաւունքների Վիկտոր Համբարձումեանը 82 տարեկան հասակում գնաց ծայրայեղ քայլի՝ հացադուլի: Եւ անյողդողդ մնաց բազմաթիւ՝ նոյնիսկ ամենաբարձրաստիճան պետական այրերի յորդորներին: Եւ հացադուլը սկսելուց մէկ շաբաթ անց դադարեցրեց միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջամտութիւնից յետոյ:

Ազգային խնդիրների վերաբերեալ Վ. Համբարձումեանի դիրքորոշման մի կարեւոր դրսեւորումն է նաեւ նրա վերաբերմունքը հայոց լեզուի նկատմամբ, որ կարելի է մէկ բառով անուանել «**պաշտամունք**»: Ինքը լինելով հայոց լեզուի ջերմ պաշտպանը, ջանացել է ամեն կերպ նպաստել Հայաստանում մայրենի լեզուի կիրառութեան արմատաւորմանը, ամրապնդմանը: Նրա կարգադրութեամբ է, որ սկսեալ 1946 թուականից Հայաստանի գիտութիւնների ակադեմիայում (միակը Խորհրդային Միութեան մէջ) ամբողջ ներքին գրագրութիւնը կատարուել է տեղի մայրենի լեզուով:

Վ. Համբարձումեանի կեանքի վերջին տարիները համընկան Հայաստանի համար ծանր ժամանակների հետ: Եւ, բնականաբար, ժամանակի դժուարութիւններից անմասն չմնաց նաեւ մեծանուն գիտնականը: Նա իր ժողովրդի մեծ մասի հետ ապրեց 1990-ականների սկզբի ծանր պայմաններում, սակայն երբէք չտրտնջաց, չկորցրեց իր ժողովրդի լուսաւոր ապագայի հաւատը: Այսօր էլ նրա տանը պատին կարելի է տեսնել մեծն Թումանեանի «Լուսաւորչի կանթեղը», գրուած մեծն Վիկտոր Համբարձումեանի ձեռքով 90-ականների մութի ու ցուրտի տարիներին:

«. . . . . .
Ով անմեղ է, լիքը սիրով,
Ու հաւատով անսասան,
Ով նայում է վառ յոյսերով
Դէպի Հայոց ապագան,-

Նա կը տեսնի էն մշտավառ
Ջահը՝ կախուած երկընքից,
Ասես՝ Աստծու աչքը պայծառ
Հսկում է ցած երկնքից»:

Վստահ կարելի է ասել, որ Վիկտոր Համբարձումեանը տեսել է Լուսաւորչի կանթեղը...[1]

[1] Հեղինակը սիրով շնորհակալութիւն է յայտնում Վիկտոր Համբարձումեանի դստերը՝ Կարինէ Շահբազեանին, այս շարադրանքը մանրամասն նայելու եւ օգտակար դիտողութիւնների համար:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ «ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԱՍՈՐԻ« ՊԱՏՄՎԱԾՔԸ

Թուրքական բռնակալության կողմից իրականացվող տնական ջարդերը և երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական անտանելի պայմանները պատճառ դարձան հարյուր հազարավոր հայերի արտագաղթի իրենց բնօրրանից: Դեպի աշխարհի չորս ծագերը հեռացած հայ ընտանիքներից մեկն էլ Վիլյամ Սարոյանի Արմենակ և Թագուհի ծնողներն էին, որ հանգրվանեցին հեռավոր Ամերիկայի Ֆրեզնո քաղաքում, ուր և 1908-ին ծնվեց Վիլյամ Սարոյանը:

20-րդ դարի համաշխարհային գրականության լավագույն դեմքերից մեկի՝ Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունների մայր երակներից մեկը բարությունն է: Սարոյանը գրում է, որ եթե մի բան կա, որ իրեն դրդել է գրելու՝ «ասելն է, որ մարդը մարդու եղբայրն է«, քանի որ այդ եղբայրացման միջոցով միայն կարելի է գտնել այն, ինչ կյանքում հավերժական ու բարձր արժեք է: Գրողի մարդասիրական գաղափարները հաճախ են հասնում փիլիսոփայական խտացումների: Սարոյանը այն համոզումն ուներ, որ մարդն առհասարակ ընդունակ չէ գազանությունների, գազան է դառնում ամբոխը: Նա, նաև իր անձնական կյանքի օրինակով, լավ գիտեր, որ աշխարհում վատն ու չարը տիրապետող ուժեր են, ու հազիվ թե գտնվի մի մարդ, որին անծանոթ լինի դառնության բաժակը: Չնայած այդ իրողությանը, գրողը լեցուն է մեծ հավատով ու սիրով առ մարդկությունը: Հանուն մարդու էլ նա ստեղծել է իր բազմաժանր գրականությունը, հանուն նրանց, ում մասին իր «Մարդկության տունը» պատմվածքում գրել է. «Նրանք բարի են, բարի ու հուսաբեկ՝ ահա թե ինչու ես հայտնաբերեցի արվեստը, ես չէի ուզում, որ նրանք հույս չունենան»[1]:

Չխորանալով գրողի հարուստ գրականության մեջ՝ անդրադառնանք նրա գործերից միայն մեկին՝ «Յոթանասուն հազար ասորի« պատմվածքին, որը գրողը նվիրել է «... Այովային, Ճապոնիային, Հայաստանին, Ասորեստանին և մարդկային ցեղին, այդ ցեղի արժանապատվությանը, բոլոր ապրողների եղբայրությանը»[2]: Ինչո՞ւ հենց այս պատմվածքին: Պատասխանը տալիս է ինքը՝ գրողը. «Ես լուրջ պատմվածք եմ գրում, գուցե ամենալուրջը, որ երբևիցե գրելու եմ» (էջ 18): Սարոյանը պատմվածքում սուր բախումներ ու երևակայությունը բորբոքող դեպքեր չի ներկայացնում: Նա, իրար հյուսելով հեղինակային խոհն ու պատմվածքի սյուժեն, ստեղծում է ներքին ասելիքով հարուստ մի

---

[1] ***Վ. Սարոյան,*** Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1988, էջ 462:

[2] ***Վ. Սարոյան,*** Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1986, էջ 27: (Այս գրքից բերված մեջբերումները այսուհետ կնշվեն էջով - Ա. Ա.):

գործ, ինչն առհասարակ բնութագրական է նրա մտածողությանն ու գրելառճին:

Իր պատմվածքում գրողը կյանքի գնահատման չափանիշ է դարձնում մարդկային քաղաքակրթության աստիճանը, ժողովուրդների մեջ հավասարության սկզբունքը, մարդ արարածի գերակայությունը բոլոր ազգայնամոլական նկրտումների հանդեպ: Խոսելով ռուս գրականության մասին՝ Սարոյանը գրել է, որ այն բովանդակում է պարկեշտություն, անկեղծություն, անմիջականություն, «... մի խորունկ, շատ խորունկ սեր»: Այդպիսին է նաև Սարոյանի գրականությունը: Եվ իրոք, բարությունը, արդարությունը, ազնվությունը, կարեկցանքը ուրիշի ցավերին ու հոգսերին՝ Սարոյանի հերոսների նկարագրի անբաժանելի մասն են, որ ակունքվում են ու սնվում հենց հեղինակի էությունից: Սարոյանը մի առիթով խոստովանել է, թե իր բոլոր գրքերի գլխավոր հերոսը ինքն է իր խոհերով ու դատողություններով: Գուցե հենց սա է պատճառը, որ պատմվածքի գլխավոր հերոսի կերպարը տրված է թեթև նրբագծերով, թեև եղածն էլ լիուլի բավական է՝ հանձին նրա տեսնելու աշխարհի նենգ ու մութ ուժերի կողմից իրականացված ջարդերի ու ոչնչացումների քաղաքականության ցավալի հետևանքները: Այլ խոսքով՝ Սարոյանը գրում է աշխարհի գոյություն չունեցող ամոթի մասին: Աշխարհ, որ թվում է, թե հավասարաչափ ամենքինը պիտի լիներ: Եվ գրում է գերագույն մի անկեղծությամբ՝ աղոթք անելու պես:

Սարոյանի ծննդավայրը Վանա լճի շուրջը երրորդություն կազմող Մուշ, Վան, Բիթլիս հայկական բնակավայրերից վերջինս էր, քաղաք, որ որպես մշտական գոյ բաբախում էր նրա հոգում, իսկ սրտի խորքում ապրում էր արհավիրքների միջով անցած մի ողջ ժողովուրդ, ինչը թախիծի որոշակի երանգներ էր հաղորդում նրա գեղարվեստական խոսքին: Այդ տխրությունը գալիս էր առհասարակ աշխարհի ու նաև փոքր ժողովուրդների (և առաջին հերթին հայ ժողովրդի) ճակատագրի նկատմամբ գրողի ունեցած մտահոգություններից: Հիշենք գրողի խոսքը. «Թեև գրում եմ անգլերեն... բայց ինձ համարում եմ հայ գրող»: Այո՛, Սարոյանը գրում էր անգլերեն, բայց նրա գրականության մի ծավալուն մասը «հայերեն կխոսեր»:

«Բեվերլի հիլզի հեծանվորդը« գրքում խոսելով երգիչ Արմենակ Շահմուրադյանի մասին՝ Սարոյանը հայ մարդու մասին իր ունեցած բնութագիրը արտահայտում է մելամաղձոտություն, բարկացկոտություն, միայնակություն, հպարտություն, քնքշություն բառերով: Կարծում ենք՝ այդպիսին են գրողի կերտած հերոսների մեծ մասը:

Սարոյանական գրականությունը բնութագրվում է անգլերեն լեզվի, ամերիկյան հողի և հայկական ոգու եռամիասնությամբ: Մի ուրիշ եռամիասնություն էլ Սարոյանի գրականության մեջ կազմում են ծննդավայր Ամերիկան, ժառանգական Հայաստանը և զգայական Բիթլիսը: Իր՝ տեսած ու չտեսած Հայաստանի ոգին նրան էր հասնում նախնիների կանչով, արյան հոսքով, նաև կոմիտասյան երաժշտությամբ, որի հուզաթաթավ մեղեդիների տակ սիրում էր ստեղծագործել:

«Յոթանասուն հազար ասորի» պատմվածքը (գրվել է 1933-ին), ինչպես ջրի մեկ կաթիլը, ներկայացնում է սարոյանական գրական ծովի բաղադրությունը, ավելին, նրա հարուստ ստեղծագործության լավագույն էջերից մեկն է, ուր գրողը չի ջանում պատմվածք «սարքել«: Գրվածքի մեջ «ոչինչ չի կատարվում»: Գրողը պարզապես պարզ լեզվով շարադրում է մարդկանց ու ժողովուրդների ցավի ու ողբերգությունների մի տխուր

պատմություն:

Սարոյանը իր պատմվածքում այն միտքն է հայտնում, որ միայն եղբայրական հավասարության ու արդարության դեպքում է, որ մի ասորի վարսավիր Բաղալ կարող է յոթանասուն հազար ու նույնիսկ յոթանասուն միլիոն ասորու արժեք ստանալ:

Իր «Հայրիկ դու խենթ ես» գործում Սարոյանը գրում է, որ ինչի մասին գրելու վճիռը եթե ուրիշ գրողների համար գործի կեսն է, իր համար գործն ամբողջովին է: Գրել չինացիների, ճապոնացիների, մեքսիկացիների, արաբների, ասորիների և այլ ժողովուրդների ճակատագրի մասին Սարոյանի համար երբեք պատահական բնույթ չի կրել, ավելին, նա այդ ամենի մեջ դրել է իր «տաքսիրտ հայի» մտահոգություններն ու մտորումները: Հարցազրույցներից մեկում գրողը հստակ ձևակերպել է իր այս կացությունը. «... ոչ մեկը չպետք է մի պահ կասկածի, որ ես իր հետ չեմ»[3]: Ուրեմն դիպվածային չէ, որ Սարոյանը անդրադառնում է ասորի ժողովրդին հասած ծանր ճակատագրին:

Սարոյանի «Յոթանասուն հազար ասորի« պատմվածքը լեցուն է ենթատեքստով և շոշափում է աշխարհի ընթացքի կարևորագույն խնդիրներից մեկը՝ փոքր ազգերի հավասարության ու իրավունքների խնդիրը: Գրողի տեսակետն այն է, որ փոքր ազգ լինելը չի նշանակում փոքր ճակատագիր ունենալ, չի նշանակում նաև անհույս վիճակում ապրել: Չէ՞ որ ազգերի ոչնչացման պատճառներից մեկն էլ «վաղվան հույսի» բացակայությունն է:

Ժամանակին ստիպել են մի ողջ ժողովրդի վերանալ այս աշխարհից: Հիմա էլ տարագիր դարձած ասորի մարդն է ստիպված մոռանալ իր ժողովրդի անցյալն ու իր պատկանելությունը այդ ժողովրդին: Քննարկվող պատմվածքի առանձնահատկությունն այն է, որ այն պատկանում է Սարոյանի այն գործերի թվին, որոնց մեջ գրողը բարձրացնում է ոչ միայն մերժված մարդու, այլև ժողովուրդների դատապարտվածության թեման: Այս պատմվածքը կարելի է ասել ուղղակիորեն առնչվում է հայության հոգս ու ցավին: Ասել է՝ այն ոչ միայն ասորի ազգի կորուստների մասին է, այլև սթափեցման խոսք՝ ուղղված հայությանը:

Աշխարհի նույն կողմերից (Սարոյանը կասեր փոքրասիացի) լինելու հանգամանքով երկու ազգերի ճակատագրերն ունեն շատ ընդհանրություններ: Արհավիրքներով ու աղետներով լեցուն նույն ճանապարհի ուղևորներն էին հայերն ու ասորիները, ինչին գալիս էր ավելանալու՝ «նրանց քիթը մեր քթի նման է, աչքերը՝ մեր աչքերի, սիրտը՝ մեր սրտի» (էջ 24): Դարեր անց՝ այդ ժողովուրդների մեկից մնացել է մի քանի միլիոն, մյուսից՝ ընդամենը յոթանասուն հազար:

Ապրողները պարտավոր են չմոռանալ մեռածներին, որովհետև հիշելը նշանակում է ցավ ունենալ ու հույս, հիշելը նաև նշանակում է ապրելու հավատ ունենալ, ահա սա է գրողի գլխավոր ասելիքը այս պատմվածքում:

«Սև թաթարը« պատմվածքում արված մի ցանկություն ընդհանրացնում է Սարոյան գրողի վերոհիշյալ գաղափարադրույթը. «Աշխարհում սև թաթարներ քիչ են մնացել: Ես չեմ ուզում, որ մեր ցեղը վերանա» (էջ 92): Նկատենք, որ վերապրելու թեման Սարոյանի գրականության բնութագրական բաղկացուցիչներից մեկն է:

---

[3] ***Վ. Սարոյան,*** Ընտիր երկեր, հ. 4, Երևան, 1991, էջ 386:

«Յոթանասուն հազար ասորի« պատմվածքի հերոսը դրամատիկ կերպար է: Իր ժողովրդի ողբերգական անցյալն ու ներկան իրենց հետքն են թողել նրա էության վրա: Նա հազարավոր այն դատապարտվածներից մեկն է, որ գտնվում է կյանքի ստորոտում, չունի ոչ մի հույս ու երազանք վաղվա նկատմամբ: Միայնակ մարդն է նա՝ Բադալը, երբեմնի հզոր ազգի ցիրուցան ծվեններից մեկը:

Սարոյանի հերոսներից քեռի Խոսրովն այն միտքն է հայտնում, որ հայրենիքը կորցրած մարդու աչքում ոչինչ արժեք չունի: Միանգամայն իրավացի դիտարկում է, բայց գրողը այն համոզումն ուներ, որ պիտի կարողանալ դիմագրավել կյանքի բարդությունները, լցվել լավատեսությամբ: Ողբերգությունն այն է, որ Բադալը օտարված է ինչպես իր շրջապատից, այնպես էլ իր ազգակիցներից: Նրա մեջ մարել է կյանքի կրակը, ծիծաղելու ունակությունը «... շրթունքներն ասես ժպտում էին, բայց տխուր»: Նա ապրում է մի աշխարհում, ուր «փողով մարդիկ« ծիծաղում են մահվան վրա, հզորները՝ ոչնչացնում թույլերին: Նրա նմանների համար կյանքը մղձավանջային սպասում է դարձել, ոչ գործնական սպասում այն բանի, թե օրերից մի օր գուցե իրենց բախտը բացվի: Հինավուրց ցեղի նորօրյա որդին՝ ինչպես մարմնով այնպես էլ հոգով ծերացած Բադալը, ասորերեն գրել-կարդալ չգիտի և անգամ ուզում է իր նախնիների հողը մոռանալ: Վիշտն իր ամուր կնիքն է դրել նրա ողջ նկարագրի վրա, ու ելման դուռը չկա:

Պատմվածքը շարադրված է որոշ հումորիստական երանգներով, բայց այդ ծիծաղի տակ հեգնանք ու խոր թախիծ կա: Առհասարակ պետք է նկատել, որ Սարոյանի կերտած շատ հերոսների դեմքից անբաժան է թախիծը, մանավանդ՝ երբ այդ մարդիկ հայ են: Մտաբերենք «Գյուղացին» պատմվածքի հերոս Սարգսին, «Խեղճուկրակ արաբը» պատմվածքից Խոսրով քեռուն, գրողի գերդաստանի շատ անդամներին՝ նրա ինքնակենսագրական գրքի «Գերդաստանը» վերնագիրը կրող գլխից և այլն: Նրանք բոլորը օտարության մեջ իրենց տեղը չգտած մեն-մենակ մարդիկ են, ինչ-որ տեղ իրեն՝ գրողին, հիշեցնող տիպարներ, որ դժգոհ են կյանքի կառուցվածքից: Աշխարհը լի էր անարդարություններով, ինչը և սարոյանական գրականությանը հաղորդում էր այդ տխրության երանգները: Մի տխրություն, որին հավելվում էր նաև Սարոյանի սիրած գրողների՝ Մոպասանի, Չեխովի և այլոց ստեղծած թախծալից գրականության հետքը, նաև իր Արմենակ հոր հայացքից ծորացող վիշտը: Տխրություն, որ ըստ էության խեղճուկրակություն էր, բառ, որ Սարոյանի խոսքերով ասած՝ «անկարելի է անգլերեն թարգմանել»: Այս ամենով հանդերձ, Սարոյանն իր հերոսին, ում համար իր ժողովուրդը հեռավոր «մի հին պատմություն է», միայնակ չի թողնում: Ավելին, նրա շուրջ գրողը ստեղծում է մի անշոշափելի համակրական դաշտ, քանի որ ուզում է ասած լինել, որ անգամ փոշիացման ու մահվան դուռը հասած մարդը ոչ միայն չպիտի մոռանա, այլև չի կարող մոռանալ մի բան, որ էություն է ու արյուն:

Սարոյանի մի շարք գործերում՝ «Մարդկային կատակերգություն», «Վեսլի Ջեկսոնի արկածները», նաև «Յոթանասուն հազար ասորի» և այլն, դատապարտված են պատերազմները, պատերազմ (այս դեպքում գրողը նկատի ունի առաջին աշխարհամարտը), որ, ինչպես գրում է այս պատմվածքում, չարիք դարձավ հայության համար, պատերազմ, որը «...մենք չէինք մղում, բայց որտեղ կոտորվում էինք մենք» (էջ 23): Բայց մարդկային մեծագույն չարիքը գրողը համարել է ջարդերն ու ազգերի ոչնչացումները,

ինչը անդառնալի կորուստներ ու ողբերգություններ է պատճառել ողջ մարդկությանը:

Վիլյամ Սարոյանի քննարկվող պատմվածքը, ինչպես նաև համանման թեմաներով գրված մյուս գործերը մեզ ասում ու հաստատում են, որ հայրենի հող ու ջրից զրկված, օտարության ափերում դեգերող, սեփական ժողովրդի դառը ճակատագիրը կրող ամեն մի ներգաղթածի կյանքը թեև ընթանում է յուրովի, սակայն նրանց բոլորին միացնում է դատապարտվածության ու կորսվածության վիճակը: Նրանցից ամեն մեկը Սարոյանի «Վարսավիրը, որի քեռու գլուխը կրծեց կրկեսի վագրը» պատմվածքի Միսակ քեռու նման ստիպված է գոյության կռվում ամեն պահ իր գլուխը դնել կատաղած վագրի (նույնն է, թե կատաղած կյանքի) երախը: Սարոյանի գրականության գերագույն խնդիրն էր աշխարհի նյութապաշտության ու դաժանության պայմաններում արդարության ու բարության սերմեր տարածել, օգնել մարդուն հայտնաբերելու դեպի ինքն իրեն տանող ազնվացման ճամփան, նաև՝ օգնել հային, որ հայ մնա:

Սարոյանի գրականության մեջ արտահայտված շատ գաղափարներ ժամանակակից աշխարհում էլ շարունակում են հրատապ ու արդիական մնալ: Մեր դժվարին ու հակասական օրերում էլ, ցավոք, երազանք են մնում մարդկանց ու ժողովուրդների իսկական բարեկամության ու հավասարության տեսլականները: Սարոյանի գրականությունը մարդկության անցնելիք ուղու այն անանց արժեքներից է, որ մեզ հար տանելու է կյանքի կատարելագործմանն ու ազնվացմանը:

Սարոյանական գրականության կարևորվող արժեքներից մեկն էլ մեր օրերում այն է, որ այն յուրատեսակ հոգևոր կապ է ստեղծում հայության այն հատվածի համար, որը, գրողի կերտած Բաղալի նման, ցավոք, այլևս հայերեն դադարել է խոսել ու կարդալ:

Սարոյանը մահացավ 1981-ին: Բայց արդյո՞ք մահանում են մտքի իրական մեծերը: Իրականում Սարոյանի սիրտը հավերժական բնակություն է հաստատել լեռներում, սիրտ, որ այստեղ չէ ու այստեղ է և գրողի կերտած Մեք-Գրեգորի պես շարունակում է ապրել ամենքիս մեջ, հնչեցնել իր ոսկեփողը՝ կյանքի ընթացքը փոխելու ու աշխարհի բարությունը շատացնելու համար: Աշխարհ, որին Սարոյանը *մարդկության տուն* էր անվանում:

Օտարները կարդացել են գրողի գործերն ու միշտ զարմացել: Զարմացել, որ այդ էջերում այդքան սեր կա դեպի մարդն ու աշխարհը, այդքան բարություն, այդքան կարեկցանք ու ցավ, լավատեսություն ու հույս: Այդ ամենի բացատրությունը Սարոյանը տվել է երկու բառով՝ «ՀԱՅ ԵՄ»:

ՆԱԻՐԱ ԻՄԿԱՆԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՍԵՐՆ ԱՆՄԱՀ Է, ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՌՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՎԱՅՐԿՅԱՆ...

Քո խորքում արմատն է մեր հայոց
Օվկիաններ շիվ տված ու անցած,
Տվել է հանճարը մեր հնոց
Քեզ ոգի ու ձիրք բյուրագանձ.
Դու բարու, գեղեցկի ու սիրո
Նույն խոսքն ես ասում աշխարհին,
Ինչ դարեր ասվել է մեր լեզվով՝
Սկսած Սաթենկան հորդորից...

Սիլվա Կապուտիկյան

Հայ գրականության անկրկնելի «բարի հսկան» հարյուր տարեկան է: Նրա անունը հաստատուն կերպով արմատներ է ձգել հայոց գրական Օլիմպոսում՝ բերելով նրան հայրենի եզերքի երախտիքն ու խնկարկումը:

«-Ի՞նչն եք ափսոսում Ձեր գրածների մեջ:

-*Ոչի՛նչ: Ո՛չ մի տող: Ո՛չ մի բառ*»[1],- «Գարունին» տված հարցազրույցում այսպես է արտահայտվել Սարոյանը, իսկ Կարիկ Պասմաճյանի հետ տեղի ունեցած զրույցում նա հայտարարել է. *«Այն ամենը, ինչ ասել եմ, իմն է, լավ է, ես տեր կկանգնեմ, ես տեր կկանգնեմ»*[2]: Եվ նա տեր եղավ իր խոսքին թե՛ Ֆրեզնոյում (որ, ի դեպ, իսպաներեն նշանակում է հացենի), թե՛ Բիթլիսում, թե՛ Երևանում: Հրանտ Մաթևոսյանը, հիմնվելով այս հայտարարության վրա, մի ուշագրավ զուգահեռ է անցկացնում ակունքներով ազգային էպոսից սկիզբ առնող Վիլյամ Սարոյան անհատի ու Արտաշես արքայի որդի Արտավազդի միջև: Արտավազդը, տեսնելով այն կոտորածը, ողբն ու սուգը, որ երկրում մահամերձ հոր համար էր արվում, ընդվզում է՝ ես ավերակացս ինչպե՞ս թագավորեմ: Դրան հետևում է հոր անեծքը.

Եթէ դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք,
Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս,
Անդ կալցես և զլոյս մի տեսցես:

---

[1] «Գարուն», 1978 թ., թ. 2:

[2] **Վ. Սարոյան,** Երկեր 4 հատորով, հ. 4, Ե., 1991 թ., էջ 383:

«Այսինքն Մասիսն ի վեր առ Աստված քո գնացքը թող բեկվի, քո չարությունը թող քեզ կալանի ու կաշկանդի, և չարժանանաս դու քո Աստծո տեսքին, քանի որ ստացվածքիդ վրա քո խոսքը տիրակալ թագավորի չեղավ, այլ՝ գանգատավոր ստրուկի,- մեկնաբանում է Մաթևոսյանը, ապա շարունակում,- Միայն խիզախներին է տրված բանաստեղծ ու արքա լինել… Սարոյանն իր խոսքի տերը եղավ, եղավ զինվորաբար խիզախ և արքայորեն կարգադիր: Ո՛չ նախնիների իր անցյալից, ո՛չ իր ժամանակից ոչինչ չանտեսեց, ոչինչ չուրացավ, ոչ ոքի չլքեց: Նա աշխարհ ստեղծեց և այդ աշխարհում ամեն ինչի ու բոլորի մեջ ինքն է՝ իր համապարփակ միտքը, իր մեծ սիրտը, իր կենարար ոգին»[3]:

Սարոյանի մասին շատ է խոսվել ու ինչքան էլ խոսվի, դեռ ասելիք կա: Ամերիկյան նշանավոր գրողների՝ Շերվուդ Անդերսոնի, Թոմաս Վուլֆի, Ֆոլկների, Հեմինգուեյի, Սթայնբեկի աստղաբույլը համալրվեց սարոյանական մշտնջենական ներկայությամբ՝ ուրույն նրբերանգներով հարստացնելով 20-րդ դարի ամերիկյան արձակը: Իսկ սա նշանակում է, որ Սարոյանն իր գրական ճանապարհն սկսել է ոչ թե իրեն հարմարեցնելով ժամանակին, այլ՝ իրեն պարտադրելով, սկսել է առանց իր ինքնությունից որևէ բան զիջելու ու կորցնելու, առանց խաբելու նախ ինքն իրեն, իսկ հետո՝ նաև իրեն լսող, իրեն կարդացող, իր ետնից գնացող մարդկանց[4]: Զուր չէ, որ ամերիկյան գրաքննադատությունն անգամ արժևորում էր Սարոյանին հատկապես ազգային ներկապնակից այդպիսի հաջողված վրձնահարվածներ ստանալու համար, ինչը «օտարացման» ճամփան բռնած հազարավոր մարդկանց զինում էր պայծառ կենսասիրությամբ, կյանքի նկատմամբ հավատով ու մղում էր ամենապարզ մարդկային կապերի ամրապնդման, հարազատացման. «Ֆրեզնոյի հայերի կյանքը գրողի հայտնագործած թերևս լավագույն նյութն է»[5]:

Առասպելի պես ապրեց ու մարդկության ստեղծած առասպելական կերպարներից մեկը դարձավ Սարոյանը: Նրա բարոյական ու գեղագիտական սկզբունքներն էին. «Նկարագրել մարդուն այնպես, ինչպես եղբոր և գրել այնպես, ինչպես ձյունն է գալիս»: «Ես զարմանում եմ, շփոթվում, դժգոհում և ցնցվում, երբ ինձ ասում են, թե դատելով իմ գրվածքներից՝ ես կիսախելագար եմ: Եթե դա ճիշտ է, ապա մարդկանց մեծ մասը, որը չի գրում, ոչ թե «կիսա», այլ լրիվ խելագար է…Որտեղ ես՝ այնտեղ անհեթեթ վարքը: Մարդիկ կշարունակեին ապրել նաև ճշմարտությունն ասելով»[6]:

Աշխարհին նայելու նրա կերպի մեջ կա մի բան, որ զուտ հայկական է ու դժվար նկատելի առաջին հայացքից. հայկական խաղաղություն ամերիկյան անընդմեջ զբաղվածության աբսուրդի մեջ: Դրանով է բացատրվում նաև գեղեցկության զուտ սարոյանական ըմբռնումը: Գեղեցիկն ամենօրյա կյանքն է, բարություն սերմանելն ու սիրով ամոքելը: «Քո կյանքի ժամանակը» պիեսի հերոսը՝ Զոն, ասում է. «...Հենց որ գեղեցկության թեկուզ մի բեկոր եմ գտնում մեկնումեկի հոգում կամ ինչ-որ բանի մեջ, որտեղ թվում էր միայն ապականությունն ու մահը պիտի բուն դրած լինեին, նոր եմ հասկանում, որ մեր կյանքը լի է անսպառ բարությամբ»[7]:

---

[3] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ, զրույցներ, էսսեներ, հուշեր, Ե., 1999 թ., էջ 5:

[4] Տե՛ս **Դ. Գասպարյան**, Հայ գրականություն, Ե., 2000 թ., էջ 199:

[5] **Վ. Սարոյան,** հ. 4, էջ 424:

[6] Իմ անունն է Սարոյան, Ե., 1994 թ., էջ 32:

[7] **Վ. Սարոյան,** Երկեր 4 հատորով, հ. 2, Ե., 1987 թ., էջ 111:

Նրա «ես»-ը ազգային հիմքեր ունի: Անհնար է պատկերացնել Սարոյանին հայ իրականությունից դուրս, թվում է՝ ամենուր լսվում է նրա հուժկու խոսքի արձագանքը. «Ուր որ կէրթաս, պոռա Հայաստան»: Չնայած որ նրա գործերում արտացոլվել են ամերիկյան հարուստ գրականության ավանդույթները, ինքն էլ իրեն համարել է ամերիկյան գրող, սակայն նրա մեջ իր սկզբնական ու վերջնական հաղթանակն է գտել նաև հայի աննկուն ոգին: «Ես կուզեմ հասկցվի, թե ամենեն ահագին արժեքն, որ ես ունիմ իբր ազգ, իբր գրող՝ հայ ըլլալն է… ես ուրախ եմ ըսել, հպարտ ալ եմ, որ ըսեմ…թե մենք ատ Ժողովուրդն ենք… չթողես ոևէ մեկ չգիտնա, թե դու հայ ես, չթողես ոևէ ժամանակ մոռցվի քու գրությանդ մեջ, թե հայ ես, և չթողես մոռնալ, թե դուն ան Սարոյան ես, որ կկոչվի Վ. Սարոյան»[8],- մի առիթով ասել է նա: Հայ լինել նշանակում է խենթ լինել ու լինել մենակ:

Կյանքում ձախողված մարդկանց նկատմամբ նրա անպայման սերը գալիս է հենց նրա արմատներից՝ ազգային պատկանելության կենսագրական նախահիմքից. «Հայերին համարում էին երկրորդ կարգի մարդ, նրանց նեղում էին, բռնադատում, նրանց ատում էին, իսկ ես հայ եմ… Արհամարհվածների թվում լինելն ինձ մի դառը ուրախություն է պատճառում»[9]: Մարդկային կապերի արժևորումը նույնպես գալիս է նրա հայկականությունից: Սարոյանի հյուսած բարության աշխարհում գերակշռում են ազնիվ միայնակները, անտեսվածները: Նա թշվառ, արհամարհված, պատառոտված կոշիկներով իրեն շատ սիրելի մարդկանց դարձնում է իր գործերի հերոսներն ու նրանց կյանքի ետնախորշերից հրում է բեմ՝ թույլ չտալով անգամ զգեստափոխվել: Ու թեև նրանք այս կյանքում հաջողության չհասած, տխուր պարտությամբ ապրող, բայցև կենսասիրությունը երբեք չկորցնող սովորական մարդիկ են, հաճախ հենց գրողի միջավայրից՝ դերասաններ, բանաստեղծներ, երաժիշտներ, հանձինս Սարոյանի, գտան իրենց հոգու խորքերը թափանցելու կարողությամբ ոգեշնչված, իրենց համար անսահմանորեն ցավող մի կենսագրի: Մի առիթով նրան հարցրին Չարլի Չապլինի մասին, և նա այսպես պատասխանեց. «Այս մարդ ունի գութ՝ խառնված ծաղր: Անոր ամենեն մեծ ուրախությունն էր՝ պստկցուցել անոնք, որ գոռոզ են, անոնք, որ իրավունք չունին ուրիշներու նեղեն: Անի պստիկ մարդկանց պաշտպանն էր, ուրախացնողն էր… Անոր պատմություններ սերի պատմություններ էին: Սեր փնտրող էր: Եվ միշտ մենակ կանցներ-կերթար-կքալեր»[10]:

Սարոյանի գրական ծագումնաբանության համար կարևոր է այն, որ նա գրականություն է բերում ոչ թե պահի թելադրանքով ստեղծված հպանցիկ տպավորություններ, այլ ժամանակի խորքից եկող մեծ ճշմարտություններ: «Մի քանի այլազան մարգարեություններ՝ այսպես, թե այնպես երաշխավորված իրականանալու» վերնագրով էսսեում նա գրում է. «Ես չեմ հայտարարում, թե օժտված եմ գերբնական ուժով կամ մեկ ուրիշ տխմարությամբ: Պարզապես զանազան տարբեր իրեր կարող եմ որպես բյուրեղ օգտագործել, ուշադիր նայում եմ ու հայտնաբերում ճշմարտությունը»[11] կամ «Կարծո՞ւմ եք, որ ես իմ մասին եմ գրում. ես գրում եմ ձեր բոլորի մասին: Իմ ընթերցողների մեծ մասը

---

[8] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ,… էջ 165:

[9] **¸. ¶ ³ ë å ³ ñû ³ Ý,** Ð ³ û ·ñ ³ Ï ³ ÝáõÃûáõÝ, ¿ç 198:

[10] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ,… էջ 158:

[11] Իմ անունն է Սարոյան, էջ 52:

կարդում է ինձ, երբ ուզում են հավատալ իրենց ներքին ճշմարտությանը»[12]:

Բարությունը ամենուր է, երբեմն այն ծվարում է մարդկային հոգու ամենախոր շերտերում և մեծ ուժ, հավատ է հարկավոր այն լույս աշխարհ բերելու համար: «Այն տարիներին, երբ մարդկանց մերձեցնում էր միայն տառապանքը, անհնարին էր դիմադրել Սարոյանի ձայնում հնչող բարությանը՝ Սարոյանի, որը յուրաքանչյուրին դիմում էր որպես հարազատ եղբորը»,-գրում է ամերիկյան գրաքննադատ Ալֆրեդ Քեյզինը: Այս զորեղ տարերքի՝ բարության առատությունն ընկալում ենք հենց իր՝ Սարոյանի բնորոշմամբ, և «դա հասարակ ու հին է, ինչպես աշխարհը՝ ավելի լավ է լինել բարի, քան լինել չար», «փնտրի՛ր բարին ամենուրեք, և թո՛ղ նա լինի ազատ և աներկյուղ… Արթնացրո՛ւ առաքինությունը, ում սրտում էլ որ նա գաղտնի ու տրտում թաքնվելիս լինի աշխարհի սարսափներից ու ամոթից..», «մի ամաչեք լինել բարի ու քնքուշ», «ատեցե՛ք չարությունն ու ստորությունը, բայց ոչ չար ու ստոր մարդկանց»,- ասում է Սարոյանը՝ քաջ գիտակցելով, որ բնությունից նախաստեղծ բանական մարդ արարածը բարի է: «Քո կյանքի ժամանակը» պիեսի հերոսներից մեկը՝ ոստիկան Քրափը, հասկանում է, որ աշխարհում «ինչ-որ բան ինչ-որ տեղ սխալ է», և իր ենթագիտակցության ծալքերում բուն դրած բանական արարածը փաստում է նրա բերանով. «Մեկ-մեկ զգում եմ, որ ինձ ստոր անասունի պես եմ պահում. ատում եմ մարդկանց մենակ նրա համար, որ խեղճուկրակ են, աղքատ ու սոված-ծարավ, հիվանդ կամ հարբած: Բայց հենց որ վարչությունում մի փքված դդմագլուխ եմ տեսնում, հանկարծ դառնում եմ հետը հաճ ու հավան, հացին յուղ եմ քսում, որ սիրտը շահեմ: Էն էլ ո՞ւմ: Ով որ աչքիս փուշն է: Ու զզվում եմ ինձանից»[13]:

Բնության մեջ ցավի իրողությունը պարտադրում է, որ կենդանին չհոշոտի սեփական մարմինը: Մարդու համար այդ նույն ցավի համախտանիշը ցավն է իր նմանի հանդեպ, կարեկցանքը, սերը, բարությունը: Սարոյանի հերոսներն ամուր կապերով են կապված մեկը մյուսին, նրանք ապրում են մեկը մյուսի բախտով, ցավում են մեկը մյուսի համար, որովհետև «կյանքում միշտ էլ ցավ կլինի» և ճակատագրական պահին միշտ էլ ցանկալի ու անհրաժեշտ է մտերիմ, հարազատ մի հենարան ունենալ: Այդ ցավը երբեմն մինչև վերջ չի բացահայտվում, բայց մնում է որպես բառերի չվերածված, սակայն մարդկային մի ներքին ըմբռնումով հասկացված: Ցավը նաև հուշ է, մենք հաճախ մոռանում ենք այն ամեն լավն ու բարին, որ կատարվում է մեզ հետ, բայց ենթագիտակցության հուշ-մատյանում գրառվում են ցավի մեր բոլոր հիշողությունները. «Եթե հայրս գործից գար, բռներ իմ ձեռքից և ասեր, թե գնանք ման գալու, դիտենք խաղողի վազերը, ծաղիկները և լսենք թռչուններին, ես չէի հիշի, որովհետև այդտեղ ցավ չկա»[14]:

Աչքերը հոգու հայելին են, միայն բարի մարդը կարող է լաց լինել, երբեմն նույնիսկ առանց արցունքի և այդ «աչքեր ամենեն մեծ դուռներ են, ատ դուռնեն մեր սրտին մեջ կուգա աշխարհք»[15]: Այդտեղ է ամփոփվում նրա հերոսների թախիծը, որը համամարդկային չափեր է ստանում և կենսասիրությամբ ու հումորով է պարուրված: «Մարդկային կատակերգության» հերոսներից մեկը՝ նպարավաճառ Արան, նոր երկրում արմատներ է փորձում գցել, որդի ունի, նպարեղենի խանութ: Որդու աչքերում ծվարել է մի անհաս-

---

[12] **Վ. Սարոյան**, հ. 4, էջ 388:

[13] **Վ. Սարոյան**, հ. 2, էջ 107:

[14] **Վ. Սարոյան, հ,** 4, էջ 396:

[15] **Լ. Մկրտչյան,** Վ. Սարոյանը մոտիկից, Ե., 1978 թ., էջ 29:

կանալի դժգոհություն, հոր կողմից որդու ամենաթեթև քմահաճույքն իսկ բավարարելու պատրաստակամությունը արտահայտվում է նրան խանութի ամենալավ խնձորը, կոնֆետը, դեղձը, տանձը առաջարկելով, բայց որդին անընդհատ դժգոհ է, ուրախությունը խույս էր տվել այդ մանչուկի աչքերից: «Բնական է, որ թախիծ կար նրանցից յուրաքանչյուրի աչքերում: …Հայրը նայում էր որդուն և նրա մեջ տեսնում էր իր սեփական դիմագծերը: Իր իսկ աչքերն էին և աչքերի խորքում՝ իր իսկ դժբախտությունը…Չգիտես ինչու, նա հանկարծ համակվեց զայրույթով և մտքում անիծեց այն մարդկանց, որոնք այժմ ապրում են յոթ հազար մղոն հեռու, և մի ժամանակ թեև հարևան էին, իրենց նկատմամբ եղել էին անմարդկային անողոք, կամ առնվազն տգետ.«Ախ, շներ», հայհոյեց նա սրտի խորքից»[16]:

Նրա ստեղծագործություններն օգնում են, որ մարդը մարդ մնա կամ էլ դառնա ավելի մարդասեր, կարեկցող, բարյացակամ: Այդ հերոսները՝ քեռի Արամը, Միքայելը, խեղճուկրակ արաբը, Հոմեր Մաքոլին, Վեսլի Ջեքսոնը, Ջոնին, Մեք-Գրեգորը և նրա հանճարեղ երկերի շատ ուրիշ կերպարներ կյանքի ազնիվներն են ու խորապես կապված են մեկը մյուսին սարոյանական ամենապարզ ու միաժամանակ ամենաբարդ զգացմունքով՝ սիրով: Սիրո պաշտամունքը նրա աշխարհընկալման սկզբունքներից է, ի՞նչ արժե սերը, եթե այն լրիվ չէ, այն ընդամենը ծիծաղելի պատմություն է: «Ինձ ծանոթ է ամբողջ տեսությունը Սարոյանի, այդ տաքսիրտ հայի, որ ամբողջ աշխարհն է գրկում ու համբուրում: Ես ավելի ճշմարիտ զայրույթ ու բողոք ունեմ մարդու և իր խոցելիության, ապականելիության, կաշառելիության դեմ, քան որևէ այլ գրող: Հիմա գուցե հարցնեք՝ «Ուրեմն, ինչպե՞ս կարող եք այսքան սեր ունենալ»: Այդ սերը կարգապահության արդյունք է: Ոչ մեկը չպետք է մի պահ կասկածի, որ ես իր հետ չեմ»[17]:

Ցանկացած երկ գրողի ստեղծագործ ներշնչմամբ հյուսված միկրոտիեզերք է, որին, արարելուց հետո, նա հայացք է նետում դրսից և որպես ինքնուրույն գոյություն արժևորում: Սարոյանի պարագայում կարծես թե հակառակն է տեղի ունենում. նա իր ստեղծածի մեջն է, իրեն և աշխարհը տեսնում է ներսից՝ մնալով նրա մի մասնիկը: Պատահական չէ, որ նրա ստեղծագործություններում շատ են երեխաների կերպարները: Այդ երեխաները շատ անգամ իմաստուն են, զինված մեծի հոգեբանությամբ, երբ խոսում են, քեզ թվում է մի ամբողջ կյանք են ապրել: Տարածաժամանակային այս պարադոքսի պատճառն այն է, որ երեխաներն էլ են այդ ստեղծագործ տիեզերքի մասնիկը և դրանով է բացատրվում այս մոտեցումը: «Ամենեն կարևոր բան ան է՝ հասկնալ ինք ով է» վերնագրով հարցազրույցում ասվում է. «Մենք ինչչափ զարգացած ըլլանք, ինչչափ փորձառություն ունենանք, կմնանք էրեխա»[18]:

Մանուկների աշխարհը Սարոյանի համար կյանքի ճշմարտության նախահիմքն է: Ու եթե աշխարհում էլ տեղ չկա նրանց համար, նշանակում է՝ դա կործանման ենթակա աշխարհ է: «Երեխաները, որ դեռ չեն սովորել խոսել և ոչ մի լեզվով, միակ ցեղն են երկրագնդի վրա՝ մարդկանց ցեղը… Մնացած ամեն ինչ կեղծիք է ու խաբեություն»,- գրում է Սարոյանը «Յոթանասուն հազար ասորի» պատմվածքում:

---

[16] **Վ. Սարոյան, h,** Ե., 1986 թ., էջ 418:

[17] **ì . ê ³ ñáÛ ³ Ý,** Ñ, 4, էջ 386:

[18] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ…, էջ 168:

Նրա հերոսներին հատուկ թեթև հումորը երբեմն պարուրված է սենտիմենտալությամբ: Իրեն չի համարել սենտիմենտալ, թեև չի բացառել այդպիսի հնարավորությունը. «Չեմ կարծում, որ իմ գրածները սենտիմենտալ լինեն, թեպետ շատ սենտիմենտալ բան է նախ՝ կենդանի էակ լինելը, հետո՝ ինքնին գրելը»[19], ապա «Մարդկային կատակերգության մեջ Հոմեր Մաքոլին, ավելի ճիշտ՝ Հոմեր Մաքելյան, կամ Հրանդ Մաքելյան, կամ Հարություն Միքայելյան, կամ մի որևէ ուրիշ հայ անուն, չի խոսում սենտիմենտալ կերպով: Բայց երբ մի ամերիկացի է խոսում նրա փոխարեն, իսկույն սենտիմենտալ է դառնում: Այսինքն այն, ինչ շատ բնական է հայու համար, անբնական է դառնում ամերիկացու համար»[20]:

Սերն է այն առանցքը, որի շուրջ պտտվում են սարոյանական տխուր ու փոքր մարդկանց հույզերը, ապրումները, մտքերը: Բոլորն էլ սեր են փնտրում, ինչը դրսևորվում է երբեմն կարեկցանքի, երբեմն հոգատարության կամ ջերմ հայացքի մեջ: Սրա ներքին տարողությունը պարզորոշ բացվում է նրա բոլոր ստեղծագործություններում և հատկապես «Մարդկային կատակերգություն» վիպակում, որը Սարոյանի վկայությամբ գրվել է 11 օրվա ընթացքում: «Խաղ մը չունիմ, ուր ես ամենաներկան չեմ» վերտառությամբ հարցազրույցում գրում է. «…Ես ունիմ պզտիկ վեպ մը՝ «Մարդկանց կատակերգություն»: Իմ մայրս՝ Թագուհի Սարոյան…սորվավ կարդալ: Ես ատ գիրք ուրին եմ նվիրել: Երբ թարգմանվեցավ հայերեն, մայրս կարդաց և հետաքրքիր է, անանկ բոպե մը գտա, աղվոր, նստեր եմ անտեղ, թանապուր կուտեմ, որ շիներ է, ըսավ. «Էրեկ գիշեր լմնցուցի ատ քու գրություն»: Ըսավ՝ լավ է: Եթե մայրս ըսավ լավ է, գիտցած եղիր, թե թարգմանություն լավ է»[21]: Կենցաղի կոմեդիա հասկացողությունն ամբողջովին դրսևորվել է այս վիպակի մեջ, ուր մարդկային կատակերգությունը զարմանալի կերպով հաջորդում է աստվածային կատակերգությանը: Արցունքի միջից դուրս են ժայթքում ծիծաղի ելևէջները և հակառակը, մարդու հոգին ներծծվում է վերերկրային մի թախիծով, որը հատուկ է նրա գրեթե բոլոր երկերին:

Պատկերելով կալիֆոռնիական մի փոքրիկ քաղաքի առօրյան՝ Սարոյանը նրան մասնակից է դարձնում օվկիանոսի մյուս կողմում ծավալվող պատերազմական դեպքերին: Ամեն օր այս քաղաքը ցնցվում է ոչ թե պատերազմական պայթող արկերից, այլ մահվան ծանուցագրերից, և հեռվում փոթորկվող պատերազմը ներխուժում է Իթակա: Վիպակի գլխավոր հերոսն է 14-ամյա Հոմեր Մաքոլին, որն ամեն օր հեռագրատնից ստանում է փոստը և հանձնում հասցեատերերին: Նրա հեծանվային ուղևորությունները միաձուլում են վիպակի բոլոր դրվագները մի ամբողջության մեջ: Քննախույզ, ուշիմ պատանին ժամանակից շուտ է մեծանում, որովհետև ականատես է լինում մարդկային հոգու խորունկ ցավին և լցվում կարեկցանքով: Երբ Հոմերը տիկին Ռոզա Սանդովալին նրա որդու մահվան ծանուցագիրն է բերում և ականատեսը դառնում մայրական անփարատելի կսկիծի, «ուզեց վեր կենալ և փախչել, բայց զգաց, որ պետք է մնալ: Նա նույնիսկ մտածեց, որ կարող է իր ամբողջ կյանքի ընթացքում մնալ այդտեղ: Ուղղակի չէր իմանում՝ ինչ անի, որ կինը նվազ դժբախտ զգա իրեն: Եվ եթե կինը խնդրեր իր որդու տեղը գրավել, Հոմերը չէր կարողանա մերժել»: Եվ երբ տղան իրեն խեղդող հեկեկանքից, ան-

[19] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ…, էջ 244:

[20] **Վ. Սարոյան,** հ. 4, էջ 401:

[21] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ…, էջ 154:

հասկանալի ցավից, որ պարուրել էր հոգին ու ճնշում էր սիրտը, չի ուզում տուն գալ, մայրը՝ միսիս Մաքոլին, որ վիպակում մարդկային իմաստության կրողն է, նրան բացատրում է. «Կարեկցանքն էր, որ քեզ ստիպեց լաց լինել… միայն բարի մարդիկ են լաց լինում»:

Բոլոր մարդիկ եղբայրներ են: Սարոյանական այս ընդգրկուն հոգևոր եղբայրությանը հավելադրվում է այն, որ բոլոր ազնիվ հոգիները նաև երազողներ են: Ու չնայած ամենուր կա ցավ, լավ ու վատ, նաև զրկանքներ ու տառապանք, վիպակում հավաստվում է այն միտքը, թե կյանքն անհաղթահարելի, անկասելի է իր անվերջության մեջ. «Ես ուզում եմ օգնել դժբախտ մարդկանց, սրտապնդել, համոզել, որ կարիք չկա հուսահատվել, որ այս աշխարհում ևս արժե ապրել ու դեռ կարելի է սիրել այս աշխարհը, և կան բաներ, որոնց վրա կարելի է ծիծաղել կամ գոնե ժպտալ»[22]: Բարոյական ուժերը, որոնցով սնվում է մարդը, անսպառ են և զուցե մանկությունից եկող երազանք է, բայց բաղձալի է մտնել մի նոր դարաշրջան, ուր սերն առավել տիրապետող կլինի, ուր կծաղկի, կփթթի Սարոյանի հերոսների երազած նոնենիների դրախտային այգին… Աշխարհում գոյություն ունեցող բազում գաղափարախոսություններից ամենակենսունակն ու անսասանը նրա համար մարդասիրության գաղափարն է: Ու թեև նա երբեք հատուկ կերպով չի ընդգծել իր հավատն առ Աստված, իսկ երբեմն էլ բացահայտ հեթանոս է իրեն համարել, բայց «Իմ անունն է Սարոյան» գրքում զուտ սարոյանական լուսավոր ու ջերմ հումորով դիմում է Բարձրյալին. «Հայր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը: Եթե մինչև օրս հիմար եմ եղել՝ ի ափսոս Քեզ միայն: Եթե մի երկու սուտ եմ խոսել՝ ի զվարճանս Քեզ միայն: Տեր, առանց այդ էլ ողբասացների թիվը շատ է, երևի ձանձրացել ես. ինչ վերաբերում է ինձ, ես ողբալու շնորհք չունեմ: Կարող եմ երկրպագել միայն խնդուն սրտով: Թեպետ վատ եմ հագնված, թեպետ ստամոքսս վեց-վեց է անում սովածությունից, մարմինս էլ դողում է ցրտից, բայց երախտագիտությունից բացի ոչինչ չեմ զգում Քո հանդեպ: Թող Քո թագավորությունը գա. չկա քերթության ավելի լավ դպրոց: Ամեն»[23]:

Այսպիսին է Սարոյանը, որն իր կերտած հերոսների նկարագրով, մերձավորի հանդեպ քրիստոնեական սիրով, նվիրվածությամբ, մեծահոգությամբ, բարեսրտությամբ ջանում է ազնվացնել մարդկային ցեղը:

Նրա արվեստը կարելի է բնութագրել մեկ նախադասությամբ՝ մարդասիրություն ընդդեմ մարդատյացության: «Մարդ այնպես պիտի ապրի իրեն տրված կյանքի բաժինը, որ աշխարհի աղետներին ու տխրություններին մի նոր ցավ չավելացնի, այլ բարությամբ ու ցնծությամբ ողողի շրջապատը»[24]:

Մարդը հավերժ ձգտում է կատարելության, հետևաբար հենց մարդասիրությունն է դառնում նրա կեցության ու կենսունակության առանցքը: Սա է մարդ և գրող Սարոյանի արվեստի անմահության ու կենսունակության գլխավոր նախապայմանը:

---

[22] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ…, էջ 244:

[23] Իմ անունն է Սարոյան, էջ 91:

[24] **Վ. Սարոյան,** Պատմվածքներ…, էջ 218:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԼՈԼԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր

ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ՄԱՍԻՆ

«…Երիտասարդ տարիքում մի մեծ ցանկություն ունեի՝ մորուք պահել: Այն ինձ կտար ազդեցիկ տեսք: Մորուքով ես ինձ պատկերացնում էի առնական, իմաստուն, ներկայանալի: Այո, դա իմ երազանքն էր: Սակայն մորուք պահելու իրավունքը պետք էր վաստակել: Եվ ես սպասում էի: Սպասում էի, երբ կդառնամ քառասուն տարեկան, կունենամ աշխատանքներ, և մարդիկ կճանաչեն ինձ որպես ճարտարապետ, որը կապված է քարի արվեստի հետ, և կհարգեն ինձ: Միջնադարի մեր մեծ ճարտարապետներ Հովհանը, Մանվելը իմ մտապատկերում միշտ երևում էին փառահեղ մորուքներով: Անցան տարիներ: Աշխատանքը կլանում էր իմ ամբողջ ժամանակը: Ես ճանաչվեցի ճարտարապետների և շինարարների շրջանում: Աշխատանքով կլանված, չնկատեցի էլ՝ ինչպես անցավ քառասուն տարին: Դա արդեն հասունության երաշխիք էր, և նորից հիշեցի մորուքի մասին: Սակայն մտածեցի, թե մարդիկ պետք է իրար հարցնեն, թե ո՞վ է սա, ի՞նչ աշխատանք է նրան փառք բերել: Ոչ: Դեռ շուտ է: Անհրաժեշտ էր մեծ, նշանակալից աշխատանքներ ստեղծել, որ հանդիպելիս մարդիկ ոչ թե խոնարհվեին իմ մորուքի, այլ իմ գործերի առջև: Տարիներն անցնում էին: Աշխատանքը լիովին կլանել էր ինձ: Մեկը մյուսի ետևից կյանք ու մարմին էին առնում իմ ստեղծագործությունները, որոնք ճանաչում բերեցին ինձ: Հիմա արդեն կարող եմ մորուք պահել: Սակայն հիմա էլ ինձ մտահոգում է մի ուրիշ բան: Ասենք, մեկնել եմ քաղաքից դուրս: Հանդիպել եմ ծանոթներիս, որոնք հյուրերին ինձ ներկայացնում են որպես ճարտարապետ: Իսկ ես, ինձ նման ոգևորված հանվում ու ինձ նետում եմ ջուրը: Իսկ իմ մորուքը այդ պահին ամենևին չի վայելում իմ պահվածքին: Ի՞նչ կմտածեն մարդիկ: Չէ, ինձ մորուք պետք չէ: Կեցցե՜ ազատությունը»:

…Սա Ռաֆայել Իսրայելյանի մի ոչ ծավալուն էսսեի վերաշարադրանքն է: Նա էսսեներ գրում էր ողջ կյանքի ընթացքում: Այս մեկում նրա անձի դրսևորումն է: Անձնավորություն հավերժ երիտասարդ, էքսցենտրիկ, անսահման համեստ, պահանջկոտ իր և շրջապատի նկատմամբ: Բնածին տաղանդ, որ սիրահարված էր ճարտարապետությանը, կյանքին: Նա ապրում էր մեկ կյանքով՝ մեծ ճարտարապետի կյանքով:

Երբ հիշում կամ գրում եմ նրա անունը, ուզում եմ անմիջապես էլ նկարել որևէ զարդաքանդակ կամ ճարտարապետական պատկեր, ինչպես իր սովորությամբ դա անում էր ինքը, վարպետը՝ միշտ և ամենուր: Նա նկարում էր որտեղ պատահեր, ինչ ձեռքի տակ կունենար այդ պահին՝ անձեռոցիկ, թղթի կտոր, ափսե, որ հետո դառնում էր անգնահատելի ընծա, և անգամ ճարտարապետների տան պատին: Արարելու, ստեղծագործելու ծարավը չլքեց նրան մինչև կյանքի վերջին օրերը, երբ արդեն ծանր հիվանդ էր և

ծնկի իջած տառեր էր փորագրում մոնումենտի թանգարանի քարե հատակին և գնում Նոր Հաճբն՝ հուշարձանի կառուցմանը հետևելու:

Ռաֆայել Իսրայելյանը ծնվել է 1908 թվականի սեպտեմբերի 17-ին, մահացել է 1973 թվականի սեպտեմբերի 8-ին:

Ռաֆայել Իսրայելյանը կենդանության օրոք արդեն լեգենդ էր: Անհնար է խոսել նրա կառույցների մասին և լռել մարդ-Իսրայելյանի մասին: Նա անսահման օժտված էր ու ինքնատիպ, նրա մեջ միաձույլ էին ճարտարապետն ու մարդը, ճարտարապետն ու արվեստագետը, արվեստաբանն ու քաղաքացին, անասելի մեծ էր նրա տեղը մեր մշակութային կյանքում: Նա արտասովոր մարդ էր, արտասովոր՝ ապրելու և արարելու միայն իրեն տրված շնորհով: Նա երբեք չէր ստանձնում առաջատարի դերը, բայց բոլորին ձգում էր դեպի իրեն: Նա ամբողջ կյանքում ապրեց ընկերներով շրջապատված, և ամեն մեկը, որ շփվում էր նրա հետ, գերվում էր նրա մարդկային անսահման հմայքով, ներքաշվում Ռաֆոյի աշխարհը: Ռաֆո՝ այդպես էին նրան դիմում մտերիմները, այդպես էր նա ստորագրում իր աշխատանքները:

Նրա ստեղծագործական անհատականության ձևավորման գործում կարևոր դեր ունեցավ Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիան, ուր սաների գեղարվեստական ճաշակը զարգացնում էին համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցների օրինակներով, նրանց հնարավորություն էին ընձեռում տիրապետել կոմպոզիցիայի և ազատ մեկնաբանումների միջոցներին: Ուսուցման նման եղանակն Իսրայելյանին թույլ էր տալիս համարձակորեն դիմել ազգային ժառանգությանը, լայնացնել նրա օգտագործման շրջանակները և ձեռնամուխ լինել ժամանակակից հայ ճարտարապետության ոճական խնդիրների լուծմանը:

Իսրայելյանը հետագայում երախտագիտությամբ էր հիշում գեղարվեստների ակադեմիայում անցկացրած տարիները: Նրան սիրում էին: Լինելով ակադեմիայում՝ ես հաճախ առիթ եմ ունեցել լսելու, թե ինչպիսի սիրով էին նրանք հիշում «իրենց Ռաֆոյին» և հպարտանում էին, որ իրենց սաների շարքում եղել են այնպիսի անհատականություններ, ինչպիսիք են Ռաֆայել Իսրայելյանը և Մինաս Ավետիսյանը:

Նրա աշխատանքների մասին կարելի է գրել ու գրել: Դրանցից ամեն մեկը նշանակալի է: Նրա յուրաքանչյուր նոր գործ դառնում էր իրադարձության, ճարտարապետության տոն:

Մեծն Կորբյուզեն գրել է. «Ճարտարապետությունը մասնագիտություն չէ: Այն ոգեղեն որոշակի վիճակ է»: «Ոգեղեն այդ վիճակում» նա հայտնվեց 1928-ի այն օրը, երբ երկաթուղային ծառայող Իսրայելյանը Մոսկվայում ընկավ ճարտարապետության ցուցահանդես: Այդ օրվանից էլ նա նվիրվեց ճարտարապետի դժվարին մասնագիտությանը և ընտրեց իր առաքելությունը: Նա իր գործունեությունը երբևէ չէր պատկերացնում առանց Հայաստանի և իր ժողովրդի: Այն, ինչ կատարվում էր շուրջը, դառնում էր նրա կյանքի մի մասը: Ժողովրդի ցավը դարձավ նրա ստեղծագործությունների անբաժան ուղեկիցը: Հայաստանը, նրա լեռները, գետերը, քարերը, ամեն ինչը պաշտամունք էին Ռաֆոյի համար: Իր պատմվածքներից մեկում նա ափսոսանք է հայտնում, որ եկել է ձմեռը և ինքը հնարավորություն չունի լինել բնության գրկում: Նրա ստեղծագործությունները ներդաշնակում էին բնությանը, դառնում նրա մասնիկը: Նա փնտրում էր տարածականության նոր լուծումներ և իր ստեղծագործություններն օրգանապես զուգորդում բնապատկերի

հետ: Դրա շնորհիվ բնությունը մի տեսակ, կարծես, ավելի ներդաշնակ էր դառնում, իսկ նրա ստեղծագործությունները վերածվում էին խորհրդանիշների:

Հիշենք Ռաֆոյի «Մուսա լեռ» և «Չարենցի կամար» հուշարձանները, Գեղարդի ճանապարհի եզրի ժայռագլխի մենավոր ու տիրական կանգնած «Առյուծը», որը հիշեցնում է Պռոշյանների հինավուրց տոհմի զինանշանի առյուծը: Պատվանդանին վեհապանծ թառած արծիվը, որ ցույց է տալիս Զվարթնոցի ճանապարհը:

Արիության, անվախության և նորոգման խորհրդանիշ արծիվը պետք է դառնար ճարտարապետի սիրած մոտիվը և զարմանալի ոճավորումներով մշտապես տեղ պիտի գտներ նրա ստեղծագործություններում: Գծերի և պատկերի նրբագեղ պլաստիկան, արտիստիկ անկաշկանդությունն ու գեղարվեստականությունը նրա մոտ միահյուսվում էին ստեղծագործական մտքի ազատության հետ:

Ապարանի պաշտպանների հուշարձանը (1915, 1918, 1945 թթ.) խրոխտ կանգնած է ճանապարհի ոլորանում: Այն գեղեցիկ է, վեհապանծ ու խիստ: Հուշարձանի կոմպոզիցիան նման է քարի մեջ մարմնացած «Հանդիսավոր պատարագի»: Բնության գրկում հառնած հուշարձանը նախատեսված է և՛ մոտիկից, և՛ հեռվից նայողի համար: Ապշեցնող ազատությունը և գեղարվեստական երևակայությունն առաջին իսկ հայացքից գերում են դիտողին:

Իսրայելյանն ապրում էր գաղափարներով, որոնք կյանք էին առնում նրա ստեղծագործություններում: Աշնակ գյուղում Գևորգ Չաուշի տունը դարձավ ֆիդայական շարժման հոգևոր տուն: Նրա այս նախագծի մասին երկար ժամանակ վախենում էին խոսել:

Նրա նախնիները Շուշիից էին, և նա հպարտությամբ էր հիշում այդ մասին: Ժամանակին նա սրտի ցավով գրեց, թե «ժողովուրդների եղբայրական բարեկամության» տարիներին ինչպես են Արցախի Բայան գյուղում ավերել նրա նախագծած հուշարձանը: Նա սիրում էր Արցախի, Տաթևի, Անիի, Սանահինի հինավուրց հուշարձանները, դրանցով սովորում էր և լուծում հայ ճարտարապետության ժամանակակից խնդիրները: Նա շարունակում էր «Թամանյանի դասերը» և հաճախ էր կրկնում, որ միայն սեփական ասելիքով է հնարավոր մուտք գործել մեծ ճարտարապետության արշխարհը:

Եվ Իսրայելյանն ասաց իր խոսքը՝ արարելով Սարդարապատի հուշահամալիրը՝ նվիրված 1918 թվականի հերոսական ճակատամարտին, ուր վճռվում էր հայ ժողովրդի լինելիության հարցը: Հուշահամալիրի կոմպոզիցիան բազմապլան է: Քանդակագործությունը և ճարտարապետությունն օրգանապես միաձույլ են և լրացնում են իրար: Զանգակատունը, հերոսների հանգստարանը պահպանում են հսկայական թևավոր ցուլերը, որոնք, ինչպես ընդունված էր Հին Հայաստանում և Առաջավոր Ասիայում, ուժ և կամք են խորհրդանշում:

Զանգակատան ճարտարապետական առանձին լուծումը անհատականություն է հաղորդում ամբողջ համալիրին: Հնագիտության թանգարանի շենքը, որը յուրովի ամփոփում է ողջ համալիրը, դարձել է ժամանակակից հայ ճարտարապետության անգերազանցելի հուշարձան: Ճարտարապետը շինության պարզ կոմպոզիցիայում գտել է յուրօրինակ լուծումներ: Թանգարանի կառույցը խրոխտ է ինչպես անառիկ ամրոց: Այն կարծես հառնել է այդ հողից և իր զգայական դաշտի ուժը տարածում է ամբողջ Արարատյան հարթության վրա ու նրա սահմաններից դուրս: Թանգարանը ճարտարապետության մեջ դրսևորված է: Ռաֆո Իսրայելյանի ճարտարապետական հավատամքը՝ չդադարող նորարարություն, հնի ուսումնասիրություն՝ նորը ստեղծելու համար: Թանգարանի ճար-

տարապետական լուծումների մեջ շատ ծանոթ մոտիվներ կան, որոնց սակայն ուրիշ ոչ մի տեղ երբեք չես հանդիպի, բացի հենց իր՝ Իսրայելյանի գործերում: Եվ դժվար է նկատել, որտեղ է վերջանում հինը և սկսվում նորը: Դա ճարտարապետի գաղտնիքն է: Ու այսօր դժվար է պատկերացնել մեր ժամանակակից ճարտարապետությունը, առանց Սարդարապատի փառահեղ հուշահամալիրի:

Պատասխանատվության մեծ զգացումով էր նա աշխատում Հայ Առաքելական Եկեղեցու համար: Նախագծեց նոր եկեղեցիներ. Սուրբ Վարդանը՝ Նյու Յորքում, Միլանում, Մոնդեվիդեոյում (Վ. Հարությունյանի հետ միասին), Երևանում վերակառուցեց Սուրբ Սարգիսը: Անհրաժեշտ կերպարն ստեղծելու համար նա վերադարձավ ետ, դեպի հայ միջնադարը: Նա չէր վախենում վերստեղծել ծանոթ կերպարներ, որովհետև ամեն ինչ անում էր մեծ տաղանդով: Ու հինն ու նորը ձուլվում էին մեկ կերպարի մեջ: Երբ մահվանից չորս օր առաջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինն այցելեց նրան, Ռաֆայել Իսրայելյանն ասաց, որ երազում էր երևանյան շքեղ համայնապատկերում տեսնել հայ եկեղեցիների՝ հպարտորեն վեր հառված գմբեթներն ու զանգակատները:

Նա շատ էր սիրում Երևանը, ցավում էր ամեն մի հին շենքի քանդման համար, պայքարում էր, գրում, բողոքում:

Իսրայելյանի ստեղծագործական ժառանգության մեջ հսկայական բաժին են կազմում մեմորիալները, ճարտարապետական փոքր ձևերը: Պատեր, ցայտաղբյուրներ, աղբյուր-հուշարձաններ: Դրանք, հիրավի, ճարտարապետական նրբաքանդակներ են, որոնք կատարյալ են քարի անզուգական մշակման եղանակներով: Մեծ Հայրենականի հերոսների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանների ստեղծման գաղափարը Ռաֆայել Իսրայելյանինն է: Նման աղբյուր-հուշարձաններ սփռված են Հայաստանով մեկ: Աղբյուր-հուշարձաններ նախագծելիս նա հենվում է խաչքարերի, քարակոթողների, այլ հուշարձանների կառուցման արվեստի վրա: Տարրերը, որոնք օգտագործում էր ճարտարապետը, կարելի է հանդիպել հայ ոսկերչության մեջ և գրահրատարակչական գրաֆիկայում: Եվ ամեն մի հերթական աղբյուր նախագծելիս, ստեղծում էր նորը՝ ինքնատիպը: Ժողովուրդը սիրում է Իսրայելյանի աղբյուրները: Մարդիկ հավաքվում են դրանց մոտ, երկար զրուցում ու ջուր խմում, և շատերը չգիտեն, որ դրանց հեղինակը Ռաֆո Իսրայելյանն է: Այդպես էր նաև Կոմիտասի, Ավետիք Իսահակյանի, Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ճակատագիրը: Հեղինակը մոռացվում էր, և դա, թերևս, նշանավոր վարպետների ստեղծագործության մեծագույն գնահատականն էր:

Իսրայելյանի հեղինակած հուշարձանները նրա համար միջոց էին մարմնավորելու այս կամ այն գաղափարը: Այդ այն տարիներն էին, երբ Հայաստանի հասարակական և մշակութային կյանքում իշխող էր դառնում ժողովրդի պատմությունը վերարժեքավորելու և ճշմարիտ մեկնաբանելու միտումը: Դա անցյալի պատմության վերագնահատման և նորովի գիտակցման թարմ ալիք էր, որը եկավ փոխարինելու երկարամյա հարկադրական լռությանը: Մեկը մյուսի ետևից ծնվեցին տաղանդավոր ստեղծագործություններ՝ և՛ գրականության, և՛ արվեստի, և՛ ճարտարապետության ոլորտներում. 1915 թվականի Հայոց մեծ եղեռնի հուշարձանը Ծիծեռնակաբերդում, Պարույր Սևակի, Մինաս Ավետիսյանի և ուրիշների ոգեղեն ստեղծագործությունները: Իսրայելյանի «պատմական» ստեղծագործություններից յուրաքանչյուրը նպատակային էր և ծառայում էր հենց այս վսեմ գաղափարին: Կրկին հիշենք նրա Մուսա լեռան, Նոր Հաճընի, Ապարանի, Սարդարապատի հուշարձանները: Նրա ստեղծագործություններում մարմին ու շունչ էին առնում

ժողովրդական առասպելներն ու լեգենդները, դառնում խոսուն, իմաստավորված կերպարներ ու խորհրդանիշեր: Ահա «Արծիվ-շինարարը» մայրաքաղաքի հարավային դարպասների մոտ, որ մարմնավորում է հայ ժողովրդի շինարարական արվեստը. «Վահագն Վիշապաքաղը» Երևանի հյուսիսային մուտքի մոտ, որ խորհրդանշում է հայ դիցաբանության արիությունն ու խիզախությունը: Ճարտարապետն իր աշխատանքներում հասել էր կերպարային կատարյալ արտահայտչականության, թատերականության: Այս աշխատանքներում ճարտարապետ Իսրայելյանը նաև գեղանկարիչ է: Չափազանց ինքնատիպ է Էջմիածնի Մայր Տաճարի բակում տեղադրված հուշարձանը՝ նվիրված 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին: Յուրօրինակ է հուշարձանի կոմպոզիցիայի մտահղացումը՝ խաչքարերի միահյուսումը: Դրանք կանգնած են ոչ որպես առանձին շիրմաքարեր: Ո՛չ, դա միասնական շիրմաքար է բոլորի համար: Խաչքարերը միասնականացված են մեկ պատվանդանի վրա: Հեռվից մենք տեսնում ենք մեկ միասնական ուրվագիծ, սակայն միաժամանակ դրանցից ամեն մեկն ընկալվում է առանձին: Երևելի վարպետի ձեռքը յուրաքանչյուր խաչքար զարդարել է տարբեր նախշերով՝ ինչպես քանդակում էին հին ժամանակներում: Խաչքարերի համար նմանակումն անընդունելի է: Իսրայելյանը քարը զգալու, հասկանալու զարմանալի տաղանդ ուներ: Նա հաճախ էր կրկնում, որ քարը լռել չի սիրում, միօրինակություն՝ նույնպես: Քարը սիրում է ստվերը, գիծը, գիրը, նախշը: Նրա ստեղծագործություններում քարե մակագրությունները դառնում էին կոմպոզիցիայի անքակտելի մասը, դրանք ընդգծում էին հուշարձանի իմաստն ու ասելիքը, ավելի խոսուն էին դարձնում ստեղծագործությունները: Ականատեսները պատմում են, թե որքան էին նրան սիրում քարագործ վարպետները, որոնք հաճախ ճարտարապետին հուշում էին իրենց լուծումները, որոնք Վարպետը սիրով ընդունում էր և դրանց հաղորդում գեղարվեստական հնչեղություն:

Եվ այսպես, միահյուսվում էին իրար ժողովրդական արվեստն ու պրոֆեսիոնալ ճարտարապետությունը, և արդյունքում ծնվում էր կատարյալն ու տաղանդավորը:

Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործության նվաճումները պետք է դիտել 60-70-ական թվականների հայ մշակույթի զարգացման ընդհանուր հարթության վրա, երբ այն ստացավ աննախադեպ կենսունակություն, որի պտուղները պիտի դրսևորվեին քիչ ավելի ուշ: Իսրայելյանը գնում էր ժամանակի առջևից:

Նրա ստեղծագործությունն ընդգրկում է ճարտարապետության բոլոր բնագավառները: Նրա համար կարևոր ու էական էր ամեն ինչ, լիներ դա հասարակական շինություն, կամուրջ, բնակելի տուն, թե քարին փորագրված մեկ առանձին տառ: Այդ ամենի մեջ նա դնում էր իր աստվածատուր տաղանդը, վարպետությունը և մանավանդ՝ հոգին: Նրա աշխատանքները նոր էջ բացեցին հայ ժամանակակից ճարտարապետության մեջ:

Եվ որքան ժամանակը մեզ հեռացնում է սիրելի Վարպետից, այնքան ավելի է ընդգծվում նրա վիթխարի կերպարը հայ ճարտարապետության անդաստանում:

Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործություններն անհնար է նմանակել և շարունակել՝ նույնպես: Նրա ժառանգությանը պետք է համադրել միայն նորը, և նույնքան տաղանդավոր ու ինքնատիպ, ինչպիսին էր նրա հանճարեղ արվեստը:

‹‹ԱՊՐԵԼ ԳԱԼԻՔԻ ՏԵՍԻԼՔՈՎ››

ՀՈՒՇԵՐ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՄԱՍԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 100-ամյակի առիթով Մայր Աթոռի հրատարակչական բաժինը լույս է ընծայել ‹‹Ապրել գալիքի տեսիլքով›› գիրքը, որը ներառում է անվանի հոգևորականների, գիտնականների և մտավորականների հուշերը Վազգեն Ա Վեհափառի մասին: Գիրքը կազմել է բանասեր Արշակ Մադոյանը: Այն տպագրվել է տեր և տիկին Արմեն և Նունե Սարգսյանների մեկենասությամբ:

Գիրքը սկսվում է Գարեգին Բ Հայրապետի օրհնության գրով, ուր մասնավորապես նշվում է. «Արդարև, նա [Վազգեն Վեհափառը] ամբողջապես գործում էր առաքելական ոգով: Տեսնելով և գնահատելով օրվա պահանջներն ու հրամայականները՝ հաստատուն ու հետևողական քայլերով նա միջոցներ էր ձեռնարկում՝ ի զորացումն Հայ Եկեղեցու առաքելության և առավել պանծացումն Հայաստանյայց Եկեղեցու փառքի խորանի: Նրա կաթողիկոսության շրջանին նորոգվեցին և վերաբացվեցին խոնարհված եկեղեցիներ, վերակազմավորվեցին թեմերը, նոր շունչ ստացան հոգևոր ճեմարանների գործունեությունը, ‹‹Էջմիածին›› ամսագիրը, Մայր Աթոռի հրատարակությունները: Ամենայն Հայոց 130-րդ գահակալի անդուլ ջանքերով բարեզարդվեց և նոր կառույցներով համալրվեց Սուրբ Էջմիածինը: Սփյուռքի թեմեր կատարած իր հովվապետական բազմաթիվ այցելություններով շնորհազարդ Հայրապետը անգամ քաղաքական աննպաստ պայմաններում գործադրում էր ամեն ջանք, որպեսզի աշխարհասփյուռ հայությունը համախմբված լինի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շուրջ և ապրի ազգային-եկեղեցական կյանքի միասնականության մեջ: Մշտապես հավատարիմ մնալով խաղաղության, արդարության, եղբայրության համամարդկային արժեքներին՝ Վազգեն Վեհափառն ամրապնդեց Հայ Եկեղեցու ներկայությունը միջեկեղեցական կյանքում: Հոգելույս Հայրապետը երջանկությունն ունեցավ նաև օրհնելու Հայրենիքի անկախությունն ու Արցախի ազատագրումը»:

Օրհնության գրին հաջորդում է Նորին Սրբության Սրբատառ կոնդակը՝ նվիրված Վազգեն Ա Վեհափառի մահվան 10-ամյակին: Հուշերի կազմող Արշակ Մադոյանն

գրքի առաջաբանում անդրադառնում է Վազգեն Ա Հայրապետի կյանքին և գործունեությանը՝ ընդգծելով Վեհափառի ունեցած մեծ դերակատարությունն ազգային-եկեղեցական կյանքում: Գրքում զետեղված են Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի, Իսահակ ծ. վրդ. Ղազարյանի, Եղիշե ավ. քին. Սարգսյանի, Հակոբ Սիրունու, Վարդուհի Վարդերեսյանի, Սուրեն Գոլանջյանի, Վահրիճ Ճերեճյանի, Վիլյամ Սարոյանի, Վիլիկ Զաքարյանի, Բարունակ Թովմասյանի, Անդրանիկ Ծառուկյանի, Վասիլի Գրոսմանի, Կիմ Բակշիի, Անդրեյ Բիտովի, Հրանտ Մաթևոսյանի, Կարպիս Սուրենյանի, Սիլվա Կապուտիկյանի, Հակոբ Մխիթարյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, Երվանդ Մելքոնյանի, Զոհրապ Չաղայանի, Փայլակ Անթաբյանի և Զորի Բալայանի հուշերը: Որպես հավելված՝ գրքում զետեղված են նաև 47 լուսանկարներ:

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ (ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ) «ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ» ԳԻՐՔԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը վերահրատարակել է երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վարդապետության շրջանին հեղինակած «Մեր Պատարագը» աշխատությունը:

Այս աշխատության մեջ Հայոց Հայրապետը դյուրըմբռնելի ոճով ընթերցողին բացատրում է Հայ Առաքելական Եկեղեցու Սուրբ Պատարագի արարողության կարգն ու ընթացքը՝ մեր Եկեղեցու դավանաբանական սկզբունքների, ազգային ավանդությունների, մեր ժողովրդի կրոնական զգացումների տեսանկյունից՝ նպատակ ունենալով Հայոց Եկեղեցու պարզ հավատացյալի համար հասկանալի ձևով ներկայացնել Սուրբ Պատարագի ահեղ խորհրդի իմաստն ու նշանակությունը, որպեսզի հայ հավատացյալը գիտակցված մոտենա և ճաշակի Հիսուս Քրիստոսի կենարար մարմինն ու արյունը:

Ուսուցողական այս աշխատությունը նախատեսված է Հայոց Եկեղեցու Սուրբ Պատարագի արարողությամբ հետաքրքվողների և հավատավոր ժողովրդի հոգևոր պահանջմունքները բավարարելու համար:

Գիրքը հրատարակվել է Վազգեն Ա Հայրապետի ծննդյան 100-ամյակի առիթով:

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Վազգեն Վեհափառի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությունների և հրատարակությունների շրջագծում լույս է ընծայվել երջանկահիշատակ Հայրապետի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորը հրամանավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

384 էջ ընդգրկող այս հատորում զետեղված են Վազգեն Վեհափառի տարբեր տարիներին գրված հետևյալ ուսումնասիրությունները՝ «Անձնավորության գաղափարի մասին» (Բուխարեստ 1938 թ.), «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» (Բուխարեստ 1940 թ.), «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ» (Բուխարեստ 1942-1943 թթ.), «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը» (Բուխարեստ 1950 թ.), «Ռումանահայ թեմը երեկ և այսօր» (Բուխարեստ 1948 թ.), «Բուլղարահայ գաղութն այսօր» (Բուխարեստ 1954 թ.), «Հայրենի արևին տակ» (Երևան-Բուխարեստ, 1954 թ.):

Անհրաժեշտ է նշել, որ այս գործերից յուրաքանչյուրի սկզբում Ս. Էջմիածնի հրատարակչությունը համապատասխան ծանուցումներով ներկայացնում է, թե այն առաջին անգամ երբ և որտեղ է հրատարակվել, ինչպես նաև հետագայում ինչ վերահրատարակություններ է ունեցել:

Վազգեն Վեհափառի հիշյալ գործերը բերված են ըստ գրության հաջորդականության, որը ցույց է տալիս մտածումների և գաղափարների զարգացման ընթացքը աշխարհական շրջանից դեպ հոգևորական գործունեությունը, ինչպես նաև վկայում է հոգելույս Հայրապետի հոգևոր-գրական հետաքրքրությունների լայն շրջանակի մասին:

«ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

Այսպես է վերնագրված երջանկահիշատակ Վազգեն Առաջինի կյանքի ու հոգևոր գործունեության ամփոփ նկարագիրը ներկայացնող գրքույկը, որը հրատարակության է պատրաստել Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, աշխատասիրությամբ կենտրոնի աշխատակիցներ Հասմիկ Աբրահամյանի, Ելենա Հարությունյանի և Արուսյակ Տերչանյանի:

Գրքույկի վերջում բերված են հատվածներ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արքեպս. Ասատուրյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ Դևրիկյանի, Ֆադեյ Սարգսյանի, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի, Մայր Թերեզայի, ԽՍՀՄ պաշտպանության նախկին նախարար մարշալ Դմիտրի Ուստինովի՝ Վազգեն Առաջինին նվիրված հուշերից և հոդվածներից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎԵՑ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌԸ

Հոկտեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Արագածոտնի թեմի Ագարակ գյուղի նորակառույց Սուրբ Աստվածածին մատուռը, որը կառուցվել է Հրաչ Պողոսյանի և նրա ընտանիքի բարերարությամբ:

Գյուղի բնակչությունը մեծ խանդավառությամբ և աղուհացով դիմավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այնուհետև «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ, հոգևորականների հանդիսավոր թափորով ու բազմաթիվ հավատացյալ հայորդիների ուղեկցությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց նորակառույց մատուռ: Շարականների երգեցողության և սաղմոսերգության ներքո գինով լվացվեց Սուրբ Սեղանը, որից հետո Վեհափառ Հայրապետը նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնով օծեց մատուռի Սուրբ Սեղանն ու Մկրտության Ավազանը:

Արարողության ավարտին Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր Հայրապետական օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեց Հրաչյա Պողոսյանին և իր ընտանիքի անդամներին, ովքեր սիրահոժար կերպով և իրենց արդար վաստակով կառուցել են Սուրբ Աստվածածնի անունը կրող սրբազան մատուռը: Այնուհետև Ագարակ գյուղի բնակչությանն ուղղված իր օրհնության խոսքում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ նորօրհնյալ Մյուռոնի անուշաբույրը տարածվի ողջ գյուղում, Սուրբ Հոգու շնորհներն իջնեն գյուղի յուրաքանչյուր անդամի վրա և շնորհազարդեն նրանց կյանքի գեղեցկությամբ, ավետարանական նվիրական արժեքներով, որպեսզի ծաղկի ու առաջընթաց ապրի գյուղը և բարօր դառնա գյուղի յուրաքանչյուր բնակչի կյանքը:

«*Ցնծացե՛ք և ուրա՛խ եղեք այսօրվա ուրախությամբ, որովհետև այս մատուռը պիտի դեպի երկինք բարձրացնի ձեր աղոթքը, ձեր հայցը, ձեր ուխտը, և Աստված՝ ունկնդիր ձեր խնդրանքներին, պիտի բազմապատիկ վարձատրի ձեզ, օրհնի ձեզ, ձեր բարի կյանքը և ձեր հավատո բարի գործերը: Ուրեմն մնացեք Աստծո սիրո մեջ, քայլեք Աստծո պատվիրանների ճանապարհներով, որպեսզի Աստծո օրհնությունը միշտ ուղեկից լինի ձեր կյանքին*»,- պատգամեց Վեհափառ Հայրապետը:

Մատուռի օծումից հետո նորաօծ մատուռում կատարվեցին Մկրտության և Պսակի առաջին սրբազան արարողությունները: Վերջում մատուռին կից բակում գեղարվեստական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նորքի Հայորդյաց տան սաները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը և Մայր Աթոռի միաբաններ: Արարողությանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը, Աշտարակի քաղաքապետ Գագիկ Թամազյանը և մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄՈՒՄ

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 4-ին վերանորոգումից հետո, ձեռամբ Կոտայքի թեմի Առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, մեծ հանդիսությամբ վերաբացվեց Եղվարդ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին:

Հանդիսությունը սկսվեց «Հայր-Մեր»-ով, որից հետո Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպիսկոպոս Քարամյանը իր օրհնությունը բերեց վերաբացվող եկեղեցուն, Եղվարդ քաղաքի բնակիչներին, ինչպես նաև եկեղեցու վերանորոգման աշխատանքների մասնակիցներին:

Գերաշնորհ Սրբազան Հայրը իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերար Գեղամ Միքայելյանին, քաղաքապետ Նորիկ Սարգսյանին, ՀՀ Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանին՝ եկեղեցու վերանորոգման աշխատանքներին աջակցելու համար:

Հանդիսությանը մասնակցում էին թեմի հոգևոր սպասավորներ և մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Այդ օրը եղվարդցիների համար տոնական էր, և տեղի մշակույթի բաժնի կողմից կազմակերպված երգն ու պարը շարունակվեց մինչև երեկո:

ՆՈՐ ԳՅՈՒՂԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԻ ՕԾՈՒՄԸ

Հոկտեմբերի 11-ին, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, կատարվեց Կոտայքի մարզի Նոր Գյուղի Ս. Հովհաննես նորակառույց եկեղեցու հիմնաքարերի օծման արարողությունը, որին մասնակցում էին մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները:

Արարողության ավարտին Առաքել Սրբազանն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Նոր Գյուղի բնակիչներին՝ վստահություն հայտնելով, որ կառուցվող եկեղեցին օրհնություն պիտի լինի գյուղի բնակիչների համար: Սրբազան Հայրը նաև իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարին՝ գյուղապետ Ռուբիկ Գևորգյանին:

Նորակառույց եկեղեցու հիմնաքարերի օծումից հետո տեղի ունեցավ մատաղօրհնեքի արարողություն և գեղարվեստական միջոցառում, որ կազմակերպել էր գյուղապետարանը:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԿԱՏԱՐՎԵՑ ԶՈԼԱՔԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԸ

Հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի, կատարվեց Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ս. Գևորգ եկեղեցու նոր հիմնօրհնեքի արարողություն:

19-րդ դարի 30-ական թթ. եկեղեցին կառուցվել է Մշից, Դիարբեքիրից և Ալաշկերտից ներգաղթած մեր հայրենակիցների կողմից: Տարիների ընթացքում եկեղեցին քայքայվել, մեծ մասամբ քանդվել էր՝ հայտնվելով վթարային վիճակում:

Արմատներով Զոլաքարից՝ Սամվել և Սերոբ Բուդաղյանները, ցանկանալով կանգուն տեսնել գյուղի եկեղեցին, ժամանակին ուխտել էին վերանորոգել այն:

Թեմի առաջնորդի և Հուշարձանների Պահպանության Գործակալության հսկողությամբ և ճարտարապետական խորհրդատվությամբ եկեղեցին ապամոնտաժվում և հիմքից կառուցվում է նախնական տեսքով:

Հավարտ արարողակարգի Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը համայնքին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությունը և բարեմաղթանքները, և մասնավորապես շեշտեց, որ վերջին տարիների ընթացքում թեմի գրեթե բոլոր նորոգվող և նորակառույց եկեղեցիները հավատավոր զավակների վաղեմի ուխտի իրականացումներն են և խոսուն վկաները նրանց զորեղ հավատքի ու հավատարմության:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

«ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Եկեղեցի և կրթություն» թեմայով երկրորդ քննարկումը՝ կազմակերպված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի կողմից, որին մասնակցում էին եկեղեցականներ, պետական մարմինների, կրթական և հասարակական հաստատությունների ներկայացուցիչներ:

Քննարկումը սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո Մայր Աթոռի Միջեկեղեցական գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանն անդրադարձավ նախորդ հանդիպման արդյունքներին և ներկայացված օրակարգին: Այնուհետև «Քրիստոնեական դաստիարակության հիմնախնդիրները կրթական համակարգում» թեմայով զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը և ներկայացրեց ՔԴԿ ներկայիս գործունեությունը: Հայր Սուրբն անդրադարձավ նախադպրոցական և դպրոցական համակարգերում քրիստոնեական արժեքների տարածման անհրաժեշտությանը՝ շեշտելով հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման հետ կապված ձեռքբերումներն ու առկա խնդիրները: Հայր Վարդանը նշեց, որ այս հարցում շատ կարևոր է եկեղեցի-կրթական համակարգ փոխհամագործակցությունը, որում մեծ դերակատարություն ունեն եկեղեցականները, դպրոցի տնօրենները և ամենակարևորը՝ Հայ Եկեղեցու պատմություն առարկան դասավանդող ուսուցիչները, որոնց ուսերին մեծ պատասխանատվություն է դրված: Հայր Սուրբի զեկույցից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Ներկաները խոսեցին իրենց անձնական փորձառության և դիտարկումների մասին, կատարեցին նաև առաջարկներ:

Քննարկման ընթացքում ներկաների ուշադրությանը հանձնվեց երիտասարդ իրավաբաններ Վահե Ենգիբարյանի և Արթուր Չախոյանի հեղինակած «Դավանանքի իրավունք» գիրքը, որը մատչելի կերպով անդրադառնում է եկեղեցի-պետություն հարաբերություններին, ընդունված սահմանադրական նորմերին, ՀՀ և միջազգային համապատասխան օրենսդրական ակտերին, էկումենիկ միջազգային կազմակերպություններին, Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությանը էկումենիկ շարժմանն ու այլ հետաքրքրական խնդիրների: Ներկաներն ուրախությամբ արձանագրեցին, որ գիրքն իրապես օգտակար կարող է լինել հատկապես երիտասարդների համար՝ հարստացնելով նրանց կրոնական և իրավական գիտելիքները:

Վերջում ԵՀԽ Կլոր Սեղան հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը շնորհակալություն հայտնեց կառուցողական քննարկման համար և հույս հայտնեց, որ արված առաջարկները կներկայացվեն համապատասխան կառույցների ուշադրությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Արագածոտնի թեմի առաջնորդանիստ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը:

Սրբազան արարողության ընթացքում Սահակ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Թարգմանչաց տոնի խորհրդին և մեծանուն թարգմանիչների ունեցած կարևոր դերակատարությանը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում: «Հայ գրականությունը, հայ կրոնը, հայ հավատքը և Հայ Եկեղեցին եղան մեր հոգևոր, բարոյական այն պարարտ հողը, որոնց շնորհիվ մենք դարերի ընթացքում կարողացանք դիմանալ բազում փորձությունների: Եվ այս հիշարժան իրադարձությունը կատարվեց մեր թարգմանիչ վարդապետների շնորհիվ, ուստի նրանց հիշատակը մենք միշտ թարմ ենք պահում և նրանց գործն անմահացնելու ձևեր գտնում: Հայությունն այսօր իր կորցրած հոգին պետք է վերստին գտնի, իսկ դա քրիստոնեության հոգին է, որ առկա է Սուրբ Գրքի մեջ: Հետևաբար մենք պետք է մեր արժեքները՝ բարոյական արժեքները, վերագտնենք և նրանց վրա հենվենք: Սուրբ Գիրքն էլ պետք է ամենքիս տները մուտք գործի և կարդացվի, և այս ուղղությամբ միայն եկեղեցականները չէ, այլ ամբողջ հավատացյալ ժողովուրդը պարտականություն ունի Սուրբ Գիրքը մեր տան գիրքը դարձնելու, այն մեր տան կառույցներից մեկը դարձնելու, որպեսզի Տիրոջ կենդանի խոսքը սյունը դառնա նաև մեր ընտանեկան կյանքի»,- նշեց Սրբազան Հայրն իր ոգեշունչ քարոզում:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցու բակում գեղարվեստական հայտագրով հանդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Նոր Նորքի և Էջմիածնի Հայորդյաց տան սաները:

Ս. Թարգմանչաց տոնի առիթով Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցից դուրս էր բերվել 200 տարուց ավելի Աշտարակի սրբություն հանդիսացող, Ս. Ամենափրկիչ և Ս. Կարմրավոր եկեղեցիներում երկար ժամանակ հանգրվանած Շուխոնց հրաշագործ Ս. Ավետարանը (1669 թ.), և բազում ուխտավոր հայորդիների հնարավորություն ընձեռվեց համբուրելու այն և օրհնություն ստանալու հրաշագործ այդ Ավետարանից:

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ավարտաճառերի հերթական պաշտպանությունը։

Հինգ ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Հնգամատյանում (ի մասնավորի Ելից գրքում) առկա ժամանակային-օրացուցային պատկերացումները և դրանց աղերսը հայկական հնագույն համապատասխան պատկերացումների հետ» (Արմեն սրկ. Խաչատրյան), «Զաքարիա Ձագեցի կաթողիկոսի կենսագործունեությունը և մատենագրական վաստակը» (Սամվել սրկ. Զաքարյան), «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը 1779-1861 թթ.» (Զավեն սրկ. Խաչիկյան), «Հովհաննես Ե Դրասխանակերտցու կյանքն ու պատմագիտական ժառանգությունը» (Նարեկ սրկ. Վարդանյան), «Տայքի իշխանությունը Թ-ԺԱ դարերում» (Բաղդասար սրկ. Բաղդասարյան)։

Այսուհետ հինգ շրջանավարտ սարկավագները կհամալրեն Մայր Աթոռի միաբանության շարքերը։

***

Հոկտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ավարտաճառերի հերթական պաշտպանությունը։

Երկու ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Ելից գրքի ԺԲ գլխի անանուն մի մեկնություն» (Թորոս սրկ. Երանյան), «Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթամատյանի շրջասությունները» (Սերոբ սրկ. Հովհաննիսյան)։

Այսուհետ շրջանավարտ սարկավագները կհամալրեն Մայր Աթոռի միաբանության շարքերը։

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ-ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնին կից գործող բնապահպանական և կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող նորաստեղծ Քրիստոնեական բնապահպանական Կլոր Սեղանի հանդիպումը՝ համաատենապետությամբ Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանի և ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի:

Հանդիպման ընթացքում ներկաներն անդրադարձան տարբեր եկեղեցիներում զարգացող բնապահպանության և կլիմայի փոփոխության ծրագրերին, համաեվրոպական քրիստոնեական բնապահպանական ցանցի 13-րդ համաժողովին: Քննարկվեցին նաև բնապահպանական ճգնաժամի դեմ պայքարին, անտառահատմանը և էկոլոգիական միգրացիային վերաբերող հարցեր, ընդգծվեց խնդրին առնչվող կրթական-դաստիարակչական ծրագրեր իրականացնելու անհրաժեշտությունը:

Համատեղ քննարկման ժամանակ որոշվեց, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Կլոր Սեղանը կիրականացնի գիտական, վերլուծական և գործնական բնապահպանական ծրագրեր: Գործնական ծրագրերի շրջանակներում առաջիկայում Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում կտեղադրվեն արևի էներգիայով սնուցվող հատուկ սարքավորումներ, որոնք տաք ջուր կմատակարարեն դպրանոցին:

Կլոր Սեղանին ներկա էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս Գրիգոր Բրուտյանը, Հայաստանի Ամերիկյան համալսարանի իրավաբանության ֆակուլտետի դեկան Թոմ Սամուելյանը, «Շեն» հ/կ-ի բնապահպանական հարցերով պատասխանատու Ռուդիկ Հակոբյանը, «Հանուն կայուն զարգացման» հ/կ-ի տնօրեն Կարինե Դանիելյանը, Կլիմայի փոփոխության կենտրոնի տնօրեն Դիաննա Հարությունյանը, «Հայաստանի անտառներ» հ/կ-ի ներկայացուցիչ Նազելի Վարդանյանը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ԹՐԱՖԻՔԻՆԳԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Հոկտեմբերի 7-9-ը Ծաղկաձորում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ «Հոգևորականներն ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում «Աշխատենք միասին ընդդեմ թրաֆիքինգի» խորագրով տեղի ունեցավ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին և թրաֆիքինգին նվիրված երրորդ դասընթացը, որին մասնակցում էին Հայ Եկեղեցու Հայաստանի և Արցախի թեմերից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարբեր կառույցներից եկեղեցականներ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաներ, ինչպես նաև ներկայացուցիչներ Հայ Կաթողիկե Եկեղեցուց: Դասընթացը կազմակերպել էր ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամը՝ համագործակցությամբ «ԱՄՔՈՐ» միջազգային և «Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպությունների:

Դասընթացին բանախոսությամբ հանդես եկավ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի ստրկության հարցերով հատուկ զեկուցող Գյուլնարա Շահինյանը՝ անդրադառնալով թրաֆիքինգին զոհ դարձած մարդկանց բացահայտման և իրազեկման աշխատանքներին, ինչպես նաև Հայ Եկեղեցու և քաղաքացիական հասարակության համատեղ աշխատանքի կարևորությանը: Դասընթացին հրավիրված «Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպությունից Հասմիկ Էդիլյանն իր զեկույցում խոսեց զոհերի բացահայտման մեթոդների և հասարակության մեջ նրանց ներգրավման մասին՝ ընդգծելով հատկապես հոգևորականի դերը, իսկ «ԱՄՔՈՐ» միջազգային կազմակերպությունից Վիկտորյա Ավակովան հանգամանորեն անդրադարձավ զոհերի պաշտպանության և ապաստարանում նրանց ցուցաբերվող օգնության կարևորությանը:

Տեղի ունեցան նաև խմբային քննարկումներ, որոնց ընթացքում մատնանշվեցին այն ձևերն ու ուղիները, որոնք կօգնեն եկեղեցականներին թրաֆիքինգի զոհերի հետ իրենց աշխատանքում: Դասընթացի բոլոր մասնակիցները ևս մեկ անգամ հաստատեցին, որ թրաֆիքինգի դեմ պայքարում խիստ անհրաժեշտ է հայ եկեղեցականի մասնակցությունը: Քննարկումների ժամանակ մշակվեցին նաև համատեղ ծրագրեր՝ ուղղված թրաֆիքինգի կանխորոշմանը, զոհերի հոգևոր և հոգեբանական խնդիրների լուծման գործում աջակցությանը և համայնքներում նրանց վերաինտեգրմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՑ

î àÜ ê àôð´ Â²ð¶Ø²ÜÆâÜºðÆ

Հոկտեմբերի 11-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց տոնը:

Սուրբ Թարգմանիչների արգասավոր գործունեությամբ սկզբնավորվեց հայ թարգմանչական և ինքնուրույն գրական ժառանգությունը: Սակայն Թարգմանիչների մեծագույն ձգտումը, նրանց կյանքի իմաստն ու առաքելությունը դեպի Աստված հարազատ ժողովրդի ընթացքն ու հայ ազգային կերպարը հաստատուն ու անխաթար պահելն էր: Նրանց սուրբ ու նվիրական հիշատակը ոգեկոչելով՝ մեր Եկեղեցին ձգտում է արթուն պահել նրանց արարող ոգին մեր կյանքում և խնդրել նրանց բարեխոսությունը:

Այս օրը կրկնակի տոն է վանաձորցիների համար, քանզի հոկտեմբերի 12-ը Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու անվանակոչության և ուխտի օրն է նաև: Առավոտյան Սուրբ Պատարագի ժամանակ ներկաները հնարավորություն ունեցան մոտենալ և համբուրել Արևմտյան Հայաստանից՝ Վանա լճի հարավային ափին գտնվող Սուրբ Գրիգոր Նարեկացու անունը կրող ճգնարանից բերված և Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի ձեռամբ օծված քարի մասունքը: Այդ օրը կատարվեց նաև Ջրօրհնյաց սրբազան արարողությունը, և մեր հավատավոր ժողովուրդը կարողացավ անմիջականորեն հաղորդակից դառնալ նորօրհնյալ Մյուռոնի սրբարար շնորհներին:

Պատարագից հետո Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր, Վանաձորի Պետական Մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի կողմից մատուցվեց մատաղ՝ ի մխիթարություն մեր ժողովրդի: Իսկ ավելի ուշ եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Սուրբ Գրիգոր Նարեկացուն, որը կազմակերպվել էր ‹‹Նարեկացի» մշակութային կենտրոնի կողմից: Միջոցառման ժամանակ բանախոսությամբ հանդես եկավ Սուսաննա Սարուխանյանը, ընթերցվեցին հատվածներ ‹‹Մատյան ողբերգության» պոեմից, որոնք ընդհատվում էին Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քառաձայն երգչախմբի կատարումներով՝ խմբավարությամբ Ռուզաննա Մխիթարյանի: Հանդիսությանը ներկա էին նաև հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու Պատմություն առարկան դասավանդող ուսուցիչները: Միջոցառման ավարտին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը շնորհավորեց բոլոր ուսուցիչներին այս հրաշալի տոնի կապակցությամբ, և ներկաները Սրբազան Հոր խոսքով և օրհնությամբ մխիթարված ու զմայլված բաժանվեցին եկեղեցուց:

¸Æì²Ü¶àô¶²ð²ò Â ºØÆ

ԽՈՒԼԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ԽՈՒԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ

Օրհնությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի՝ թեմի առաջնորդարանում ավանդույթ է դարձել հանդիսավորությամբ նշելու խուլերի միջազգային օրը: Թեմական «Ստեղծենք հնարավորություններ խուլերի համար» ծրագրի խուլ շահառուների համար այս տարի տոնը նշանավորվեց լսող և խոսող երիտասարդների հետ միասին կազմակերպված ուրախ միջոցառմամբ, ապա և խուլ երիտասարդների մկրտությամբ:

Սեպտեմբերի 30-ին Վանաձորի Սուրբ Սարգիս եկեղեցում, կնքահայրությամբ Սուրբ Սարգիս եկեղեցու խաչքավոր Սահակ Ռուբինյանի, տեղի ունեցավ ութ խուլ երիտասարդների մկրտության արարողությունը: Կնքահայրը նորամկրտյալներին նվիրեց արծաթյա խաչեր ու մկրտության սրբիչներ: Արարողությանը ներկա էին նաև պարոն Ռուբինյանի ընտանիքի անդամները, ծրագրի բոլոր շահառուները, նրանց ծնողները, հարազատները, Եկեղեցասեր երիտասարդաց միության անդամները:

Խուլ երիտասարդներն ու նրանց ծնողներն իրենց երախտագիտությունը հայտնեցին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին, ում օրհնությամբ և աջակցությամբ «Ստեղծենք հնարավորություններ խուլերի համար» ծրագիրը շարունակում է իր հաջող ընթացքը:

Խուլերն իրենց մասնավոր շնորհակալությունը հայտնեցին կնքահայր Սահակ Ռուբինյանին, ծրագրի հոգևոր պատասխանատու Տ. Ստեփաննոս քահանա Մարգարյանին, ծրագրի ղեկավար Աստղիկ Ասրյանին և աշխատակազմին:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՆՈՐ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմը ավելի քան 400 000 վրաստանաբնակ հայության անունից իր մտահոգությունն ու վրդովմունքն է արտահայտում Վրաց Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչների կողմից Թբիլիսիի Սուրբ Նորաշեն հայկական եկեղեցու և նրա հարակից տարածքի դեմ կատարվող նոր ոտնձգությունների առնչությամբ:

Սուրբ Նորաշեն հայոց եկեղեցին կառուցվել է 15-րդ դարի կեսերին որպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի և ի սկզբանէ գտնվել է Վիրահայոց թեմի կազմում: 20-րդ դարի 30-ական թվականներին եկեղեցին, այլ կրոնական կառույցների հետ մեկտեղ, փակվել է հոգևոր գործունեության համար և օգտագործվել որպես գրապահոց: Ավաղ, Վրաստանի պետական անկախության վերականգնումից հետո Վրացական իշխանությունը չվերադարձրեց եկեղեցին իր օրինական, պատմական տիրոջը:

Սույն թվականի մայիս ամսին Վրաց Ուղղափառ Եկեղեցու հոգևոր սպասավոր Տարիել քահանա Սիկինչելաշվիլին և նրան ենթարկվող բանվորների խումբը Սուրբ Նորաշեն հայկական եկեղեցին և նրա հարակից տարածքը պարսպապատելու նպատակով սկսեցին կառուցել մետաղյա պարիսպ՝ ներառելով Վրաց Ուղղափառ Եկեղեցուն բնորոշ կրոնական էլեմենտներ: Եվս մեկ հայկական եկեղեցու ծրագրված գրավման փորձի կապակցությամբ Վիրահայոց թեմն արտահայտել է իր մտահոգությունն ու վրդովմունքը և այն որակավորել որպես վրացական կողմի հետ պայմանավորվածության խախտում, որը ձեռք է բերվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և Վրաց Ուղղափառ Եկեղեցու միջև՝ Սուրբ Նորաշեն և Թբիլիսիի մյուս չորս՝ Սուրբ Նշան, Շամխորեցոց Կարմիր Ավետարան Սուրբ Աստվածածին, Երևանցոց Սուրբ Մինաս, Մուղնեցոց Սուրբ Գևորգ հայկական եկեղեցիները Վիրահայոց թեմին վերադարձնելու հարցի քաղաքակիրթ լուծման շրջանակներում:

Վերը նշված փաստը դժգոհության ալիք բարձրացրեց Վիրահայոց թեմի հավատացյալների շրջանում և սույն թվականի մայիս ամսին դրությունը սպառնում էր վերաճել միջկրոնական ընդհարման երկու եղբայրական քրիստոնյա ժողովուրդների միջև: Վիրահայոց թեմը ստեղծված իրավիճակի մասին գրավոր տեղեկացրեց Վրաստանում համապատասխան պետական կառույցներին, ինչպես նաև Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներին: Սույն անօրինական և անպատժելի գործողությունը Վիրահայոց թեմի հավատացյալների կողմից դիտվեց որպես Վրաստանում Կրոնի Ազատության և Կրոնական Հավասար Իրավունքների Սահմանադրական իրավունքների ոտնահարում:

Թբիլիսիի քաղաքապետարանը Պատրիարքարանի հետ որոշում կայացրեց քանդել անօրինական պարիսպը, սակայն այդպես էլ չիրականացրեց իր որոշումը՝ պատճառաբանելով, որ դրան խոչընդոտում է Հայր Տարիելը: Այն տպավորությունն է

ստեղծվում, որ Տարիել քահանան ավելի հզոր է, քան Վրաստանի պետական և հոգևոր բարձրագույն իշխանությունը:

Վերջին օրերին վրաց քահանա Տարիել Սիկինչելաշվիլին շարունակում է Թբիլիսիի Սուրբ Նորաշեն հայկական եկեղեցու (չգործող) ապօրինի պարսպապատումը: Սույնի մասին Վիրահայոց թեմը Վրաստանի պետական մարմիններին, քաղաքային իշխանություններին ու Վրաց Պատրիարքարանին պաշտոնապես տեղեկացրել է Տարիել քահանայի կողմից հայկական կրոնական ժառանգության նոր զավթման մասին, ովքեր, ավա՛ղ, մի քանի օրերի ընթացքում չխոչընդոտեցին Թբիլիսիի կենտրոնում գտնվող հայկական եկեղեցու դեմ նոր ոտնձգությունների իրականացմանը:

Հարկ է նշել, որ եկեղեցիների վերադարձի խնդիրը Վրաստանում նշված է ՄԱԿ-ի Մադու Իրավունքների Կոմիտեում և ԱՄՆ-ի Պետական Դեպարտամենտի տարեկան զեկույցում: Վրաստանի Կառավարությունը միջազգային հանրության առջև պարտավորվել է ստեղծել ժողովրդավարական պետություն, սակայն քաղաքական կամք չի ցուցաբերում իր երկրի ազգությամբ հայ քաղաքացիներին անհանգստացնող խնդիրների լուծման կապակցությամբ: Ցավով արձանագրում ենք, որ Վրաստանում, փաստորեն, առկա է կրոնական և ազգային խտրականություն: Մեր կարծիքով, Վրացական կողմին հետաքրքրում է ոչ այնքան Սուրբ Նորաշեն եկեղեցին յուրացնելը, որքան սույն մեթոդներով հոգեբարոյական ճնշման ենթարկելը թբիլիսաբնակ հայությանը: Վերջին շրջանի հակահայկական տրամադրություններն ու հոդվածները վրացական մամուլում դրա վառ ապացույցն են:

Այսպիսով, Վիրահայոց թեմը կոչ է անում Վրաստանի համապատասխան պետական կառույցներին լուծել վերոնշյալ խնդիրը, վերջ տալ տարիելյան ամենաթողությանը, ինչպես նաև տրամաբանական ժամկետներում որոշել Ավանդական Կրոնական Կազմակերպությունների իրավաբանական կարգավիճակի հարցը:

Վիրահայոց թեմը վրացական կողմին հիշեցնում է պատմական հայկական եկեղեցիները քաղաքակիրթ կերպով վրացահայ համայնքին վերադարձնելու մասին ձեռք բերված համաձայնությունը և հետևողաբար պահանջում հետևել դրա իրականացմանը, հակառակ դեպքում իրադարձությունների զարգացումը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների, որի ողջ պատասխանատվությունը կընկնի Վրաստանի Կառավարության և Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքարանի վրա:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 40-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի հայոց Արեւելեան թեմը պաշտօնապէս կազմուած է 110 տարի առաջ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկին 1898 թուականի Սրբատառ Կոնդակով:

Այս թուականէն սկսեալ Ամերիկա գաղթած հայերու երազը եղած է, ծխական եկեղեցիներու կողքին, ունենալ Մայր Տաճար մը՝ որպէս զի ապահովուի հայկական քրիստոնէական հաւատքի եւ ազգային ժառանգութեան պահպանումն ու աճումը: Երկար տարիներ առաւ իրականացնելու համար այս երազը, եւ վերջապէս օրուան ղեկավարներուն, ազգային բարերարներուն եւ գրեթէ ամբողջ հայ ժողովուրդին մասնակցութեամբ կառուցուեցաւ եւ 1968 թուականին օծուեցաւ Ս. Վարդան Մայր Տաճարը: Եւ այսօր, քառասուն տարի ետք, հայ հաւատացեալները հաւաքուած են նախ փառք տալու Աստուծոյ եւ ապա երախտագէտ զգացումներով շնորհակալութիւն յայտնելու եւ յարգելու յիշատակը այդ երազը իրականացնող տեսլապաշտ ազգայիններուն:

Գեղակերտ Ս. Վարդան Մայր Տաճարը, որ դէպի երկինք բարձրացած է Նիւ Եորք քաղաքի սրտին վրայ, կը ծառայէ որպէս աղօթավայր շրջանի հայութեան եւ կանոնաւորապէս այցելուներ եւ զբօսաշրջիկներ կը հիւրընկալէ Միացեալ Նահանգներու բոլոր կողմերէն եւ նաեւ արտասահմանէն: Մայր Տաճարը ամէն տարի կը ծաւալէ կրթական եւ ընկերային գործունէութիւն եւ կը կազմակերպէ մշակութային եւ երաժշտական յայտագիրներ:

Ս. Վարդան Մայր Տաճարին օծումը կատարուած է 1968 թուականի Ապրիլ 28-ին՝ ձեռամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Օրուան Առաջնորդն էր Գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեան (այժմ՝ Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Աթոռի):

Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 40-ամեակին առիթով կազմակերպուեցան զանազան ձեռնարկներ, որոնց կարգին արուեստի ցուցահանդէս եւ երաժշտական յայտագիր (Յունիս 19-ին) եւ Տաճարի շրջափակին մէջ երիտասարդական հաւաքներ եւ հանդիպումներ: Պաշտօնական տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Կիրակի Հոկտեմբեր 12-ին՝ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագով եւ ապա առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գավուքճեան հանդիսասրահին մէջ կազմակերպուած տօնական ճաշկերոյթ-յայտագիրով:

Հանդիսաւոր Ս. Պատարագ - Առաւօտ կանուխէն հաւատացեալներու յոգնախուռն բազմութիւն մը փութացած է Ս. Վարդան Մայր Տաճար, որուն օծման 40-ամեակին առիթով հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուէր: Առաւօտեան Ժամերգութենէն ետք՝ պատարագիչ Սրբազան Հայրը, Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, շքախումբով մուտք գործեց Մայր Տաճար եւ բարձրացաւ Ս. Խորան: Պատարագիչ Սրբազան Հօր առընթերականներն էին Հոգշ. Տ. Բարգէն ծ. վրդ. Անուշեան եւ Հոգշ. Տ. Վահան ծ. վրդ. Յովհաննէսեան:

Այս տօնակատարութեան առիթով՝ Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի եւ Ֆիլատելֆիոյ ծխական եկեղեցիներուն մէջ միայն ժամերգութիւն կատարուեցաւ եւ հոգեւոր հովիւներն ու ծխականները եկան Ս. Վարդան Մայր Տաճար՝ մասնակցելու համար յոբելինական տօնակատարութեան:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց շրջանի եկեղեցիներու միացեալ դպրաց դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի: Երգեհոնահարներն էին Հոգշ. Տ. Մամիկոն վրդ. Քիլէճեան եւ Ֆլորէնս Աւագեան: Ս. Խորանին կը սպասարկէին Ս. Ներսէս ընծայարանի ժառանգաւորներ, շրջանի սարկաւագներ ու կիսասարկաւագներ:

Ս. Պատարագի ընթացքին Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան Ս. Խորանէն կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Կոնդակը՝ Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 40-ամեակին առիթով: Նորին Սրբութիւնը ի մէջ այլոց կը գրէր. «*...Քառասուն տարիներ են անցել այն օրուանից, երբ Նիւ Եորք քաղաքի սրտում վեր խոյացաւ թեմի առաջնորդանիստ եկեղեցին՝ Վազգէն Ա. Կաթողիկոսի ձեռամբ օծուելով Սուրբ Վարդան անունով: Քրիստոսի ազնուասիրտ նուիրեալի, Հայոց զօրաց անվեհեր սպարապետի՝ Քաջն Վարդանի սխրանքը եւ Տղմուտ գետի ափին թափուած նրա մարտիրոսական արիւնը մեր ժողովրդի հաւատի համար, հայրենեաց սիրոյ, արիութեան ու հաւատարմութեան խորհրդանիշ են դարձել: Սուրբ Վարդանն ու Վարդանանք հայ հոգու պարծանքն են, հայ հոգու յաղթանակը: Անմահ ու պայծառ յիշատակով Սուրբ Վարդանի՝ մեր ժողովրդի զաւակները, որտեղ էլ ապրեն, տեսնում են Արարատաթագ հայրենի երկիրը եւ Քրիստոսապսակ Սուրբ Էջմիածինը, որոնցով զօրացած ձեր պապերն ու հայրերը եւ այսօր դուք, սիրելիներ, կանգուն ու շէն էք պահում եկեղեցական եւ ազգային կեանքը: Այսօր Ամերիկայի հայոց Արեւելեան թեմը բարեզարդ է եկեղեցիներով, մշակութային, կրթական եւ բարեսիրական հաստատութիւններով, եկեղեցասէր տիկնանց ու երիտասարդաց կազմակերպութիւններով, որոնք բարեջան առաջնորդութեամբ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի եւ հոգածութեամբ ուխտեալ հոգեւոր դասի, հոգեւոր սնունդ են ջամբում մեր ժողովրդի զաւակներին եւ զօրացնում նրանց ազգային ոգին ու նկարագիրը»:*

Սրբազան Հայրը բնաբան առնելով աւետարանական «այրի կնոջ երկու լումայ»ի օրինակը՝ խօսեցաւ սրտաբուխ նուէրներու եւ յանձն առնուած զոհողութիւններու մասին, որոնց շնորհիւ է որ կարելի եղած է Մայր Տաճարի մը ծրագիրը իրականացնել: Բարեբարներու, նուիրատուներու եւ կնքահայրերու կողքին՝ ժողովուրդի սրտէն բխած աննշան, սակայն իմաստալից նուէրներուն շնորհիւ քար քարի վրայ դրուեցաւ եւ Վեհափառ Հայրապետի արտայայտութեամբ «վեր խոյացաւ առաջնորդանիստ եկեղեցին»: Սրբազան Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց հոգեւորական եւ աշխարհական այն նուիրեալ անհատներուն, որոնք անխոնջ կերպով նուիրեցին իրենց ժամանակը, տաղանդն ու կարողութիւնները իրականացնելու համար այս երազը: Ապա, Սրբազան Հայրը անդրադարձաւ վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ կատարուած միւռոնօրհնէքի արարողութեան եւ ըսաւ որ այդ Միւռոնը այսօր պիտի յանձնուի 43 ծուխերէ եկած 66 երիտասարդ ներկայացուցիչներու՝ որպէս խորհրդանիշ հայ հաւատքի ջահի փոխանցման: Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ցաւ յայտնեց որ Ամերիկայի մէջ Հայ Եկեղեցին տակաւին երկփեղկուած է, նոյն ատեն սակայն յոյս ներշնչեց որ մօտիկ ապագային կը վերահաստատուի Հայ Եկեղեցւոյ միութիւնը:

Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 40-ամեակին առիթով՝ Թեմական Խորհուրդի գանձապահ Ճէյմս սրկ. Գալուստեան Մայր Հայրենիքի մէջ պատրաստել տուած էր մասնաւոր սկիհ մը, որ առաջին անգամն ըլլալով գործածուեցաւ Ս. Պատարագի ընթացքին եւ օրուան վերաբերումը ընելու պատիւը տրուեցաւ նուիրատու սարկաւագին:

Ս. Պատարագի աւարտին՝ տեղի ունեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Վարդան Մայր Տաճարի մահացած հիմնադիրներու հոգիներուն համար: Արարողութեան ընթացքին Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան առանձին-առանձին կարդաց անունները այն մահացած անձերուն՝ ովքեր իրենց որեւէ օժանդակութեամբ մասնակցութիւնը բերած են Մայր Տաճարի կառուցման աշխատանքներուն:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք՝ ծուխերու երիտասարդ ներկայացուցիչները կարգաւ մօտեցան դէպի եկեղեցւոյ դասը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն բերուած Սրբալոյս Միւռոնի փոքր սափորները զետեղուած էին փայտեայ տուփերու մէջ եւ յատկապէս պատրաստուած տպաւորիչ արարողութեամբ, որուն մասնակցեցան նաեւ երիտասարդ ներկայացուցիչները, առաջնորդ Սրբազան Հայրը յանձնեց իւրաքանչիւր ծուխի ներկայացուցիչներուն, որպէս զի տանին եւ յանձնեն իրենց ծուխերու հովիւներուն:

Օնական Ճաշկերոյթ – Մօտ 600 հանդիսականներ ներկայ գտնուեցան տօնական ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գավուքճեան հանդիսասրահին մէջ:

Ամերիկեան եւ հայկական օրհներգները երգեց Մայր Տաճարի դպրաց դասը՝ ղեկավարութեամբ Խորէն Մէյխանէճեանի: Սեղանի օրհնութիւնը կատարեց Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան: Բացման խօսքը կատարեց Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան, որ շեշտը դրաւ «34-րդ փողոցի հրաշք»ին վրայ:

Օրուան հանդիսավարներն էին երկու երիտասարդներ՝ Կրեկըրի Անտոնեան եւ Անուշ Վարժապետեան: Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի ատենապետ տիար Ասկըր Թադոսեան բաժակ առաջարկեց Ս. Վարդան Մայր Տաճարի 40-րդ տարեդարձին առթիւ, ինչպէս նաեւ թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի կենացը:

Հանդիսավարներու հրաւէրով իր սրտի խօսքը ըսաւ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Տիար Արմէն Մարտիրոսեան, որ ըսաւ թէ Ս. Վարդան Մայր Տաճարն ու Առաջնորդարանը հոգեւոր տունն է ամբողջ հայութեան, եւ երբ ինք մուտք կը գործէ այս հաստատութենէն ներս՝ իր սեփական տան մէջ կը զգայ: Ըսաւ նաեւ որ Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին մէջ է որ առաջին անգամ հաստատուեցաւ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը՝ նախքան Տէր եւ Տիկին Գէորգ եւ Սիրվարդ Յովնանեաններու կողմէ նուիրուած կեդրոնը Նիւ Եորքի մէջ: Ապա իր սրտաբուխ շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները ներկայացուց:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կատարուած միւռոնօրհնէքի արարողութեան ժապաւէնը:

Կարճ դադարէ մը ետք՝ Ս. Վարդան Մայր Տաճարի Շուշի Պարախումբը խանդավառիչ ելոյթ ունեցաւ՝ ծափողջիւններով գնահատուելով բոլոր ներկաներուն կողմէ:

Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքը սկսաւ շնորհակալութիւն յայտնելով Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քհնյ.

Չեւեանի, Քառասունամեակի Կարգադիր Յանձնախումբի զոյգ ատենապետուհիներ Սանտրա Լայթնըրի եւ Լին Պէյլէրեանի, միացեալ դպրաց դասին եւ խմբավար Խորէն Մէյխանէճեանի, սարկաւագներու եւ կիսասարկաւագներու եւ ներկայ հաւատացեալներուն: Ապա՝ անդրադարձաւ անցնող քառասուն տարիներու ընթացքին Մայր Տաճարի հոգեւոր, կրթական, մշակութային եւ ընկերային գործունէութեանց: Յարգանք մատոյց մահացած հիմնադիրներու յիշատակին, եւ ներկայացուց այն անձերը՝ որոնք տարիներ շարունակ իրենց նպաստը բերած են Մայր Տաճարի գործունէութեանց: Դարձեալ շեշտը դրաւ երիտասարդութեան վրայ՝ կրկնելով որ անոնք են որ պիտի շարունակեն սկսուած բարի ու աստուածահաճոյ գործը՝ միշտ օրինակ ունենալով իրենց հայրերուն եւ նախահայրերուն տիպարները: Արտայայտուելով Մայր Տաճարի կնքահայրերուն մասին, ըսաւ որ անոնցմէ այսօր մեզի հետ են երեք սքանչելի հայորդիներ, որոնց կատարած նիւթական եւ բարոյական օժանդակութիւնները եկեղեցական, ազգային եւ բարեսիրական հաստատութիւններու ի նպաստ, մեծապէս օգտակար հանդիսացած են որպէս զի շարունակուին մեր հոգեւոր եւ ազգային աւանդութիւնները: Այդ երեք անձերն են՝ տիար Ալեքս Տատուրեան, տիար Նազար Նազարեան եւ տիար Վահան Նաճարեան, որոնց առաջնորդ Սրբազան Հայրը յանձնեց Ս. Վարդան մրցանակը՝ ի գնահատութիւն եւ երախտագիտութիւն անոնց եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութիւններուն: Նորին Սրբազնութիւնը խօսեցաւ նաեւ այն արուեստագէտներուն մասին՝ որոնք անցնող քառասուն տարիներու ընթացքին իրենց տաղանդը անսակարկ կերպով ի սպաս դրած են Մայր Տաճարի հոգեւոր եւ մշակութային ձեռնարկներուն՝ միշտ բարձր պահելով հայկական արուեստին վարկը, պատիւն ու պարծանքը: Այդ արուեստագէտներէն առանձնացնելով չորսը՝ անոնց յանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Սրբատառ Կոնդակը եւ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը: Այդ արուեստագիտուհիներն են՝ Նիւ Եորքի Մեթրոփոլիթըն Օփերայի միջազգային համբաւի տիրացած փայլուն աստղերէն Լուսին Ամարա (տե՛ս «Էջմիածին», 2008, Թ, էջ 32) եւ Լիլի Չուգասեան (տե՛ս «Էջմիածին», 2008, Ժ, էջ 13), համաշխարհային ճանաչում վայելող ջութակահար Անահիտ Աճէմեան (տե՛ս «Էջմիածին», 2008, Թ, էջ 34) եւ ծանօթ երգչուհի-դերասանուհի Քէյ Արմէն (տե՛ս «Էջմիածին», 2008, Թ, էջ 36): Վեհափառ Հայրապետի Կոնդակներէն բաժին մը տեղւոյն վրայ անգլերէնի թարգմանեց Արեւելեան թեմի առաջնորդի փոխանորդ Հոգշ. Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաճարեան, եւ ապա առաջնորդ Սրբազան Հայրը շքանշանին հետ յանձնեց արուեստագիտուհիներուն: Անհանգստութեան պատճառաւ այս հանդիսութեան ներկայ չգտուեցաւ Քէյ Արմէն, որուն ապաքինման համար աղօթք եւ մաղթանք մատոյց առաջնորդ Սրբազան Հայրը:

Բոլոր ներկաներուն կողմէ երգուած Տէրունական աղօթքով եւ առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով վերջ գտաւ այս խիստ տպաւորիչ յոբելինական հանդիսութիւնը: Ներկաները հոգեպէս բաւարարուած էին Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 40-ամեակի հոգեպարար Ս. Պատարագէն, Սրբալոյս Միւռոնի փոխանցման արարողութենէն եւ հարուստ յայտագիրով ճոխացած ճաշկերոյթէն: Հանդիսականները առիթը ունեցան անձնապէս շնորհաւորելու Մայր Տաճարի ներկայ գտնուող կնքահայրերը եւ պարգեւատրուած արուեստագիտուհիները եւ «հոգին սնուցանող ու հպարտութիւն արթող լեցուն օրուան» մը ջերմ տպաւորութեամբ բաժնուեցան իրարմէ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Միջեկեղեցական

ՎԱՏԻԿԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ 12-ՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 5-25-ը Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Պապի օրհնությամբ տեղի ունեցավ Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի 12-րդ գագաթնաժողովը, որին մասնակցում են ավելի քան 253 կաթոլիկ եպիսկոպոսներ աշխարհի տարբեր երկրներից: Գագաթնաժողովի մասնակիցները քննարկեցին Եկեղեցու առաքելությանն առնչվող թեմաներ «Աստծո Խոսքը Եկեղեցու կյանքում և առաքելության մեջ» խորագրի ներքո:

Հավաքին հրավիրված են ներկայացուցիչներ Ուղղափառ, Անգլիկան, Բողոքական Եկեղեցիներից և էկումենիկ միջազգային կազմակերպություններից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցում է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ՀԱՎԱՏՔ ԵՎ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-14-ը Հունաստանի Կրետե կղզում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք և կարգ» հանձնախմբի հերթական նիստը, որի ընթացքում զեկույցներ լսվեցին «Ավանդություն և ավանդություններ», «Բարոյական չափորոշիչները և Եկեղեցին», «Էկումենիկ հիշողություններ» աստվածաբանական թեմաների շուրջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում է «Հավատք և կարգ» հանձնախմբի անդամ, Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը: «Հավատք և կարգ» հանձնախմբի երիտասարդ անդամներից է նաև Մայր Աթոռի միաբան Տ. Շահե աբեղա Անանյանը:

«ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Հոկտեմբերի 20-21-ը Ստամբուլում կայացավ կրոնական պատկանելիություն ունեցող կազմակերպությունների գլոբալ խորհրդակցություն «Ազգաբնակչությունը և զարգացումը» թեմայով:

Մասնակիցներն իրենց հաստատակամությունը հայտնեցին ամրապնդել կրոնական պատկանելիություն ունեցող կազմակերպությունների և ՄԱԿ-ի «Ազգաբնակչության հիմնադրամի» կապերը, որը նախաձեռնել էր այս հանդիպումը: Լսվեցին «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը և մայրությունը», «Երիտասարդությունը և միգրացիան», «Բռնությունը կանանց նկատմամբ», «Արտակարգ իրավիճակները և մարդասիրական օգնությունը» թեմաներով մի շարք զեկույցներ:

Արևելյան Եվրոպան ներկայացնող մասնակիցների թվում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գործող «Հայաստանյան Կլոր Սեղան» հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը, որը հանդես եկավ «Երիտասարդությունը և տարածաշրջանային խաղաղությունը» թեմայով զեկուցմամբ:

Խորհրդակցության ընթացքին որոշվեց ստեղծել կրոնական պատկանելիություն ունեցող կազմակերպությունների գլոբալ ցանց և շարունակել սիստեմատիկ համագործակցությունը «Ազգաբնակչության հիմնադրամի» և ՄԱԿ-ի այլ հաստատությունների հետ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼՅՈՒՎԵՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-22-ը Լյուվենում տեղի ունեցավ ԵԵԿ-ի անդամ Եկեղեցիների «Եկեղեցի և հասարակություն» քարտուղարների հանդիպումը: Հանդիպման ընթացքում ներկայացուցիչները խոսեցին իրենց երկրներում Եկեղեցի-հասարակություն հարաբերություններում տեղ գտնող խնդիրների և առկա զարգացումներին, ինչպես նաև անդրադարձան «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի 2009-2015 թթ. գործունեության հրամայականներին: Հոկտեմբերի 21-ին մասնակիցները այցելեցին Բրյուսել, հանդիպումներ ունեցան եվրոպական ինստիտուտների ներկայացուցիչների հետ՝ քննարկումներ ունենալով «Կրոնի դերը հասարակական կյանքում» թեմայի շուրջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցեց Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԱԼՄԱ-ԱԹԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 28-29-ին Ալմա-Աթայում (Ղազախստան) տեղի ունեցավ Աշխարհի և Ավանդական կրոնների առաջնորդների երրորդ կոնգրեսի նախապատրաստական ժողովը:

Ժողովին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցեց Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Համաժողովն անց է կացվում Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևի բարձր հովանու ներքո, որի նպատակն է կրոնների միջև երկխոսության ուղիներ գտնելը և ժամանակակից մարտահրավերների վերաբերյալ մտքերի փոխանակումը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալ պրն Դանիել Ֆրիդին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով պատվարժան հյուրի այցը հայոց նվիրական սրբավայր, իր օրհնությունն ու բարեմաղթանքը փոխանցեց նրան՝ հաջողություններ մաղթելով իր առաքելության մեջ: Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց ԱՄՆ ցուցաբերած օգտակար ծառայությունների և աջակցության համար Հայաստանի անկախության տարիներին: Նորին Սրբությունը նաև իր գոհունակությունը հայտնեց աշխարհասփյուռ Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ հարգանքի և զորակցության համար:

Իր հերթին ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալ Դանիել Ֆրիդը շնորհակալություն հայտնեց Հայոց Հովվապետին ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ իր համար մեծ պատիվ է լինել Սուրբ Էջմիածնում: Պրն Ֆրիդն իր խոսքում հաստատեց, որ ԱՄՆ ցանկանում է Հայաստանը տեսնել բարօրության, անվտանգության և ապահովության մեջ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին, խաղաղ լուծումներով տարածաշրջանային խաղաղության վերհաստատման անհրաժեշտությանը և հայ-թուրքական հարաբերություններին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱԼԵ-ՎԻՏՏԵՆԲԵՐԳԻ ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Հալե-Վիտտենբերգի Մարթին Լյութեր համալսարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Վուլֆ Դոփենբրոքի և ուղեկցությամբ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի և ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեա Յոանա-Մարիա Վիկտորի:

Հանդիպման ընթացքում ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրակության անդամներին, անդրադարձավ ԵՊՀ-ի և Հալե-Վիտտենբերգի Մարթին Լյութեր համալսարանի միջև նույն օրը կնքված համագործակցության պայմանագրի նշանակությանը՝ ընդգծելով երկու կրթական հաստատությունների միջև համատեղ ծրագրերի իրականացման կարևորությունը:

Ողջունելով հյուրերի ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց երկու համալսարանների միջև հաստատված ջերմ և գործնական հարաբերությունների համար՝ բարեմաղթելով, որ դրանք արդյունավորվեն բարի պտուղներով հատկապես երիտասարդ սերնդի կրթության հարցում: Հայոց Հայրապետն անդրադարձավ հայ-գերմանական բարեկամական կապերին, որոնք առաջընթաց են ապրում ոչ միայն պետական մակարդակով, այլ նաև կրթական, մշակութային և այլ ասպարեզներում: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ նաև Մայր Աթոռի և Հալե-Վիտտենբերգի Մարթին Լյութեր համալսարանի միջև առկա սերտ համագործակցությանը՝ հույս հայտնելով, որ դրանք հետայսու առավել կզորանան և կսերտանան:

Հալե-Վիտտենբերգի Մարթին Լյութեր համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Վուլֆ Դոփենբրոքը պատվիրակության անդամների անունից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար, անդրադարձավ երկու համալսարանների միջև առկա սերտ համագործակցությանը և ապագա ծրագրերին: Պրոֆեսոր Վուլֆ Դոփենբրոքն ընդգծեց, որ սիրով է եկել Հայաստան և իր համար պատեհ առիթ է՝ մոտիկից ծանոթանալու հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 5-ին, կիրակի- Դ կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հոկտեմբերի 12-ին, կիրակի- Ե կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը «Աղաչեմք զքեզ՝ մարդասէր Տէր, առաքեա զՀոգիդ Սուրբ, ի ջուրս յայս» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 24):

Հոկտեմբերի 19-ին, կիրակի- Զ կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը «Տիրոջ Հոգին Իմ վրաս է, անոր համար իսկ օծեց Զիս» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

Հոկտեմբերի 26-ին, կիրակի- Է կիր. զկնի Ս. Խաչի: Գիւտ Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Октябрь 2008)

1. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, освятил новопостроенную армянскую церковь Св. Рипсиме в городе Барнауле Российской Федерации, 18 октября 2008 г., (с. 3-5).
2. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян принял заместителя Генерального секретаря ООН г-на С. Диара, 22 октября 2008 г., (с. 6).
3. Визит г-жи Лейлы Сол Хамаде в Армению и в Первопрестольный Святой Эчмиадзин, 22 октября 2008 г., (с. 7-8).
4. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-ну Мхитару Арояну по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель”, 14 октября 2008 г., N 494, (с. 9-10)
5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-ну Юрию Арояну, по случаю его награждения орденом “Святой Григорий Просветитель” 14 октября 2008 г., N 495, (с. 11-12).
6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-же Лили Чугасзян по случаю ее награждения орденом “Святой Саак- Святой Месроп”, 3 октября 2008 г., N 492, (с. 13-14).
7. Патриаршие награды (пожалование Его Святейшеством Гарегином II, Католикосом Всех Армян в течение октября 2008 г. энциклик, орденов “Святой Нерсес Шнорали”, благословений и права ношения расшитой фелони группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви), (с. 15).
8. Водосвятие новоосвященным Святым Миром в Первопрестольном Святом Эчмиадзине, 12 октября 2008 г., (с. 16).
9. Святая Литургия и Панихида по случаю 100- летия приснопамятного Католикоса Вазгена I, 20 сентября 2008 г., (с. 17).
10. Научная конференция в НАН РА, посвященная 100-летию со дня рождения Католикоса Вазгена I, 23 сентября 2008 г., (с. 18-19).
11. Одна из центральных улиц Вагаршапата переименована в честь Католикоса Вазгена I, 20 сентября 2008 г., (с. 20-21).
12. Открытие памятника Католикосу Вазгену I в Севанской Духовной Семинарии, 23 октября 2008 г., (с. 22).
13. Именем Католикоса Вазгена I названа средняя школа № 3 города Чаренцавана, 5 октября 2008 г., (с. 23).

ПРОПОВЕДИ

14. Проповедь Его Преосвященства епископа Аршака Хачатряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 12 октября 2008 г., (с. 24-26).
15. Проповедь Его Преосвященства епископа Саака Машаляна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 9 октября 2008 г., (с. 27-30).

ЦЕРКОВНОЕ ИССЛЕДОВАНИЕ

16. **ДЬЯКОН АРМЕН ХАЧАТРЯН** – Христологические воззрения Св. Григора Татеваци, (с. 31-40).

ПОСВЯЩАЕТСЯ ПАМЯТИ КАТОЛИКОСА ВАЗГЕНА I

17. **СИЛЬВА КАПУТИКЯН** – Внутренняя сила боли (литературный портрет)- (с. 41).
18. **ВАРДАН ДЕВРИКЯН** - Католикос Вазгена I (биографический очерк)- (с. 42-46).
19. **МУРАД АСРАТЯН** – Деятельность Вазгена I, Католикоса Всех Армян, по восстановлению и строительству новых церквей (историковедческое исследование)- (с. 47-54).
20. **ЭММА АШОТОВНА КОСТАНДЯН** – Сочинение Карапета – Левона Палчяна (Вазген I), “Хримян Айрик как воспитатель (исследование по педагогике)- (с. 55-61).
21. **АЙКАНУШ МЕСРОПЯН** – Об армянской колонии Румынии и о диалекте румынских армян (лингвистическое исследование)- (с. 62-68).
22. **АРУСЯК САМСОНОВНА ТЕРЧАНЯН** – Деятельность Вазгена I, Католикоса Всех Армян, в годы Великой Отечественной войны (историковедческое исследование)-(с. 69-74).
23. **ОВСЕП ВАРДАНОВИЧ ОВАСАПЯН** – Воспоминания и размышления о приснопамятном Католикосе Вазгене I (мемуары)- (с. 75-79).
24. Отрывки из речей Католикоса Вазгена I (составила А. Акопян) (с. 80-98).

Посвящается 100-летию со дня рождения Виктора Амбарцумяна

25. **ГРИГОР БРУТЯН** - Виктор Амбарцумян, (биографический очерк)- (с. 99-105).

Посвящается 100-летию со дня рождения Вильяма Сарояна

26. **АРЦРУН АВАКЯН** – Рассказ Вильяма Сарояна “Семьдесят тысяч сирийцев”

(литературоведческое исследование)- (с. 106-110).

27. **НАИРА ИСКАНДАРЯН** – Любовь бессмертна, ненависть умирает каждую секунду, (литературоведческое исследование)- (с. 111-117).

Посвящается 100-летию со дня рождения Рафаела Исраеляна

28. **ЛОЛА ДОЛУХАНЯН** - Рафаел Исраелян. о творчестве и о нем (биографический очерк)- (с. 118-122).

РЕЦЕНЗИИ

29. “Жить видением будущего” (мемуары о Католикосе Вазгене I)- (с. 123-124).
30. Переиздана книга архимандрита Вазгена (Католикоса Вазгена I) “Наша Литургия”, (с.125)
31. Вышел в свет первый том собрания сочинений Вазгена I (с. 126).
32. “Вазген I, Католикос Всех Армян” (представлена одноименная книжка, посвященная духовной деятельности Вазгена I)-(с. 126).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

33. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, освятил новопостроенную часовню Св. Богородицы в селе Агарак, 4 октября 2008 г. (с. 127-128).
34. Заново открылась церковь Св. Богородицы в Егварде Котайкской области, 4 октября 2008 г., (с. 129).
35. Освящение основ церкви в Золакаре, 22 октября 2008 г., (с. 130).
36. “Церковь и образование”- тема обсуждения в Первопрестольном Св. Эчмиадзине, 15 октября 2008 г., (с. 131).
37. Праздник Святых Переводчиков в Ошакане, 11 октября 2008г., (с. 132).
38. Защита дипломных работ в Геворкянской Духовной Семинарии, 9 октября и 30 октября 2008 г., (с. 133).
39. Эколого–христианский Круглый Стол в Первопрестольном Св. Эчмиадзине, 15 октября 2008 г., (с. 134).
40. Семинар, посвященный траффикингу, в Цахкадзоре, 7-8 октября 2008 г., (с. 135).

Вести из Гугаркской епархии

41. Праздник Св. Переводчиков, 11 октября 2008 г., (с. 136).
42. Международный день глухих ознаменовался крещением глухих молодых людей, 30 сентября 2008 г., (с. 137).
43. Новые посягательства на армянскую церковь Св. Норашен в Тбилиси, (с. 138-139).

В восточной епархии армянской церкви США

44. Празднование 40-летия освящения Кафедрального собора Св. Вардана, (с. 140-143).

МЕЖЦЕРКОВНЫЕ ОТНОШЕНИЯ

45. В Ватикане начался 12-ый саммит Епископского собрания Римской Католической Церкви, 5-25 октября 2008 г., (с. 144).
46. Очередное заседание комиссии “Вера и Порядок” Всемирного Совета Церквей в Греции, 8-14 октября 2008 г.,(с. 144).
47. “Народонаселение и развитие” – тема совещания в Стамбуле, 20-21 октября 2008 г., (с.145).
48. Встреча секретарей комиссии “Церковь и общество” Конференции Европейских Церквей в Лювене, 20-22 октября 2008 г., (с. 145).
49. Подготовительное собрание съезда предводителей традиционных и всемирных религий в Алма – Ате, 28-29 октября 2008 г., (с.146).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

50. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, заместителя Госсекретаря США, 17 октября 2008 г., (с.147).
51. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, делегациии университета имени Мартина Лютера в Гале- Виттенберге в Германии, 22 октября 2008 г., (с.147-148).

52. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение октября 2008 г., (с. 149).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(October 2008)

1. Consecration of the newly constructed St. Hripsime Armenian Church of Barnaul, Russian Federation, by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, 18 October, 2008, (p. 3-5).
2. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to S. Diara, Deputy General Secretary of UNO, 22 October, 2008, (p. 6).
3. The visit of Leila Sol Hamade to Armenia and the Mother See of Holy Etchmiadzin, 21-22 October, 2008, (p. 7-8).
4. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Mekhitar Aroyan, on the occasion of his decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, 14 October, 2008, no. 494 (p. 9-10).
5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Yura Aroyan, on the occasion of his decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, 14 October, 2008, no. 495 (p. 11-12).
6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Lily Chugassian, on the occasion of her decoration with the Medal of “St. Sahak-St. Mesrop”, 3 October, 2008, no. 492 (p. 13-14).
7. Pontifical Awards (Order of “St. Nerses the Graceful”, Letters of Blessing and right of wearing floral brocade chasubles granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during October 2008 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) - (p. 15).
8. Blessing of water performed with the newly blessed Myron in the Mother See of Holy Etchmiadzin, 12 October, 2008 (p. 16).
9. Divine Liturgy and requiem service on the occasion of the 100th birth anniversary of Vasken I, Catholicos of All Armenians, 20 September, 2008 (p. 17).
10. Conference dedicated to the 100th birth anniversary of Vasken I, Catholicos of All Armenians, in the National Academy of Sciences of the Republic of Armenia, 23 September, 2008 (p. 18-19).
11. One of the central streets of Vagharshapat city was named after Catholicos Vasken I, 20 September, 2008 (p. 20-21).
12. Inauguration of the monument to Catholicos Vasken I in the Sevan Vaskenian Seminary, 23 October, 2008 (p. 22).
13. Scholl N 3 of Charentsavan city was named after Vasken I, Catholicos of All Armenians, 5 October, 2008 (p. 23).

SERMONS

14. Sermon delivered by His Grace Bishop Arshak Khachatrian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 12 October, 2008 (p. 24-26).
15. Sermon delivered by His Grace Bishop Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 19 October, 2008 (p. 27-30).

ECCLESIOLOGICAL

16. **DEACON ARMEN KHACHATRIAN** – Christological ideology of St. Grigor Tathevatsi, (p. 31-40).

Dedicated to the memory of Catholicos Vasken I

17. **SILVA KAPOUTIKIAN** – The Potential of Pain: Literary Portrait (p. 41).
18. **VARDAN DEVRIKIAN** – Catholicos Vasken I (biographical review) - (p. 42-46).
19. **MOURAD HASRATIAN** – Reconstructive and Church building activity of Vasken I, Catholicos of All Armenians (historical research) – (p. 47-54).
20. **EMMA ASHOT KOSTANDIAN** – "Khrimian Hayrik as A Mentor" by Karapet-Levon Baljian (Vasken I) - (pedagogical research) – (p. 55-61).
21. **HAYKANOUSH MESROPIAN** – On the Armenian community of Romania and the dialect of the Romanian Armenians (linguistic research) – (p. 62-68).
22. **AROUSYAK SAMSON TERCHANIAN** – The Activity of Vasken I, Catholicos of All Armenians, during Great Patriotic War (historical research) – (p.69-74).
23. **HOVSEP VARDAN HOVASAPIAN** – Memoirs and Thoughts on Catholicos Vasken I of blessed memory (memoirs) - (p.75-79).
24. EXCERPTS FROM VARIOUS SPEECHES OF VASKEN I, CATHOLICOS OF ALL ARMENIANS (compiled by A. Hakobian)-(p. 80-98)

Dedicated to the 100th birth anniversary of Victor Hambardzoumian

25. **GRIGOR BROUTIAN** – Victor Hambardzoumian (biographical review) - (p. 99-105).

Dedicated to the 100th birth anniversary of William Saroyan

26. **ARTSROUN AVAGIAN** – "Seventy Thousand Syrians" by William Saroyan (literary research) – (p. 106-110).
27. **NAIRA ISKANDARIAN** – "Love is Immortal, but Hatred Dies Every Moment" (literary research) – (p. 111-117).

Dedicated to the 100th birth anniversary of Raphael Israelian

28. **LOLA DOLUKHANIAN** – Raphael Israelian: On him and his works (biographical review) – (p.118-122).

LITERARY REVIEW

29. “To Live with the Vision of Future” (memoirs on Catholicos Vasken I)-(p. 123-124)
30. Republication of the book “Our Liturgy” by Archimandrite Vasken (Catholicos Vasken I)-(p. 125)
31. Publication of the first volume of the works of Vasken I-(p. 126)
32. “Vasken I, Catholicos of All Armenians” (the book of the same name dedicated to the spiritual activity of Vasken I is presented)-(p. 126)

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

33. Consecration of the newly constructed Holy Mother of God Chapel of Agarak village, 4 October, 2008 (p. 127-128).
34. Reopening of Holy Mother of God Church of Yeghvard (Kotayk region), 4 October, 2008 (p. 129).
35. Foundation blessing of the Church in Zolakar, 22 October, 2008 (p. 130).
36. Discussion on the topic of “Church and Education” in the Mother See of Holy Etchmiadzin, 15 October, 2008 (p. 131).
37. The Feast of Holy Translators in Oshakan, 11 October, 2008 (p. 132).
38. Theses defense in Gevorkian Theological Seminary, 9 and 30 October, 2008 (p. 133).
39. Ecological-Christian Round Table in the Mother See of Holy Etchmiadzin, 15 October, 2008 (p. 134).
40. Training on trafficking in Tsaghkadzor, 7-9 October, 2008 (p. 135).

In the Armenian Diocese of Gougark

41. The Feast of Holy Translators, 11 October, 2008 (p. 136).
42. The International Day of the Deaf was marked by the baptism of deaf young people, 30 September, 2008 (p. 137).
43. New encroachment on St. Norashen Armenian Church of Tbilisi, (p. 138-139).

In the Eastern Diocese of the Armenian Church of North America

44. Celebration dedicated to the 40th anniversary of consecration of St. Vardan Cathedral-(p. 140-143)

INTER-CHURCH RELATIONS

45. Commencement of the Bishops’ Conference of the Roman Catholic Church in the Vatican, 5-25 October, 2008 (p. 144).
46. Plenary session of “Faith and Order” Commission of the World Council of Churches in Greece, 8-14 October, 2008 (p. 144).
47. Consultation entitled “Nation and Development” in Istanbul, 20-21 October, 2008 (p. 145).
48. Meeting of the secretaries of “Church and Society” Commission of the Conference of

European Churches in Leuven, 20-22 October, 2008 (p. 145).

49. Pre-Assembly of the Leaders of the World and Traditional Religions in Alma-Ata, 28-29 October, 2008 (p.146).

AUDIENCES IN THE MOTHER SEE

50. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Deputy Secretary of State of the USA, 17 October, 2008 (p. 147).

51. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Delegation of Martin Luther University of Hale-Wittenberg, Germany, 22 October, 2008 (p. 147-148).

52. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during October 2008 (p. 149).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց Ռուսաստանի Դաշնության Բառնաուլ քաղաքի նորակառույց Սուրբ Հռիփսիմե հայկական եկեղեցին 3
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալին 6
Լեյլա Սոլ Համադեի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 7
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Մխիթար Արոյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 9
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Յուրա Արոյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 11
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Լիլի Չուգասյանին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 13
Հայրապետական գնահատություն 15
Նորօրհնյալ Ս. Մյուռոնով Ջրօրհնեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 16
Սուրբ Պատարագ և Հոգեհանգիստ Վազգեն Ա Վեհափառի Ծննդյան 100-ամյակի առիթով 17
Գիտաժողով՝ նվիրված Վազգեն Ա Հայրապետի ծննդյան 100-ամյակին .. 18
Վաղարշապատի կենտրոնական փողոցներից մեկը վերանվանվեց Վազգեն Ա Վեհափառի անունով 20
Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում բացվեց Վազգեն Ա Վեհափառի արձանը 22
Չարենցավան քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցն անվանակոչվեց Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի անվամբ 23

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 24
Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 27

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ – Սուրբ Գրիգոր Տաթևացու

քրիստոնսաբանական հայացքները 31

Նվիրվում է Վազգեն Առաջինի հիշատակին

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ – Ցավի ներուժությունը 41

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Վազգեն Վեհափառը 42

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ – Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերանորոգչական-եկեղեցաշինական գործունեությունը 47

ԷՄՄԱ ԱՇՈՏԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ – Կարապետ-Լևոն Պալճյանի (Վազգեն Ա) «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ» աշխատությունը 55

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Ռումինահայ գաղութի և ռումինահայերի բարբառի մասին 62

ԱՐՈՒՍՅԱԿ ՍԱՄՍՈՆԻ ՏԵՐՉԱՆՅԱՆ - Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին 69

ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՆԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ – Հուշեր և մտորումներ երջանկահիշատակ Վազգեն Առաջինի մասին 75

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԵՐԻՑ (կազմեց Ա. Հակոբյանը) 80

Նվիրվում է Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ – Վիկտոր Համբարձումեան 99

Նվիրվում է Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակին

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ – Վիլյամ Սարոյանի «Յոթանասուն հազար Ասորի» պատմվածքը 106

ՆԱԻՐԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ – Սերն անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան 111

Նվիրվում է Ռաֆայել Իսրայելյանի ծննդյան 100-ամյակին

ԼՈԼԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ – Ռաֆայել Իսրայելյան. ստեղծագործության և իր մասին 118

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Ապրել գալիքի տեսիլքով» (Հուշեր Վազգեն Ա Վեհափառի մասին) 123

Վերահրատարակվեց Վազգեն վարդապետի (Վազգեն Ա Կաթողիկոսի) «Մեր Պատարագը» գիրքը 125

Լույս տեսավ Վազգեն Առաջինի երկերի ժողովածուի առաջին հատորը 126

«Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց» 126

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ջեռամբ Վեհափառ Հայրապետի օծվեց Ագարակ գյուղի նորակառույց Սուրբ Աստվածածին մատուռը 127
Վերաբացվեց Կոտայքի մարզի Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցին ... 129
Կատարվեց Զոլաքարի եկեղեցու Հիմնօրհնեքը 130
«Եկեղեցի և կրթություն» թեմայով քննարկում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 131
Սրբոց Թարգմանչաց տոնը Օշականում 132
Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում .. 133
Բնապահպանական-քրիստոնեական Կլոր Սեղան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 134
Թրաֆիքինգին նվիրված դասընթաց Ծաղկաձորում 135

Լուրեր Գուգարաց թեմից

Տոն Սուրբ Թարգմանիչների 136
Խուլերի միջազգային օրը նշանավորվեց խուլ երիտասարդների մկրտությամբ 137
Նոր ոտնձգություններ Թբիլիսիի Սուրբ Նորաշեն հայկական եկեղեցու դեմ 138

Ամերիկայի Արևելյան թեմում

Սուրբ Վարդան Մայր Տաճարի օծման 40-ամյակի տոնակատարությունը 140

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Վատիկանում սկսվեց Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի 12-րդ գագաթնաժողովը 144
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք և Կարգ» հանձնախմբի հերթական նիստը Հունաստանում 144
«Ազգաբնակչությունը և զարգացումը» թեմայով խորհրդակցություն Ստամբուլում 145
Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի քարտուղարների հանդիպումը Լյուվենում 145
Աշխարհի և ավանդական կրոնների առաջնորդների համագումարի նախապատրաստական ժողով Ալմա-Աթայում 146

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ պետքարտուղարի տեղակալին 147
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Հալե-Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի պատվիրակությանը 147

Եկեղեցական բեմ. լուրեր 149

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата..... 150
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 154